Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

3(075)
Մ-88

Ս. Մ. ՄՈՆՈՍՈՎ

4

# ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

## ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

VI ՏԱՐԻ

ՊԵՏՀՐԱՏ 1932 ԵՐԵՎԱՆ

ВОЗВРАТИТЕ КНИГУ НЕ ПОЗЖЕ
обозначенного здесь срока

3(075)
Մ-88

Ս. Մ. ՄՈՆՈՍՈՎ

1 DEC 2009
2 5 SEP 2006

# ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

## ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

VI ՏԱՐԻ

ՊԵՏՀՐԱՏ 1932 ՅԵՐԵՎԱՆ

14 FEB 2014
11747

Թարգմ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՆՇԱՆ ԱԼԼԱՀՎԵՐԴՅԱՆ

Հանձնված է արտադրության 26/XII Ստ. Ֆ. A 1931 թ.
Ստորագրված է տպելու 1932 թ.
Գլավլիտ 7030 (բ) Հրատ. 1981 Պատվեր 6609 Տիրաժ 5000
Պետհրատի տպարան, Յերևան

«Ամբողջ նախընթաց հասարակության պատմությունը դասակարգային պայքարի պատմություն է»։ Մարքս և Էնգելս—«Կոմունիստական մանիֆեստ»։

«Հասարակական գիտության մեջ ամենից հուսալին և ամենից անհրաժեշտն իրոք խնդրին ճիշտ մոտենալու հմտություն ձեռք բերելն է, այն է՝ վոր չպետք է մոռանալ պատմական հիմնական կապը, յուրաքանչյուր խնդրի վրա պետք է նայել այն տեսակետից, թե վորոշ յերևույթ ինչպես է ծագել պատմության մեջ, թե այդ յերևույթն իր զարգացման ընթացքում ինչ էտապներ է անցել և այդ զարգացման տեսակետից նայել, թե տվյալ իրն ինչ է դարձել այժմ»։

ԼԵՆԻՆ

ԳԼՈՒԽ VII

## § 1. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՅԻ ՅԵՎ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ

### ԽՈՇՈՐ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՅԵՐԵՎԱՆ ԳԱԼԸ

Շատ սովորական բան է մեզ համար այժմ մեծ գործարանը կամ ֆաբրիկան իր խոշոր շինություններով, բարձր ու բարակ խողովակներով, բարդ ու ճիշտ բանող մեքենաներով և բազմաթիվ աշխատող բանվորներով։ Այժմ համարյա ամեն մի քաղաք ունի իր գործարանը, և դժվար է մի մեծ քաղաք յերևակայել, վոր միքանի գործարան չունենա։

Սակայն չպետք է կարծել, թե միշտ էլ յեղել են այդպիսի գործարաններ, ֆաբրիկաներ, հետևաբար խոշոր գործարանային արտադրություն, այսինքն այնպիսի արդյունաբերություն, յերբ ապրանքները պատրաստվում են մեծ քանակությամբ, մեքենաների միջոցով, գործարաններում, ուր աշխատում են բազմաթիվ բանվորներ։

Յերկու հարյուր տարի առաջ խոսք անգամ չկար վոչ ֆաբրիկաների

վոչ գործարանների և վոչ էլ խոշոր արտադրության մասին: Բոլոր անհրաժեշտ առարկաները պատրաստում էին արհեստավորները փոքրիկ արհեստանոցներում, ուր աշխատում էին ընդամենը միքանի մարդ, այն էլ ձեռքով, քանի վոր դեռ վոչ մի մեքենա չկար: Հաճախ էր պատահում, վոր արհեստավորը մի շաբաթվա պատրաստած ապրանքն իր իսկ ձեռքով էր ծախում տոն որին մոտակա շուկայում:

## ԱՐՀԵՍՏԸ ԳՅՈՒՂՈՒՄ ՅԵՎ ՔԱՂԱՔՈՒՄ

«Ռոբինզոն Կրուզոյի» հեղինակ Դեֆոն, մոտավորապես 1727 թվին, նկարագրել է այն ժամանակվա անգլիական արհեստավորին:

Ջուլհակների տները,—գրում է Դեֆոն,—համարյա միշտ էլ իրարից այնքան հեռու էին, վոր մեկից մինչև մյուսը հազիվ էր մարդու ձայնը հասնում... Ամեն մի տան մեջ կարելի յե տեսնել մահուդ հինելու շրջանակ և համարյա ամեն մի շրջանակում մահուդ կամ վորևե բրդե գործվածք: Ամեն մի փոքրիշատե կանոնավոր տուն գործվածքի մի արհեստանոց է ներկայացնում: Յուրաքանչյուր մահուդագործ ամենաքիչը մի ձի յե պահում, վորով իր ապրանքը շուկա յե տանում»:

Դեֆոյի այս նկարագրությունը գաղափար է տալիս մեզ գյուղում ապրող մանր արհեստավորների մասին: Սակայն այդպիսի մանր արդյունաբերություն էր նաև քաղաքներում: Այստեղ, քաղաքում, կային առանձին մանր արհեստանոցներ, վորոնք միաժամանակ խանութի դեր էին կատարում, այսինքն այդտեղ պատրաստված ապրանքը հենց նույն տեղում էլ ծախվում էր: Ահա ֆրանսիական մի հին արհեստավորի խանութ-արհեստանոցի նկարագրությունը. «Ահա ճոներից (գլխարկակար) մեկը, վոր ապրում է Տրուայում, Սենա գետի փոքրիկ թևը կտրող կամուրջի վրա: Նրա արհեստանոցը գետի ափին է, մի փոքրիկ սենյակում, ուր դասավորված են կաթսա, տակառներ, հավանգներ, գրդնակներ, հարյուր հիսունի չափ գլաններ՝ գլխարկ պատրաստելու համար: Այդտեղ էլ հենց նա թաղքած բրդից խավլի գլխարկներ է շինում և հետո տալիս ներկելու: Նա շատ քիչ պատրաստի գլխարկներ ունի, և յերբ մեռնում է, իրենից հետո հազիվ մնում էր յերեսուն գլխարկ, 20 լիվր*) գնահատությամբ:

Թե վորքան փոքր էին այդ արհեստանոց-ձեռնարկությունները, յե-

* Լիվրը ֆրանսիական հին արծաթե դրամ էր, վոր արժեր 20 սու կամ մի ֆրանկ, իսկ ֆրանկը հավասար էր նախապատերազմյան 37½ կոպեկին:



րևում է նրանից, վոր գործատեր-արհեստավորը հաճախ մենակ էր աշխատում, կամ մի յերկու շագիրդների ոգնությամբ: Այսպես, օրինակ՝ Գերմանիայի Ֆրանկֆուրտ (Մայնի վրա) քաղաքում 1387 թվին կային 1550 գործատեր-արհեստավոր և միայն 800 շագիրդ:

## ԱՊՐԱՆՔԱՌՈՒԻ ՅԵՐԵՎԱՆ ԳԱԼԸ ՅԵՎ ՆՐԱ ԴԵՐԸ

Ֆրանսիական արհեստավորների մասին պատմածից տեսանք, վոր նրանցից յուրաքանչյուրը միաժամանակ հանդիսանում էր և իր ապրանքի վաճառողը: Բայց այդպես կարող էր տևել այնքան ժամանակ, քանի դեռ այդ արհեստավորի գնորդը նրա կողքին էր: Տեսանք, վոր Դեֆոյի նկարագրած անգլիան արհեստավորը պետք է տոնական որն ոգտագործեր շաբաթվա ընթացքում պատրաստած իր ապրանքը ծախելու համար: Իսկ յեթե յենթադրենք, թե արհեստավորի պատրաստած ապրանքի գնորդը հեռու յե ապրում, յոթ սարի յետևում, ինչպես պատահեց շվեյցարական ժամագործների հետ, վորոնց պատրաստած ժամացույցները XVII դարում վաճառվում էին Կ.-Պոլսում,—պարզ կլինի այդ դեպքում վորևե միջնորդի անհրաժեշտությունը, վորն արհեստավորի ապրանքը տանի, հասցնի գնորդին: Իբրև այդպիսի միջնորդ հանդես յեկավ առևտրականը: Գնելով ապրանքը վորևե տեղում, առևտրականն իր վրա էր վերցնում այդ ապրանքը հեռու տեղ հասցնելը, ճանապարհին պահպանելը, իսկ հետո ծախում էր ավելի գնով, հանելով իր ճանապարհի ծախսերը: Քանի դեռ այդ առուծախը պատահական և հազվադյուտ բնույթ էր կրում, արհեստավորը յերբեմն էր միայն դիմում առևտրականի ոգնության, բավականանալով տեղական շուկայով, առանց միջնորդի, հետևաբար նաև քիչ կախումն ուներ առևտրականից: Բայց առևտրական հարաբերությունների ընդարձակվելու հետ միասին աճում, մեծանում է շուկան, և հետզհետե ավելի անհրաժեշտություն է զգացվում ապրանքը հասցնել հեռավոր շուկա, իսկ արհեստավորն էլ առևտրականից ավելի և ավելի մեծ կախման մեջ է ընկնում: Այժմ, յերբ գնորդը հեռու յե արհեստավորից—ապրանք արտադրողից,—միայն առևտրականը կարող է տեղեկություն տալ արհեստավորին գնորդի ճաշակի և այն պայմանների մասին, վորոնցով կարելի յե ծախել այս կամ այն ապրանքը, և այլն: Առևտրականը ցուցմունքներ է տալիս արհեստավորին, թե ինչ պետք է պատրաստի և ինչպես, բայց վերջինս շատ դժկամությամբ է հարմարվում նոր պահանջներին. Նա փող չունի, իսկ նոր

պահանջների համապատասխան ապրանք պատրաստելու համար նա պետք է նոր նյութեր, գուցեև նոր գործիքներ ձեռք բերի: Այդ միևնույն ժամանակ առևտրականը, ապրանքի հաճախակի առուծախից, առատ փող է ձեռք բերում: Ապրանք արտադրողի և սպառողի միջական կապի բացակայությունը, ապրանքը տեղը հասցնելու դժվարությունը վտանգավոր և անծանոթ ճանապարհներով, առևտրականին դարձնում են մոնոպոլիստ, և նա վաճառելիս իրեն համար շահավետ գներ է նշանակում ապրանքի վրա, որ շատ ավելի բարձր է, քան ինքն է վճարել այդ ապրանքին: Առևտրականը սկսում է կարիքավոր արհեստավորին հում նյութ տալիս, փող է տալիս նրան գործիքներ ձեռք բերելու համար և այդպիսով արհեստավորին, այսպես ասած, ճորտացնում է: Արհեստավորն արդեն կապված է վորոշ առևտրականի հետ և ստիպված է աշխատել միայն նրա համար: Իսկ առևտրականը ընդլայնում է իր ազդեցությունը՝ իրեն ենթարկում շատ արհեստավորների, կազմակերպում է նրանց հում նյութ մատակարարելու և նրանց ապրանքները գնելու գործը, վորի համար գործակատար է վարձում կամ մի շարք բաշխիչ գրասենյակներ հաստատում:

XVIII դարում Ռուսաստանում,—պատմում է մի հին գրող,—բոլոր քաղաքացիներն էլ զբաղվում եյին մի շատ շահավետ գործով. նրանք առնում եյին գյուղացիների պատրաստած կտավը և տանում հեռավոր վայրերում ծախում: Համենայն դեպս առևտրական-ապրանքատերերը, անմիջականորեն կամ փողով վարկավորելով գյուղացիներին, նրանց կատարելապես կախման մեջ եյին պահում իրենցից:

Ապրանքատուն իր պայմաններն է թելադրում արհեստավորին. Նա աշխատում է վորքան կարելի յե շատ շահել, և արհեստավորի դրությունը հետզհետե ծանրանում է: Նա աստիճանաբար կորցնում է իր ինքնուրույնությունը, սկսում է աշխատել ուրիշի գործերով և ուրիշի նյութով: Ահա թե ինչ է ասում մի գրող ապրանքատուի համար աշխատող գերմանական ջուլհակների դրության մասին. «Մեծ ատելությամբ և զայրույթով եր նայում ջուլհակների մեծամասնությունն այն բանին, թե ինչպես Ռեյմի ապրանքատուներն ավելի ու ավելի հարստանում եյին, և ինչպես հետզհետե աճում եր նրանց մեջ հողատիրությունը, ավելանում նրանց գյուղակների և կալվածքների քանակը, վոր գնում եյին նրանք բամբակի գործվածքների վաճառքից ձեռք բերած շահույթով, արհեստավորների ծանր աշխատանքից ստացված շահույթով, մինչդեռ իրենք ջուլհակներն իրենց ամբողջ կյանքն անց եյին կացնում աղքատության



առաջ, կրում արտադրության բոլոր ծանրությունները և, այնուամենայնիվ, տարվա վերջին շնորհակալ պիտի լինեյին աստծուց, յեթե հաջողվեր նրանց կերակրել իրենց և իրենց ընտանիքները:

## ՏՆԱՅՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՄԱՆՈՒՖԱԿՏՈՒՐԱ

Արդյունաբերության այդ յեղանակը, յերբ արհեստավորն աշխատում է իր տանը, ապրանքատուի համար, կոչվում է տնային կամ տնայնագործական արդյունաբերություն: Տնայնագործը, վորին անխնա կերպով շահագործում է ապրանքատուն, թաղվում է սոսկալի կարիքի ճիրաններում. Նա յերկարացնում է իր բանվորական որը և աշխատեցնում է կնոջն ու յերեխաներին: Ահա մի հատված մի անգլիացու հուշերից, վորը դժբախտություն է ունեցել տնայնագործի զավակ լինելու. «Հազիվ եյի վոտք յելել, յերբ ինձ ստիպեցին աշխատել բամբակի գործվածքի արտադրության մեջ: Մայրս մանածը դնում եր մի խոր կոնքի (լագանի) մեջ, լցնում եր սապոնաջուրը, ապա քշտում շորերս և ինձ էլ դնում կոնքի մեջ, վորպեսզի վոտներով տրորեմ մանածը: Նա ամեն անգամ ավելացնում եր կոնքի ջուրը, վորից հետո յես նորից սկսում եյի իմ աշխատանքը: Յերբ կոնքն այնքան եր լցվում ջրով, վոր յես այլևս հնարավորություն չեյի ունենում կանգնել ջրի մեջ, այդ ժամանակ կոնքի կողքին մի աթոռ եյին դնում, վորից բռնելով յես շարունակում եյի իմ աշխատանքը»:

Հաճախ գնորդը վոչ թե դրսից եր գալիս, այլ գոյանում եր հենց իրենց արհեստավորների շրջանում: Այս կամ այն արտադրանք պատրաստելը զանազան տեսակի աշխատանքներ եր պահանջում. որինակ՝ բրդե կտորեղեն պատրաստելուն մասնակցում եյին՝ մանողներ, թաղքագործներ, խուզողներ, ներկարարներ և այլն: Յեվ ահա այն արհեստավորները, վորոնք վերջին աշխատանքն եյին կատարում, ասենք՝ պատրաստի կտոր ներկելը, յերբեմն իրենց ձեռքն եյին վերցնում այդ արտադրանքները վաճառելու գործը: Այսպիսով նրանք դառնում եյին դրության տերերը, սկսում եյին միայն պատրաստի արտադրանքներ վաճառելով զբաղվել և այլևս դադարում եյին նրանց արտադրությանը մասնակցելու: Այսպես՝ անգլիական Բիրմինհամ և Շեֆֆիլդ քաղաքներում, ուր տարածված եր մետաղի մանր իրեր պատրաստելը. հենց արհեստավորներից մեկը գնորդ դարձավ:

17 և 18-րդ դարերում այդ քաղաքների ամբողջ արտադրությունն այդ նախկին գնորդներից եր կախված և պահվում եր նրանց պատվերներով:

Տնայնագործներին նյութեր ավող և նրանց պատրաստած ապրանքները հավաքող առևտրականը դեռ ձեռնարկող-արդյունաբերող չէ, վոչ էլ տնայնագործը՝ վարձու բանվոր: Տնայնագործը վարձու բանվոր է դառնում միայն մանուֆակտուրան յերևան գալուց հետո: Մանուֆակտուրան մեծ շենք է, վոր պատկանում է առևտրականին, նա բազմաթիվ բանվորներ է հավաքում այնտեղ, վորոնք կատարում են միանգամայն վորոշ աշխատանք: Բայց այդտեղ էլ, ինչպես արհեստանոցում, ինչպես և տնայնագործական արդյունաբերության մեջ, դեռ աշխատում են առանց մեքենաների՝ ձեռքով-գործիքներով:

Մանուֆակտուրայում բանվորն աշխատում է գործատիրոջ շենքում, նրա նյութերով ու գործիքներով: Այստեղ վոչինչ նրան չի պատկանում և պատրաստած ամբողջ ապրանքն էլ հանդիսանում է մանուֆակտուրայի տիրոջ սեփականություն:

Այդ գործատիրոջից բանվորը միայն աշխատավարձ է ստանում այն բանվորական ուժի համար, վոր նա ծախում է՝ ուժը պատածին չափ աշխատելով:

Ինչո՞ւ կարիք զգացվեց մանուֆակտուրա ստեղծել: Խնդիրն այն է, վոր մանուֆակտուրայում պատրաստած ապրանքն ավելի մեծ օգուտ է տալիս տիրոջը: Մանուֆակտուրայի տերը բոլոր բանվորներին հավաքում է մի շենքի մեջ, նստեցնում է կողք-կողքի և աշխատանքը բաժանում նրանց մեջ՝ ամեն մեկին հանձնարարելով գործի միայն մի մասը: Բանվորը կատարում է իրեն հանձնարարած աշխատանքը և գործը տալիս իր կողքինին, սա էլ կատարում է իր մասը և հանձնում իր կողքինին և այսպես շարունակ:

Անգլիական գիտնական Ադամ Սմիթը թողել է մեկ գնդասեղի մանուֆակտուրայի նկարագրությունը. «Բանվորներից մեկը յերկաթալարն է ձգում, յերկրորդն ուղղում է այդ լարը, յերրորդը կտրատում, չորրորդը սրում, հինգերորդը խարտում է միայն այն ծայրը, վորի վրա գնդասեղի գլխիկն է ամրացվելու: Այդ գլխիկի պատրաստելը հենց յերկու կամ յերեք առանձին գործողության (օպերացիա) տարկա յե. առանձին գործ է գլխիկի ամրացնելը, առանձին գործ—գնդասեղի հղկելը, բոլորովին առանձին զբաղմունք է գնդասեղները թղթի մեջ դարսելը: Այդպիսով գնդասեղ պատրաստելու կարևոր աշխատանքը բաժանվում է 18 տարբեր գործողությունների, վորոնցից ամեն մեկը, մի քանի ձեռնարկություններում, կատարվում է առանձին բանվորի ձեռքով»:



Աշխատանքի այս ձևի կատարումը կոչվում է «աշխատանքի բաժանում»: Ինչպես տեսանք, այստեղ ամբողջ աշխատանքը բաժանված է առանձին մասերի: Աշխատանքն այս ձևով խիստ արագանում է և մեծ քանակությամբ ապրանք է արտադրվում: Նույն Ադամ Սմիթը գնդասեղի մանուֆակտուրայի նկարագրության առթիվ ասում է. «Յես տեսա մի այդպիսի փոքրիկ մանուֆակտուրա, վորտեղ աշխատում էյին 10 բանվոր: Այդ 10 բանվորը օրական պատրաստում էյին 12 ֆ. գնդասեղ և վորովհետև ամեն մի ֆունտը 4000 գնդասեղից ավելի յե, նշանակում է՝ 10 բանվորն օրական պատրաստում էյին 48 հազարից ավելի գնդասեղ, այսինքն՝ ամեն մի բանվորին օրական ընկնում էր 4800 գնդասեղ: Բայց յեթե այդ բանվորներն առանձին-առանձին աշխատեյին, մեկը մյուսից անկախ, ի հարկե, նրանցից ամեն մեկը օրական հազիվ 20 գնդասեղ պատրաստեր»:

Մանուֆակտուրայի դեպքում ձեռնարկատեր-առևտրականը շահվում է շենքից, քանի վոր մի մեծ շենքն ավելի էժան է, քան շատ մանր շենքեր միասին: Նա շահվում է նաև լուսավորությունից, քանի վոր մի շենքն ավելի հեշտ է լուսավորել և տաքացնել, քան մի խումբ մանր շենքերը: Նա խնայում է նաև այն տեսակետից, վոր մի շենքում ավելի հեշտ է հետևյալ բանվորներին, այսինքն քամել նրանց աշխատանքը, քան իրարից հեռու ընկած առանձին հյուղերում:

Տնայնագործին ի՞նչն է ստիպում գնալ մանուֆակտուրա և դառնալ վարձու բանվոր: Սրա պատասխանը շատ պարզ է: Տնայնագործը փող չունի հում նյութ գնելու համար, նա գործիքները պարտք է վերցրել առևտրական-ապրանքատուից, վորն ամեն րոպե կարող է հետ խլել այդ գործիքները: Տնայնագործին մնում է ընտրություն կատարել. կամ պետք է մնա քաղցած, կամ պիտի գնա մանուֆակտուրայում աշխատելու վորպես վարձու բանվոր:

## ՖԱԲՐԻԿԱՅԻՆ ԱՆՑՆԵԼԸ

Մանուֆակտուրայից մինչև ֆաբրիկան մի քայլ է: Բայց այնքան էլ հեշտ չէ այդ քայլն անելը: Ֆաբրիկայում աշխատում են մեքենաներով, նշանակում է՝ հարկավոր այդ մեքենաները հնարել և շինել: Այնուհետև ֆաբրիկայի սարքավորումը, շենքերի կառուցումը, մեքենաների տեղավորելն ահագին փող են պահանջում: Հետևաբար այն յերկրում, ուր առաջ են գալիս ֆաբրիկաներ, այսինքն խոշոր արդյունաբերություն, պետք է լինեն նաև խոշոր կապիտալներ, վոր կարելի է-

նի ունել այդ արդյունաբերության մեջ: Բայց ֆաբրիկայում աշխատում էին նաև շատ բանվորներ. նշանակում է՝ նոր ֆաբրիկաների համար հարկավոր են նաև բանվորական մասսաներ:

Մեքենաները, հետևաբար նաև խոշոր արդյունաբերությունը, առաջին անգամ յերևան յեկան Անգլիայում մեզանից 160 տարի առաջ:

## ՆՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ ՈՒ ՆՈՐ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԳՅՈՒՏԸ

Այն ժամանակներն Անգլիան ամենահարուստ յերկիրն եր և ամենից շատ կապիտալ ուներ, վորը կարող եր դնել խոշոր արտադրության մեջ: Անգլիական այդ հարստություններն առաջ եյին յեկել հետևյալ ձևով. XV դարավերջին և XVI դարասկզբին յեվրոպացիները մուտք գործեցին իրենց համար բոլորովին նոր, հարուստ ասիական և ամերիկական յերկրները:

Վորքան ավելի յեր զարգանում տնտեսությունն ու ծավալվում առևտուրը, այնքան ավելի յեր մեծանում դրամի կարիքը, այսինքն՝ թանկարժեք մետաղների—վոսկու, արծաթի կարիքը: Այս աճող պահանջը յեվրոպացիներին մղում եր դեպի այն հեռավոր յերկրները, վորոնց մասին Յեվրոպայում խորհրդավոր լուրեր եյին պտտում և վորտեղից արաբական, հրեական և այլ արևելյան յերկրների առևտրականները վաղուց ի վեր Յեվրոպա եյին բերում թանկարժեք քարեր և այլ զարմանալի ու թանկարժեք ապրանքներ:

Այդ հեռավոր ու հեքիաթային հարստությամբ լի յերկրները գտնելու առաջին փորձն արին իսպանացիք ու փորթուգալացիք, վորոնք ապրում եյին Յեվրոպայի ամենահարավային մասում, Պիրենյան թերակղզու վրա, վորտեղից շատ հարմար եր ծովային ճամփորդություն սկսել, վորոնումներ կատարել:

Հետզհետե ավելի ու ավելի խորքերը գնալով՝ փորթուգալական ծովագնացները յերկար տարիների ընթացքում ճամփորդություն կատարեցին աֆրիկական ափերով: Վերջապես, 1498 թվին նրանցից մեկը՝ Վասկո-դե-Գաման պտտվեց Աֆրիկայի շուրջը և անցնելով Բարի Հույս հրվանդանի մոտով՝ հասավ Հնդկաստանի ափերին: Այդ ժամանակվա խորհրդավոր ու այնքան հարուստ Հնդկաստանի այդ ճանապարհը շատ եր դժվար ու հեռու: Քրիստափոր Կոլումբոսը, վոր այդ ժամանակ ծառայում եր իսպանական թագավորի մոտ, ճանապարհ ընկավ արևելքի ափերի կարճ ճանապարհը գտնելու: Նա յենթադրում եր, վոր յեթե Իս-



պանիայից դուրս գա ուղիղ դեպի Արևմուտք և կտրի, անցնի Ատլանտյան ովկիանոսը, կարող ե գտնել այդ ճանապարհը: Վոչ Կոլումբոսը, վոչ ել այն ժամանակվա յեվրոպական գիտնականները չեյին ել մտածում, թե գոյություն ունի մի ամբողջ աշխարհամաս—Ամերիկան: 1492 թվի սեպտեմբերի 6-ին Քրիստափոր Կոլումբոսը դուրս յեկավ Կանարյան կղզիներից և հինգ շաբաթվա նավագնացությունից հետո հասավ Ամերիկայի ափին, Մեքսիկական ծոցի կղզիներից մեկին: Հետո նա գտավ ելի նոր կղզիներ, վորոնք այժմ կոչվում են Անտիլյան կղզիներ: Այսպիսով գտնվեց մինչ այդ բոլորովին անծանոթ աշխարհամասը—Ամերիկան:

Թեպետ Կոլումբոսը ելի յերեք անգամ ճամփորդեց և նոր յերկրներ բացեց, սակայն մինչև իր մահն ել նա թյուրիմացության մեջ եր. նա համոզված եր, վոր ինքը վոչ թե նոր աշխարհամաս ե գտել, այլ միայն Ասիայի նոր ճանապարհն ե գտել: Նա Ամերիկան Հնդկաստանի տեղ եր դնում, իսկ նրա բնակիչներին համարում եր հնդիկներ, վորի համար ել մինչև հիմա ամերիկացի բնիկները կոչվում են հնդիկներ: Շատ ուշ պարզվեց, վոր Կոլումբոսը թյուրիմացության մեջ ե յեղել, սակայն ինչ ել լինի, յեվրոպացիք, ի դեմս փորթուգալացիների ու իսպանացիների վոտք դրին նոր յերկրները:

## ՆՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԸ

Կոլումբոսից և Դե-Գամայից հետո՝ դեպի նրանց գտած յերկրները շարժվեցին վոսկու և արծաթի ծարավ հարյուրավոր արկածախնդիրներ: Նրանց նպատակն եր կողոպտել և շահագործել նոր գտած յերկրները: Ահա կողոպուտի նկարագիրը արևելյան նոր քաղաքներից մեկի, վորի ճանապարհը նոր եր գտնվել: «Արևածագին բոլորը նավակ նստեցին: Ամենից առաջ ցամաք դուրս յեկավ ինքը նավապետը: Նա և մյուսները ուղևորվեցին դեպի պալատ... Դռները փակ եյին, ջարդեցին, սակայն ամբողջ պալատը դատարկ եր: Քաղաքը ևս գրավվեց առանց դիմադրության: Աբեղաները խաչ տնկեցին, իսկ նավապետը գրավեց այդ խաչի մոտ գտնվող տունը: Նավի ամբողջ անձնակազմն սկսեց կողոպտել այդ հարուստ քաղաքի ապրանքը և մթերքները: Մեծ քանակությամբ սրվակներ գտան վարդի յուղով լի: Շատ գտան նաև զանազան տեսակի ապակիներ, կարպետներ, մետաքս և այլն: Նավապետը հրամայեց այդ բոլորը մի տեղ հավաքել՝ պատվիրակներին ցույց տալով»: Ահա և դեպի Ամերիկա ուղևորված եքսպեդիցիայի մասնակիցներից մեկի

պատմությունը: «Սկզբում հնդիկները մեզ մոտ յեկան խաղաղ կերպով. բայց հետո սկսվեց աղմուկ և ապա կռիվ...Նրանցից շատերին մենք ծեծեցինք: Բացի այդ՝ բռնեցինք մոտ 2000 տղամարդ, կին, յերեխա, աղջիկ ու խլեցինք նրանց ամբողջ գույքը: Այդպես վերադարձանք մենք նավապետի մոտ, և նա շատ գոհ մնաց»: Ահա նման մի ուրիշ հատված: «Բոլոր հնդիկներին—կին, տղամարդ, յերեխաներ, մենք սպանում դանք: Նրանք մեզ չեյին սպասում: Շատերին կոտորեցինք և մոտ 3000 մարդ գերի վերցրինք: Այդ կռվից ինձ բաժին ընկավ 19 տղամարդ և կին, երեխա, վոչ պառավներից...» Իր յեզրակացության խոսքում մեր աշխարհակալը ասում է: «Տարի ու կես մենք այդ եքսպեդիցիայում եյինք և միշտ կռվում: Մենք հաղթեցինք ու մեզ համար վերցրինք 12,000 մարդ, վորոնք այսօրվանից մեր ստրուկները պիտի լինեն: Դրանցից յես իբրև բաժին ստացա 50 հոգի»:

Անգլիացիք զուր չեյին պայքարում: Անդրովկյանյան առևտուրն ամենաձեռնտու գործն եր և այդ առևտրի միջոցով հոլլանդական ու անգլիական վաճառականները հսկայական հարստություն կուտակեցին:

Այդ ժամանակ ռազմական տեխնիկայի ու սպառազինման գործում յեվրոպացիք շատ առաջ եյին գնացել ամերիկական և աֆրիկյան բնիկներից: Օգտվելով այդ առավելությունից՝ յեվրոպացիք այդ յերկրներում իրենց տեր ու տիրական եյին համարում և անխնա շահագործում եյին բնիկներին: Այն առևտուրը, վոր անում եյին յեվրոպացիք, վոչ թե առևտուր եր, այլ կատարյալ կողոպուտ: Բնիկներից նրանք վերցնում եյին զանազան թանգարժեք իրեր—վոսկի, վոսկեփոշի, փղոսկր, զանազան համեմունք, վոր այն ժամանակ վոսկուն հավասար արժեք ունեյին, դարչին, պղպեղ և այլն. այս ամենը նրանք վերցնում եյին համարյա ձրի կամ բոլորովին ձրի: Դրա փոխարեն բնիկների վրա տեղացնում եյին ամեն տեսակ անպետք ապրանք, վոր բոլորովին հարկավոր չեր տեղացիներին, այն ել անհավատալի բարձր գներով:

Ամեն մի առևտրական ձամբորդություն, վոր եյապես ռազմական արշավ եր, 100—200 % օգուտ եր բերում: Այդ յուրահատուկ առևտրին պետք ե ավելացնել նաև ստրկավաճառությունը, վորոնց տանում եյին նոր յերկրները, վորտեղ շաքարեղեգնի, ծխախոտի և այլնի հսկայական ագարակներ եյին դցում:

Թե ինչ աստիճանի յեր հասնում նոր յերկրների բնիկ ժողովուրդներին շահագործելը, յերևում ե նրանից, վոր յերբ հոլլանդացիք 60 տարի տիրապետեցին Ցովա կղզու Բանդա—Վանգի կոչված տեղերին,



այդտեղի բնիկ բնակիչները պակասեցին 10 անգամ. 80 հազար հոգուց մնաց 8 հազար հոգի:

Այս կամ այն ապրանքի գինը բարձրացնելու համար հոլլանդացիք ու անգլիացիք խոշոր քանակությամբ վոչնչացնում եյին այդ ապրանքից: Մեխակը հազվագյուտ, ուրեմն և թանգարժեք դարձնելու համար մեխակածառերի ամբողջ անտառներ եյին վառում և ովկիանոսն ահագին տարածությամբ ծածկվում եր այդ անուշաբույր ծխի քուլաներով: «1769 թվին անգլիացիք արհեստական կերպով սով ստեղծեցին Հնդկաստանում: Նրանք գնեցին ամբողջ բրինձը, իսկ հետո սկսեցին վաճառել միայն չտեսնված, հեքիաթային բարձր գներով»:

Նոր յերկրների այս անողոք շահագործումն անգլիական առևտրականներին օգնեց հսկայական հարստություն կուտակել, վորը հետո նրանք դրին խոշոր արդյունաբերության մեջ: Ճիշտ է, գաղութները շահագործողը միայն անգլիացիք չեյին: Այդ կողոպուտին մասնակից եյին և փորթուգալացիք և հոլլանդացիք և ֆրանսիացիք, սակայն առյուծի բաժինն ընկավ անգլիացիների ձանկը:

## ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ՀՈՂԱԶՈՒՐԿ ԼԻՆԵԼԸ

Խոշոր արդյունաբերություն ստեղծելու համար բացի դրամական խոշոր միջոցներից, հարկավոր եյին նաև բանվորական մասսաներ: Հարկավոր են նաև գնորդներ այն մեծաքանակ ապրանքների, վոր կարտադրեն գործարաններն ու ֆաբրիկաները: Այլ խոսքով՝ խոշոր ձեռնարկության—ֆաբրիկայի ու գործարանի համար հարկավոր են «բանվորական ձեռքեր» և «շուկա»:

Ինչպես տեսանք, քայքայված արհեստավորներն ստիպված եյին գնալ աշխատելու ֆաբրիկաներում, վորպես վարձու բանվորներ: Սակայն, բացի նրանցից, ֆաբրիկաներն եյին գնում նաև քայքայված և հողից զրկված գյուղացիները: Արհեստավորների պես այս գյուղացիներն ել հարկադրված են ապրուստի միջոց վորոնել իրենց համար:

Բայց ինչպե՞ս եյին գյուղացիները հողից զրկվում:

Այս խնդիրն ամենից պարզ հասկանալի կլինի, յեթե քննենք, թե ինչ եր կատարվում Անգլիայում խոշոր արդյունաբերական ձեռնարկությունները յերևան գալուց առաջ:

Մինչև խոշոր արդյունաբերության յերևան գալն Անգլիան, ինչպես և մյուս յեվրոպական յերկրները, գյուղատնտեսական յերկիր եր: Անգ—

ձեռքում հողը մշակում էյին ազատ գյուղացիները ինչպես և մանր կապալառուները, վորոնք շատ յերկար ժամանակով հողը կապալով վերցնում էյին խոշոր հողատերերից, ազնվական կալվածատերերից: Իրենց՝ կալվածատերերը մեծ տնտեսություն չէյին ստեղծում, այլ գերադասում էյին հողը մանր կտորներով տալ կապալով: Բացի առանձին գյուղացու կամ կապալառուի մշակած հողերից կային նաև հողեր, վորոնք ամբողջ գյուղին էյին պատկանում. անտառներ, բացատներ, մարգագետիններ, ճահիճներ: Այստեղ կարելի յեր խոտ հնձել, վառելիք ձեռք բերել: Այսպիսի հողերը, վոր համայնական հողեր էյին կոչվում, գյուղացիների, մանավանդ չքավորների համար մեծ հենարան էյին հանդիսանում:

Վորքան արդյունաբերությունն ավելի յե զարգանում, և վորքան առևտրական ապրանքառուն ավելի յե շահագործում արհեստավորին, այնքան էլ այդ արհեստավորն ավելի քիչ է հնարավորություն ունենում գյուղատնտեսությամբ զբաղվելու և իրեն անհրաժեշտ մթերքը հայթայթելու: Դրա համար էլ նա ստիպված է լինում գնել այդ մթերքը: Սրա հետևանքով շահավետ բան է դառնում զբաղվել գյուղատնտեսությամբ՝ վաճառքի համար զանազան մթերքներ արտադրելու նպատակով: Բացի այդ, արհեստավորներն ավելի ու ավելի մեծ կարիք են զգում իրենց աշխատանքին անհրաժեշտ նյութերին: Օրինակ՝ քաթան պատրաստելու համար վուշի կարիք են զգում, մահուդ պատրաստելու համար՝ բրդի: Դրա համար էլ ազնվական կալվածատերերին ձեռնտու յե դառնում ստեղծել իրենց սեփական խոշոր տնտեսությունը, վորպեսզի հացահատիկ ցանեն, վաճառքի համար նախիր պահեն, վոչխարի մեծ հոտեր պահեն ու բուրդ ստանան և այլն: Բայց դրա համար հարկավոր էր հեռացնել մանր կապալառուներին, վորոնք մանր հողամասեր էյին զբաղեցնում: Ազնվականներն այդ հարցի առաջ կանգ չեն առնում: XVI դարում արդեն անգլիական կալվածատերերն սկսում են իրենց հողերից դուրս քշել գյուղացիներին և վարելահողերը դարձնում են արոտատեղեր, վորպեսզի մեծ թվով վոչխար պահեն և բուրդը ծախեն մահուդ պատրաստողներին: Հենց այդ ժամանակից Անգլիայի մի շարք շրջաններ անմարդաբնակ են դառնում. գյուղերի ու մշակված հողերի տեղն սկսում են թափառել վոչխարի հոտերը, իսկ նախկին գյուղացիները դառնում են թափառաշրջիկներ ու մուրացիկներ:

Ժամանակակից գրողներից մեկն այս դեպքերի առթիվ գրում է. «Վոչխարները, վոր սովորաբար այնքան հանդարտ և քչակեր կենդանիներ են, այժմ այնքան կատաղի ու շատակեր դարձան, վոր խժռում են



նույնիսկ մարդկանց, անմարդաբնակ, ամայի յեն դարձնում դաշտերը, տներն ու քաղաքները»:

Իսկ հետագայում, XVII—XVIII դարերում կալվածատերերն աշխատում են խոշոր տնտեսություն ստեղծել, վորպեսզի վաճառքի համար գյուղատնտեսական մթերքներ արտադրեն: Նրանք սկսում են գյուղատնտեսության նոր ձևեր կիրառել, նոր բույսեր ցանել և այլն: Մանր ու ցրված հողային սեփականություններն արգելք էյին հանդիսանում նրանց գործին: Դրա համար էլ նրանք ամենից առաջ իրենց թաթը մեկնում են համայնական հողերի վրա, աշխատում են գավթել այդ հողերը և դարձնել իրենց մասնավոր սեփականությունը—«ցանկապատել» այն: Այդ «ցանկապատումներն» օգնում են խոշոր տնտեսություններ ստեղծելուն, բայց քայքայում են գյուղի չքավորությանը: Համայնական հողերի նման հենակետեր չունենալով՝ չքավորին մնում է միայն վաճառել իր վողորմելի հողակտորը և հեռանալ հայրենի գյուղից: Բացի «ցանկապատումներից» կալվածատերերն այսպես կոչված «մաքրում» էլ են կատարում. այսինքն՝ քշում են մանր կապալառուներին և իրենք են խոշոր տնտեսություն ստեղծում, կամ թե խոշոր հողամասեր են կապալով տալիս խոշոր կապալառու-ֆերմերներին:

## ԽՈՇՈՐ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Այն ժամանակվա գրողներից մեկը պատմում է. վոր շատ տեղեր 24 մանր հողամասերը միանում, դառնում էյին 3–4 հատ: Այս ամենի հետևանքը լինում է այն, վոր գյուղատնտեսությունը բարելավվում է: Ահա թե ինչ է գրում այս առթիվ ժամանակակիցներից մեկը. «գյուղացիների հողը վատ էր մշակվում, բայց այնտեղ, ուր ստեղծվեցին խոշոր տնտեսություններ, հողի յեկամուտը բարձրացավ»: Նույնն են տալիս և թվերը: Յեթե մի ակր հողից մանր տնտեսության մեջ ստացվում էր 18 բուշել ցորեն կամ 32 բուշել վարսակ, ապա խոշոր տնտեսության մեջ նույն տարածության հողից ստացվում էր 26 բուշել ցորեն և 44 բուշել վարսակ:

Նույնը պետք ասել նաև անասունների մասին. մինչև խոշոր տնտեսությունների ստեղծվելը շուկայում վաճառվող յեզները 370 ֆունտ էյին կշռում, հորթը՝ 50 ֆունտ, վոչխարը՝ 38 ֆունտ: XVIII դարու վերջին, յերբ մանր գյուղացիական տնտեսությունները վերացան և յերևան յեկան խոշոր տնտեսությունները, վորոնք կարող էյին ցեղա-

կած անասուններ պահել, նույն շուկաներում յուղը կշռում եր 800 ֆունտ, հորթը՝ 150 ֆունտ, իսկ վոչխարը՝ 80 ֆունտ:

Այսպիսի հետևանքներ ունեցավ մանր գյուղացիական տնտեսությունների չքացումը, սակայն այն գյուղացիները, վորոնց կալվածատերերն իրենց շահից յելնելով զրկում եյին հողից, մատնվում եյին տանջանքի, աղքատության ու քաղցի: Ահա թե այն ժամանակվա մի վոտանավոր ինչպես է նկարագրում հողազուրկ գյուղացու դրությունը.

Թշվառը տեղ չունի իր հայրենի հողում,
հեռանում է մոլոր ու ողջին թողնում
արտերը փարթամ ու դաշտերը պարարտ,
ուր առաջ իր հոտն եր արածում առատ;
իսկ այժմ հարուստը խլել է անզգած:
Գյուղացին քաղաք է գնում, սակայն ի՞նչ.
կուշտերի չարանն է տեսնելու այնտեղ,
մինչդեռ ինքը՝ կարիքի ու սովի ճանկից
փրկվելու ճար չունի վոչ այստեղ, վոչ այնտեղ:

Ուրիշ ժամանակակիցներ վկայում են, վոր «ժողովրդի ստորին խավերի դրությունը վատացել եր. մանր սեփականատերերն ու ֆերմերները (կապալառուները) որավարձի, վարձու բանվորի աստիճանին եյին հասել»:

Հենց գյուղացիներին հողազուրկ անելով և հողերը մանր կապալառուներից մաքրելով էլ ստեղծվեցին մարդկային այն մասսաները, վորոնք հետո մտան գործարաններն ու ֆաբրիկաները վորպես բանվորներ:

## ՆԵՐՔԻՆ ՇՈՒԿԱՅԻ ԱՌԱՋԱՆԱԼԸ

Մանր գյուղատնտեսությունից խոշորին անցնելը գնորդներ ստեղծեց այն ապրանքի համար, վոր մեծ քանակությամբ սկսեցին արտադրել գործարաններն ու ֆաբրիկաները, այսինքն՝ այսպիսով ստեղծվեց «շուկա»: Առաջներում գյուղացին իր տանը պատրաստած հագուստն ու վոտնամանն եր հագնում: Նա իր փոքրիկ հողակտորի վրա հասարակ գործիքներով եր աշխատում: Բայց վոչ հարուստը, վոչ խոշոր ֆերմերը և վոչ քաղաքի կամ գյուղի վարձու բանվորը չեյին կարող իրենց համար հագուստ ու կոշիկ պատրաստել, իսկ նոր, խոշոր տնտեսություններում աշխատանքը կատարվում եր արդեն գյուղատնտեսական մեքենաների միջոցով: Նշանակում է և՛ հագուստը և վոտնամանը



և՛ գյուղատնտեսական մեքենաները պետք եր ձեռք բերել ուրիշ տեղ: Ահա այսպիսով էլ գնորդներ են հանդես գալիս գործարանների ու ֆաբրիկաների պատրաստած ապրանքների համար:

## ԲՐԴԵՂԵՆԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Սակայն մեզ պետք է հետաքրքրի մի կարևոր հարց և.—ինչո՞ւ հենց Անգլիայում պահանջ առաջացավ մանր տնայնագործական և մանուֆակտուրային արտադրությունից անցնել խոշոր, մեքենային արտադրության: Այս հարցի պատասխանը տալիս է բրդեղենի արդյունաբերության չտեսնված զարգացումն Անգլիայում: Անգլիայի կանաչ արոտները շատ հարմար եյին մեծ քանակությամբ վոչխար պահելու համար, իսկ այդ վոչխարների բրդից մահուդ եյին պատրաստում: Թե ինչ նշանակություն ուներ մահուդ պատրաստելը և առևտուրն անգլիական տնտեսական կյանքի համար, յերևում է այն տողերից, վոր գրել է այդ առթիվ մեզ արդեն ծանոթ Դեֆոն, և վորն անգլիական մահուդի մի ջատագովական հիմն (օրհներգ) է հանդիսանում. «Վերցնենք մեր անգլիական բրդի գործվածքները և նայենք, թե վորտեղ կարող ենք գտնել այդ գործվածքները: Մենք այդ գործվածքները կգտնենք ամեն մի յերկրում, ամեն մի առևտրավայրում, ամեն մի շուկայում: Մի խոսքով՝ ամբողջ աշխարհը հագնում է այդ գործվածքները, ամբողջ աշխարհը տենչում է նրանց, և համարյա ամբողջ աշխարհը նախանձում է մեզ այդ գործվածքների փառահեղության և գերազանցության համար: Այն յերկրներում, ուր տարածված են մեր բրդե կտորները, վոչ միայն միջին դասակարգերին ու չքավորներին են հագուստ ծառայում, այլև ամենալավ և ամենահարուստ մարդկանց: Էլ ավելին. կարող եմ ասել, վոր ժամանակակից իշխանավորներն ու թագավորները մեր բրդե կտորներն են հագնում: Սպանիայի թագավորը նույնիսկ հանդիսավոր օրերին հանդես է գալիս անգլիական մահուդ հագած»:

Բայց այդ շատ զարգացած արդյունաբերությունը, վոր վաճառահանվում եր աշխարհի բոլոր անկյունները, արդյունաբերություն, վորի արտադրանքի պահանջը շարունակ մեծանում եր, առաջ եր տարվում մանր արտադրությամբ: Ցեվ ահա նա համառ պահանջ է առաջադրում անցնելու խոշոր արտադրության: Նա այնպիսի միջոցների կարիք եր զգում, վորոնք նրան հնարավորություն տային արագորեն ընդլայնելու ապրանքների արտադրությունը և այդպիսով բավարարելու հետզհետե



Հասարակագիտություն 6 տ.—2

անող պահանջը։ Հենց դրա համար էլ XVIII դարի յերկրորդ կեսում Անգլիայում հնարեցին մեքենաներ։ Ճիշտ է, մեքենաներն սկզբում յերևան յեկան վոչ թե բրդեղենի, այլ ավելի նոր—բամբակեղենի արդյունաբերության մեջ։ Դրա պատճառն այն եր, վոր զանազան հին օրենքներ և կանոններ խոչընդոտ եյին հանդիսանում բրդեղենի արդյունաբերության մեջ աշխատանքի նոր ձևեր կիրառելուն, թեև նա նորամուծությունների կարիք եր զգում։ Բամբակեղենի արդյունաբերության մեջ այդպիսի կանոններ գոյություն չունեյին։

## ԳՅՈՒՏԵՐ ՄԱՆՎԱԾԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Առաջին գյուտը մանվածագործական արդյունաբերության մեջ, այսպես կոչված, թռչող մակույկի գյուտն եր (1738 թ.)։ Այդ գյուտը հեշտացրեց և արագացրեց կտորներ գործելը։ Բայց կտոր գործելու թելը դեռ շարունակում եյին ձեռքով պատրաստել, ձեռքի իլիկներով, ճախարակներով, ուստի մանողները չեյին կարողանում հարկավոր չափով թել հասցնել ջուլհակներին։ Այդ պատճառով էլ թռչող մակույկի գյուտից 30 տարի հետո հնարեցին մեքենական ճախարակ։ Դա մի շատ փոքրիկ մեքենա յեր, բայց և միանգամից 12—18 թել եր մանում, մինչդեռ ամենահմուտ մանողը չեր կարողանում միանգամից մի թելից ավելի պատրաստել։

Այդ մեքենան հնարողը նրան անվանեց «Ջեննի», ի պատիվ իր աղջկա, վորի անունը Ջեննի յեր։ «Ջեննին» շատ արագ եր բանում, բայց շատ էլ անդիմացկուն թել եր պատրաստում։ Այդ ժամանակ Արկրայտ անունով մի վարսավիր հնարեց մանելու մի մեծ մեքենա, վորի օգնությամբ կարելի յեր պատրաստել դիմացկուն, բայց հաստ թելեր։ Մեքենան այնքան մեծ եր, վոր ջրի միջոցով եր շարժման մեջ դրվում, ուստի ջրի մեքենա անունն ստացավ։

Այն հանգամանքը, վոր այդպիսի մի կարևոր գյուտ անողը վոչ մի կապ չուներ արդյունաբերության հետ, ցույց է տալիս, թե այն ժամանակի անգլիացիներն ինչ մեծ հետաքրքրությամբ եյին տոգորված դեպի նոր գյուտերն արդյունաբերության բնագավառում։

Ջրի մեքենայի գյուտից հետո մի գյուտարար մտածեց իրար միացնել «Ջեննիի» և «Ջրի մեքենայի» առավելությունները և այդպիսով ստացավ յերկու մեքենաների այսպես ասած խառնուրդը, վորի համար էլ այդ մեքենան անվանեց «Ջորի» (մյուլ)։ Այդ մեքենայի պատրաստած թելը և՛ բարակ եր և՛ դիմացկուն։



Մյուլի գյուտից հետո մանվածքի պատրաստությունը շատ արագացավ. այժմ արդեն ջուլհակներն այլևս չեյին կարողանում հասնել մանողներին. վերջիններս մանվածքով, ինչպես ասում են, խեղդում եյին նրանց։ Այդ պատճառով էլ մտածում եյին մի այնպիսի մեքենա հնարել, վորը կատարելագործեր ջուլհակային գործը, այսինքն գործվածքը։ Այդ հանգամանքը հենց խթան հանդիսացավ ինքնուս և սիրող մեքենագետ Կարտրայտ քահանային հնարելու ջուլհակի դազգյահը։

Մի քանի տարուց հետո այդ դազգյահը կատարելագործվեց և 19-րդ դարու սկզբին լայն գործածություն ստացավ մանվածքային արդյունաբերության մեջ։

Ջրի մեքենայի հնարող Արկրայտը միաժամանակ մեծ ֆաբրիկաների առաջին հիմնադիրն է։ Նրա ձեռնարկություններից մեկում, վոր բանում եր ջրի մեքենաներով, աշխատում եյին մոտ 600 բանվոր։ 1790 թ. Անգլիայում բանում եյին 150 մանագործարան, վորոնց մեջ աշխատում եյին 90.000 բանվոր։

Բացի հիշյալ գյուտերից տեղի եյին ունենում նաև այլ կատարելագործումներ. այսպես, օրինակ, գտան կտոր ներկելու դյուրին և արագ յեղանակը։ Այս բոլոր գյուտերը բամբակեղենի արդյունաբերությունից փոխանցվում եյին նաև վուշի և բրդեղենի գործվածքի արդյունաբերության մեջ։

## ՇՈԳԵՄԵՔԵՆԱՅԻ ԳՅՈՒՏԸ

Յերբ մեքենաների չափը կամ ծավալը հետզհետե մեծացավ, հերթական հարց դարձավ հետևյալ խնդիրը՝ ի՞նչպես շարժման մեջ դնել նոր մեքենաները։

Առաջ իբրև շարժիչ ուժ գործ եյին դնում կամ մարդկանց, կամ կենդանիներին և կամ, վերջապես, ջուրն ու քամին (ջրաղաց և քամաղաց)։ Ջրով եյին շարժվում նաև առաջին ֆաբրիկաները, և նրանց անիվները հաճախ հսկայական չափերի եյին հասնում։ Սակայն այդ հսկայական անիվները պտտելու համար ահագին քանակությամբ արագահոս ջուր եր հարկավոր։ Իսկ արագ հոսում են միայն լեռնային գետերը։ Անգլիայում լեռները քիչ են, հետևաբար քիչ են նաև հարմար, արագահոս գետերը։ Այդ սակավաթիվ արագահոս գետերն եյին օգտագործում այն ժամանակվա բոլոր ֆաբրիկաները։ Ֆաբրիկատերերը ջրի համար կատարյալ պատերազմ եյին մղում իրար դեմ։ Ջուրը ձեռքից ձեռք եյին խլում ամբարտակների միջոցով, և ցածում գտնվող ֆաբրիկաները

մնում եյին առանց ջրի։ Մերսեյ գետի ափին, յերեք մղոն տարածության վրա, շինված եյին վոչ պակաս քան 60 մանածագործարան։ Այդպիսի պայմաններում գործարանային արդյունաբերությունը չեր կարող զարգանալ, և կարիք եր զգացվում մեքենաները շարժման մեջ դնելու մի ուրիշ միջոց հնարել։

Ընդլայնվող շոգու ուժը վաղուց արդեն հայտնի յեր, բայց նրանով օգտվում եյին բացառապես քարածխահանքերից ջուր թափելու համար ջրհաններ պատրաստելու։

Հնարեցին յերկու շոգեմղիչ—Սեվերի և Նյուկոմենի (1702, 1712 թվերին)։ Այդ մեքենաները շատ անճոռնի եյին, վտանգավոր և շատ ել վառելիք եյին պահանջում։

18-րդ դարի 60-ական թվերին Գլազգո քաղաքի համալսարանական լաբորատորիայում աշխատում եր Ջեմս Ուատը. նա օգնում եր պրոֆեսորներին, յերբ նրանք ֆիզիքական փորձեր եյին ցույց տալիս։ Մի անգամ նրան վերանորոգելու յեն տալիս Նյուկոմենի մղիչի կաղապարը (մոդելը)։ Ջեմս Ուատը կարողացավ այդ մղիչի մեջ կարևոր կատարելագործում մտցնել։ Ընկերանալով մետաղյա իրեր պատրաստող մի ֆաբրիկայի տիրոջ հետ՝ Ուատն սկսեց նոր կատարելագործված մղիչներ շինել հանքագործարանատերերի համար։ Միժամանակ նա աշխատում եր մղիչը վերածել այնպիսի շարժիչի, վորը կարելի լիներ հարմարեցնել ամեն մի մեքենայի։ Հենց այդ ժամանակ ել արդյունաբերության համար չափազանց կարևոր դարձավ հնարել կատարելագործված շարժիչ։ Օգտվելով հեսանի անիվի գաղափարից՝ Ուատը շինեց առաջին շոգեմեքենան, վորով կարելի յեր շարժման մեջ դնել ամեն մի մեխանիզմ։

1785 թ. շինվեց առաջին շոգեշարժ մանածագործարանը, իսկ 1786 թ. Լոնդոնում յերևան յեկավ առաջին շոգեշարժ ալյուրաղացը։ Նա դարձավ ընդհանուրի զարմանքի առարկան, և Լոնդոնի ամբողջ հասարակության համար այդ գործարանն այցելելը մոդա դարձավ։

Շոգեմեքենայի գյուտով արդյունաբերությունն ազատվեց իր զարգացման բոլոր խոչընդոտներից, և սկսվեց ֆաբրիկաներ շինելու մի կատարյալ տենդ։ Այն ժամանակվա գործարանատերերից մեկը գրում ե. «Գործարանատերերի նոր ցեղը, շնորհիվ շոգու կիրառման, առանց կաշկանդվելու տեղի ընտրությամբ, հապճեպ սկսեց ֆաբրիկաներ կառուցել այն բոլոր վայրերում, ուր հնարավոր եր։ Կարգի եյին բերվում բոլոր



հին կալվածներն ու շարքախները (տարաց), ամեն մի բարձրիկթողի ազատված գյուղական շինություն։ Հին պատերի մեջ լուսամուտներ եյին բացվում, և ամեն ինչ հարմարեցնում եյին նոր արհեստանոցների»։

## ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ

Գործարանների պատրաստած արտադրանքները խոշոր քանակությամբ մի տեղից մյուսը փոխադրելու անհրաժեշտությունն առաջացրեց հաղորդակցության նոր ճանապարհների պահանջ։ Ճանապարհներն Անգլիայում շատ վատ եյին. այդ ճանապարհներով միայն բեռնակիր ձիերը կարող եյին շարժվել։ Դրա համար ել սկսեցին շինել նախ ջրանցքներ, վորոնցով միացնում եյին գետերն իրար հետ, հետո յել սկսեցին խճուղիներ անցկացնել և վերջապես հնարեցին յերկաթուղին, վորով ճանապարհորդում եյին նաև մարդիկ։ Շոգեշարժի գյուտը պատկանում ե Ստեֆենսոնին։

## ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ ՅԵՎ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ

Ապրանքների արտադրության նոր ձևերն ինչպես մի արտադրությունից մյուսն եյին անցնում, ճիշտ այդպես ել նրանք տեղափոխվում եյին մի յերկրից մյուսը։ Յուրաքանչյուր յերկիր, վորպեսզի հնարավորություն ունենա հավասարվելու արդեն իսկ խոշոր արդյունաբերություն ունեցող իր հարևան յերկրին՝ ստիպված եր նույնպիսի արդյունաբերություն հիմնել նաև իր յերկրում։ Բոլոր յեվրոպական յերկրներում ել խոշոր արդյունաբերությունն ավելի ուշ ե յերևան գալիս, քան Անգլիայում, և անգլիական մրցակցության ազդեցության տակ։

Այսպես, որինակ, Ֆրանսիայում 1790 թվին կար ընդամենը մի մյուլ, մինչդեռ Անգլիայում արդեն հարյուրավոր մյուլեր կային։ Առաջին շոգեմեքենան իբրև շարժիչ ֆրանսիական ֆաբրիկայում կիրառեցին 1812 թվին, իսկ մինչ այդ շոգեմեքենաները գործադրվում եյին միայն վորպես մղիչներ (նասոս) և շատ քիչ եյին։ Յեթե մեքենաներ եյին բերել տալիս Անգլիայից, փչանալու կամ կոտրվելու դեպքում վերանորոգող չեր լինում։ Դրա համար ել ֆրանսիական կառավարությունն ամեն միջոց ձեռք եր առնում անգլիացի վարպետներ և հմուտ բանվորներ

գրավելու Անգլիայից: Սակայն Ֆրանսիան ուներ նաև իր գյուտարարները: Եթե Անգլիան հաջողված եր իր մահուդով, Ֆրանսիան ել հայտնի եր իր մետաքսե կտորներով, վորոնք համարյա միշտ ել բարդ նկարներ ունեյին, և վորոնց գործելը ձեռքով շատ դժվար եր: 1800 թ. Ժակկարը հնարեց ջուլհակի դազգյահը նկարներով կտորներ պատրաստելու համար, և 11 տարի հետո Լիոնում, մետաքսի արդյունաբերության կենտրոնում, գործածության մեջ եյին արդեն 12.000 ժակկարյան դազգյահներ:

Մրցակցությունն Անգլիայի հետ ֆրանսիական կառավարությանն ստիպեց միլիոն ֆրանկ մրցանակ նշանակել նրան, ով ջուլհակի դազգյահ կհնարի բամբակե գործվածքների համար: Այդ մասին կառավարական հայտարարությունից 62 որ հետո վոմն Ժիրար արդեն իսկ արտոնագիր (պատենտ) ստացավ իր գյուտի համար: Անգլիացի Արկրայտի նման նա վոչ միայն գյուտարար եր, այլև գործարանի հիմնադիր: 1813 թվին Ժիրարն ուներ արդեն յերկու մանագործարան:

1832 թվին Ֆրանսիայում շինվեց առաջին յերկաթուղին. վորով յերթևեկում եյին Անգլիայից բերած յերկու շոգեշարժ:

Ե՛լ ավելի ուշ զարգացավ խոշոր արդյունաբերությունը Գերմանիայում: 1822 թվին ամբողջ Գերմանիայում կար ընդամենը յերկու շոգեմեքենա: Սակայն դրանից հետո խոշոր արդյունաբերության զարգացումը Գերմանիայում շատ արագ ե առաջ գնում: Այսպես, 1837 թվին հենց միմիայն Պրյուսսիայում 300 շոգեմեքենա եյին աշխատում: Մոտավորապես այդ ժամանակներն ել սկսում են գործադրել մանող մեքենաներ, և յերևան են գալիս առաջին գործարանները (ֆաբրիկա): Սակայն գերմանական գործարանները փոքրիկ ձեռնարկություններ եյին, շատ ավելի փոքր, քան անգլիական գործարանները: 40-ական թվականներին Գերմանիան ուներ արդեն 2000 վերստ յերկաթուղի, վորի վրա աշխատում եյին 245 շոգեշարժ, վորոնցից միայն 29 շոգեշարժն եր Գերմանիայում շինված, իսկ մնացածը բերված եր Անգլիայից:

Ռուսաստանում մեքենան առաջին անգամ յերևան յեկավ դեռ 18-րդ դարավերջին: Պետերբուրգում հիմնվեց Բերդի մեքենակառույց գործարանը, վորը, հետո ֆրանկո-ռուսական անունն ստացավ: Այդ գործարանը մեքենաներ եր շինում գործարանների և շոգենավերի համար: Նույն նպատակով 1798 թվին հիմնվեց Ալեքսանդրյան մանուֆակտուրան: 1808 թվին նա առաջին մեքենան բաց թողեց մեքենայական մանարանների համար, իսկ 1812 թվին այդպիսի մեքենաների թիվը



տարից անցավ: Սակայն խոշոր արդյունաբերության հետագա զարգացմանը խանգարում եր ճորտատիրական իրավակարգը: Խոշոր արդյունաբերության բուռն զարգացումն Ռուսաստանում սկսվեց գլխավորապես 1861 թվի բարենորոգությունից (ռեֆորմ) հետո:

## § 2 ՆՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԵՐ.—ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱ ՅԵՎ ԲԱՆՎՈՐՈՒԹՅՈՒՆ

### ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Ի՞նչ հետևանքներ տվեց խոշոր արդյունաբերությունը: Ամենից առաջ շատացավ յերկրի հարստությունն ու տնտեսական ուժը: Անգլիայի տարեկան յեկամուտը, վոր 17-րդ դարավերջում 47,7 միլիոն ֆունտ-ստերլինգ եր, 19-րդ դարասկզբում հասավ 430 միլիոն ֆ.-ստերլինգի: Անգլիական արտահանության արժեքը, վոր 18-րդ դարի կեսում կազմում եր 7,8 միլիոն ֆ.-ստերլինգ, 1800 թվականին չորս անգամ շատացել եր՝ հասնելով 33 միլիոն ֆ.-ստերլինգի:

### ՆՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԵՐԻ ՅԵՐԵՎԱՆ ԳԱԼԸ

Սակայն խոշոր արդյունաբերության յերևան գալը մի կարևոր հետևանք ևս ունեցավ: Արտադրության նոր ձևերն առաջ բերին հասարակության նոր դասակարգեր: Առևտրական-ապրանքատուի փոխարեն հրապարակ յեկավ արդյունաբերող-ձեռնարկատերը՝ մեքենայի, գործարանի, հում նյութի, այսինքն, այսպես կոչված, արտադրության միջոցների սեփականատերը: Դրա հետ միասին լույս աշխարհ յեկավ նաև տնայնագործին փոխարինող արդյունաբերական բանվորը: Վերջինս այլևս սեփական վոչ մի բան չունի այն արտադրության մեջ, վորտեղ ինքն ե աշխատում, մեքենայի վոչ մի պտուտակն անգամ նրան չի պատկանում: Նա ունի միայն բանվորական ուժ, վորը պետք ե վաճառի արտադրության միջոցների սեփականատիրոջը, վորովհետև սեփական մեքենա և հարմարություններ չունենալով, նա վոչ մի կերպ չի կարող գործադրել իր բանվորական ուժն իր համար ապրուստ ձեռք բերելու:

Մենք տեսանք, թե ինչպես մանուֆակտուրան տնայնագործին հետզհետե վարձու բանվոր դարձրեց, վորն աշխատում եր արդեն տիրունի շենքում, տիրունի գործիքներով: Բայց այնտեղ այդ բանն այնքան ել արագ և այնքան ել հիմնովին կերպով տեղի չունեցավ: Տնայնա-

գործը թե՛ մինչև մանուֆակտուրայի կիրառումը և թե՛ մանուֆակտուրայում ձեռքով էր աշխատում, այսինքն վերջին դեպքում ևս նա աշխատում էր իր համար սովորական պայմաններում:

Բոլորովին այլ կերպ և անհամեմատ ավելի հիմնովին ձևով տեղի ունեցավ այդ պրոցեսը խոշոր մեքենային արդյունաբերության կիրառումից հետո:

## ԱՐՀԵՍՏԱՎՈՐՆԵՐԻ ՅԵՎ ՏՆԱՅՆԱԳՈՐԾՆԵՐԻ ԽԵՂՃՈՒԿ ՎԻՃԱԿԸ

Մեքենան արագացրեց արտադրությունը: Դեռ 1812 թ. մեքենական դազգյահով մանողը 200 անգամ ավելի մանած էր պատրաստում, քան ձեռքով մանողը, իսկ մեքենական դազգյահով աշխատող ջուլհակը 40 անգամ ավելի գործվածք էր պատրաստում, քան ձեռքով գործողը: Շնորհիվ այս հանգամանքի արհեստավորը կամ տնայնագործը վոչ մի հնարավորություն չուներ մրցելու մեքենայի հետ, մանր արհեստը կորստի յեր դատապարտվում: Նախանձելի չէր նաև այն տնայնագործի վիճակը, վորը շահագործվում էր ապրանքատուի ձեռքում. սակայն ավելի վատացավ նրա դրությունը, յերբ հրապարակ յեկավ մեքենան: «Յերբ մեքենան տիրապետում է արտադրության վորոշ ճյուղի,—ասում է Մարքսը,—խրոնիկական աղքատություն է առաջ բերում իր հետ մրցող բանվորների խավերում»:

Ահա ձեռքով աշխատող այն բանվորների կյանքի պայմանների մի փոքրիկ նկարագիրը, վորոնց հետ մրցում եյին Կարտրայտի հնարած դազգյահները: 1790-ական թվերին շաբաթական 15—16 շիլլինգ վաստակող բանվորը 1802 թվին վաստակում էր արդեն միայն 13 շիլլինգ, 1806 թվին—10 շիլլինգ, իսկ 1816 թվին—5 շիլլինգ 2 պենս:

«Ջուլհակների ընտանիքները,—ասված է ջուլհակների դրությունը հետազոտող մի պաշտոնյայի տեղեկագրում,—ապրում են սոսկալի կեղտի ու աղքատության մեջ. նրանք քնում են առանց մահճակալի և սավանի. նրանք սնվում են գլխավորապես հացով և յուղով, կարտոֆիլով ու թեյով, հազվադյուտ դեպքերում միայն ավելացնելով դրան մի քանի կաթ խոզի ճարպ»:

Նույն հետևանքն ունեցավ մեքենաների կիրառումը նաև գերմանական տնայնագործների համար: Ձեռքով աշխատող ջուլհակների դրությունը Սիլեզիայում, 40-ական թվերին, միանգամայն անտանելի դարձավ: Ամենաճարպիկ և հմուտ ջուլհակն անգամ որական 30 կոպեկից



ավելի չէր վաստակում: Մանողները վաստակում եյին որական 9—10 կոպեկ, իսկ վոմանք նույնիսկ 3—4 կոպեկ: Կառավարական հետազոտությունները ցույց տվին, վոր կային ընտանիքներ, վորոնք ստիպված եյին լեշերով կերակրվել:

## ԿԱՆԱՆՑ ՅԵՎ ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԸ

Մեքենաների կիրառումն արդյունաբերության մեջ այնքան հեշտացրեց և պարզացրեց աշխատանքը, վոր հնարավորություն տվեց շահագործելու յերեխաների և կանանց մասսաները: Ճիշտ է, տնայնագործական արդյունաբերության մեջ էլ կանայք և յերեխաներ եյին աշխատում, բայց այնտեղ նրանք օժանդակ յերկրորդական աշխատանքներ եյին կատարում, աշխատելով իրենց ընտանիքում, իրենց տանը: Իսկ այժմ նրանք կտրվում են ընտանիքից, ուղարկվում ֆաբրիկաները և սոսկալի պայմանների մեջ ընկնում:

Յերեխաների խոշոր մասսայի շահագործումը խոշոր արդյունաբերության ծագման շրջանի ամենամռայլ պատկերն է ներկայացնում:

Վորովհետև ծնողները չեյին ցանկանում իրենց յերեխաներին ֆաբրիկա ուղարկել, ուստի գործարանատերերը պետական աղքատարան-վորբանոցներից վերցնում եյին աղքատների զավակներին և վորբերին, նրանց բերում եյին Անգլիայի գործարանային վայրերը բեռնակիր նավերով, ինչպես անասունների, և գործարանատերերն ընտրելով իրենց համար յերեխաներին, ստիպում եյին նրանց աշխատել խոնավ շենքերում որական 18 ժամ, առանց վորևե վարձի: Գործարանային յերեխաները յենթակա եյին իրենց տերերի քմահաճույքին: Պատահում էր, վոր ֆաբրիկայի բակում յերեխաները կռվում եյին խոզերի հետ կերի համար, վորովհետև ձեռնարկատերն ընդհանրապես չէր կերակրում յերեխաներին: Յեվ զարմանալի չէ, վոր յերեխաները մեռնում եյին հարյուրներով, իսկ կենդանի մնացածները դառնում եյին հաշմանդամ, դժգույն դեմքերով, ուռած փորերով, ծուռտիկ վոտներով:

Ահա մի հատված գործարանում իր մանկության սոսկումներն ապրած մի բանվորի հուշերից:

«Այդ հետաքրքիր, բայց սարսափելի հիմնարկում յես մնացի յոթ տարի, վորոնք իմ կյանքի ամենասոսկալի տարիներն եյին: Յես այնքան փոքր եյի, վոր չեյի կարողանում հասնել մեքենային. և ահա այդ բացը վերացնելու նպատակով փայտից բարձր պատվանդաններ շինե-

ցին, կապեցին իմ վոտներին, և յես քարշ եյի տալիս այդ պատվանդանները, մինչև վոր բավականաչափ մեծացա, հասակ քաշեցի: Սակայն ազատազրկությունն ու ծանր աշխատանքը վոչինչ եյին այն խստության հանդեպ, վորի հետևանքները կրում եմ մինչև այժմ»:

Նույն պատկերը կարող ենք տեսնել նաև Ֆրանսիայում: 1837 թ. գործարաններում հայտնաբերվեցին 6—7 տարեկան յերեխաներ: Բանվորական օրվա տևողությունը 12—14 ժամ եր, բայց յերբեմն էլ հասնում եր 17 ժամի: Մի ուսուցիչ հետևյալն ե գրում յերեխաների աշխատանքի մասին. «Տաս տարեկան, յերբեմն էլ նույնիսկ ինը կամ ութ տարեկան բոլորովին մատղաշ յերեխաներին վերցնում են մեզնից և ուղարկում կորստի մատնելու նրանց մարմինն ու հոգին ֆաբրիկաների փոշու և ժխորի մեջ—որական մի քանի սուի համար: Յես տասնհինգ տղա տեսա, վորոնք աշխատում եյին թել փաթաթող մեքենայի վրա: Նրանց նստցրել եյին շատ բարձր նստարանների վրա, վորպեսզի չկարողանան այնտեղից վայր իջնել... Տղաներից ամեն մեկն իր առջև ուներ 3 կամ 4 կոճ, և նրանք ամբողջ ժամանակ շնչում եյին մանածի փոշով: Մի դեռահաս յերեխա պտտում եր անիվը, և յես տեսնում եյի, թե ինչպես եր ծռվում նրա դժգույն մարմինը և քրտինքը վողողում նրա տխրահուչակ դեմքը»:

Ավելի լավ չեր դրությունը նաև Գերմանիայում: Այստեղ 40-ական թվերին վեց տարեկան յերեխաներն աշխատում եյին որական 13 ժամ ցերեկվա հերթին և 11 ժամ գիշերվա հերթին: «Նրանց դժգույն դեմքերը, աղոտափայլ բորբոքված աչքերը, փքված այտերը, ուռած փորերը, ախտանիշ պզուկները տարբերում են այս դժբախտ եյակներին ուրիշ յերեխաներից»,—գրում ե մի գերմանական պաշտոնյա:

Կանանց և յերեխաների աշխատանքը փոխարինեց տղամարդկանց աշխատանքին և տղամարդկանց դատապարտեց գործազրկության, մինչդեռ կինը յերեք-չորս անգամ ավելի քիչ եր ստանում, քան տղամարդը, և այդ չնչին աշխատավարձով այժմ պետք ե ապրեր ամբողջ ընտանիքը:

«Մենք լավ կահավորված բնակարան ունեյինք,—պատմում եր մի անգլիական բանվոր,—և Մերին (նրա կինը) կարիք չուներ աշխատելու: Յես այնքան եյի վաստակում, վոր հերիք եր յերկուսիս: Սակայն այժմ ամեն ինչ թարսվել ե աշխարհում. Մերին պետք ե աշխատի, իսկ յես պետք ե մնամ տանը, խնամեմ յերեխաներին, սենյակը մաքրեմ, ամանները լվանամ, հաց թխեմ: Խեղճ կինս յերեկոյան տուն ե վերադառնում



ջարդված և վոչինչ չի կարողանում անել: Յես քանիցս լաց եմ յեղել այդ առթիվ»:

Թե ինչ ազդեցություն ունեցավ մեքենաների գործադրությունը կանանց և յերեխաների աշխատանքի վրա Ռուսաստանում, այդ մասին մանրամասն կխոսենք հետո:

## ՔԱՂԱՔՆԵՐԻ ԱՃՈՒՄԸ

Խոշոր արդյունաբերության զարգացումն ստեղծեց մեծ քաղաքներ և ավելացրեց քաղաքների բնակիչների թիվը գյուղական բնակչության համեմատությամբ:

Անգլիայում 18-րդ դարի 70-ական թվականներին ազգաբնակչության մոտ 50 տոկոսն ապրում եր գյուղերում: 1811 թվին ազգաբնակչության միայն 35 տոկոսը մնաց գյուղերում, 1821 թվին—ընդամենը 33 տոկոսը, իսկ 1831 թ.—28 տոկոսը: Արդյունաբերական նոր քաղաքներն աճում եյին հեքիաթային արագությամբ: Մանչեստրը 1727 թվին դեռ մի մեծ գյուղ եր. իսկ 50 տարուց հետո ուներ արդեն քսան հազար բնակիչ, 1790 թվին—50,000, իսկ 1800 թվին 95,000 բնակիչ:

Շնորհիվ այդ հանգամանքի չափազանց թանկանում եյին սննդամթերքները. և այն, ինչ վոր բանվորը 1801 թվին գնում եր 26 շիլլինգով, դրանից 50 տարի առաջ կարող եր գնել 5 շիլլինգով:

Գյուղից քաղաք տեղափոխվող մասսան չեր կարող, իհարկե, բնակարանային տանելի պայմաններ գտնել, և նոր քաղաքների բանվորական թաղերն աղքատության, կեղտի ու հիվանդության սոսկալի պատկեր եյին ներկայացնում: «Շատերը յոթից և ութից հոգով մի տնակի վորջերում եյին ապրում: Այդ բնակարաններն այնքան խոնավ եյին, վոր բնակարանի համար պետք ե վոր անպետք լինեյին»: «Այդ տները զզվելի պատկեր եյին ներկայացնում. գյուղից նոր յեկած տնվորը, տեղի պակասության պատճառով, ստիպված եր պառկել պարազիտներով լիքը անկողնում, վոր թողել եր հենց նոր հեռացած տնվորը, կամ գրավել այն անկողինը, վորի մեջ քիչ առաջ պառկած եր տիֆից մեռած մի ուրիշը»:

Զուր չե, վոր 1784 թվին Անգլիայի արդյունաբերական քաղաքներում սոսկալի ծավալ եր ստացել գործարանային ջերմախտ անվանված հիվանդությունը: Զարմանալի չե, վոր այդ քաղաքներում, 40-ական թվականներին, բանվորի կյանքի միջին տևողությունը 15 տարի յեր, իսկ ունևոր դասակարգերին պատկանողներինը՝ 35 տարի: Բանվորների

յերեխաների ավելի քան 75 տոկոսը մեռնում եր 5 տարեկան չդառած: Հասարակության ունևոր դասակարգերի յերեխաների 20 տ. եր մեռնում այդ տարիքում:

Նույն պատկերն ենք տեսնում նաև Ֆրանսիայում: Նորմանդիայի արդյունաբերական վայրերում 100 նորակոչ զինվորացուներին ընկնում եյին 166 զինվորական ծառայության համար վոչ պիտանիներ: Ահա թե արդյունաբերական վայրերի բնակիչների առողջությունը վորքան թույլ եր:

Մի զինվորական պաշտոնյա Գերմանիայում գանգատվում եր 1826 թվին, թե արդյունաբերական վայրերում չի կարողանում զինվորացու նորակոչներ հավաքել:

## ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՍԿԻԶԲԸ

Մեքենայի և խոշոր արդյունաբերության յերևան գալն առաջ բերեց տղամարդկանց գործազրկություն, կանանց և յերեխաների ամենախիստ շահագործում, սննդամթերքների սարսափելի թանկություն, սոսկալի բնակարանային պայմաններ և արհեստավորների ու տնայնագործների աղքատություն: Բանվորները, արհեստավորներն ու տնայնագործները չեյին կարող հանգիստ մնալ: Այդ պատճառով էլ XVIII դարավերջը և XIX դարի առաջին կեսը, այսինքն այն ժամանակաշրջանը, յերբ տեղի յեր ունենում մանր արտադրությունից խոշոր արտադրության անցումը, լի յե բանվորական խռովություններով: Բանվորները, լավ չըմբռնելով տեղի ունեցող անցուդարձը, սկզբում յենթադրում եյին, թե բավական ե, վոր կործանեն իրենց ատելի մեքենան, և նրա պատճառած դժբախտությունները կվերանան: Բանվորներն ու տնայնագործներն իրենց ատելությունը դեպի մեքենաներն արտահայտում եյին անմիտ և անկազմակերպ խռովություններով, թշնամանքի և հուսահատության բռնկումներով, վորի ժամանակ կոտրտում եյին նոր մեքենաները, այրում ֆաբրիկաները:

«Մեքենաներն,—ասում եր մի ֆրանսիացի բանվոր,—ավելի մոբկրամոլ են, քան Հերկուլեսից ջարդ կրած հրեշները»:

Ահա հետաքրքիր պատմական մի նամակ, վոր ձեռքով աշխատող ջուլհակները, իրենց վաստակից զրկվելու ահից, ուղարկեցին Կարտրայտին. «Մենք յերդվել և պարտավորվել ենք կործանել ձեր ֆաբրիկան. թեկուզ մեր կյանքի գնով, և կտրել ձերոնց գլուխներն այն չարիքի հա-



մար, վոր դուք պատճառում եք մեր արհեստին: Յեթե դուք չարտանակեք ձեր այդ գործը, ձեզ արդեն հայտնի յե, թե ինչ ե սպասում ձեզ»:

Ահա և այն նկարագրությունը, թե ինչպես բանվորների ամբոխը քարուքանդ արեց Արկրայտի մանարան-գործարանը: «Ֆաբրիկայի դիրքը թույլ եր տալիս մոտենալ նրան միայն մի նեղ անցքով. շնորհիվ այդ հանգամանքի գործարանատերը մի քանի հարևան գործարանատերերի օգնությամբ կարողացավ հետ մղել հարձակումը և այս անգամ պաշտպանել ֆաբրիկան: Հարձակվողներից յերկուսն սպանվեցին, մի քանիսը վիրավորվեցին: Հարձակվողները դադարեցին և լցվեցին վրիժառության բուռն ցանկությամբ: Հետևյալ յերկու օրը նրանք անցկացրին զենք վաբոնելով: Ածխահանքերի հանքափորները և մի քանի ուրիշ բանվորներ ես միացան նրանց: Ասում են, վոր նրանց թիվը հասավ 8000-ի: Այդ 8000-անոց բանակը թմբկահարությամբ և դրոշակներով շարժվեց դեպի ֆաբրիկա, վորտեղից առաջին անգամ յետ եյին մղվել: Այնտեղ նրանք հանդիպեցին 50 զինվորի, մի պաշտոնյայի ղեկավարությամբ: Բայց ի՞նչ կարող եյին անել մի բուռն զինվորները կատաղությամբ լցված մարդկային զանգվածի հանդեպ: Զինվորներն ստիպված եյին նահանջել և հասարակ դիտողի դեր կատարել այն ամբողջ ժամանակի ընթացքում, մինչև վոր ամբոխը կործանեց շենքը, վոր արժեր ավելի քան 10,000 ֆ.-ստերլինգ»:

Նշանակալից ե մանավանդ 1811 և 1813 թվերի շարժումն Անգլիայում, յերբ գուլպա գործող արհեստավորները քարուքանդ արին գուլպայագործ դազգյահները: Այդ խռովությունը սարսափ ազդեց ամբողջ բուրժուազիային, և թշվառ գուլպայագործների առաջնորդների գլուխների համար 2,000 ֆ.-ստերլինգ պարգև նշանակվեց:

Նույն պատկերները կարող ենք տեսնել նաև Գերմանիայում և Ֆրանսիայում: Սիլեզիայի վուշի կտորեղենի ջուլհակները, հուսահատության դուռը հասած, ջարդոտեցին իրենց ատելի գործարանատերերի պահեստներն ու ֆաբրիկաները: 1867 թվին Ֆրանսիայում, արդյունաբերական Ռուբե քաղաքի ֆաբրիկաները նոր դազգյահներ սկսեցին գործածել. այդ առթիվ առաջ յեկավ գործադուլ, վորը փոխվեց խռովության (բունտ), վորի ժամանակ յերեք ֆաբրիկա կործանեցին, մեկն այրեցին, դազգյահները կոտրտեցին, իսկ կտորեղենը պատռոտեցին...

Այս բոլորից պարզ ե, վոր Ենգելսը միանգամայն իրավացի յեր՝ ասելով. «Այն բոլոր ասեկոսները, իբր թե մեքենաների կիրառմամբ բա-

րելավեց բանվորների դրությունը, կատարյալ սուտ ե։ Յեթե մեքենաները վորևե օգուտ տվեցին, դա այն ե միայն, վոր նրանք ապացուցեցին բանվորներին, թե անհրաժեշտ ե այնպիսի սոցիալական բարենորոգում, վորից հետո մեքենաներն աշխատեն վոչ ի վնաս բանվորների, այլ նրանց օգտին...», այսինքն ապացուցեցին սոցիալիզմի անհրաժեշտությունը։

---



ԳԼՈՒԽ VIII

# ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ XVIII ԴԱՐԱՎԵՐՋԻՆ

## § 1. ՖՐԱՆՍԻԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ

### ՖՐԱՆՍԻԱՆ ԱԶՆՎԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

200—300 տարի առաջ Ֆրանսիայում, ինչպես և ամբողջ Արևմտյան Յեվրոպայում, ինչպես և Ռուսաստանում, հասարակության տիրապետող դասակարգն ազնվականությունն եր։ Ճիշտ ե, Ֆրանսիան կառավարում եր թագավորը, բայց թագավորական իշխանությունը թվում եր միայն անկախ, հզոր և անմատչելի։ Իսկ իրոք թագավորներն ազնվականների նշանակած մարդիկն եյին և նրանց շահերի պաշտպանները։

Վոստիկանական պաշտոնյաների և զինվորների ահագին կազմը գոյություն ուներ հենց միայն նրա համար, վոր պաշտպաներ ազգաբնակչության այդ տիրապետող խավի՝ ազնվականության շահերը։

Ազնվականները գրավել եյին յերկրի բոլոր բարձր պաշտոնները, զորաբանակի սպայության պաշտոնները և շրջապատել թագավորին։ Ազնվականները հողատեր-կալվածատերեր եյին։ Նրանք ապրում եյին ազգաբնակչության մասսաների և առաջին հերթին գյուղացիության հաշվին, վորն անխնա կերպով շահագործվում եր նրանց կողմից։ Գյուղացիներն այն ժամանակ շատ վատ եյին ապրում։

### ՀԱՐԿԵՐԻ ԼՈՒԾԸ ՅԵՎ ՏԱՍԱՆՈՐԴԸ

Ինչո՞վ ե բացատրվում գյուղացիների ծանր դրությունը։ Առաջին հերթին հարկերի անտանելի լծով, վորոնք իրենց ամբողջ ծանրությամբ ընկած եյին ամբողջ վոչ ազնվական ազգաբնակչության ուսերին, մինչդեռ ազնվականներն ու հոգևորականները վայելում եյին հարկ չվճարելու

կարևոր արտոնությունը: Բացի այդ հարկերից, վոր հավաքում եր կառավարությունը բացորոշ կերպով, կային էլի շատ ուրիշ անուղղակի հարկեր, առանձնապես չքավորության համար: Դրանք անուղղակի կոչված հարկերն եյին վոր տալիս եյին կենսական-անհրաժեշտ իրեր գնելու դեպքում և մտնում եյին այդ իրերին վճարած գնի մեջ:

Այդ հարկերից ամենածանրն աղի հարկն եր: Այդ վաճառքը կառավարության մենաշնորհն եր: Յուրաքանչյուր բնակիչ պարտավոր եր վորոշ քանակությամբ, և վոչ պակաս այդ քանակից, աղ գործածել: Պետությունից զատ ուրիշ տեղից աղ ձեռք բերել չեր կարելի, հակառակ դեպքում ծանր պատիժների կենթարկվեյին: Շատ քայքայիչ եր նաև գինու հարկն այն գյուղացիների համար, վորոնք այգեգործությամբ և գինեգործությամբ եյին զբաղվում:

Սակայն այդ չի բոլորը: Վճարելով բոլոր, նաև անուղղակի հարկերը՝ գյուղացին պետք ե սպասեր այսպես կոչված տասանորդի, այսինքն՝ իր յեկամտի տասներորդ մասին հարկահավաքին. այդ տասանորդը տրվում եր յեկեղեցու ոգտին: Հետևանքն այն եր լինում, վոր գյուղացին զրկվում եր իր յեկամտի գրեթե յերկու յերրորդ մասից:

## ՀԱՐԿԱԺՈՂՈՎԸ ԿԱՊԱԼՈՎ ԵՐ ՏՐՎՈՒՄ

Ազնվապետությունը շահագործում եր գյուղացուն հարուստ վաճառականի ոգնությամբ և դաշնակցությամբ: Կառավարությունը շարունակ փողի կարիք զգալով՝ ցանկանում եր, վորքան հնարավոր ե, հարկերը շուտ ստանալ գյուղացիներից: Դրա համար ել բոլոր հարկերի և տուրքերի հավաքելը կապալով եր տալիս խոշոր հարուստներին, վորոնցից սկզբից ստանում եր հարկերի ու տուրքերի յերբեմն նույնիսկ միքանի տարվա ամբողջ գումարը, իրավունք տալով նրանց հավաքել այդ գումարը բնակչությունից՝ ինչ ձևով վոր ցանկանան: Կառավարությանը փող տվող վաշխառուն իր տրամադրության տակ ունենալով պետական զինվորներ, պաշտոնյաներ և ոստիկաններ, աշխատում եր հավաքել ժողովրդից իր տված գումարը տոկոսներով: «Տուրքերի հավաքելը, կամ հարկաժողովը,—գրում ե ժամանակակիցներից մեկը,—տեղի չեր ունենում ավելի քան զինվորական խստությամբ: Հարկահավաքներն իրենց հետ ունենալով դատարանական վերակացուներ և փականագործներ, բաց եյին անում դռները, տանում տնային բոլոր իրերը և ծախում քառորդ գնով...Գյուղացիներն ստիպված եյին կտրել իրենց և իրենց յերեխաների բերանի պատառը, վորպեսզի հարկը վճարեն»:



## ՎՃԱՐՆԵՐ ԿԱԼՎԱԾԱՏԻՐՈՋ ՈԳՏԻՆ

Սակայն վճարելով իր յեկամտի յերկու յերրորդ մասը, գյուղացին ել չեր կարողանում ազատորեն տնորինել մնացած մի յերրորդ մասը: Նա յենթակա յեր կալվածատիրոջը: Յուրաքանչյուր կալվածատեր մի ժամանակ փոքրիկ և անկախ թագավոր եր, իսկ գյուղացին՝ նրա հպատակը: Այդ ժամանակները վաղուց անցել եյին: Գյուղացին այլևս անձնական կախումն չուներ իր կալվածատիրոջից, և այն հողը, վորի վրա ապրում եր նա, իր սեփականությունն եր: Բացի այդ մի կտոր հողի հետ կապված եյին ամեն տեսակի և բազմաթիվ պարտավորություններ, վճարներ և պարտականություններ, վոր ծանրանում եյին գյուղացու վրա հանդեպ ազնվական-կալվածատիրոջ: Այդ վճարները վերցնում եյին գյուղացուց մերթ դրամով, մերթ մթերքներով, վոր յերբեմն հասնում եր գյուղացու հավաքած բերքի մի քառորդին:

Կալվածատերը, բացի կանոնավորապես ստացվող այդ վճարներից, իր բաժինն ուներ նաև ամեն մի գյուղացիական հողամասից, վոր ծախվում, գնվում կամ իբրև ժառանգություն մեկից մյուսին եր անցնում:

Չափազանց ծանր և քայքայիչ եյին գյուղացիների համար նաև կալվածատերերի մյուս իրավունքները. այսպես, որինակ, գինի պատրաստելու համար գյուղացին պարտավոր եր ոգտվել կալվածատիրոջ խաղողի մամուլից, հացահատիկներ աղալու համար—նրա ջրաղացից, գետով անցնելու համար—նրա լաստից: Այժմ կալվածատերն այլևս հոգ չեր տանում իսկապես մամուլ, ջրաղաց կամ նավակ ունենալ, բայց նրանցով ոգտվելու նախկին տուրքերը շարունակում եր հավաքել գյուղացիներից:

Տարիների ընթացքում կալվածատերերի այդ արտոնությունները, այդ տուրքերը վոչ թե վերանում եյին, այլ ընդհակառակն, ավելանում փողային տնտեսության զարգացման զուգընթաց: Ազնվական-կալվածատերերի փողի կարիքը հետզհետե աճում եր, և նրանք հիշում ու դարերի փոշու տակից դուրս եյին հանում մոռացության տված և իրենց շահավետ զանազան իրավունքներ ու սովորույթներ:

Հետզհետե փողի ավելի և ավելի մեծ կարիք զգալով, կալվածատերն ագահաբար մեծ քանակությամբ հող եր ձեռք գցում, վորպեսզի կամ սեփական տնտեսություն վարելով ստացած հացը ծախի կամ, յեթե մայրաքաղաքում եր ապրում և վոչ թե գյուղում, կապալով տա այդ հողը...Կալվածատերերը կամաց-կամաց իրենց ձեռքն են գցում այն

հողերը, որոնցից օգտվում էր ամբողջ գյուղը—արոտատեղերը, անտառը, ճահիճները... Նրանք թույլ չէին տալիս խեղճ գյուղացիներին արածացնելու այդ վայրերում իրենց անասունները, փայտ կտրելու կամ տորֆ հանելու: Այդպիսով գյուղացիների, մանավանդ չքավոր գյուղացիների վիճակն ե՛լ ավելի էր վատանում:

### ՊԱԼԱՏԱԿԱՆ ԱԶՆՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ազնվական կալվածատերերից շատերը թողնում էին իրենց կալվածները և ապրում մայրաքաղաքներում, թագավորական պալատում: Գյուղացիներից և ամբողջ բնակչությունից կորզած հսկայական գումարների ամենից առաջ նրանց գրպանն էր մտնում: Նրանք ահագին ռոճիկներ էին ստանում: Նրանց պաշտոնները միանգամայն անպետք էին: Այսպես, օրինակ, Ֆրանսիական վերջին թագավոր Լյուդովիկոս XVI-ի օրով երկու հատուկ պալատական կար, որոնց պարտականությունն էր մաքրել թագավորական նավը. և նրանցից ամեն մեկն ստանում էր տարեկան 20000 լիվր*): Թագավորի աղջիկներից մեկը, որ ընդամենը մի ամսական էր, 80 պալատականներից բաղկացած հատուկ ուներ: Ազնվականների թիվը հասնում էր 140 հազարի: Այդ բոլորին պալատում պաշտոն տալ չէր կարելի, դրա համար էլ նրանց մեծ մասն ապրում էին զորքի մեջ:

### ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Պակաս տզրուկներ չէին ժողովրդի համար նաև բարձր «հոգևոր հայրերը»: Նրանք նույնպես շատ խոշոր, հաճախ տարեկան ավելի քան 100 հազար լիվր եկամուտ էին ստանում: Թե որքան շքեղ էր ապրում հոգևորականությունը, երևում է թեկուզ նրանից, որ կարդինալ Դը-Ռոգանի հենց միայն հագուստը 100 հազար լիվր արժեր: Եկեղեցական բոլոր բարձր պաշտոնները գրավել էին բացառապես ազնվականները:

Հասարակության բարձր խավերի այդ շուքն ու բարեկեցությունը շատ անհուսալի հիմքի վրա էր դրված: Նա հիմնված էր Ֆրանսիայի ազգաբնակչության հիմնական մասսայի—աղքատ, իրավազուրկ և ճնշված գյուղացիության ամենախիստ շահագործման վրա:

*) Լիվրը—Ֆրանսիական հին դրամ է=մինչպատերազմյան 37½ կոպեկի:



### ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Այս անողոք շահագործումը գրեթե բոլորովին քայքայեց գյուղացիությունը: Գյուղացիական տնտեսությունն ամենախղճալի դրության մեջ էր, և խոսք չէր կարող լինել նրա բարելավման մասին:

«Վատ լծկաններ, վատ լծասարք և վատ պարարտացում»—ահա թե ինչպես է բնորոշում այդ տնտեսությունը ժամանակակիցներից մեկը:

Անգլիական մի ճանապարհորդ, որ շրջել է այդ ժամանակներն ամբողջ Ֆրանսիան, ասում է, թե այն հողամասը, որ Անգլիայում տալիս էր 28 չետվերտ հացահատիկ, Ֆրանսիայում տալիս էր միայն 18 չետվերտ: «Միմիայն գյուղատնտեսությամբ զբաղվողները Ֆրանսիայում,—ասում է նա,—78 տոկոսով ավելի քիչ են ապահովված, քան Անգլիայում. 76 տոկոսով ավելի վատ են սնվում, նույնքան էլ ավելի վատ հագնվում»...

Հարկերի և տուրքերի տակ խեղդված գյուղացիական մասսան աղքատ էր և սոված, մատնված մշտական անբերրիության, քաղցի: XVIII դարում, 90 տարվա ընթացքում, Ֆրանսիական գյուղացին մոտ 30 անբերրի տարի է տարել. հենց միայն 1715 թ. սովից մեռել են Ֆրանսիայում, ինչպես ասում են մոտ 6 միլիոն մարդ: Բոլոր ճանապարհներն ու դաշտերը բռնված էին թափառականների և աղքատների խմբերով, որոնցից, օրինակ, 1767 թ. բանտարկեցին մոտ 50 հազար հոգի:

### ԵՐՐՈՐԴ ԴԱՍԸ ԵՎ ՆՐԱ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Մարդկանց մի փոքրիկ խմբակ, որ շահագործում էր մնացած ամբողջ ազգաբնակչությանը, ազնվականների ու հոգևորականության խմբակը կարծես թե օրենքներով, թե սովորություններով սահմանազատված, կտրված էր մնացած ամբողջ բնակչությունից: Ինչպես տեսանք ազնվականներն ու հոգևորականները հարկեր չէին վճարում: Միմիայն ազնվականները կարող էին զանազան պաշտոններ գրավել: Մարդկանց այն խմբակը, որ մնացած բնակչությունից տարբերվում է հատուկ իրավունքներով ու առավելություններով, կոչվում է բարձր դաս:

Ազնվականությունը և հոգևորականությունը պետության առաջին երկու դասերն էին: Մնացած ամբողջ մասսան կոչվում էր երրորդ դաս, որի մեծ մասը կազմում էին գյուղացիները. բայց նրանցից բացի երրորդ դասի մեջ մտնում էին նաև քաղաքի բնակիչները, առաջին հերթին հարուստ քաղաքացիները—բուրժուաները:

Այդ հարուստ քաղաքացիների մի խմբի մասին մենք արդեն հիշատակել ենք: Դրանք կառավարության և ազնվականների դաշնակիցներն եյին բնակչությունը շահագործելու ասպարեզում. դրանք հարուստ վաճառականներն եյին, խոշոր կալվածների տերերը, ֆինանսիստները:

## ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱ

Բացի դրանցից, շատերը Ֆրանսիայի քաղաքներում զբաղվում եյին խոշոր առևտրով, ունեյին սեփական նավեր, արդյունաբերական ձեռնարկություններ: Նրանցից շատերը մեծ կարողություն եյին վաստակում, գնելով արհեստավոր և գյուղացի մասսաների պատրաստած գործվածքները—մահուդ, քաթան և այլն: Սակայն բնակչության մեծամասնության, այսինքն գյուղացիության խիստ շահագործումը մեծ խոչընդոտ եր հանդիսանում առևտրի և արդյունաբերության զարգացմանը: Բոլորովին աղքատացած գյուղացին չեր կարողանում գնել նոր բուրժուազիայի պատրաստած ծախու ապրանքը: Յեվ քանի դեռ ազնվականությունը մնում եր վորպես տիրապետող դասակարգ, հույս չկար, թե այդ դրությունը կփոխվի: Շատ լավ եր նկատել այդ հանգամանքը մի այլերկրացի, վոր շրջում եր Ֆրանսիայում հեղափոխությունից քիչ առաջ: Նրա ուշադրությունը գրավեց այն բանը, վոր բոլոր գեղջկուհիները վոտաբոբիկ եյին շրջում, և այդ առթիվ գրեց հետևյալ տողերը. «Մեծ չարիք պետք է համարել (առևտրի և արդյունաբերության համար) այն հանգամանքը, վոր չքավորները հրաժարվում են կոշիկի և բրդի գործվածքները գործածելուց»: Իսկ չքավորները «հրաժարվում եյին», վորովհետև փող չունեյին այդ ապրանքները գնելու համար:

## ԱՌԵՎՏՈՒՐՆ ՈՒ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՃՆՇՎԱԾ ԵՅԻՆ

Սակայն միայն այդ չեր, վոր ճնշում եր առևտրի և արդյունաբերության զարգացումը: Ֆրանսիան մի ժամանակ բաժանված եր բազմաթիվ պետությունների: Այդ ժամանակները վաղուց եյին անցել: Ֆրանսիան մի մեծ պետություն եր, բայց այդ նախկին պետությունների սահմանները դեռ պահպանվում եյին, ինչպես և զանազան մաքսատներն ու սահմանային տուրքերն այդ սահմանների վրա: Ապրանքը Ֆրանսիայի մի ծայրից մյուսը փոխադրելու համար պետք եր տասնյակ անգամ տուրք վճարել, վորի հետևանքով այնքան եր թանկանում ապրանքը, վոր հնարավոր չեր այլևս ծախել:



նում եյին իրենց գոյությունը հենց միայն այն պատճառով, վոր շահավետ եյին փողի ծարավով բռնված ազնվականության համար:

Առևտրի ազատությունը խիստ ճնշում եր նաև այն հանգամանքը, վոր ամենալայն չափով ապրանքների վաճառման իրավունքը պատկանում եր կառավարությանը կամ վորոշ առևտրական ընկերությունների: Վերջիններս կազմված եյին նույն հարուստ մարդկանցից, վորոնք փող եյին պարտք տալիս կառավարությանը և իրենց առևտրի իրավունքն ել գնում եյին կառավարությունից մեծ գումարով:

Այդպիսի դրության մեջ եր վոչ միայն մեզ հայտնի աղի, այլև հացի առևտուրը:

Արդյունաբերության զարգացմանը խոչընդոտ եյին հանդիսանում հին բազմաթիվ մնացորդները, վորոնք դարձյալ շահավետ լինելով կառավարությանը, պահպանվում եյին անձեռնմխելի: Այսպես, քաղաքներում արդյունաբերության այս կամ այն ճյուղով զբաղվելու իրավունք ունեյին միայն համքարությունների անդամներ*):

Համքարությունները միևնույն արհեստով զբաղվող արհեստավորների միություններն են: Համքարություններում լրիվ իրավունքներով ոգտվում եյին միայն արհեստանոցների տեր վարպետները: Հենց համքարություններն այն նշանակությունն ունեյին, վոր գործատեր վարպետներին պաշտպանում եյին մրցությունից, ինչպես և բանվոր—քարգահների պահանջներից, վորոնք փորձում եյին բարելավել իրենց դրությունը: Համքարության մեջ մտնելու և վարպետի կոչում ստանալու համար կառավարությունը վորոշ տուրք եր վերցնում:

Այժմ համքարություններն այլևս չեյին պաշտպանում մանր գործատիրոջը: Առևտրական—ապրանքատուն շահագործում եր նրան: Յեվ համքարություններն արդյունաբերության զարգացման համար դառնում են արգելք, խոչընդոտ:

Համքարության անդամի ամբողջ գործունեյությունը խճճված եր զանազան կանոնների ցանցով, վորոնք դանդաղեցնում և խանգարում եյին արդյունաբերության զարգացումը: Չեր կարելի վորոշ թվից ավելի բանվոր ունենալ, կամ վորոշված թվից ավելի դազգյահ և կամ գործադրության մեջ դնել վորևե նոր սարքավորում:

*) Համքարություն եյին կոչվում միևնույն արտադրությամբ զբաղվող արհեստավորների հին միությունները: Յուրաքանչյուր համքարության մեջ լրիվ իրավունքներով ոգտվում եյին միայն գործատեր—վարպետները:

Բայց այդ հերիք չեր. բացի համքային կանոններից գոյություն ունեյին անթիվ ճնշիչ ցուցմունքներ ու սահմանափակումներ զանազան գործվածքների չափի և ձևի վերաբերմամբ: Այսպես, օրինակ, կտոր ներկելու վերաբերյալ հրահանգը բաղկացած եր 317 հոդվածից: Մի ժամանակ վորոշ միտք ունեցող այդ բոլոր ցուցմունքները վաղուց եյին արդեն հնացել և պահպանվում եյին լոկ այն պատճառով, վոր յեկամտի շահավետ աղբյուր եյին կառավարության համար: Վճար եյին վերցնում անգամ այն կնիքի համար, վորով կառավարական պաշտոնյան վկայում եր, թե ապրանքը պատրաստված ե ինչպես հարկն ե:

Մատնանշված բոլոր պատճառները կաշկանդում եյին առևտրաարդյունաբերության զարգացումը: Հենց դրա համար էլ Ֆրանսիայում արդյունաբերությունն այնպես չզարգացավ, ինչպես Անգլիայում: Մենք հիշում ենք, վոր այն ժամանակ, յերբ Անգլիայում տասնյակներով ու հարյուրներով «ջենի» կար, Ֆրանսիայում ընդամենը մեկ յերկու հատ կար:

## ՄԻ ԽՈՒՄԲ ԱԶՆՎԱԿԱՆՆԵՐԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՐԳԻ ԲՆՈՒՅԹԸ

Ազգաբնակչության ամբողջ մասսայի շահագործումն ազնվականների, հոգևորականների և նրանց դաշնակից—հարուստ վաճառականների համեմատաբար սակավաթիվ խմբի կողմից վորոշակի կերպով անդրադառնում եր այն ժամանակվա Ֆրանսիայի ամբողջ կառուցվածքի և կյանքի բնույթի վրա: Կառավարական խիստ կամայականությունը և վոստիկանական դաժանությունը թագավորում եյին ամենուրեք: Հերիք եր թագավորի ստորագրած մի հրամանը՝ տասնյակ տարիներով, դատի և ցմահ փակած պահելու սրան կամ նրան Բաստիլիայի սոսկալի բանտում: Այդպիսի հրամաններ, անունների տեղը բաց թողած, հաճախ եր շնորհում թագավորն իր մերձավորներին, վորոնք ցանկացած դեպքում գործադրում եյին այդ թղթերը, նշանակելով նրանց մեջ իրենց թշնամիների անունները: Վոչ միայն թագավորը, այլև ամեն մի ազնվական անհամեմատ բարձր եր համարվում ամենահարուստ բուրժուայից, էլ չենք խոսում գյուղացու կամ արհեստավորի մասին:

Կամայականությունն ու անիրավությունը չեյին կարող բարձրացող և հարստացող բուրժուազիայի սրտովը լինել: Նրան հարկավոր եր վորոշ չափով քաղաքական ազատություն: Նա ցանկանում եր ազատ և



անսահման կերպով տնօրինել իր սեփականությունը և իր կապիտալը նրա առջև ոչ մի արգելք չունենալ: Նա ցանկանում եր վերացնել կառավարության գործունեյությունը, մանավանդ նրա ֆինանսական և հարկային գործերը: Վերջապես նրան անհրաժեշտ եր արագ, եժան և մատչելի դատարան:

Մի խոսքով՝ շատ մեծ փոփոխություններ եր ցանկանում բուրժուազիան գոյություն ունեցող կարգերում: Հին կարգերն ամեն կողմից նեղում և ճնշում եյին զարգացող բուրժուազիային և խանգարում յերկրի անտեսական զարգացմանը: Սակայն կառավարությունն ու ազնվականները չեյին ուզում կամավոր կերպով զիջել իրենց իրավունքներն ու արտոնությունները: Այդ կարելի յեր խլել միայն ուժով:

## ԴԺԳՈՀ ՅԵՎ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ ՊԱՏՐԱՍՏ ՏԱՐՐԵՐԻ ԲԱՆԱԿԸ ԳՅՈՒՂՈՒՄ ՅԵՎ ՔԱՂԱՔՈՒՄ

Այդ պայքարում կռվում բուրժուազիային կողմնակից եր դրկված ու շահագործման տակ ճնշված գյուղացիությունը: Նա միշտ էլ պատրաստ եր ապստամբելու իր տերերի դեմ, այրել, դղյակները ավարել պաշտոնյաներին: Գյուղացիական խռովությունները սովորական յերևույթ եյին այդ ժամանակվա Ֆրանսիայում և հետզհետե ավելի ու ավելի եյին կրկնվում:

Քաղաքներից մեկում ժողովուրդը գրավեց հացավաճառ ապրանքատերերի տները, ջարդոտեց կահկարասիները, քարուքանդ արեց ջրաղացները: Քաղցած ամբոխը մտավ Պարիզ և այրեց հացի խանութները: Միքանի գավառներում գյուղացիներից բաղկացած ամբոխն ուժով ներս մտավ դատարանները, նոտարների և դատախազների մոտ, վոչնչացնելով իրենց ճորտացնող ատելի վավերագրերը:

Սակայն դժգոհ եյին վոչ միայն գյուղացիական մասսաները, այլև քաղաքի բնակիչները: Քաղաքները, մանավանդ Պարիզ մայրաքաղաքը, լիքն եյին դժգոհ տարրերով: Դրանք արհեստավորներն ու բանվորներն եյին:

Արհեստավորական միություններում — համքարություններում — միայն մանր գործատերերը—արհեստանոցի տերերը կամ վարպետներն եյին բոլոր իրավունքներով օժտված և լիակատար տեր ու տնօրեն եյին: Այդ ժամանակ մեծ գործարաններ դրեթե չկային, և նման գործատերերն ընդամենը միքանի, յերբեմն էլ մի [illegible] ունեյին: Հին ժա-

մանակ յուրաքանչյուր քարգյահ վորոշ թվով տարիներ աշխատելուց հետո կարող էր վարպետ-գործատեր դառնել: Այդ հույսն ոգևում էր նրան տանելու իր անապատ և ստոր վիճակի բոլոր դառնությունները: Բայց այժմ վարպետ դառնալու համար մեծ գումար պետք էր վճարել կառավարությանը. իսկ այդպիսի գումարներ շատ քչերը, միայն վարպետների զավակները հնարավորություն ունեյին վճարելու: Ուրեմն և միայն նրանք կարող եյին գործատեր-վարպետ դառնալու հույս ունենալ, իսկ մնացած քարգյահները դատապարտված եյին իրենց ամբողջ կյանքի ընթացքում աշխատել վորպես վարձու բանվոր, իրենց գործատերերի հսկողության տակ՝ մնալով մի տեսակ անչափահաս մինչև խոր ծերություն: Քարգյահներն ապրում եյին իրենց գործատիրոջ տանը, բոլոր ամենայնի նրանից կախված և առանց նրա թույլտվության չեյին համարձակվում նույնիսկ ամուսնանալ:

Սակայն վարպետների դրությունն էլ մի բան չեր: Նրանց էլ ճնշում եյին հարկերն, ինչպես վոր գյուղացիներին: Մրցակցությունը նրանց շարքերից առաջ բերեց ավելի ունեւորներ, վորոնք սկսեցին աշխատանք տալ իրենց ընկերներին, ավելի չքավոր վարպետներին և այդպիսով շահագործել նրանց:

ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Քաղաքներից դուրս, արվարձաններում, վորոնք ենթակա չեյին համքարային կանոններին, և ուր արհեստանոցների չափը կամ մեծությունը սահմանափակված չեր, սկսեցին առաջանալ խոշոր արդյունաբերական ձեռնարկություններ, վոր հիմնում եյին կամ նոր բուրժուազիան և կամ կառավարությունն իրենց պետքերի համար: Այդ ձեռնարկություններում, մանուֆակտուրաներում դեռ մեքենաներ չկային, միայն ձեռքով եյին աշխատում, բայց աշխատող բանվորների թիվը հասնում էր արդեն միքանի տասնյակների:

Բոլոր բանվորներն էլ ենթակա եյին տաժանակիր կարգ ու կանոնի: Գործարան գալով լուսադեմին, նրանք աշխատում եյին մինչև ուշ գիշեր, ճաշելով և նախաճաշելով հենց աշխատանքի ժամանակ. դրա համար նրանց տրվում էր միայն կես ժամ դադար: Նրանք սոսկալի տուգանքների եյին ենթարկվում կարգ ու կանոնի ամեն մի խախտման համար. օրինակ, տուգանքի եյին ենթարկվում արհեստանոցում ման գալու, մի բաժնից մյուսն անցնելու համար և այլն: Նրանց բնակարանները



կյանքն էլ հսկողության տակ էր. նրանք պարտավոր եյին յեկեղեցի հաճախել և նույնիսկ տոն օրերին տուն գնալ յերեկոյան ժամը 10-ից վոչ ուշ:

Այդ բանվորների տնտեսական դրությունը սոսկալի յեր: Նրանց աշխատավարձը շատ չնչին էր, վորովհետև նրանց հետ մրցում եյին գյուղերի բնակիչները, վորոնք իրենց սակավ յեկամուտ տվող գյուղատնտեսական աշխատանքներին իբրև օժանդակող զբաղմունք զանազան գործվածքներ եյին պատրաստում և բավականանում շատ քիչ վճարով: Դրա համար էլ քաղաքների մանուֆակտուրաներում էլ շատ քիչ եյին վճարում բանվորներին, մինչդեռ հացը և մյուս մթերքները շատ թանկ եյին: Առևտրականների ընկերություններն ու կառավարությունը, վորոնց ձեռքին էր հացի առևտուրը, մեծ չափով բարձրացնում եյին հացի գինը, վորն ավելի յեր բարձրանում քաղաքի սահմաններում տանվող տուրքերի պատճառով:

Զարմանալի չէ, վոր նման հանգամանքներում քաղաքի չքավոր բնակչությունը դրեթե միշտ էլ սովի վտանգի առջև էր կանգնած և մշտական խուլ հուզման մեջ: Մթերքների գների ամենափոքր բարձրացումն անգամ, վոր առաջանում էր այնքան հաճախակի կրկնվող անբերքություններից, բավական էր ապստամբություն ծնելու համար:

Այսպես, 1789 թ. գարնանը, բանվորները քարուքանդ արին վոմն Ռևեյոնի գործարանն ու տունը և նրա կողքի բուրդի գործարանը, վոր մի ուրիշ գործատիրոջ էր պատկանում: Հենց միայն այն լուրը, թե Ռևեյոնը օրական 15 սուն*) բավական է համարում բանվորի համար, հերիք էր, վոր ահագին ամբոխ հավաքվեր, վորը և զայրացած ջարդուփշուր արեց հիշյալ ձեռնարկությունները: Խռովությունը տևեց յերկու օր: Օգնության կանչված զորքը հրացան էր արձակում քարերով և [illegible] զինված ամբոխի վրա: Ձերբակալվածներից յերեք հոգու դահիճին հանձնեցին և կախաղան բարձրացրին... X

ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՆՐԱ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Բացի կիսաքաղց-արհեստավորների և բանվորների ամբոխից, Պարիզը վորպես մտավոր և կուլտուրական կյանքի կենտրոն, լիքն էր բազմաթիվ չքավոր մտավորականներով: Վերջիններս, չնայած իրենց տաղանդին և գիտությանը, հին իրավակարգում, յերբ գլխավոր դերը

*) Սու = $\frac{1}{20}$ ֆրանկի, իսկ ֆրանկը (մինչև պատերազմը) հավասար էր 37 կոպ.:

կատարում եյին ծաղումն ու ազնիվներին պատկանելը, իրենց ուժերն ու ընդունակությունները գործադրելու տեղ չեյին գտնում: Նրանք յենթարկվում եյին ամեն տեսակի ճնշման:

Այսպես, օրինակ, ամենատաղանդավոր գրող Վոլտերը, ինչ-վոր մի կատակի համար, ծեծի յենթարկվեց մի ազնվականի լաքեյների կողմից: Նույն Վոլտերը բանտարկվեց թագավորի դեմ գրած իր մի վոտանավորի համար և այլն: Այդպիսի մարդիկ գոյություն ունեցող կարգերի ամենաոխերիմ թշնամիներն եյին, և հենց նրանց շարքից դուրս յեկան ապագա հեղափոխության առաջնորդներն ու գործիչները:

### ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆ ԱՆԽՈՒՍԱՓԵԼԻ ՅԵՐ

Այսպիսով փոփոխությունները Ֆրանսիայի հասարակական և քաղաքական կառուցվածքում միանգամայն անհրաժեշտ եյին: Առանց այդ փոփոխությունների Ֆրանսիայի տնտեսական զարգացումն անհնարին եր: Սակայն առանց կռվի, առանց հեղափոխության անկարելի յեր այդ փոփոխությունները ձեռք բերել:

Դրա համար գոյություն ունեյին արդեն դժգոհ և զայրացած մասսաներ, վորոնք կարող եյին հրապարակ գալ այդ կռվում իբրև մարտիկ նոր կարգերի համար:

## ՀԱՐՑԵՐ ՅԵՎ ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ովքե՞ր եյին կազմում տիրապետող դասակարգը Ֆրանսիայում հեղափոխությունից առաջ:

2. Ովքե՞ր եյին կազմում ազգաբնակության մեծամասնությունը:

3. Ի՞նչպես եյին բաշխված հարկերը և ի՞նչ միջոցներով եյին գանձվում:

4. Ի՞նչ պարտավորություններ ունեյին գյուղացիները կալվածատիրոջ վերաբերմամբ:

5. Ի՞նչպես եր ազդում փողային տնտեսության զարգացումը կալվածատիրոջ և գյուղացու հարաբերությունների վրա:

6. Ովքե՞ր եյին կազմում ազնվականության վերին խավը, և ի՞նչ դրության մեջ եր այդ խավը:

7. Ի՞նչպես եր անդրադառնում գյուղացիության չահազրկումը գյուղացիական տնտեսության դրության վրա: Ի՞նչ դրության մեջ եր գյուղացիական տնտեսությունը:



8. Ի՞նչպես եր անդրադառնում գյուղացիական տնտեսության դրությունը արդյունաբերության զարգացման վրա:

9. Ուրիշ ել ի՞նչ հանգամանքներ եյին դանդաղեցնում արդյունաբերության զարգացումը և ճնշում առևտուրը:

10. Ի՞նչպիսի կառավարական ձև կար Ֆրանսիայում ընդհանրապես, և ինչու՞ բուրժուազիան հակառակ եր նրան:

11. Ո՞վ կարող եր բուրժուազիայի կողմն անցնել հին իրավակարգի դեմ նրա պայքարում:

12. Ի՞նչպիսի դրության մեջ եյին քաղաքի արհեստավորներն ու բանվորները:

13. Ինչու՞ յեր հեղափոխությունն անխուսափելի:

## ՆՅՈՒԹ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԱՐ

### ՏՐՈՒԱ ՔԱՂԱՔԻ ԱՌԵՎՏՐԱԿԱՆՆԵՐԻ ՀՐԱՀԱՆԳԻՑ

«Վորպեսզի բոլոր մաքսատները փոխադրվեն սահմանների*) մոտ, պեյաժներն**) ու պետական գանձարանի իրավունքները վերացվեն առանց բացառության: Այդ արգելքները, վորոնց հանդիպում է առևտուրն ամեն քայլափոխում, և առևտրականների կրած ճնշումները, կարծես մի թշնամի յերկրում, զրկում են նրան այն թանգագին ազատությունից, վորն ստեղծում է նրա հարստությունը և նրա ուժը:

. . . . . . . .

«Վորպեսզի վերացվեն առևտրի բացառիկ իրավունքի վերաբերյալ բոլոր արտոնությունները: Դրանք խանգարում են մրցակցությանը և արհեստական կերպով այնպիսի հաջողություններ ստեղծում, վորոնք տեղի պետք է ունենան միայն շնորհիվ անհատական ընդունակությունների...

«Վորպեսզի վերացվեն մանուֆակտուրների տեսուչների***) ինստիտուտները, ինկատի ունենալով նրանց անօգուտ լինելը, իսկ նրանց

*) Մինչհեղափոխական Ֆրանսիայում մաքս եյին վերցնում վոչ միայն ապրանքներն արտասահմանից ներմուծելու, այլև յերկրի մի մասից մյուսը տեղափոխելու դեպքում:

**) Այսպես եյին կոչվում այն հատուկ տուրքերը, վոր գանձվում եյին ապրանքները ճանապարհներով, կամուրջներով, գետերով և այլն տեղափոխելու դեպքում:

***) Տեսուչ-չինովնիկներ, վորոնք հետևում եյին ապրանքներ պատրաստելու կարգ ու կանոնների կիրառմանը:

պարտականությունները հանձնվեն առևտրական դասի կողմից ընտրըված յերկու վաճառականի, վորոնք անմիջական ծանոթություն են ունենալու արտադրության վարելու գործին:

«Վերջապես վորևէ ապրանքի ամեն մի հատն այլևս կնքման (պլոմբիրովկա) յենթակա չլինի, այլ նշանակված լինեն միայն չափերը կամ իրերի թիվը յուրաքանչյուր հատի գլխին, և կրեն գործարանատիրոջ և առևտրականի անվանական կնիքը:

«Վերջապես առևտրականների այրի կանայք իրենց այրիության ժամանակ կարողանան շարունակել առևտուրը, առանց պարտավոր վճարելու համքարության մեջ ընդունվելու համար:

«Վերջապես վոչ մի գյուղական ձեռնարկատիրոջ չանհանգստացնեն իր գործվածքները վաճառելու համար, քանի վոր ազատությունը արդյունաբերության բարգավաճման աղբյուրն է:

«Վերջապես կշռի և չափի մի ընդհանուր միավոր սահմանվի ամբողջ պետության համար:

«Վերջապես վերացվի գինու և աղի*) բաժը: Դա այնքան ծանր լուծ է, վոր ավելորդ է նույնիսկ ապացուցել, թե վորքան է ճնշում ազատ ծնված մի ժողովրդի:

«Վերջապես քաղաքացիական և քրեական օրենսգրքի բարենորոգումը հաստատի արագ գործող և ավելի քիչ քայքայիչ դատարան:

«Վերջապես քաղաքացիների ազատությունը չտուժի այսուհետև ձերբակալության վերաբերյալ թագավորական**) հրամանների չարաշահելուց:

«Վերջապես մինիստրները պատասխանատու լինեն ազգի առաջ հանձինս Գեներալ շտատների***):

«Վերջապես վորոշվի Գեներալ շտատների գումարման ժամանակաշրջանը, և սահմանվի պետական պարտքի չափը:

«Վերջապես վոչ մի հարկ կարելի չլինի նշանակել առանց ազգի համաձայնության:

«Վերջապես հողային տուրք սահմանվի, վորն ամենաարդարացի հարկն է:

*) Գինու և աղի վրա դրված հարկերն ամենագլխավոր անուղղակի հարկերն եյին և չափազանց ծանր բեռ եյին աղքատության համար:

**) Հին ռեժիմի ժամանակ զինվորական, քաղաքացիական և հոգևոր բոլոր բարձր պաշտոնները մատչելի եյին բացառապես ազնվական կոչում ունեցողներին:

***) Գեներալ շտատներ—դասերի ներկայացուցիչների ժողով:



«Վերջապես բոլոր յեկեղեցական և ազնվականական կալվածները տուրքադրվեն այն չափով, ինչ չափով մյուս խավերի հողերն են տուրքադրված, և միևնույն ցուցակով:

«Վերջապես հարկերի գանձումը կատարվի քաղաքային պաշտոնյաների ձեռքով, իսկ դրամներն անմիջապես մուծվեն պետական գանձարան*):

## ՊԱՏՎԵՐՆԵՐ ՆՅՈՒԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Ի՞նչ միջոցներ են առաջարկում Տրուա քաղաքի առևտրականներն առևտրի և արդյունաբերության բնագավառում:

2. Բացատրեցեք, թե ինչու հատկապես այդ պահանջներն են դնում առևտրականները:

3. Ինչու՞ Տրուա քաղաքի առևտրականները դեմ եյին գինու և աղի վրա դրված բաժին:

4. Բացատրեցեք, թե ինչ քաղաքական պահանջներ եյին դնում Տրուա քաղաքի առևտրականները:

5. Ինչո՞վ է բացատրվում նրանց պահանջը հողային տուրքի և հավասարականության ու անխտրականության հողերի տուրքադրման մասին:

6. Ինչու՞ եյին առևտրականները պահանջում, վոր հարկային վճարները մուծվեն պետական գանձարան:

I. Կազմեցեք յերկու գրավոր զեկուցում.

1. «Բուրժուազիայի տնտեսական պահանջները հեղափոխության նախօրյակին»:

2. «Բուրժուազիայի քաղաքական պահանջները հեղափոխության նախօրյակին»:

Զեկուցումը կազմելիս օգտվեցեք «Ֆրանսիական հեղափոխության նախօրյակին» մշակված հատվածից:

II. Բանավոր զեկուցում պատրաստեք հետևյալ թեմայով.

«Գյուղացիների դրությունը հեղափոխության նախօրյակին»: Դրա համար օգտագործեք «Վերի գյուղացիների հրահանգը» Լ. Ի. Ռուզերի «Սորկատիրական հասարակությունից դեպի պրոլետարական հեղափոխությունը» գրքից, յերես 151—158:

*) Այսինքն վերացվի Ֆրանսիայում լայն կերպով կիրառվող հարկերի գանձման կապալով տալու կամ վաճառելու սիստեմը:

## § 2. ՀԻՄՆԱԴԻՐ ԺՈՂՈՎ

### ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՆԱԽՈՐՅԱԿԻՆ

Որքան ավելի յեր մոտենում XVI դարու վերջին, այնքան ավելի յեր վատանում Ֆրանսիայի դրությունը: Հետզհետե ավելի ու ավելի յեր ծանրանում հարկերի լուծը: Ֆրանսիական կառավարությունը կռվի բռնվեց Անգլիայի հետ, վորը մեծ ծախքեր եր պահանջում, և դրա համար պետության ծախքերն ավելի սկսեցին գերազանցել յեկամուտներին: Նույնիսկ հարուստ վաշխառուները, ումից կառավարությունը փող եր պարտք վերցնում, սկսեցին յերկյուղ կրել իրենց տոկոսների նկատմամբ և անցնել դժգոհների շարքերը: Էլ ի՞նչ խոսք մնացած բնակչության մասին. գյուղացիները պարբերաբար կերպով ըմբոստանում եյին պաշտոնյաների և հարկահավաքների դեմ. Լիոն արդյունաբերական մեծ քաղաքի արհեստավորներն ապստամբեցին և ամբողջ քաղաքը մի քանի որ շարունակ իրենց ձեռքը վերցրին:

Հացը թանգանում եր կրկնվող անբերրիության պատճառով, գործազրկությունն աճում եր. 1788 թվին գործազուրկների թիվը հասել եր մոտ 200,000-ի, իսկ հացը թանգացել 4 անգամ: Կառավարությունը փող չուներ սովորական ծախքերը հոգալու, ուստի դադարեց իր պարտատերերին տոկոսներ վճարելուց:

Այդ հանգամանքներում թագավորական անսահման իշխանության տապալումը դարձավ ամբողջ յերկրի մարտական լոզունգը: Կառավարությունն անելանելի վիճակի մեջ եր և այդ հանգամանքից ստիպված համաձայնեց հրավիրել ժողովրդի ներկայացուցիչներին:

### ԳԵՆԵՐԱԼ ՇՏԱՏՆԵՐ

Թագավորն ու պալատականները վճռեցին վերականգնել անդրջրհեղեղյան հիմնարկության՝ դասերի ներկայացուցիչների ժողովի գործունեությունը, վորը «Գեներալ շտատներ»*) անունն եր կրում:

Այդ հիմնարկությունն այդպես եր կոչվում, վորովհետև նրան մասնակցում եյին դասերի կամ շտատների ներկայացուցիչները: Հենց այդ-

*) Շտատներ—նշանակում ե՝ դասեր, այսինքն՝ դասերի ներկայացուցիչներ: Գեներալ շտատներ եր կոչվում, վորպեսզի զանազանեին նույնպիսի ներկայացուցչական ժողովներից, վորոնք առաջ առանձին դքսություններ եյին:



պիսի ներկայացուցիչներից տարբերելու համար՝ տարբեր շրջաններում նրանց անվանում եյին գլխավորների, այսինքն՝ ընդհանուրների: Գեներալ շտատներն այնպիսի հիմնարկություն եր, վորի հետ թագավորը միայն խորհրդակցում եր՝ առանց նրա կարծիքն իրեն համար պարտադիր համարելու: Նրան մասնակցում եյին յերեք դասերի ներկայացուցիչները—ազնվականություն, հոգևորականություն և յերրորդ դասը (թե վորն եր այն ժամանակ յերրորդ դաս կոչվում, այդ մենք գիտենք): Դասերից յուրաքանչյուրը հարցերը քննում եր և վճռում եր առանձին և համարյա միշտ ազնվականության և հոգևորականության ձայները դեմ եյին լինում յերրորդ դասի ձայնին: Այդ հիմնարկությունը չգումարվեց այլևս մոտ 200 տարի:

Այդ շտատների անելիքը տարբեր կերպով եյին պատկերացնում կառավարությունն ու ժողովուրդը: Թագավորը հանձին այդ «Գեներալ շտատների» մի հնազանդ հիմնարկություն եր ուզում տեսնել, վոր նոր հարկեր պետք ե հաստատեր և «խոնարհ կերպով առ վոտս թագավորի արկաներ իր խնդիրները»: Իսկ ժողովուրդը կարծում եր, թե իր ներկայացուցիչները պետք ե պետական նոր կարգ ստեղծեն: Թագավորը յենթադրում եր, թե իր առաջ տեսնելու յե յերեք զանազան դասերի հնազանդ ներկայացուցիչներին—ազնվականությունից, հոգևորականությունից և քաղաքի բնակիչներից ու գյուղացիներից՝ առանձին-առանձին: Իսկ ժողովուրդն, ընտրելով իր պատգամավորներին, յենթադրում եր, թե նա ուղարկում ե ամբողջ ազգի, ամբողջ ժողովրդի և վոչ թե զատ-զատ դասերի ներկայացուցիչներին:

Ըստ հին սովորության՝ ով իր պատգամավորներին ուղարկում եր, նրանց հրահանգներ ( наказ ) կամ պատգամի տետրակներ եր տալիս, վորոնց մեջ ձևակերպվում եյին նրանց ուղարկողների պահանջները, ցանկությունները, հույսերը և այլն, ինչ վոր պետք է իրագործեյին շտատների պատգամավորները: Գյուղացիք իրենց հրահանգներում խոսում եյին հողի պակասության, հարկերի սարսափելի ծանրության և ֆեոդալական իրավունքների անարդարության մասին... Բուրժուազիան պահանջում եր սահմանադրություն, այսինքն՝ այնպիսի օրենքներ, վորոնք վորոշեյին պետության կառավարելու կարգը: Նա պահանջում եր վերացնել բարձր դասերի հարկերին վերաբերող արտոնությունները: Նա պահանջում եր, վոր հարկեր սահմանելու իրավունքը թողնվի ժողովրդական ներկայացուցիչներին: Բուրժուազիան ցանկանում եր նույնպես, վոր վոչնչացվեն ներքին մաքսատները, առևտրական մենաշնորհ-

ները, սահմանափակվեն պալատի ծախսերը, կանոնավորվեն ու վերակառուցվեն պետական գործերը:

Ձեզ զարմանալի չէ, որ երբ 1789 թ. մայիսին հավաքվեց այդ հինավուրց հիմնարկությունը, նրա ներսում և նրա ու թագավորի միջև մի խիստ կռիվ սկսվեց: Առաջին երկու դասերի՝ ազնվականության և հոգևորականության ներկայացուցիչները, որոնց նրա բարձր ներկայացուցիչները գործին նայում էին թագավորի ակնոցներով, նրա նման: Իսկ երրորդ դասի ներկայացուցիչները, հենված ամբողջ երկրի պաշտպանության վրա, ուրիշ կերպ էին նայում գործին: Նրանք անհրաժեշտ էին համարում բոլոր հարցերն էլ քննության առնել այդ դասերի միասին, ընդհանուր նիստերում: Հաղթությունը մնաց երրորդ դասին, և դասերի ժողովի փոխարեն սահմանվեց Ազգային ժողով. վերջինս մյուս երկու դասերն ստիպողաբար հրաժարվեցին իրենց առանձին նիստերից և միացան երրորդ դասի ներկայացուցիչներին: Այդ ժողովի պատգամավորները հանդիսավոր խոստում տվին չցրվել, մինչև որ Ֆրանսիայի համար քաղաքական նոր կարգեր չմշակեն:

Այդ ամենը միանգամայն անընդունելի էր թագավորի և պալատականների համար: Այնուամենայնիվ հին կարգերի պաշտպանները վճռեցին համբերել միառժամանակ և գաղտնի կերպով վարձայիններ լարել ժողովի դեմ:

## ԲԱՍՏԻԼԻԱՅԻ ԱՌՈՒՄԸ

Եվ իրոք, թագավորն ամառը զորքը շարժեց դեպի Փարիզ և հրաժարեցրեց բուրժուազիայի շարքերից առաջ քաշված ժողովրդականություն վայելող մինիստր Նեկկերին: Բոլորի համար էլ ակնհայտնի դարձավ, որ թագավորը վճռել է հակահեղափոխական հեղաշրջում կատարել: Ամենայն հավականությամբ կառավարությանը կհաջողվեր այդ, և նա ժողովի պատգամավորներին կցրեր զինվորական ուժի օգնությամբ, եթե ասպարեզ չգար այդ ժամանակ մի նոր գործոն՝ Փարիզի հեղափոխական բանվորներն ու արհեստավորները:

Փարիզի չքավոր մասսան, անբերրիության և խիստ թանկության հետևանքով, ամբողջ ձմեռը տանջվում էր քաղցից: Երբ ժողովրդական ներկայացուցիչները հավաքվեցին, չքավոր մասսան հանգստացավ և սպասում էր իր վիճակի բարելավմանը: Բայց երբ նա լսեց ժողովը ցրելու պատրաստությունների չարագուշակ լուրը, և երբ Նեկկերին հեռացրին պաշտոնից, ժողովուրդը սարսափելի կերպով հուզվեց, վրդովվեց և սկսեց զինվել՝ ինչով կարող էր: Երևան եկան մինչ այդ անհայտ և անծանոթ ագիտատորներ և առաջնորդներ, որոնք այսպիսի կրակոտ ճառեր էին ասում. «Հասել է ժամը, ահավոր ժամը. ճնշողներն ու ճնշվածները կանգնած են դեմառդեմ: Պետք է կամ հենց այժմ մեռնել, կամ ազատվել ընդմիշտ: Ուրախությամբ դիմավորենք այդ ժամին: Ժամանակն է գոչելու՝ ի զեն: Թող ամբողջ Փարիզը և ամբողջ Ֆրանսիան գոռա որոտաձայն՝ ի զե՛ն»:

Սկզբի շրջանում ժողովուրդը գրեթե անզեն էր: Թագավորական վարձկանները, օտարազգի զորագնդերը գնդակահարում էին նրան փողոցներում: Բայց հետո, զինվելով իր իսկ ձեռքերով շինած տեգերով, ժողովուրդը հարձակվեց նախ քաղաքի ուղեփակների վրա, ուր մաքս էին հավաքում քաղաք մտած մթերքներից, իսկ հետո էլ ուղևորվեց դեպի Բաստիլիա բերդը:

Այդ բերդը քաղաքական մի բանտ էր՝ կանգնած բանվորական արվարձանի սահմանում և իր հրանոթների սպառնալիքի տակ էր պահում այդ արվարձանը: Բերդը համարվում էր անմատչելի, իսկ բերդի պարետը, որ հին ռեժիմի հավատարիմ ծառան էր, վճռել էր մինչև վերջը պաշտպանվել:

«Հանձնեցեք Բաստիլիան», գոռում էր ժողովրդի ահեղ պահանջը: Ինչ որ մի ժամագործ և ժողովրդի կողմն անցած մի զինվոր կտրեցին այն շղթան, որից կախված էր շարժական կամուրջը: Կամուրջը ցած ընկավ և բազմությունը խուժեց ամրոցի առաջին բակը, որ ամեն կողմից շրջապատված էր բարձր պարիսպներով: Բերդապահներն սկսեցին կարկուտի պես գնդակ տեղալ ժողովրդի վրա: Հենց այն է, բազմությունն ուզում էր յետ նահանջել, երբ կամուրջի շղթան կտրող ժամագործն ու զինվորն առաջին օրինակը տվին և բազմության առաջնորդեցին դեպի առաջ: Չորս ժամ տևեց արյունահեղ կռիվը, բայց ամրոցը մնում էր անմատչելի: Հանկարծ նրա առաջ երևացին արքայական գվարդիայի մի խումբ զինվորներ, որոնք անցել էին ժողովրդի կողմը: Նրանք իրենց հետ հրանոթ էլ էին բերել: Այն ժամանակ բերդապահներն ընկճվեցին և առանց պարետի հրամաններին ուշ դարձնելու՝ սպիտակ դրոշ պարզեցին: Բերդն ընկավ: Դա այնպես վախեցրեց թագավորին, որ նա սկսեց զիջումներ անել և վերադարձրեց Նեկկերին: Ազգային ժողովը փրկված էր:

## ԺՈՂՈՎԻ ԲՆՈՒՅԹԸ

Սակայն Ազգային կամ Հիմնադիր ժողովում վոչ արհեստավորների կամ բանվորների ներկայացուցիչներ կային, վոչ էլ գյուղացիների: Նրա անդամների մեծ մասը, չհաշված նույնիսկ ազնվականներին ու բարձր հոգևորականությունը, շատ ունևոր մարդիկ եյին, հարուստ վաճառականներ, խոշոր առևտրականներ կամ այնպիսի մարդիկ, վորոնց շահերը սերտորեն կապված եյին այդ ունևոր մարդկանց հետ, այսինքն փաստաբաններ, իրավաբաններ:

Այդ պատգամավորների համար քաղաքի ընչազուրկ մասսայի հանդես գալն ավելի սոսկալի յեր, քան թագավորական պալատի հակահեղափոխական ծրագրերը: Պարիզի հարուստներն շտապեցին շուտափույթ կերպով կազմակերպվել: Զինված ժողովրդին իրեն հակադրելու միջոց նրանք էլ ստեղծեցին իրենց զորքը—ազգային գվարդիան, քաղաքային դուման լցրին իրենց ներկայացուցիչներով և ամեն կերպ աշխատում եյին խանգարել ժողովրդի հաղթանակը: Մոտավորապես նույն գիծն եր բռնել և ժողովը: Բաստիլիայի վերցնելուց յերկու որ առաջ Միրաբոն, ամենահայտնի պատգամավորներից մեկը և յերրորդ դասի առաջնորդը, նախազգուշացնում եր ժողովին վտանգավոր և խռովարար ապստամբների դեմ: Այսպես ժողովրդական մասսաների ձեռքով իր փրկությունը ձեռք բերած բուրժուական ժողովի հետագա ամբողջ գործունեյությունն իր վրա կրում եր յերկյուղի և թշնամանքի կնիքը հանդեպ ժողովրդական մասսայի:

## ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՆ ՎԱԽԵՆՈՒՄ Ե ԺՈՂՈՎՐԴԻՑ

Ժողովն աշխատում եր հեռու պահել ժողովրդական լայն մասսաները քաղաքական կյանքից: Նա ստեղծեց նոր սահմանադրություն, վորով միայն ունևոր մարդիկ ստացան ընտրական իրավունք: Այդպիսով ազգաբնակչության ամբողջ յերկու յերրորդին կտրեցին քաղաքական կյանքից: Ժողովի անդամներից մեկն ասում եր. «Ով ոչինչ չունի, նա հասարակության անդամ չի: Կառավարությունը և օրենսդրությունը սեփականատերերի գործն ե, քանի վոր միայն նրանք են դրանով շահագրգռված»:

Սահմանադրությունը թագավորին շատ մեծ իշխանություն եր վերապահել, վորովհետև այդ իշխանությունը հարկավոր եր հարուստ



սեփականատերերին իբրև ամբարտակ քաղաքի և գյուղի չքավորության ճնշման հանդեպ: Միայն հարուստ մարդիկ կարող եյին մասնակցություն ունենալ գործերի կառավարության թե գյուղում և թե քաղաքում: Նրանց եր պատկանում նաև ազգային գվարդիայի զինվոր լինելու բացառիկ իրավունքը: Մի խոսքով՝ ժողովրդական լայն մասսաները՝ քաղաքի և գյուղի չքավորությունն ամենուրեք զրկված եր հասարակական և քաղաքական կյանքին մասնակցելու իրավունքից:

## ԺՈՂՈՎԸ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԸ

Այդպես հեղափոխության հենց առաջին քայլերից յերրորդ դասը, վոր սկզբում կարծես մի միություն եր կազմում, բաժանվեց յերկու մասի, վորոնցից յուրաքանչյուրն իր շահերն ու իր պահանջներն ուներ: Յերևաց, վոր յերրորդ դասի ավելի ունևոր մասը սերտորեն կապված ե ազնվականների, կալվածատերերի և պալատականների շահերին: Դրա ապացույց կարող ե համարվել գյուղացիական հարցի լուծման ձևը:

Գյուղացիությունը համբերությամբ սպասում եր, թե յերբ և ժողովը բարեհաճելու վերջապես մտաբերել իր կարիքները: Յեվ քանի վոր ժամանակը անցնում եր, իսկ ժողովը գյուղացիական հարցով չեր զբաղվում, ուստի գյուղացիները վոտքի յելան և սկսեցին հրդեհել ազնվականների դղյակներն ու ապարանքները:

Այդ հանգամանքն ունեցավ իր ազդեցությունը. օգոստոսի 4-ի գիշերն ազնվական-պատգամավորները հանդիսավոր կերպով հայտարարեցին, թե հրաժարվում են գյուղացիների վերաբերյալ իրենց իրավունքներից: Ազնվականներն իրենց այդ ճարպիկ քայլով, ժամանակին արած զիջումով, ուզում եյին փրկել այն, ինչ կարելի յեր դեռ պահպանել: Բայց վոչ մի օրենք չհրատարակվեց, վորը գործնականապես կիրառեր այն, ինչ հայտարարված եր: Յեվ գյուղը շարունակեց իր հին կյանքը: Օրենք հրատարակեցին, վորով գյուղացիները կարող եյին յետ գնել կալվածատերերի նկատմամբ ունեցած իրենց պարտավորությունները, բայց հետգնման պայմաններն այնքան ծանր եյին, վոր գյուղացին իրոք շարունակեց մնալ իր ճորտական վիճակում: Դրա համար մեծ գումար պետք եր վճարել, են էլ ամբողջ գումարը միանգամից և ամբողջ գյուղով միասին:

Ժողովի նույն վերաբերմունքը ցույց տվեց նաև այն հարցի

հարցին, վոր կալվածատերերը խլել եյին գյուղացիներից: Այդ հողերը թողեցին կալվածատերերի տրամադրության տակ. իսկ այն բոլոր հողերը, վոր գյուղացիներն եյին գրավել անկարգությունների ժամանակ, պետք ե վերադարձնեյին իրենց տերերին:

## ԺՈՂՈՎԸ ՅԵՎ ԲԱՆՎՈՐՆԵՐԸ

Իր բանվորական քաղաքականությամբ ևս Ժողովը հանդես յեկավ իբրև հարուստների շահերի պաշտպան: Հեղափոխությունն սկսվելուց յերկու տարի անց բուրժուազիայի ուժն աճեց, տնտեսությունը զարգացավ: Քաղաքների նոր տերերը—բուրժուաները—սկսեցին ուժեղ կերպով իրենց զբաղել, նոր տներ շինել: Հյուսներն ու այլ կառուցող բանվորները ցանկանալով օգտագործել այդ մոմենտը և բարելավել իրենց դրությունը՝ գործադուլ սկսեցին կառուցողական սեզոնի ամենաթեժ շրջանում, 1791 թ. ամառը: Կապալառուները, վաճառականներն ու ձեռնարկատերերը դիմեցին Ժողովի օգնությանը, և վերջինս հրատարակեց այն հռչակավոր օրենքը, վորն արգելում ե բանվորներին, խստագույն պատժի սպառնալիքով, միանալ իրենց շահերը պաշտպանելու համար: Բանվորների և արհեստավորների ժողովները ցրում եյին զինվորական դրության վերաբերյալ օրենքի հիման վրա: Այդ միջոցով մահացու հարված հասցրին բանվորների դեռ նոր սկսված շարժմանը:

## ԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՅՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Այսպիսով Ազգային ժողովը շատ քիչ բան արեց գյուղացիների դրությունը բարելավելու համար և մի շարք միջոցներ մշակեց չքավոր արհեստավորության և բանվորության դեմ: Յեվ ընդհակառակն, այնտեղ, ուր հարկավոր եր պաշտպանել բուրժուազիայի շահերը, նա բավականաչափ վճռականություն դրսևորեց կռվելու հին կարգերի դեմ: Նոր սահմանադրությունը, թեև հեռացրեց չքավոր մասսաներին քաղաքական գործունեյությունից, այնուամենայնիվ մինչհեղափոխական կարգերի համեմատությամբ մի խոշոր քայլ եր դեպի առաջ: Ֆրանսիան այլևս թագավորի և պալատականների կամայականությամբ չեր կառավարվում, այլ վորոշ օրենքների հիման վրա: Բացի դրանից վերացան մի կողմից ազնվականության բոլոր արտոնությունները և



բացառիկ դրությունը, մյուս կողմից էլ ազգաբնակության մնացած մասսայի իրավազրկությունը:

## ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԴԵԿԼԱՐԱՑԻԱՆ

Այդ հանգամանքը նշում ե նաև այսպես կոչված «Մարդու և քաղաքացու իրավունքների դեկլարացիան», վորն իբրև մի ներածություն եր ծառայում նոր սահմանադրությանը: Այդ վավերագիրը, վորի մեջ դրված եյին նոր բուրժուական իրավակարգի բոլոր հիմքերը, հայտարարում եր. «Մարդիկ ծնվում և մնում են ազատ և հավասար իրավունքներով. հասարակական տարբերությունների հիմքը կարող ե կազմել միմիայն հասարակական օգտակարությունը, և օրենքները պետք ե միատեսակ լինեն բոլորի համար»: Յեթե հին Ֆրանսիայում ազնվականներն ու հոգևորականներն օգտվում եյին հարկ չվճարելու արտոնությամբ, այժմ դեկլարացիան հարկատվության տեսակետից բոլորին հավասար եր հայտարարում: Սակայն բուրժուական առանց մասնավոր սեփականության չի կարող գոյություն ունենալ. ուստի, այդ բոլորից զատ, դեկլարացիան սուրբ և անձեռնմխելի յեր հայտարարում մասնավոր սեփականությունը:

## ԱՌԵՎՏՐԻ ՅԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՃՆՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱՑՈՒՄԸ

Արդեն գիտենք, թե ներքին սահմաններն ու մաքսատները վորքան եյին դանդաղեցնում արդյունաբերության զարգացումը: Այժմ այդ բոլոր արգելքները վերացան: Ժողովը Ֆրանսիան բաժանեց 83 միատեսակ (բնակչության թվի համաձայն) դեպարտամենտների, միատեսակ կազմակերպությամբ, միևնույն օրենքներով, միևնույն դրամանիշով, միևնույն չափերով: Հին Ֆրանսիան չուներ այդ բանը, իսկ այդ բոլորն անհրաժեշտ եր առևտրի և արդյունաբերության զարգացման համար:

Հին չինովնիկական ապարատը, իր գաղտնի գործավարությամբ եր պաշտոններով ու տանջանքներով, փոխարինվեց ժողովրդից ընտրըված յերդվյալների հրապարակական ապարատով:

Թե քաղաքները, թե գյուղերը և թե դեպարտամենտները կառավարվելու եյին այժմ ընտրված մարդկանցով (թեև միայն ունևոր բընակչության շարքերից): Վերացվում եյին համքարությունները ու արտոնյալ առևտրական ընկերությունները, ինչպես և արդյունաբերության զարգացումը դանդաղեցնող բոլոր կանոնները:

## ԺՈՂՈՎԸ ՅԵՎ ՅԵԿԵՂԵՑԻՆ

Հին իրավակարգի հզոր ուժն եր Ֆրանսիայում կաթոլիկ հոգևորականությունը: Նրա ուժն ու իշխանությունն ամուր հիմք ունեյին— յեկեղեցուն պատկանող հսկայական գույքերը: Ժողովը վորոշեց խլել յեկեղեցու գույքերն ու կալվածները պետության պարտքերը փակելու համար, իսկ հոգևորականությանը, թե բարձր և թե ստորին, ռոճիկ նշանակել: Այդպիսով յեպիսկոպոսներին ու քահանաներին ել հավասարեցրին սովորական պաշտոնյաներին. և հենց իբրև պաշտոնյա յել նրանք ընտրվում եյին ընտրական իրավունք ունեցող քաղաքացիների կողմից:

Ինչպես տեսնում ենք, ժողովը բավականաչափ վճռականություն ունեցավ ստեղծելու այնպիսի կարգեր, վորոնց շնորհիվ բուրժուազիան կարող եր անարգել կերպով զարգանալ և հարստություն կուտակել: Բայց և այնպես հեղափոխության գործը դեռ ավարտված չեր. ամենից առաջ լուծված չեր գյուղացիական հարցը. այնուհետև, ազգաբնակության հսկայական մասսան յետ եր մղված քաղաքական կյանքից. և վերջապես հեղափոխության նվաճումները հաստատուն չեյին, վորովհետև թագավորն ու նրան շրջապատող պալատականները շարունակում եյին ոգտվել աչքի ընկնող իշխանությամբ և վտանգավոր սպառնալիք եյին ներկայացնում նոր կարգերի համար:

## ՀԱԿԱՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՀԵՂԱՇՐՋՄԱՆ ԱՆՀԱՋՈՂ ՓՈՐՁ

Ժողովի աշխատանքն ավարտվելու մոտ եր, յերբ թագավորը նորից հակահեղափոխական հեղաշրջման փորձ արեց: Նա գաղտնի կերպով փախավ Պարիզից և ուզում եր հեղափոխությանը թշնամի գեներալի զորքի ոգնությամբ արյունով խեղդել հեղափոխական մայրաքաղաքը: Սակայն ժողովրդական մասսաների աչալրջության շնորհիվ այդ փորձը չհաջողվեց: Փոստի մի հասարակ ծառայող ճանապարհին, մի փոքրիկ շենում, ճանաչեց թագավորին: Գյուղացիները վոտքի կանգնեցին և զինվելով ով ինչով կարող եր, կանգնեցրին թագավորական կառքը: Շրջակա գյուղերից հավաքվեց բազմաթիվ զինված ամբոխ և հսկողության տակ առավ թագավորին այնքան ժամանակ, մինչև վոր Պարիզից հասան ժողովի ուղարկած մարդիկ և յետ տարան թագավորին: Չնայած թագավորն իր այդ փախուստով դրժել եր նոր սահմանադրությանը տված իր յերդումը, այնուամենայնիվ ժողովը չփոխեց իր բարյացակամ վերաբերմունքը դեպի նա: Ժողովի մեծագույն մասը կազմող հարուստ սեփականատերերն իրենց շահերի պաշտպանության համար այնքան անհրաժեշտ եյին համարում թագավորի գոյությունը, վոր աշխատում եյին նրա դավաճանական քայլի մեղքը նրանից վերացնել և նրա փախուստը ներկայացնում եյին վորպես նրա մերձավորների վատ խորհուրդների հետևանք:

## ԳՆԴԱԿԱՀԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐՍՅԱՆ ԴԱՇՏՈՒՄ

Իսկ ժողովրդական մասսաների մեջ, ընդհակառակը, հետզհետե ավելի և ավելի ուժեղանում ու ամրապնդվում եր այն համոզումը, թե անհրաժեշտ ե թագավորական իշխանությունը փոխարինել հանրապետությամբ. 1792 թ. Մարսյան դաշտում*) հավաքվեցին ժողովրդի հոծ մասսաներ, խնդրագիր ստորագրելու՝ դավաճան թագավորին դատի յենթարկելու համար: Ազգային գվարդիան, վոր ունևոր քաղաքացիներից եր կազմված, գնդակահարել սկսեց անպաշտպան ամբոխին: Բազմաթիվ մարդիկ սպանվեցին և վիրավորվեցին:

Այս անգամ ժողովրդական մասսաները պարտություն կրեցին: Բուրժուազիան ցնծում եր: Թագավորը նորից համարձակություն ստացավ:

Հենց այդ ժամանակ Հիմնադիր ժողովը, ավարտած համարելով իր աշխատանքը, ցրվեց, և նրա տեղը բռնեց նոր սահմանադրության հիման վրա ընտրված Օրենսդիր ժողովը:

## ՀԱՐՑԵՐ ՅԵՎ ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ի՞նչ դրության մեջ եր Ֆրանսիան հեղափոխության նախօրյակին:
2. Ի՞նչ եյին ներկայացնում Գեներալ շտատները, և ի՞նչպես եյին նայում նրանց թագավորն ու ժողովուրդը:
3. Ի՞նչ մտադրություն ունեյին թագավորն ու պալատականները:
4. Ի՞նչն եր արգելում նրանց մտադրությունների իրագործմանը:
5. Ի՞նչ վերաբերմունք ցույց տվեց ժողովը քաղաքային մասսայի [illegible], և վորո՞նք եյին այդ վերաբերմունքի պատճառները:
6. Ի՞նչպես անդրադարձավ չքավոր բնակչության հանդեպ ունեցած յերկյուղը նոր սահմանադրության բնույթի վրա:

*) Մարսը հին հռոմեացիների պատերազմի աստվածն ե: Այդ դաշտը հատկացրած եր զինվորական վարժություններին:

7. Վո՞ր չափով բավարարեց ժողովը գյուղացիության կարիքները:

8. Ի՞նչ քաղաքականություն բռնեց ժողովը բանվորության նկատմամբ:

9. Ի՞նչ նշանակություն ունեցավ ժողովի գործունեությունը բուրժուազիայի շահերի համար:

10. Ի՞նչ է մարդու իրավունքների դեկլարացիան:

11. Ի՞նչ միջոցներ նկատի առավ ժողովը տնտեսական ճնշումները վերացնելու համար:

12. Ի՞նչ քաղաքականություն ուներ ժողովը յեկեղեցու վերաբերմամբ:

13. Յե՞րբ և ի՞նչ պատճառներով սկսեցին արմատ բռնել հանրապետական հայացքները ժողովրդական մասսաների մեջ:

14. Ի՞նչ նշանակություն ունեցավ Մարսյան դաշտի ընդհարումը:

## ՆՅՈՒԹ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԱՐ

### «Միևնույն կարողության և միևնույն արհեստի տեր բանվորների և արհեստավորների ժողովներին վերաբերյալ օրենք»

«Հոդ. II. Միևնույն կարողության և միևնույն արհեստի տեր քաղաքացիները, ձեռնարկատերերը, խանութպանները և այս կամ այն արհեստի բանվորներն ու քարգյահներն իրավունք չունեն միասին հավաքվելով նախագահ ու քարտուղար ընտրել, ինչպես նաև արձանագրություններ կազմել, վճիռներ ու վորոշումներ կայացնել, ռեգլամենտ*) կազմել նրանց, այսպես կոչված, ընդհանուր շահերի վերաբերմամբ:

«Հոդ. III. Մունիցիպալ**) վարչական մարմիններին թույլ չի տրվում խնդիրներ, դիմումներ և ուղերձներ ընդունել վորևե արհեստի կողմից, ինչպես և պատասխանել նման դիմումներին: Այդ մարմիններին հրամայվում է անվավեր հայտարարել այն վորոշումները, վորոնք կարող եյին կայացվել այդ ձևով, և խիստ կերպով հետևել, վոր նման խնդիրները մնան անհետևանք, այսինքն չիրագործվեն:

«Հոդ. IV. Յեթե, հակառակ ազատության սկզբունքների և սահմանադրության, միմյանց հետ ընդհանուր պրոֆեսիայով կամ արհեստով կապված քաղաքացիները վորոշումներ կկայացնեն կամ համաձայնություններ կկապեն, վորպեսզի միասին հրաժարվեն աշխատելուց կամ միասին իրենց արհեստի համապատասխան աշխատանք վերցնեն միմիայն վորոշ գնով,—ապա այդպիսի վճիռներն ու վորոշումները, անկախ այն հանգամանքից, թե նրանք յերդումով են տեղի ունեցել թե վոչ, հայտարարվում են սահմանադրության հակառակ, ազատության և մարդու իրավունքների դեկլարացիային հակառակ, ուստի համարվում են անվավեր: Վարչական և մունիցիպալ մարմինները պարտավոր են հայտարարել այդպիսի վճիռների ու վորոշումների անվավերականության մասին:

«Այդպիսի վորոշումների պատճառ հանդիսացողները, պարագլուխներն ու դրդապատճառները, այլ և նախագահի դեր կատարողներն ու նման վորոշումների խմբագրողները, դատախազի հայտարարության հիման վրա, հանձնվում են վոստիկանական դատի և դատապարտվում յուրաքանչյուրը 500 լիվր տուգանքի և մի տարով զրկվում են ակտիվ քաղաքացիների *) իրավունքներից:

«Հոդ. V. Յեթե վերոհիշյալ վորոշումներն ու համաձայնությունները, վոր կտարածվեն իբրև հայտարարություն պատերին փակցնելով կամ ցրելով, սպառնալիք կպարունակեն ձեռնարկատերերի, արհեստավորների, բանվորների կամ ուրիշ քաղաքից տվյալ վայրը յեկած օրավարձով աշխատողների դեմ և կամ նրանց դեմ, ովքեր կհամաձայնեն ավելի ցած աշխատավարձով բավականանալ,—ապա բոլոր պատճառ հանդիսացողները, խռովարարները, դրդիչները, այլև նման արձանագրություններ և վավերագրեր ստորագրող բոլոր անձինք դատապարտվում են 1000 լիվր տուգանքի և յեռամսյա բանտարկության:

*) Կանոնադրություն

**) Քաղաքային:



## ՀԱՐՑԵՐ ՅԵՎ ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ի՞նչ հանգամանքներ պատճառ հանդիսացան բանվորական միությունների դեմ օրենքի հրատարակության:

2. Ի՞նչ եյին արգելում օրենքի առաջին յերկու հոդվածները:

3. Պարզեցեք այն հետևանքները, վոր առաջ եյին գալիս օրենքի առաջին յերկու հոդվածների խախտումից:

*) Ակտիվ քաղաքացի եյին կոչվում նրանք, ովքեր համաձայն սահմանադրության ընտրական իրավունքներ ունեյին:

II. Զեկուցում կազմեցեք «Ժողովի վերաբերմունքը դեպի բանվորների և գյուղացիների շահերը» թեմայով:

III. Այս հարցերին պատասխանելու համար կարդացեք «Կեցցե ազգը» հոդվածը Լուկինի «Ստրկատիրական հասարակությունից դեպի պրոլետարական հեղափոխություն» գրքից—էջեր 159—178: Այդ հոդվածը բաժանեք 5 մասի և օգտագործեք վերոհիշյալ հարցերի հետ կապված փոքր մասը:

## § 3. ՅԱԿՈԲԻՆՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

### ՕՐԵՆՍԴԻՐ ԺՈՂՈՎԸ

1791 թ. աշնանը հավաքվեց նոր ժողով: Այդ ժողովը նա, որ ընտրված էր հարուստ սեփականատերերի կազմած սահմանադրության հիման վրա, չէր կարող արհեստավորների, բանվորների ու գյուղացիների ներկայացուցիչը լինել: Այնտեղ կար ընդամենը երեք գյուղացի և չորս արհեստավոր: Բայց, այնուամենայնիվ, ազնվականների ու հարուստ վաճառականների թիվն այդ ժողովում ավելի քիչ էր: Դրա փոխարեն ավելի շատ էր առևտրականների, գործարանատերերի, այսինքն այն բուրժուազիայի ներկայացուցիչների թիվը, որոնց համար առանձնապես ճնշիչ էր հին իրավակարգը: Համենայն դեպս այդ պատգամավորները նա շատ էին վախենում քաղաքի և գյուղի չքավոր բնակչության շարժումից, որը հետզհետե ավելի ուժեղ կերպով էր արտահայտում իր դժգոհությունը: Ժողովում կային նաև քաղաքի մանր բուրժուազիայի—մանր խանութպանների, արհեստանոցի տերերի և այլ ներկայացուցիչներ: Առևտրական և արդյունաբերական բուրժուազիան ժողովում համախմբվեց մի կուսակցության մեջ, որի միջուկն էին Ժիրոնդա դեպարտամենտի պատգամավորները:

### ՖՐԱՆՍ-ԱՎՍՏՐԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Օրենսդիր ժողովը չէր կարող լուծել այն բոլոր բարդ խնդիրները, որոնք ժառանգություն էին մնացել նրան Հիմնադիր ժողովից, մանավանդ, որ այդ խնդիրներն այժմ ավելի էին բարդացել, որովհետև Ֆրանսիան պատերազմի էր բռնվել Ավստրիայի և գերմանական պետությունների հետ: Այդ պատերազմը պալատականների և թագավորի արածն էր: Նրանք հավատացած էին, թե օտարազգի ավին-



ների օգնությամբ կվերջացնեն հեղափոխությունը: Ժիրոնդիստները նա, որ ամենաազդեցիկ մարդիկ էին ժողովում, կողմնակից էին պատերազմին, քանի որ կարծում էին, թե շնորհիվ պատերազմի ֆրանսիական ապրանքների համար նոր շուկաներ կնվաճեն: Նրանք մտածում էին նաև օգտագործել պատերազմը կառավարական իշխանության հասնելու նպատակով: Վերջապես թե պալատականները, թե ժողովը չէին առարկում պատերազմի դեմ, որովհետև ենթադրում էին, թե պատերազմը Պարիզի հեղափոխական չքավորության մեծ մասին կգրավի զորաբանակի շարքերը:

Պատերազմն սկսվեց 1792 թ. գարնանը: Ֆրանսիական զորքերը, հեղափոխության թշնամի ազնվական սպաների գլխավորությամբ, հարկավոր դիսցիպլինա չունեին և շատ վատ էին կռվում: Թագավորն ու պալատն անհամբերությամբ սպասում էին ֆրանսիական զորքերի պարտվելուն և զինվորական գաղտնիքներ էին հաղորդում թշնամուն: Թշնամիները մտան Ֆրանսիա: Ժիրոնդիստները, թեև մտել էին մինիստրների շարքը, բայց ոչինչ չկարողացան անել դավաճան թագավորին և պալատականներին: Հեղափոխությունը թշնամիների հարձակումից պաշտպանելու համար պետք էր ոտքի հանել ամբողջ հեղափոխական մասսան, ամուր դաշն կնքելով նրա հետ: Հարուստ արդյունաբերողների և վաճառականների կուսակցությունը չէր կարող այդ քայլն անել, քանի որ միությունը քաղաքի և գյուղի չքավորության հետ նրա համար ավելի սոսկալի էր, քան թշնամու և թագավորի հաղթությունը:

### ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՈՒԺԵՂԱՆԱԼԸ ՄԱՅՐԱՔԱՂԱՔՈՒՄ

Ժողովուրդը հուզվում էր: Անհաջողությունները ռազմական ճակատներում թշնամի զորքերի մուտքն էին սպառնում, որոնց հետ միասին Ֆրանսիա էին գալիս թագավորի եղբայրները և շատ ազնվականներ: Նրանք արտասահման էին փախել հեղափոխության հենց առաջին օրերին և այժմ ետ էին վերադառնում, երազելով մինչհեղափոխական կարգերի լիակատար վերականգնումը:

Թագավորը խոչընդոտներ էր հարուցում այն միջոցների իրագործման դեմ, որով պետք էր պաշտպանել հեղափոխական մայրաքաղաքը, որն արդեն երկիրը ներս խուժած թշնամու հարձակման սպառնալիքի տակ էր գտնվում: Հեղափոխական մասսաների նոր ըն-

քույթը հաստատում եր։ Նրանք պահանջում եյին գահից զրկել դավաճան թագավորին և բոլոր քաղաքացիներին, անկախ նրանց ստացվածքի չափից թույլ տալ մասնակցելու քաղաքական կյանքին։

### ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ

Պարիզի քաղաքամասերում, վոր այն ժամանակ «սեկցիա» անունն եյին կրում, բանվորներն ու արհեստավորներն արդեն վերացրել եյին քաղաքացիների միջև յեղած խտրությունը քաղաքական իրավունքներ ունենալու և չունենալու վերաբերմամբ. այդտեղ ժողովներին մասնակցում եյին արդեն քաղաքամասի բոլոր քաղաքացիներն անխտիր։ Այդ քաղաքամասերը կամ «սեկցիաները» դարձել եյին ագիտացիայի և ապստամբության նախապատրաստության օջախներ։ Մեծ դեր եյին խաղում քաղաքական ակումբները և այսպես կոչված «ժողովրդական ընկերությունները»։ Դրանցից պետք ե հիշատակել Յակոբինյան ակումբը։ Այդտեղ, ճիշտ ե, հավաքվում եյին վոչ թե քաղաքի չքավոր խավը, այլ գլխավորապես քաղաքային մանր բուրժուազիայի ներկայացուցիչները, վոր այնքան բազմաթիվ եր Պարիզում։ Այդտեղ կային բազմաթիվ իրավաբաններ, մանր պաշտոնյաներ ու գրողներ, ընդհանրապես այնպիսի մարդիկ, վորոնք ձգտում եյին պաշտպանել հեղափոխական նվաճումները, խորացնել այդ նվաճումները և անխնա կռիվ մղել հեղափոխության թշնամիների դեմ։

### ՈԳՈՍՏՈՍԻ 10-Ի ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ

Ժողովրդական ապստամբությունը տեղի ունեցավ 1792 թ. ոգոստոսի 10-ին։ Շարժման կենտրոնն այս անգամ Պարիզի քաղաքային դուման եր, վորին այն ժամանակ «Կոմմունա» անունն եյին տալիս։ Նա լիքն եր հեղափոխական սեկցիաների ներկայացուցիչներով։ Լույս ոգոստոսի 10-ի գիշերը բանվորական թաղամասերը դուրս յեկան։ Սեն-Անտուանի արվարձանը 15 հազար զինված մարդ դուրս բերեց, Սեն-Մարսո արվարձանը 5 հազար։ Կես գիշերին հնչեց ահազանգը։ Փողոցներում թնդում եր թմբուկը, վոր քաղաքացիներին զենքի յեր կոչում։ Զինված արհեստավորների ու բանվորների յերկար շարաններն սկսեցին շարք կանգնել ու շարժվել դեպի պալատ։

Պալատը պաշտպանող վարձու զորքն ու կամավոր ազնվականներն առաջինը սոսկալի կրակ բացին։ Հանկարծակի յեկած ժողովուրդը հետ-



հետ հարձեց, սակայն շուտով ուժքի յեկավ և հարձակման անցավ։ Պալատի գլխավոր սանդուղքը գրավվեց համառ գրոհով, վորից հետո կռիվը շարունակվում եր միջանցքներում ու դահլիճներում։ Ապստամբները հարյուրավոր սպանվածներ ու վիրավորներ տվին։ Թագավորը փախավ ժողովի պաշտպանության տակ։ Արհեստավորների և բանվորների զինված խմբերի ճնշման տակ ժողովն ստիպված յեղավ թագավորին զրկել իշխանությունից և վորոշեց կարճ ժամանակամիջոցում նոր ժողով «կոնվենտ» հրավիրել, վորի ընտրություններին մասնակցելու եյին բոլոր քաղաքացիները։

Այժմ, թագավորական իշխանության վերանալուց հետո, նոր դրություն ստեղծվեց, դեմ-դիմաց մնացին կանգնած մի կողմից ժիրոնդիստների կուսակցությունը, իբրև ժողովի ամենաազդեցիկ կուսակցություն, մյուս կողմից հեղափոխական իշխանությունը՝ Պարիզի քաղաքային դուման (Կոմմունան), վոր լիքն եր քաղաքի չքավոր խավերի և մանր բուրժուազիայի ներկայացուցիչներով, այսինքն այն մարդկանցով, վորոնք վայելում եյին Պարիզի հեղափոխական մասսայի հավատն ու վստահությունը։ Ժիրոնդիստների կուսակցության առաջ քաշած խոշոր առևտրականներն ու արդյունաբերողները միանգամայն գոհ եյին, վոր իշխանությունն անցել ե իրենց ձեռքը, և հեղափոխության գործն ավարտված եյին համարում։ Մանր բուրժուազիան, մանավանդ քաղաքի և գյուղի չքավոր խավերը վոչինչ չեյին ստացել հեղափոխությունից և ցանկանում եյին նրա շարունակությունը։ Իսկ հեղափոխության շարունակությունը վտանգավոր եր հարուստ ձեռնարկատերերի և առևտրականների համար։

### ԿՈՆՎԵՆՏԸ ՅԵՎ ԻՐ ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նոր ժողովը հրավիրվեց 1792 թ. սեպտեմբերին. դա յերրորդ ժողովն եր, վոր Կոնվենտ անունն ստացավ։ Կռիվը տարբեր խմբակցությունների մեջ Կոնվենտում ծավալվեց իր ամբողջ թափով։ Կոնվենտում աչքի յեր ընկնում պատգամավորների յերկու մեծ խմբակցություն.—խոշոր առևտրականների և ձեռնարկատերերի շահերի պաշտպան ժիրոնդիստները, վորոնց այժմ միացել եյին հեղափոխության բոլոր թշնամիները, և այսպես կոչված «Լեռը»։ Վերջին խմբակցության մեջ մտնող պատգամավորները նստում եյին ամենից վերև, առաստաղին մոտ դրված նստարանների վրա։ Լեռը պաշտպանում եր

մանր բուրժուազիայի շահերը․ նրա պատգամավորների մեծ մասը Յակոբինյան ակումբի անդամներ եյին և Կոնվենտ եյին ուղարկված մայրաքաղաքի կամ մյուս մեծ քաղաքների բնակչության կողմից:

Այդ յերկու մեծ խմբակցություններից բացի Կոնվենտում կային բազմաթիվ պատգամավորներ, վորոնք վոչ այս կուսակցությանն եյին հարում, վոչ այն: Նրանց անվանում եյին «ճահիճ» կամ «հարթություն», հակադրելով «Լեռ» խմբակցությանը: «Ճահիճը» միանալով այս կամ այն կռվող կուսակցությանը՝ մեծամասնություն եր դարձնում նրան Կոնվենտում և ապահովում նրա հաղթանակը:

Կռիվը ժիրոնդիստների և Լեռի միջև սկսվեց շատ շուտով: Ժիրոնդիստները պարտություն կրեցին նաև իշխանությունից հրաժարված թագավորի վճիռը վորոշելու հարցում: Ժիրոնդիստները, վոր վախենում եյին անցյալի հետ այդքան վճռական խզումից, աշխատում եյին պաշտպանել թագավորին, բայց ապարդյուն: Կոնվենտը նրան դատեց, մահվան պատժի դատապարտեց և պատիժն իրագործեց: Կոնվենտի այդ վորոշմանն աջակցեցին այն ցույցերը, վոր կազմակերպում եյին այդ առթիվ Պարիզի բանվորներն ու արհեստավորները: Գործի քննության ժամանակ Կոնվենտ խուժեց ոգոստոսի 10-ի ապստամբության ժամանակ թագավորական գնդերի ձեռքով ընկածների մերձավորներից բաղկացած ամբոխը, վորը թափահարելով սպանվածների արյունոտված հագուստների ծվենները, պահանջում եր անհապաղ կերպով դատել «բռնակալին»:

## ՄԱՍՍԱՆԵՐԻ ՅԵԼՈՒՅԹԸ

Ընդհանրապես, սկսած ոգոստոսի 10-ի ապստամբությունից, Պարիզի չքավոր խավերի յելույթները հետզհետե ավելի և ավելի մեծ նշանակություն եյին ստանում: Աստիճանաբար դժվարանում եր ապրուստը քաղաքներում: Պատերազմի թշվառությունները դնալով ավելի և ավելի եյին մեծանում: Թագավորի դատապարտությունից հետո Ֆրանսիայի դեմ յելան Յեվրոպայի բոլոր հին ազնվական պետությունները, նրանց հետ եվ Անգլիան: Նրանք բոլորն եվ զգում եյին, վոր հեղափոխության զարգացումը Ֆրանսիայում սոսկալի վտանգ է սպառնում իրենց: Թշնամիների ողակը չորս կողմից շրջապատեց Ֆրանսիան: Առևտուրը մյուս պետությունների և Ֆրանսիայի անդրծովյան յերկրների հետ համարյա դադարեց: Հուզմունքներն ու անկարգությունները վոչ միայն մայրաքաղաքում եյին տեղի ունենում, այլև ամբողջ Ֆրանսիայում, և մթերքների փոխադրությունն ինչպես Պարիզ, այնպես եվ մյուս մեծ քաղաքները համարյա դադարեց: Սովի սպառնալիք կախված եր հեղափոխական մայրաքաղաքի վրա:



Հիմնադիր ժողովն եր ժամանակին, աշխատելով շտկել պետության դրամական գործերը, թղթե փողեր եր բաց թողել, վորոնց արժեքն այժմ հետզհետե ընկնում եր: Մթերքները սարսափելի թանկացել եյին, իսկ բանվորների և արհեստավորների աշխատանքը խիստ կերպով նվազել եր. պատվեր տվող չկար, գնորդների թիվը կրճատվել եր, ազնվականները վաղուց եյին փախել արտասահման, իսկ հարուստ բուրժուաները նույնպես թողնում եյին մայրաքաղաքը: Բանվորների և արհեստավորների շրջաններում հետզհետե ավելի և ավելի եր ամրանում այն միտքը, թե անհրաժեշտ է մթերքներին սահմանել կամ անփոփոխ գներ նշանակել: Այդ միջոցով նրանք ցանկանում եյին դադարեցնել աճող թանկությունը: «Սեկցիաները», վորոնց մեջ արհեստավորները և բանվորները մեծամասնություն եյին կազմում, սկսեցին դնել այդ պահանջը:

## ԿԱՏԱՂԻՆԵՐԸ

Հանդես են գալիս չքավոր խավերի առաջնորդներ: Չքավորներին ատող բուրժուա-ժիրոնդիստները «կատաղի» անունը տվեցին թշվառ չքավորների շահերի այդ պաշտպաններին: «Կատաղիները» պահանջում եյին անողոք կռիվ մղել հարուստ-սպեկուլյանտների դեմ, բռնագրավել նրանց գույքերը և սակագին նշանակել բոլոր մթերքներին:

Ժիրոնդիստները զայրանում և մեղադրում եյին «կատաղիներին» ու Պարիզի ամբողջ չքավորությունը, թե նրանք «բոլոր մարդկանց բաժանում են յերկու դասակարգի—ունեցողների և չունեցողների և նրանց գրգռում են իրար դեմ՝ անկարգություններ առաջ բերելու նպատակով»: «Քաղաքացիներ,—կոչ եր անում ժիրոնդիստներից մեկը Կոնվենտում,—հասկացեք, վոր առևտուրը բարգավաճել կարող է միայն ծայր աստիճան ազատության դեպքում»:

Սակայն բուրժուազիայի այդ պահանջները չքավորության հաշվին հարստանալու անսահման ազատության մասին շատ քիչ եյին հետաքրքրում չքավորությունը, և վերջինս շարունակում եր «ձանձրացնել»,—ինչպես արտահայտվեց ժիրոնդիստներից մեկը,—Կոնվենտին իր դիմումներով:

Այն ժամանակվա բանվորներն ու արհեստավորները, ինչպես և նրանց «կատաղի» առաջնորդները, կոմունիստական պահանջներ չէին առաջադրում, ինչպես անում են պրոլետարներն այժմ: Տանջվելով առևտրականների և ապրանքառուների շահագործությունից՝ նրանք չէին պահանջում ընդհանուր սեփականություն դարձնել այն փոքրիկ արհեստանոցները, որտեղ աշխատում էին (մեծ գործարաններ չկային այն ժամանակ): Բայց նրանք ատում էին հարուստներին և ցանկանում էին առաջ բերել գույքի հավասարություն, որպեսզի իրենք էլ դառնան մանր գործատերեր: Նրանցից շատերը դեռ հիշում էին այն օրերը, յերբ իրենք իրոք փոքրիկ գործատերեր էին:

Ի՞նչպես էին վերաբերվում «կատաղիների» պահանջներին Լեռ-ի պատգամավորներն ու յակոբինյանները: Սկզբի շրջանում «կատաղիների» գլխավոր պահանջը՝ բոլոր մթերքներին սակագին նշանակելը—ամենևին յակոբինյանների սրտովը չէր. չէ՞ որ նրանք էլ մանր գործատերեր էին, մանր խանութպաններ և այլն: Բայց հետո, 1793 թ. գարնանը, յերբ նրանք ստիպված էին դաշնակիցներ որոնել ժիրոնդիստների դեմ կռվելու համար, վճռեցին հենվել քաղաքի չքավորության վրա, բավարարելով նրա պահանջները:

### ԺԻՐՈՆԴԻՍՏՆԵՐԻ ՅԵՎ ՅԱԿՈԲԻՆՅԱՆՆԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ

Կռիվը ժիրոնդիստների դեմ հետզհետե սուր բնույթ էր ստանում: Հեղափոխական բոլոր նվաճումները դարձյալ վտանգի տակ էին: Ֆրանսիայի արտաքին թշնամիների ուժն զգալի կերպով մեծացել էր: Հեղափոխության գործն սպառնացող սոսկալի վտանգից կարելի յեր փրկել միայն մի միջոցով— ընդառաջ գնալ ազգաբնակչության մեծամասնության պահանջներին և այդպիսով շահագրգռել նրան թշնամու դեմ կռվելու: Սակայն ժիրոնդիստները չէին ցանկանում և չէին էլ կարող այդ քայլն անել, քանի որ նրանց կարծիքով հեղափոխությունն առանց այդ էլ շատ հեռու յեր գնացել: Ուստի Լեռ–ի կամ յակոբինյանների առջև ծառացել էր մի խնդիր—հեռացնել ժիրոնդիստներին և իշխանությունը վերցնել իրենց ձեռքը:

Ժիրոնդիստների վրա ամենից կատաղի հարձակվում էր չքավորության սրտագին բարեկամ, նրա պաշտպանն և հեղափոխության հենց առաջին քայլերից նրա թշնամիների դեմ անխոնջ պայքարող Ժան-Պոլ-Մարատը: «Հեղափոխությունը կատարեցին,—գրում էր նա,—հա-



սարակության միայն ստորին դասակարգերը—բանվորները, արհեստավորները, մանր առևտրականները, գյուղացիք, մի խոսքով ստորին չերտը, այն չքավորությունը, որին հարուստներն անվանում են սրիկա»: Մարատը խիստ և վճռական կռիվ էր պահանջում հեղափոխության բոլոր թշնամիների դեմ: Նա շատ լավ հասկանում, նախատեսնում և իր հոդվածներում մերկացնում էր նրանց չար դիտավորությունները: Իր ժամանակին նա մերկացնում էր թագավորական պալատի ինտրիգները, այժմ կատաղի պայքար էր մղում ժիրոնդիստների դեմ: Նրան մեղադրում էին իբրև արյունարբուի. իսկ նա իր մեղադրողներին պատասխանում էր՝ «յեթե յես խորհուրդ տվի կտրել 500 հանցավոր գլուխներ, այդ արեցի բացառապես նրա համար, որպեսզի պահպանվեն կես միլիոն անմեղների գլուխները..» Ժիրոնդիստները ատում էին նրան և տվին հեղափոխական տրիբունալի դատին՝ վերջինս Մարատին արդարացրեց: Ամբոխը նրան պատվին հսկա ցույց կազմակերպեց:



Ժան-Պոլ Մարատ.

Հենց այդ ժամանակ յակոբինյանների համար անհրաժեշտ է դառնում միանալ քաղաքի չքավորության հետ: Յեվ ահա, այն պահանջները, որ սկզբում դնում էին միայն սեկցիաներն, այժմ դնում է Կոմունան, իսկ հետո յակոբինյաններն անց են կացնում նաև Կոնվենտում:

Ժիրոնդիստները պաշտպանվում էին: Նրանք ձգտում էին դատի յենթարկել Կոմունայի գործիչներին և առանձին հանձնաժողով ընտրեցին, որի գործը պետք է լիներ կռվել աճող հեղափոխական շարժման դեմ: Այդ ժամանակ ժողովրդական մի նոր ապստամբություն պայթեց: Մարատը, չքավորության անձնազոհ այդ առաջնորդը, հակահեղափոխական բոլոր վորոգայթների դեմ մարտնչողը և, ինչպես անվանում եյին՝ «ժողովրդի բարեկամը»,—մայիսի 31-ին հրավերի կոչնակը հնչեցրեց Կոմունայի աշտարակից: Նորից շարժվեցին զինված սեկցիաները: Ամբողջ իշխանությունը հանձնվեց Կոմունային:

Զինված սեկցիաները դիմեցին դեպի Կոնվենտ և շրջապատելով այն, լցված թնդանոթներն ուղղեցին դեպի Կոնվենտ։

Կոնվենտի պատգամավորները մտածեցին բոլորը միասին դուրս գալ, փորձելով ազդեցություն գործել ապստամբների վրա։ Կոնվենտի նախագահն սկսեց ճառ արտասանել, սակայն ապստամբ զորքերի հրամանատարը կտրեց նրա խոսքն ասելով. «Ժողովուրդը նրա համար չի ապստամբել, վոր գեղեցիկ խոսքեր լսի. նա ուզում է, վոր իրեն հանձնվեն հանցավոր պատգամավորները»։ Ապա դառնալով իր զինվորներին, գոչեց. «Թնդանոթաձիգներ, ի զեն»։ Կոնվենտին մնում եր միայն յենթարկվել։ Ժիրոնդիստ պատգամավորներն առանձնացվեցին Կոնվենտի կազմից ու ձերբակալվեցին։ Իշխանությունն անցավ յակոբինյաններին, քաղաքի մանր բուրժուազիային, վորոնք իշխանության տեր դարձան շնորհիվ քաղաքի արհեստավորների, բանվորների ապստամբության։

ՅԱԿՈԲԻՆՅԱՆՆԵՐԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ժիրոնդիստները մեծ հեղինակություն ունեյին առևտրական և արդյունաբերական դեպարտամենտներում, վորոնք և այդ ժամանակ դուրս յեկան պաշտպանելու ժիրոնդիստներին։ Յակոբինյան կառավարության դեմ յելան բոլոր առևտրական քաղաքները։ Արտաքին թշնամիներն ամեն կողմից ճնշում եյին Ֆրանսիայի զորաբանակին։ Սովը շարունակում եր իր վայրագությունները մայրաքաղաքում և մեծ քաղաքներում։ Հակահեղափոխությունն այնքան հանդգնություն եր ստացել, վոր հենց Պարիզում սպանեց Մարատին։ Թվում եր, թե հակահեղափոխության ալիքներն իրենց տակովն են անելու փոքրիկ հեղափոխական կղզին. 64 դեպարտամենտ այդ ժամանակ բացորոշ խռովություն եյին հարուցել Պարիզի դեմ։ Հեղափոխական մասսաների եներգիայի ամենամեծ լարումով միայն կարելի յեր փրկել հեղափոխության գործը։ Իշխանության գլուխ կանգնած յակոբինյանները, վորոնց ղեկավարում եյին Դանտոնի, Ռոբեսպյերի, Հերբերի կամ Շոմետի նման մարդիկ, կարողացան առաջ բերել այդ եներգիան և զարթեցնել հեղափոխական վոգևորություն։

Ամենից առաջ, շտապ կերպով, մշակեցին նոր սահմանադրություն, վորի համաձայն 21 տարեկանից բարձր քաղաքացիները, անկախ իրենց ստացվածքի և գույքի չափից, ընտրական իրավունք եյին ստանում։

Սակայն, այդ սահմանադրությունը չգործադրվեց, վորովհետև ամ-



բողջ Ֆրանսիան բռնկված եր քաղաքացիական կռվի կրակով, և այդ պայմաններում հնարավոր չեր նոր որենքները մտցնել, ընտրություններ



Ռոբեսպիեր.



Դանտոն.

կատարել՝ ժամանակցելու թույլ տալով այդ ընտրություններին նաև հեղափոխության թշնամիներին։ Յակոբինյանները շատ լավ եյին ըմբռնում այդ հանգամանքը, ուստի «Հեղափոխական կառավարություն» ստեղծեցին։

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲՆՈՒՅԹԸ ՅԵՎ ՆՐԱ ՈՐԳԱՆՆԵՐԸ

Վերջինս կառավարում եր Ֆրանսիան իբր դիկտատոր՝ հաշվի չառնելով վոչ մի որենք և ձևականություն, այլ ուշադրության առնելով միայն հեղափոխության շահերը։ Արտաքին և ներքին ամբողջ քաղաքականությունը հանձնվեց հասարակական փրկության կոմիտեյին, վորի մեջ աշխատում եյին ամենաաչքի ընկնող յակոբինյանները, հսկայական աշխատանք տանելով՝ պաշտպանելու հանրապետությունն արտաքին և ներքին թշնամիներից։ Բացի դրանից, վերջինների դեմ կռվելու համար գոյություն ուներ «Հասարակական անվտանգության» հատուկ կոմիտեն։ Հակահեղափոխության դեմ կռվում եր նաև հեղափոխական

տրիբունալը, տալով արագ և վճռական վորոշումներ, վորոնք այլևս յենթակա չէյին վերքննության և ամենախիստ պատիժն էյին սահմանում, մինչև իսկ մահվան պատիժ տալիս:

Յակոբինյանները հեղափոխությունը պաշտպանելով կիրառում էյին թշնամիներին սարսափահար անելու մեթոդը—«տեռորը», նրանք դաժան օրենքներ էյին հրատարակում բոլոր նրանց դեմ, ովքեր վնասում էյին հեղափոխությանը: Այսպես օրինակ՝ արտասահման փախած ազնվականները յեթե Ֆրանսիայում յերևային, նրանց մահվան պատիժն եր սպառնում: Զարաշահ առևտուր անողը (սպեկուլյացիա) և ապրանքներ թագցնողը ևս մահապատժի յեր յենթարկվում, իսկ դատապարտվածների ունեցվածքը պետականացվում եր:

Հեղափոխության բոլոր թշնամիները հայտարարվեցին «կասկածելիներ» և ամեն րոպե կարող էյին ձերբակալվել, բանտարկվել, աքսորվել կամ մահապատժի յենթարկվել: Յակոբինյանների հրատարակած օրենքը «կասկածելի» յեր հայտարարում բոլոր նրանց, «ովքեր իրենց վարքով, կամ ծանոթությամբ, իրենց ճառերով կամ ստեղծագործություններով ցույց են տվել, վոր կողմնակից են բռնակալությանը, թշնամի յեն ազատությանը»:

Պարիզում քաղաքի չքավորությունից հեղափոխական բանակ ստեղծվեց, վոր պայքարի հակահեղափոխության և սպեկուլյացիայի դեմ:

Յակոբինյանները շատ լավ էյին հասկանում, վոր իրենց ձեռք առած միջոցները շատ խիստ են ու դաժան: Սակայն նրանք այն էլ գիտեյին, վոր հեղափոխությունն ապահովելու համար այդ բոլոր միջոցներն անհրաժեշտ էյին, մանավանդ, վոր հեղափոխության թշնամիներն ավելի դաժան միջոցների էյին դիմում: Յերբ ապստամբ ժիրոնդիստները գրավեցին Լիոն քաղաքը, նրանք գլխատեցին հեղափոխականների ու չքավորների առաջնորդ՝ Շալյեյին: Ֆրանսիայի արևմտյան մասում թագավորի կողմնակիցները կոտորում էյին հեղափոխության կողմնակիցներին, սպանում էյին բոլոր գերի ընկածներին, նրանց անասելի տանջանքների էյին յենթարկում, կենդանի-կենդանի թաղում էյին հողի մեջ կամ սղոցում էյին ձեռքերն ու վոտքերը:

Դրա համար էլ յակոբինյաններից մեկը տեռորի առթիվ ասում է. «Յես հեղափոխությունը նմանեցնում եմ մի ճանապարհի, վորով արագորեն պիտի անցնի հեղափոխական կառավարության կառքը: Յեթե նա իր ճանապարհին հանդիպում է այնպիսի արգելքների, վորոնք դանդաղեցնում են նրա ընթացքը, ապա միանգամայն ճիշտ, խելացի և ար-



դարացի չի հեռացնել այդ արգելքները և ճանապարհը դարձնել հարթ, հարմար ու հեշտ անցանելի»:

## ԿԱՊԸ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՄԱՍՍԱՆԵՐԻ ՀԵՏ  ԱԿՈՒՄԲՆԵՐ

Ժողովրդական մասսաները, հեղափոխական արհեստավորներն ու բանվորներն իրենք էյին կառավարությունից պահանջում կռվի խիստ միջոցներ ձեռք առնել հեղափոխության թշնամիների դեմ: «Տեռորը դրեք օրակարգի մեջ», ասված եր այն խնդրագրերից մեկում, վոր Պարիզի բոլոր սեկցիաների կողմից տրվել եր Կոնվենտին:

Յերկրի բոլոր մասերում տարածված էյին «Հեղափոխական կոմիտեներ», վորոնց մեջ գլխավորապես չքավորներ էյին: Նրանք ուշադիր հետևում էյին հեղափոխության բոլոր թշնամիներին՝ տեղերում, գավառներում և ձերբակալում էյին բոլոր կասկածելիներին:

Ֆրանսիայի բոլոր անկյուններն ու ռազմաճակատներն ուղարկվել էյին Կոնվենտի կամ Կոմիտեյի կոմիսարներ, վորպեսզի հեղափոխական միջոցներ ձեռք առնեն, համախմբեն բոլոր հեղափոխականներին և վոգևորեն նրանց:

Կոմիսարների հենարանը գավառներում չքավորությունն ու մանր բուրժուազիան եր, վորոնք կազմակերպված էյին այսպես կոչված «ժողովրդական ընկերություններ» ակումբներում: Մինչև 40 հազար այդպիսի ընկերություն կար: Նրանք ունեյին իրենց կենտրոնը, վորտեղից տեղեկություններ, ցուցմունքներ էյին ստանում և այլն: Այդ կենտրոնը Պարիզի «Յակոբինյան ակումբն» եր, վորն այժմ սկսել եր շատ խոշոր դեր խաղալ: Այնտեղ նախապես քննվում էյին բոլոր կարևոր ձեռնարկումները, նրա անդամներից էյին մարդիկ առաջադրվում կարևոր ու պատասխանատու պաշտոններ գրավելու համար: Կոնվենտի ու Կոմիտեյի վրա նա ճնշում եր գործում ուղարկելով պատգամավորություն, խնդրագրերով, պահանջելով և այլն: Նա տեղեկագրեր եր ուղարկում նաև գավառական ժողովրդական ընկերություններին, վորոնց միշտ իրազեկ եր պահում դեպքերին:

Այսպիսի վճռական ու դաժան միջոցներով հաջողվեց հաշիվ տեսնել ներքին թշնամիների հետ և ճնշել հակահեղափոխական ապստամբությունները:

## ԱՐՏԱՔԻՆ ԹՇՆԱՄԻՆԵՐԻՆ ՀԱՂԹԱՀԱՐԵԼԸ

Յակոբինյանները հաշիվ մաքրեցին նաև արտաքին թշնամիների հետ: Զորամասերն ուղարկած կառավարական կոմիսարները չտեսնված հե-

բռնություն ու քաջություններ կատարեցին: Նրանք զինվորների մեջ աշխատանք եյին տանում, բացատրում եյին կատարվող դեպքերի իմաստը և յեռանդ եյին ներշնչում նրանց՝ պաշտպանելու հեղափոխությունը: Նրանք հսկողության տակ եյին առնում հեղափոխության համար կռվել չցանկացող գեներալներին, կարգավորում եյին բանակի մատակարարումը, իսկ շատերը նրանցից ընկան հենց կռվի մեջ: Ահա բանակում յեղած կոմիսարներից մեկի հրամանը. «Տասը հազար զինվոր վոտաբոբիկ են,—կարդում ենք այդտեղ—բոբիկացրեք Ստրասբուրգի բոլոր արիստոկրատներին և հոգ տարեք, վոր վաղը ժամը տասին հարյուր հազար զույգ վոտնաման լինի ճանապարհին, գլխավոր կայանում»: «Թող Ստրասբուրգի քաղաքային ինքնավարությունը քսանչորս ժամվա ընթացքում հարուստների տներում յերկու հազար անկողին պատրաստի, վոր հանձնի զինվորներին»:

Բանակում խիստ կարգապահություն եր ստեղծվել: Հասարակ զինվորներից նոր հրամանատարներ եյին առաջ քաշվել: Հին կարգերի ժամանակ նրանք յենթասպայի աստիճանից դենը չեյին գնա, իսկ այժմ նախկին ճարտարապետ Կլեբերը, մանրավաճառի խանութպան Ժուրդանը, պալատական ախոռների ձիապանի վորդի Գոշը ամեն մեկը մի զորամաս կամ մի ամբողջ ռազմաճակատ եր վարում և փայլուն հաղթանակներ եյին տանում:

Ահա թե մի ականատես ինչպես ե նկարագրում ֆրանսիացիների գրավումը հոլլանդական Ամստերդամ քաղաքը, 1794 թ-ին, 17 աստիճան սառնամանիքին հոգնատանջ արշավանքից հետո. «Իր հարստություններով հռչակված այդ քաղաքը զարմանքով տեսավ, թե ինչպես հերոսների տասը բատալիոն, առանց կոշիկների, առանց գուլպաների, իրենց մերկ վոտքերը ծղոտով ծածկած, հանդիսավոր կերպով, նվագախմբով մտան քաղաքի պատերի մեջ, հրացաններից բուրգեր կազմեցին և կանգնեցին հրապարակում, ձյունի վրա, համբերությամբ ու անտրտունջ սպասեցին, մինչև գան և իրենց տանեն զորանոցները և կերակրեն»:

Հեղափոխական հրամանատարներն ու հեղափոխական զինվորները, չնայած բոլոր զրկանքներին ու քաղցին, կանգնեցրին թշնամու արշավանքը, իրենք անցան հարձակման, դուրս քշեցին Ֆրանսիայից և սկսեցին գրավել թշնամու հողերը:



## ԳՅՈՒՂԱՑԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԼՈՒԾՈՒՄԸ

Յակոբինյաններին նախորդ կառավարությունից ժառանգություն մնացած գյուղացիության վերաբերյալ չլուծված հարցը: Յակոբինյանները վերացրին գյուղացիների վրա ծանրացած բոլոր հին պարհակությունները, առանց հատուցման վորևե վճարի, և ֆրանսիական գյուղացին միանգամայն անկախ դարձավ ազնվական-կալվածատիրոջից: Բավարարություն տվեց նաև չքավորության պահանջին սակագնի և կայուն գների վերաբերմամբ: 1793 թ. սեպտեմբերին սակագին նշանակվեց բոլոր մթերքներին:

## ՊԱՌԱԿՏՈՒՄ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՄԱՍՍԱՅԻ ՅԵՎ ՅԱԿՈԲԻՆՅԱՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ.

Թվում եր, թե քաղաքի չքավորությունը յակոբինյան կառավարության հաստատուն հենուկը պետք ե լիներ: Բայց, իրոք, նրանց միջև շուտով տարաձայնություններ առաջացան: Յակոբինյանների ձեռնարկած միջոցները շատ բան չեյին կարող տալ արհեստավորներին և բանվորներին: Զինված սակագնին և զանազան խիստ միջոցներին, սպեկուլյացիան շարունակում եր զարգանալ. առևտրականները թաքցնում եյին մթերքները և իրենց ցանկացած չքավորներին անմատչելի գներով վաճառում:

Յակոբինյանները խնայելով մանր գործատերեր ու խանութպաններ, ապրանքներին սակագին նշանակելու հետ միասին սակագին նշանակեցին նաև բանվորական ձեռքին, այն էլ շատ ցած. այնպես, վոր արհեստավորն այդ սակագնի համաձայն աշխատավարձ ստանալով չեր կարող ծայրը ծայրին հասցնել: Այն որենքները, վորոնք բանվորներին արգելում եյին միանալ իրենց շահերը պաշտպանելու համար, մնացին իրենց ուժի մեջ նաև յակոբինյանների որոք: Մի խոսքով՝ արհեստավորները և բանվորները շարունակեցին մնալ նույն ծանր վիճակում: Յեվ զարմանալի չե, վոր նրանք դժգոհ մնացին յակոբինյանների ձեռնարկած միջոցներից և ավելի վճռական միջոցներ եյին պահանջում մանավանդ սպեկուլյանտների առևտրականների դեմ, վորոնք մեծ հարստություն եյին ձեռք բերել՝ ոգտվելով պատերազմից և սովից: Դեռ այն ժամանակ, յերբ Կոնվենտը հրճվում եր նոր սահմանադրություն ընդունելու առթիվ, Ժակ Ռուն գնալով նիստերի դահլիճ՝ ճառ ասաց, վորի մեջ այդ սահմանադրությունը խիստ հարձակումների յենթարկեց: «Նոր սահմանադրության մեջ արդյոք արգիլեցի՞ք չարաշահությունը,—հարցնում եր

նա դառնալով Կոնվենտի անդամներին:— Վոչ: Մահվան վճիռ հայտարարեցի՞ք փերեզակներին:— Վոչ: Արգելեցի՞ք դրամի սպեկուլյացիան:— Վոչ: Ահա թե ինչու յենք մենք հայտարարում, վոր դուք ժողովրդի բախտավորության համար վոչինչ չարեցիք»:

Բայց յակոբինյանները, մանր սեփականատերեր լինելով, չէին վճռում ձեռք տալ ուրիշի սեփականության: Ճիշտ է, չքավոր մասսան էլ սոցիալիստական հայացքներ չուներ, բայց պահանջում էր վճռական հավասարեցում և կռիվ հարուստների դեմ: Իսկ յակոբինյանները մահվան պատիժ էին նշանակում սեփականության դեմ ամեն մի վտանգության համար և ժիրոնդիստներին տապալող ապստամբության ժամանակ հանդիսավոր յերդում տվեցին իրենց ակումբում անձեռնամխելի պահել սեփականությունը: Դրա համար էլ թշնամությունը յակոբինյանների և քաղաքի չքավոր մասսայի միջև հետզհետե մեծանում էր: Այժմ յակոբինյաններն սկսում են արդեն հալածել «կատաղիներին», մաքրել նրանցից սեկցիաները և քշել նրանց Կոմունայից: Յեվ այդ բոլորը նրանց հաջողվեց, բայց դրա փոխարեն նրանք զրկվեցին իրենց նեցուկից քաղաքի արվարձաններում:

## ԳՅՈՒՂԱԿԱՆ ՄԱՍՍԱՆ ՅԵՎ ՅԱԿՈԲԻՆՅԱՆՆԵՐԸ

Ինչ վերաբերում է գյուղին, այստեղ էլ յակոբինյանները շուտով կորցրին իրենց ժողովրդականությունը: Յակոբինյանների ձեռքում ահագին քանակությամբ հող կար, վոր գրավել էին նրանք յեկեղեցուց և յերկրից փախած հակահեղափոխական ազնվականներից: Գյուղի չքավոր մասսան այդ հողերից ուզում էր ձրի հողաբաժիններ ստանալ կամ գոնե հնարավորություն ունենալ մաս-մաս վճարելու պայմանով ձեռք բերել այդ հողաբաժինները: Սակայն պետությունը, վոր կառավարում էին յակոբինյանները, նյութական վոչ մի միջոց չուներ, բացի արժեքազուրկ թղթե դրամները, մինչդեռ նա պետք է շարունակեր պատերազմն այս անգամ չտեսնված մեծ չափերով, իսկ այդ պատերազմը հսկայական ծախս էր պահանջում:

Այդ պատճառով էլ կառավարությունն ստիպված էր հողերը ծախել, վորպեսզի կարողանա շատ փող ձեռք բերել: Նման պայմաններում այդ հողերն եժան գնով գնում էին գլխավորապես գյուղական կուլակները, ունեվոր գյուղացիները և քաղաքի բուրժուազիան:

Այդ ձևով հող ձեռք բերողներն այլևս չէին մտածում հեղափոխու-



թյան նվաճումներն ընդլայնելու մասին, քանի վոր չքավոր մասսաների հաղթության դեպքում նրանք կարող էին կորցնել իրենց նոր ձեռք բերած ստացվածքը: Դրա համար էլ նրանք ցանկանում էին, վոր հեղափոխությունը շուտով վերջանա: Իսկ չքավոր մասսան էլ, վոր հող չստացավ, նույնպես կորցրեց իր հետաքրքրությունը թե դեպի հեղափոխությունը և թե դեպի յակոբինյանները:

Բացի այդ, գյուղացիների համար խիստ ծանր էր սակագինը, վոր սահմանված էր բոլոր մթերքների համար: Նրանք ստիպված էին հացն ու այլ մթերքները պետությանը տալ սահմանված սակագնով, բայց քաղաքում նույն սակագնով վոչինչ չէին կարողանում ձեռք բերել:

## ՊԱՅՔԱՐ ՅԱԿՈԲԻՆՅԱՆՆԵՐԻ ՇԱՐՔԵՐՈՒՄ

Սակայն յակոբինյանների շարքերում էլ միաբանություն չկար: Նրանց մեջ, իբրև մանր սեփականատերերի, կային զանազան դիրքի և դրության, զանազան շահերի տեր մարդիկ: Քիչ ունեվոր մանր սեփականատերերը ցանկանում էին ավելացնել հարուստների հարկերը: Այդ հարկերից ստացած գումարների միջոցով նրանք մտածում էին օգնել քայքայված մանր տնտեսատերերին, հիվանդանոցներ ու աղքատանոցներ հիմնել և գործազուրկներին զբաղմունք տալու համար մեծ աշխատանքներ կազմակերպել: Նրանց կենտրոնը Կոմունան էր, վորի օգնությամբ նրանք ցանկանում էին իրագործել իրենց մտադրությունները: Նրանց առաջնորդներն էին Հեբերը և Շոմետը, վորոնք նշանավոր պաշտոններ ունեին Կոմունայում: Նրանց դեմ խիստ պայքար էր մղում մանր բուրժուազիայի ավելի ունեվոր մասը Դանտոնի և Ռոբեսպյերի գլխավորությամբ:

Ռոբեսպյերն ուզում էր խուսափել ամեն տեսակի ծայրահեղությունից. «Հայրենասերների սեփականությունը սրբազան է»,— ասում էր Ռոբեսպյերի մերձավոր բարեկամ Սեն-Ժյուստը: Ռոբեսպյերն անթույլատրելի էր համարում, վոր «առանձին անհատի սեփականությունը վնաս հասցնի իր մերձավորի ապահովությանը, գոյության ազատությանը կամ սեփականությանը»: Բայց Ռոբեսպյերը չէր ընդունում գույքային հավասարության հնարավորությունը: Նրա կարծիքով նման հավասարու- վասարության հնարավորությունը կարող էր լինել միայն կոմունիզմի ժամանակ, յերբ գույքն ընդհանուր կլինի, իսկ այդպիսի «ընդհանրությունը» նա անհեթեթություն էր համարում:

Դանտոնը, վառվռուն հռետոր, առաջ գնացած դեռ հեղափոխության սկզբում, հեղափոխության ժամանակ մեծ կարյերա ունեցավ և անհագին հարստություն դիզեց: Այժմ նա իրեն կապված զգաց այն մարդկանց խմբակի հետ, վորոնք, ինչպես և ինքը, դիրք և հարստություն ստեղծեցին հեղափոխության ժամանակ և նոր բուրժուազիայի ներկայացուցիչներ եյին հանդիսանում: Դրանք եյին՝ հողի չարաշահները, զորքին մատակարարողները և այլն: Ամեն բան ստանալով հեղափոխությունից՝ նրանք կարծում եյին, վոր ժամանակն է վերջ դնել հեղափոխությանը, վորովհետև նրա հետագա զարգացումն սպառնում եր իրենց հարստությանը և բարեկեցությանը: Ռոբեսպյերն առայժմ պաշտպանում եր Դանտոնին և նրա հետ միասին յելույթներ եր ունենում Հեբերի կողմնակիցների դեմ; Նրանք հավատացնում եյին, թե հեբերականները, այսինքն Հեբերի կողմնակիցները, ցանկանում են «ժողովրդին անցկացնել հեղափոխության սահմանները»: Այս պայքարում հաղթող հանդիսացան Դանտոնի և Ռոբեսպյերի կողմնակիցները: Հեբերականները, մեղադրվելով հակահեղափոխության մեջ, մահվան դատապարտվեցին: Բայց այժմ ել կռիվ սկսվեց հաղթողների շարքում: Դանտոնն ու իր կողմնակիցները պահանջում եյին վերջացնել հեղափոխությունը և դադարեցնել տերրորը: Նրա ճառերը սիրով եյին լսում հեղափոխության բոլոր թշնամիները, նույնպես և նոր հարուստները, այսինքն այդ ժամանակամիջոցում հարստացած սպեկուլյանտները: Ռոբեսպյերն ստիպված յեղավ դուրս գալ Դանտոնի դեմ: Հաղթությունը մնաց Ռոբեսպյերին: Դանտոնն ու իր կողմնակիցներն սպանվեցին կառափնարանում (եշաֆոտ):

## ՅԱԿՈԲԻՆՅԱՆՆԵՐԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ

1794 թ. ամռան սկզբին իշխանության մեջ մնաց յակոբինյանների մի փոքր խումբ, Ռոբեսպյերի ղեկավարությամբ: Այդ խումբն ուժեղացրեց տերրորը և աշխատում եր իր կողմնակիցներով լցնել բոլոր հիմնարկությունները: Այդ միջոցով նա վորոշ ժամանակ կարողացավ իշխանությունն իր ձեռքում պահել: Բայց թշնամիները քնած չեյին: Ջարդված խմբերի մնացորդները միացան. Նրանց միացան նաև հարուստ-սպեկուլյանտների ներկայացուցիչները: Նրանք, չնայած ամենախիստ որենքներին, մեծ կարողություն եյին դիզում, մեծ գումարներ ձեռք բերում զորքին պարեն հայթայթելու գործից, անկալվածքների սպեկուլյացիայից և պետության եժան գնով վաճառած հողերի առուծախից:



Այդ տիպի մարդկանց ներկայացուցիչներից շատերը նստած եյին Կոնվենտի «ճահիճում» կամ «հարթությունում»:

Նրանք առժամանակ հանդուրժում եյին յակոբինյանների իշխանությունը, վորը, սակայն, հետզհետե ավելի և ավելի անտանելի յեր դառնում նրանց համար: Թեև յակոբինյանները չկարողացան վերջ տալ սպեկուլյացիային և սահման դնել հարուստների ախորժակին, ինչպես պահանջում եյին չքավոր մասսաները, բայց և այնպես սակագները և զանազան խիստ որենքները ճնշում եյին յերես առած սպեկուլյանտների գործունեյությունը: Յեվ վոտքի յելան Կոնվենտի «ճահիճն» ու Ռոբեսպյերից պարտված զանազան խմբերի մնացորդները: Նրանց և Ռոբեսպյերի ընդհարման հետևանքով Ռոբեսպյերը բանտարկվեց, որենքից դուրս հայտարարվեց և մահվան դատապարտվեց 1794 թ. հուլիսի 27-ին:

Բանվորներն ու արհեստավորները հանդես չեկան պաշտպանելու Ռոբեսպյերին, քանի վոր նա հալածում և պատժում եր «կատաղիներին» և չեր բավարարում նրանց կարիքները:

Ռոբեսպյերի անկման որը—դա մանր բուրժուազիայի անկման որն եր: Դրանից հետո իշխանությունն անցավ դարձյալ խոշոր բուրժուազիային: Շուտով Կոնվենտ վերադարձան կենդանի մնացած ժիրոնդիստները:

## ՌԵԱԿՑԻԱՆ ՅԱԿՈԲԻՆՅԱՆՆԵՐԻ ԱՆԿՈՒՄԻՑ ՀԵՏՈ

Կոնվենտն ավելի քան մի տարի յել շարունակեց իր գոյությունը. բայց նա այլևս հեղափոխական ժողով չեր: Ազդեցությունը Կոնվենտում այժմ այն մարդկանց եր պատկանում, վորոնք մոտ եյին նոր սպեկուլյանտ բուրժուազիային: Նրանք սկսեցին հալածել յակոբինյաններին և վերացնել հեղափոխական միջոցները: Այսպես վերացրին սեկցիայի նիստերին մասնակցելու համար նշանակված ռոճիկը, մթերքների սակագները: Սկսեցին դատել և պատժել տերրորի գործիչներին, մանավանդ նրանց, ովքեր աշխատում եյին այն տրիբունալում, վոր մի ժամանակ պայքարում եր հակահեղափոխության դեմ:

Կոնվենտն այդ բոլորը վերջացրեց նրանով, վոր հին,—ճիշտ է, յերբեք դեռ չգործադրված,—յակոբինյան սահմանադրության փոխարեն ստեղծեց նոր, կատարյալ բուրժուական սահմանադրություն: Համաձայն այդ սահմանադրության քաղաքական կյանքին մասնակցություն ունենալու համար հարկավոր եր բավականաչափ մեծ գույքի տեր լինել:

Բայց և այնպես հեղափոխությունն իր գործն արեց: Ազնվականությունն, իբրև արտոնյալ դաս, վերացավ. վերջացավ նրա իշխանությունը գյուղացիների վերաբերմամբ: Վերացան ֆեոդալական իրավունքները, որենքը հավասար ճանաչեց բոլոր քաղաքացիներին, և վոչ մի բան այլևս չէր ճնշում առևտրի և արդյունաբերության զարգացումը:

Ճիշտ է, այդ բոլորից շահեց առժամանակ պատերազմից և սպեկուլյացիայից հղփացած գիշատիչ բուրժուազիան: Ճիշտ է, չքավոր մասսան դարձյալ հեռու մղվեց պետությունը կառավարելու գործից և քաղաքական կյանքից, ինչպես և մանր բուրժուազիայի մեծամասնությունը, վորի կառավարությունն իր ժամանակին փրկեց հեղափոխությունը: Սակայն հաստատվեց կապիտալիզմի զարգացմանն անհրաժեշտ նոր կարգերի հիմքը: Հետագայում, յերբ իշխանությունը Ֆրանսիայում զրավեց զորաբանակին հենված գեներալ Բոնապարտը, պահպանվեց և ամրապնդվեց այն ամենն, ինչ ոգտավետ էր բուրժուազիայի և կապիտալիզմի զարգացման համար: Բոնապարտի (Նապոլեոն) կառավարության ժամանակ հրատարակվեցին քաղաքացիական և քրեական օրենքներ, վորոնք վերջնականապես հաստատեցին բուրժուական կարգերի լրիվ տիրապետությունը:

Բանվոր դասակարգը վերջին հաշվով, ճիշտ է, թեև քիչ, բայց ելի շահեց հեղափոխությունից: Նրա ոգուտն այն էր, վոր բուրժուական կարգերն ավելի առաջադիմական են, քան ֆեոդալական իշխանությունը: Կապիտալիստական կարգի աճումն ու ամրացումը—բանվոր դասակարգի աճումն ու զարգացումն է, վորը (բանվոր դասակարգը) հետագայում վերացնելու յե կապիտալիզմը և բուրժուական հասարակությունը, ծնունդ առնելով և զարգանալով հենց այդ հասարակության ծոցում: Հետևաբար, բուրժուական հեղափոխությունը ճանապարհ է նախապատրաստում պրոլետարական հեղափոխության համար: Իսկ ֆրանսիական հեղափոխությունն առաջին բուրժուական հեղափոխությունն էր յեվրոպական ցամաքում և խոշոր ազդեցություն ունեցավ ամբողջ Յեվրոպայի վրա: Իզուր չէր, վոր բոլոր ազնվական պետությունները կատաղի կռիվ եյին մղում նրա դեմ, իսկ Բաստիլիայի առումը տոնում եյին բոլոր առաջադեմ մարդիկ Յեվրոպայում իբրև նոր դարաշրջանի սկիզբը, ուր նոր կարգեր են տիրապետելու:



Այսպես, մեզնից 140 տարի առաջ տեղի ունեցած ֆրանսիական հեղափոխության մեջ արդեն դրված եյին ապագա պրոլետարական հեղափոխության սաղմերը:

## ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչ էր ներկայացնում (իր կազմով) Որենսդիր ժողովը:
2. Ի՞նչ հանգամանք բարդացրեց այդ ժողովի խնդիրները:
3. Ի՞նչեր խոստանում պատերազմը ժիրոնդիստներին, և ի՞նչ հույսեր եյին դրել պատերազմի վրա թագավորը և պալատականները:
4. Ինչո՞ւ յեր աճում քաղաքի մասսաների հեղափոխականությունը:
5. Ինչպե՞ս էր նախապատրաստվում այդ մասսայի նոր յելույթը:
6. Ի՞նչ հետևանք ունեցավ ոգոստոսի 10-ի յելույթը:
7. Պատգամավորների ի՞նչ խմբակցություններ կային Կոնվենտում:
8. Ինչո՞ւ յեն հաճախակի կրկնվում քաղաքի չքավոր մասսաների յելույթները Կոնվենտի հավաքվելուց սկսած:
9. Ովքե՞ր են «կատաղիները» և ի՞նչ եյին ուզում:
10. Ինչո՞ւ եյին յակոբինյանները շահագրգռված քաղաքի չքավոր մասսաների հետ միությամբ:
11. Վորո՞նք եյին այդ միության հետևանքները:
12. Ի՞նչ դրության մեջ եյին Ֆրանսիան և Պարիզը, յերբ իշխանությունն անցավ յակոբինյանների ձեռքը:
13. Ի՞նչ բնույթ ուներ յակոբինյան կառավարությունը և ի՞նչպես էր կազմակերպված:
14. Ի՞նչ արեցին յակոբինյանները քաղաքի և գյուղի չքավոր մասսաների համար:
15. Ինչո՞ւ քայքայվեց յակոբինյանների և քաղաքային մասսայի միությունը:
16. Ինչո՞ւ հեռացավ գյուղական մասսան յակոբինյաններից:
17. Ի՞նչ հետևանքներ ունեցավ այդ հանգամանքը:
18. Ի՞նչ խմբակներ կային յակոբինյանների շարքերում:
19. Ի՞նչն էր 1794 թ. հուլիսի 27-ի հեղաշրջման պատճառը:
20. Ի՞նչ հետևանքներ ունեցավ այդ հեղաշրջումը:
21. Ինչո՞վ արտահայտվեց խոշոր բուրժուազիայի իշխանության վերադարձը:

*22. Ի՞նչ նշանակություն ունեցավ հեղափոխությունն ընդհանրապես։*

*23. Ինչո՞վ է բացատրվում հեղափոխության առաջ բերած փոփոխությունների նշանակալից լինելը։*

*24. Ի՞նչ նշանակություն ունի պրոլետարիատի համար ֆրանսիական հեղափոխությունը, բուրժուական լինելով հանդերձ։*

## ՆՅՈՒԹԵՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԱՐ

### Ժակ Ռույի («կատաղիների» առաջնորդի) յելույթը ազգային Կոնվենտում 1793 թ. հունիսի 25-ին

*«Ֆրանսիական ժողովրդի պատգամավորներ.*

*«Հարյուր անգամ այս սրբազան դահլիճում հայտարարվել է յեսամոլների և սրիկաների չարագործությունների մասին, և ամեն անգամ դուք խոստացել եք մեզ վոչնչացնել ժողովրդի տզրուկներին։ Շուտով ժողովրդին ներկայացվելու յե ի հաստատություն սահմանադրական ակտը»—արգելե՞լ եք նրա մեջ աժիոտաժը*) .—վո՛չ։ Արգելե՞լ եք դրամի վաճառքը.—վո՛չ։*

*«Ահա թե ինչու յենք մենք հայտարարում, թե դուք վոչինչ չեք արել ժողովրդի բարօրության համար։*

*«Ազատությունը վոչ այլ ինչ է, յեթե վոչ մի դատարկ ուրվական, յերբ մի դասակարգ կարող է անպատիժ կերպով սովամահ անել մի ուրիշ դասակարգի։ Հավասարությունը մի դատարկ ուրվական է, յերբ հարուստը, մենաշնորհների շնորհիվ, օգտվում է իր նմանների կյանքի և մահվան իրավունքով։ Դատարկ ուրվական է նաև հանրապետությունը, յերբ օր–ավուր աշխատում է հակահեղափոխությունը, այնպիսի գներ նշանակելով մթերքներին, վոր նրանց ձեռք բերել կարող է միայն քաղաքացիների 3/4 մասը, այն էլ արտասուքով։*

*«Միայն վերջ տալով նեգոցիանտների**) ավազակությանը, վորն անհրաժեշտ է տարբերել առևտրից, և սանկյուլոտներին***) պարեն տրամադրելով՝ դուք կգրավեք վերջիններիս հեղափոխության կողմը և կհամախմբեք սահմանադրական օրենքների շուրջը»։*

. . . . . . . . . . . . . . . . . . . . . . .

*) Աժիոտաժ—սպեկուլյացիա (չարաշահություն)։

**) Նեգոցիանտ—խոշոր առևտրականներ։

***) Սանկյուլոտ—չքավորներ։



*«Այս չորս տարվա ընթացքում միմիայն հարուստներն են օգտվել հեղափոխության բարիքներից։ Առևտրական արիստոկրատիան (ազնվականություն), վոր ավելի սոսկալի յե, քան բարձրաստիճան և պաշտոնյա ազնվականությունը, սարսափելի գործով է զբաղվում—կողոպտում է մասնավոր անձանց ստացվածքը և հանրապետության հարստությունները,—և մենք դեռ չենք տեսնում նրանց չարաշահությունների սահմանը, քանի վոր առավոտից մինչև յերեկո ապրանքների գներն աճում են սոսկալի արագությամբ։ Ժամանակն է, քաղաքացի ներկայացուցիչներ, վերջ տալ այս մահացու պայքարին, վորին դատապարտում են յեսամոլները հասարակության աշխատավոր դասակարգը։ Արտահայտվեցեք սպեկուլյանտների և շահամոլ չարչիների դեմ—նրանք կամ պետք է յենթարկվեն ձեր դեկրետներին, կամ վոչ։ Առաջին դեպքում դուք կփրկեք հայրենիքը, յերկրորդ դեպքում—դուք։ Համենայն դեպս, կփրկեք հայրենիքը. վորովհետև մենք չենք հապաղի ճանաչելու և վոչնչացնելու ժողովրդի տզրուկներին։*

*Ի՞նչպես, մի՞թե սրիկա ավազակի սեփականությունն ավելի սուրբ է, քան մարդու կյանքը»։*

## ՀԱՐՑԵՐ ՅԵՎ ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*1. Ո՞ւմ ներկայացուցիչն եր Ժակ Ռուն և ի՞նչ թերություններ եր գտնում յակոբինյան կառավարության գործունեության մեջ։*

*2. Ո՞ւմ եյին մեղադրում «կատաղիները» և նրանց առաջնորդ Ռուն չքավոր խավի դժբախտության մեջ և ի՞նչ միջոցներ եյին առաջարկում։*

*I. Օգտագործելով վավերագրի նյութերը և մեր գրքի համապատասխան բաժինը, հետևենք, թե ինչպես դաշն կնքվեց յակոբինյանների և «կատաղիների» միջև, և ինչո՞ւ վիժեց այդ դաշինքը։*

*II. Զեկուցում կազմեք «Ի՞նչպես եր կազմակերպված յակոբինյանների իշխանությունը և ի՞նչպես նրանք հաղթեցին ներքին և արտաքին թշնամիներին» թեմայով։*

*Առաջին յերեք պատվերների հաջող լրացումն է ներկայանում «Քաղցածների վրդովմունքը» հոդվածը Լ. Ի. Ռուղերի վերոհիշյալ գրքում—յերես 179—187։*

*Զեկուցողներ ընտրեք գրված ամեն մի պատվերի համար և հանձնարարեք նրանց բանավոր զեկույցներ տալ վերջին ժողովում, օգտագործելով մատնանշված նյութը։*

ԳԼՈՒԽ IX

# ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍՈՒՄ

## § 1. ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐԸ

### ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ԳՈՐԾԱԴՈՒԼՆԵՐՆ ԱՆԳԼԻԱՅՈՒՄ

*Արդյունաբերական բանվորների ծանր պայմանները հարկադրեցին նրանց՝ առաջին գործարանների և ֆաբրիկաների յերևան գալու հետ միժամանակ սկսելու պայքարը կապիտալիստների դեմ։ Բացի մեքենաներ փչացնելուց, բանվորները շատ վաղ սկսեցին օգտվել կապիտալիստների դեմ պայքարի այնպիսի զենքից, ինչպիսին գործադուլն է։*

*Արդեն* XIX *դ. առաջին կիսում բանվորական գործադուլներն Անգլիայում սովորական յերևույթ էին դարձել։*

*Ահա գործադուլի մի օրինակ, և թե կառավարությունն ինչպիսի դատաստանն էր անում գործադուլավորների նկատմամբ։*

1800 *թվին Հարավային Ուելսի հանքահորերից մեկի բանվորները գործադուլ արին։ Գործադուլի պատճառն այս էր. գործատերերը հարկադրում էին բանվորներին ապրանքներ գնել իրենց խանութներից հատուկ անդորրագրերով, որ տալիս էին նրանց ոսկու փոխարեն։ Այդ մթերքները եռակի թանկ էին և որակով շատ ցածր։ Բանվորները գործադուլ արին, տակնուվրա արին խանութները և ապրանքները բաժանեցին իրար մեջ։ Կառավարությունն ուղարկեց* 3 *գունդ զորք։ Շատ բանվորներ ձերբակալվեցին, իսկ յերկուսին կախեցին։*

*Թեև մեծ մասամբ գործադուլներն անհաջող էին անցնում, բայց գործադուլների միջոցով մղվող պայքարը բոլորովին անհետ, ապարդյուն չէր անցնում։ Նա սովորեցնում էր բանվորներին, թե ինչպես պետք է գործել, ինչպես պաշտպանվել ձեռնարկատերերից և ինչպես ձեռք բերել գոյության լավ պայմաններ։ Գործադուլային պայքարը նպաստում էր բանվորների համախմբմանը և սերտ կապակցմանը։*





*Գործադուլը հաջողությամբ տանելու համար անհրաժեշտ են բանվորական կազմակերպություններ։ Հարյուր և հազարավոր մարդիկ չեն կարող քիչ թե շատ համերաշխ գործել առանց ղեկավարության։ Բանվորներն ստիպված էին կապիտալի հզորությանը հակադրել մասսաների կազմակերպված ուժը։ Դեռ արդեն* XVIII *դարից առաջ են գալիս բանվորական միություններ, որոնց նպատակն էր կազմակերպված հանդես գալ։*

*Գործադուլից առաջ բանվորները սովորաբար ժողով էին գումարում մի որևէ պանդոկում, ուր և ընտրում էին գործադուլային կոմիտե՝ ղեկավարելու, վճարներ գանձելու և գործատերերի հետ բանակցություններ վարելու համար։*

*Երբ գործադուլն ընդգրկում էր մի քանի հարևան ձեռնարկություններ, պատահում էր, որ այդ ձեռնարկությունների բանվորները համախմբվում էին մի ընդհանուր միության մեջ և ընտրում ընդհանուր գործադուլային կոմիտե։*

*Գործադուլի հաջող ելքի դեպքում սովորաբար այդ միություններն ամրապնդվում և շարունակում էին իրենց գոյությունը։ Անհաջողության դեպքում միությունները հաճախ լուծվում էին մինչև հետևյալ գործադուլը և ապա կրկին հրապարակ գալիս։*

### ՕՐԵՆՔՆԵՐ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ

*Տիրող դասակարգերն այդ միությունները համարում էին հեղափոխության նախակարապետներ, ինչպես նույն բանը տեղի էր ունենում Ֆրանսիայում։ Այս պատճառով* 1799 *և* 1800 *թ. թ. օրենքներ հրատարակվեցին, որոնք բանտի և տաժանակիր աշխատանքների սպառնալիքով արգելում էին ամեն մի համախմբում և կազմակերպություն։*

*Այս օրենքի հրատարակումից հետո շատ բանվորական միություններ անցան ընդհատակյա դրության և գաղտնի շարունակեցին իրենց գոյությունը։*

*Ընդհատակյա միություններն իրենց ժողովները գումարում էին խուլ տեղերում, անտառներում, լապտերների լույսի տակ։ Արձանագրություններն ու ցուցակները տուփերով հորում էին գետնի մեջ։ Միու-*

թյան անդամագրվող ամեն մի անհատ յերդում եր տալիս՝ հեչել եր վրա վերցրած պարտականությունները և խոստանում եր վոչ վոքի չասել միության գոյության մասին:

Գաղտնի միություններն ել նույնն եյին անում, ինչ վոր ազատ բանվորական կազմակերպությունները: Նրանք ղեկավարում եյին գործադուլները և հանդես եյին գալիս վորպես բանվորական շահերի պաշտպաններ՝ ընդդեմ ձեռնարկատերերի: Սակայն կռվի պայմաններն ավելի դժվարացան, միությանն ու գործադուլներին մասնակցողների պատիժներն ավելի դաժանացան:

Այդ պայմանները բանվորներին հարկադրեցին դիմելու ձեռնարկուներին սարսափեցնող միջոցների: Առանձնապես անտանելի գործարանատերերին սպանում եյին:

Գործադուլների ժամանակ հրդեհում եյին գործարանային շենքերը, աշխատանքի ժամանակ փչացնում եյին մեքենաները. յերբեմն ել ձեռնարկությունների մեջ պայթյուններ եյին առաջացնում:

Բանվորները կռվում եյին նաև իրենց միջի լրտեսների և դավաճանների դեմ: Յերբեմն գաղտնի կազմակերպությունների անունից սպառնական ազդեր եյին փակցնում, որինակ, այսպիսի ձևով. Նկարում եյին յեզան պոզերից անցկացրած մարդու սրտեր, տակը այսպիսի գրություն. «Մենք վճռել ենք դուրս հանել և յեզան պոզերից անցկացնել բոլոր լրտեսների, դավաճանների սրտերը, վորպեսզի ամենքն ել իմանան, թե ինչ ե սպասում դավաճաններին, վորոնց մենք բոլորին ել ճանաչում ենք...»:

## ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՐԵՆՔԻ ՎԵՐԱՑՈՒՄԸ

20-ական թվերի սկիզբն Անգլիայի համար արդյունաբերական արտասովոր վերելքի ժամանակ եր: Գործարանները լիքն եյին պատվերներով: Այսպիսի պայմաններում տևական գործադուլներն ու բանվորական հուզումները ձեռնատու չեյին բուրժուազիային: Այդ պատճառով շատ ձեռնարկուներ տրամադիր եյին վորոշ զիջումներ անել բանվորությանը, և 1825 թվին հրատարակվեց մի որենք, վոր վերացնում եր բանվորական միությունների արգելքը:

Սակայն նրանց իրավունքները շատ սահմանափակ եյին: Միությունները կարող եյին զբաղվել միայն աշխատավարձի և բանվորական օրվա տևողության խնդիրներով: Միությունների մասնակցությունը



քաղաքական կռվին արգելվում եր: Բանվորներն իրավունք չունեյին աշխատավարձի բարձրացման ձգտելու «բռնությամբ, սպառնալիքով, վախեցնելով, վիրավորանքով կամ արգելքներով»:

Չնայած նոր որենքի բոլոր այս թերություններին, պրոֆեսիոնալ միությունները (տրեդ-յունիոնները, ինչպես անվանում են նրանց Անգլիայում) այս որենքի լույս տեսնելուց հետո սկսեցին բուսնել մեկը մյուսի յետևից արդյունաբերության տարբեր ճյուղերում: Բանվորական շարժումը դուրս յեկավ ընդհատակյա դրությունից:

Սակայն բանվորները շատ մեծ հույսեր եյին դնում իրենց մատաղ ու դեռևս չամրապնդված կազմակերպությունների վրա: 1825 թվին հետևող մի շարք տարիները գործադուլային հուսահատ պայքարի և նոր պրոֆեսիոնալ միությունների սնանկության շրջան եր:

Այնուհետև բանվորները, հուսահատվելով պրոֆեսիոնալ կռվից, դիմեցին քաղաքական պայքարին:

## ԳՈՐԾԱԴՈՒԼՆԵՐՆ ՈՒ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՀՈՒԶՈՒՄՆԵՐԸ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ

XIX դարի սկզբին թե Անգլիայում և թե Ֆրանսիայում բուրժուազիան և կառավարությունը շատ խիստ պայքար եյին մղում գործադուլավորների դեմ: Բանվորներին շարունակ դատի եյին յենթարկում: 1825-1847 թ. հարուցվել եր 1250 դատական գործ 7000 մարդու դեմ, վորոնք մասնակցել եյին գործադուլներին: Դրանցից 4500 դատապարտվել եյին մի տարվա բանտի, իսկ մնացածները՝ ավելի յերկար ժամանակի բերդարգելության:

Բանվորներին մի յելք եր մնում՝ իրենց շահերը պաշտպանել զենքի ուժով: Այս բանը տեղի ունեցավ 1831 թվին Լիոն քաղաքում՝ մետաքսի արդյունաբերության կենտրոնում: Այստեղ վաճառական կապիտալիստները հում մետաքս եյին տալիս փոքր արհեստանոցների տերերին, վորոնց մոտ բանում եյին աշակերտներ ու քարգյահներ:

«Նույնիսկ ամենալավ ժամանակը քարգյահների աշխատավարձը օրական 28—32 սուից չեր անցնում: Իսկ հացի ֆունտն արժեր 4 սուից վոչ պակաս: Փոքր ինչ լավ դրության մեջ եյին իրենք արհեստանոցի տերերը, վորոնք շարաչար շահագործվում եյին վաճառականների կողմից»: Բնակարանային պայմանները սարսափելի եյին: «Մի փոքրիկ սենյակում ապրում եյին արհեստանոցի տիրոջ ընտանիքը, նրա միքանի քարգյահն ու աշակերտները»: «Այս չարքաշ աշխատավորները, վորոնք

պատրաստում էին փարթամ մետաքսի կտորներ, ման էին գալիս ցնցոտիներով, սնվում էին վատ ու անառողջ կերակրով»: «Արդեն մատաղ հասակից մետաքսի գործում աշխատող բանվորն աչքի էր ընկնում իր կորցրած մեջքով, ծռմռված ոտներով և գունատ դեմքով»:

Վերջապես 1831 թվի աշնանը Լիոնի աշխատավորները վորոշեցին պահանջել, վոր պատրաստած կտորեղենի համար կայուն գին սահմանվի և այդպիսով թույլ չտան, վոր իրենց աշխատանքը բաժանող առևտրականը վարձաչափն իջեցնի: Առևտրականները համաձայնեցին, գնահատումը կատարվեց և բանվորները ցնծության մեջ էին: Ամեն ինչ խաղաղ էր, բանվորները նորից գործի անցան, սակայն 20 առևտրական իրենց ընկերներից շատերին կարողացան համոզել, վոր գնահատումը նկատի չառնեն և չկատարեն: Իսկ յերբ բանվորներն սկսեցին պահանջել, վոր սահմանված գնահատումները կիրառվեն, առևտրականներից մեկը սկսեց ատրճանակով սպառնալ նրանց:

Այս ամենը ծայր աստիճանի գրգռեց մետաքսագործ ջուլհակներին:

Նրանք ցույց կազմակերպեցին:

3000 ջուլհակներ շարժվեցին իրենց ծայրամասերից կանոնավոր շարքերով ու դրոշակներով: Ամբոխի ընդդիմահարությունը գործարաններից կազմված բուրժուական կամավորների կողմից ապստամբության ազդանշան ծառայեց: «Իդ՛են» աղաղակներով բանվորներն սկսեցին բարրիկադներ շինել: Ապստամբության կենտրոնում՝ «Շեկլեկ խաչ» բանվորական թաղամասում ծածանվում էր սև դրոշը մակագրությամբ՝ «Ապրել աշխատելով կամ մեռնել կռվով»: Գրավելով քաղաքի բարձրությունները և միքանի թնդանոթներ, ապստամբ բանվորները հարկադրեցին զորքին թողնել քաղաքը և 10 որ դարձան նրա տերն ու տնօրենը:

Սակայն, հաղթություն տանելով, բանվորները չհասկացան նրա նշանակությունը և չկարողացան, չիմացան օգտագործել այն: Նրանք իրենց տեղերում թողին նախկին պաշտոնյաներին և ցույցահանեցին անսահման հարգանք դեպի բուրժուական սեփականությունն ու կարգերը: Այս բացատրվում էր նրանով, վոր ապստամբներն իրենք ևս մանր արհեստանոցատերեր էին:

Ապստամբները քաղաքական պահանջներ չառաջադրեցին. դեռ ավելին. շատերը նրանցից միապետականներ էին: Յեվ յերբ մի խումբ հանրապետական—հեղափոխականներ փորձեցին այն ժամանակ գոյու-



թյուն ունեցող միապետության դեմ կռվել, նրանց արտաքսեցին բանվորների գրաված քաղաքային խորհրդից:

Բանվորներն անգործության էին մատնվել, իսկ այդ ժամանակ կառավարությունն ու բուրժուազիան իրենց դատաստանն էին պատրաստում: Համարյա ապստամբների աչքի առաջ բուրժուազիան զինվում էր: Քաղաքի մոտ կենտրոնացնում էին զորքեր և մի գեղեցիկ օր մտան Լիոն: Ապստամբները, թեև անառիկ դիրքեր ունեյին, չկարողացան կազմակերպել քաղաքի պաշտպանությունը:

## ՍԻԼԵԶԻԱՅԻ ՋՈՒԼՀԱԿՆԵՐԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ

Բացառություն չէր կազմում և Գերմանիան: Յեվ թեև, ինչպես գիտենք, գերմանիայում արդյունաբերական հեղաշրջումն ավելի ուշ կատարվեց, քան Անգլիայում և Ֆրանսիայում, բայց այստեղ ևս խոշոր արդյունաբերության անցնելը նույն կործանարար հետևանքներ ունեցավ աշխատավորների համար: Ձեռքով աշխատող գերմանացի արհեստավորների հետ մրցում էր անգլիական գործարանը, վորն աշխատում էր ժամանակի ամենակատարելագործված մեքենաներով: Արտասահմանի արդյունաբերության դաժան մրցությանը հատկապես յենթակա էին Սիլեզիայի ջուլհակները:

«Յոթ—ութ տարի մի անգամ, գրում է ժամանակակիցներից մեկը, նրանք չեյին կարող մի վորևե նոր հագուստ ձեռք բերել: Նրանց խրճիթները քանդվում էին, կարտոֆիլի անբերրիության տարիներին ստիպված էին լինում վայրի կարտոֆիլ ուտել, վորով առաջ անասուններ էին կերակրում»:

Կյանքի այսպիսի պայմանները թշվառ ջուլհակներին ապստամբության դրդեցին: Այդ ժամանակ նրանց մեջ մի յերգ էր տարածված, ուր այսպես էր նկարագրվում իրենց և իրենց շահագործողների դրությունը.

Վողորմածություն դու մի սպասի,
Հառաչանքները չեն ոգնի այստեղ,
«Թե դուր չի գալիս, հեռացի՛ր,—կասի,
Ճանաչիր քաղցն էլ, կարիքն էլ ահեղ»:
Սարսափելի յէ հիշել կարիքը,
Վոր սավառնում է մեր խրճիթներում,
Հաճախ մի կտոր չոր հաց էլ չկա,

Ու ճմլվում ե մեր սիրտը խղճուկ։
Ձեր սիրտը, պարզ ե, հո չի ճմլվում,
Բայց մարդասպանից ի՞նչ խիղճ սպասել,
Դուք մեր կաշին հենց քերթել եք ուզում,
Դուք, արյունարբու, անխիղճ գազաններ։

1844 թվի ամռան այս յերգն ամենաատելի գործատիրոջ պատուհանի առաջ յերգելու համար վոստիկանությունը ձերբակալում և ծեծում ե բանվորին։ Այս դեպքը կատաղեցնում ե բանվորներին, նրանք գալիս են գործարանատիրոջ մոտ, բողոքում և պահանջում են բարձրացնել աշխատավարձը։ Նրանց դուրս են հանում։ Այն ժամանակ ամբոխը քարուքանդ ե անում գործատիրոջ տունը և պահեստը։ Շարժումն անցնում ե ռայոնները, ծավալվում։ Ամեն տեղ բանվորներն ավերում եյին գործատերերի տները, ջարդում եյին մեքենաները, հրդեհում եյին պահեստները։ Նրանց խաղաղացնելու համար ստիպված եյին զինվորական մեծ ուժեր հավաքել։ Շարժումը միանգամայն անկազմակերպ եր, տարերային. բանվորները վոչ մի քաղաքական պահանջ առաջադրել չկարողացան։ Նրա նշանակությունն այն եր, վոր նա ցույց ավեց, թե Գերմանիայում ես գոյություն ունի բուրժուազիային հակամարտ մի դասակարգ։

## ՀԱՐՑԵՐ ՅԵՎ ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ի՞նչ պայմաններում եյին գտնվում Անգլիայի աշխատավորները արդյունաբերական հեղաշրջման հետևանքով։
2. Ի՞նչպես եյին կռվում բանվորներն իրենց ծանր դրության համար։
3. Ի՞նչպես եր վերաբերվում կառավարությունն այդ կռվին։
4. Պրոֆմիության օրենքի վերացումն ի՞նչ պատճառների արդյունք եր, ի՞նչ հետևանքներ ունեցավ այդ վերացումը։
5. Ի՞նչ դրության մեջ եյին Ֆրանսիայի բանվորները 30-ական թվերին։
6. Ինչի՞ց առաջացավ Լիոնի առաջին ապստամբությունը։
7. Ինչի՞ց առաջացավ Սիլեզիայի ջուլհակների ապստամբությունը։
8. Ի՞նչ նմանություն կա Լիոնի առաջին ապստամբության և Սիլեզիայի ջուլհակների ապստամբության միջև։



## § 2. ՉԱՐՏԻԶՄ

### 1832 ԹՎԻ ԸՆՏՐԱԿԱՆ ՌԵՖՈՐՄՆ ԱՆԳԼԻԱՅՈՒՄ

Անգլիական կառավարությունը և անգլիական պարլամենտը միշտ ել գործատերերի և ձեռնարկուների կողմն եյին պահում ընդդեմ բանվորների, բայց արդյունաբերական բուրժուազիան համարյա թե տեղ չուներ պարլամենտում։

Անգլիայում վաղուց ի վեր հաստատվել եյին բոլորովին այլ կարգեր, քան թե կային Ֆրանսիայում հեղափոխությունից առաջ։ Այն ժամանակ, յերբ Ֆրանսիան կառավարում եր թագավորը, առանց ժողովրդի վորևե ներկայացուցչության, Անգլիայում արդեն գոյություն ուներ պարլամենտ—ներկայացուցիչների ժողով։ Սակայն պարլամենտում ամբողջ բնակչության ներկայացուցիչները չկային. պարլամենտի պատգամավոր եյին ուղարկվում միայն հարուստ մարդիկ, վորոնք հողային սեփականություն ունեյին, իսկ այդպիսիք, ինչպես գիտենք, XVIII դարում միայն կալվածատեր-ազնվականներն եյին։ Քաղաքներից պատգամավորներ շատ քիչ կային։ Արդյունաբերության զարգացման շնորհիվ ստեղծված խոշոր քաղաքները ներկայացուցիչներ չեյին ուղարկում պարլամենտ, իսկ շատ հին փոքրիկ քաղաքներ ու ավաններ իրավունք ունեյին պատգամավորներ ուղարկելու։ Սակայն դրանցից շատերն ել դատարկվել եյին, անմարդաբնակ դարձել, կորցրել իրենց նշանակությունը և մի քանի տներով ու շատ փոքրաթիվ մարդկանցով բնակավայրեր եյին դարձել։ Դրա համար ել այդպիսի տեղերից պատգամավոր եյին ուղարկվում կամ ամենախոշոր կալվածատերերը կամ նրանց կողմնակիցները։ Այդ պատճառով ել պարլամենտը լիքն եր կալվածատերերով ու նրանց կողմնակից մարդկանցով։ Պարզ բան ե, վոր այս դրությունից խիստ վնասվում եյին նոր բուրժուազիայի շահերը։

Օրինակ՝ կալվածատիրական պարլամենտը բարձր մաքս դրեց ներմուծվող հացի վրա։ Դրանից կալվածատերերի միջոցով վաճառվող հացը շատ թանկացավ։ Արդյունաբերողները տուժում եյին դրանից, վորովհետև ստիպված եյին բանվորներին ավելի բարձր վարձ տալու, վորպեսզի նրանք կարողանային գոնե հաց գնել։ Այդ պատճառով ել արդյունաբերողներն ամեն կերպ աշխատում եյին պարլամենտ ընկնել, բայց այնտեղ բազմած կալվածատերերը չեյին ցանկանում նրանց թողնել։

Այդ միջոցին ծանր դրություն ապրող դժգոհ բանվորությունը

տրամադիր էր քաղաքական իրավունքների համար կռիվ մղել, քանի վոր հենց նոր էին նրանք պարտվել այն կռվում, վոր վարում էին պրոֆմիությունների ոգնությամբ:

Այժմ բուրժուազիան ուզում է ոգտագործել բանվորների դժգոհությունը, ուղղելով նրանց զայրույթն ազնվականների դեմ: Բուրժուազիայի ներկայացուցիչներն ագիտացիա յին մղում բանվորների մեջ, թե պարլամենտում նոր պատգամավորներ ունենալը կփրկի պրոլետարիատին ամեն չարիքից: Մյուս կողմից մատնանշում էին ազնվականներին այս ու այն տեղ կատարվող բանվորական խռովությունները, առանձնապես գյուղատնտեսական բանվորների հուզումները և այդպիսով վախեցնում էին կալվածատերերին: Իսկ արդյունաբերական ռայոններն իսկապես ապրում էին հուզումների շրջան: Բրիստոլում գրավել էին բանտը և արձակել ձերբակալվածներին. Նոտինհեմում այրել էին մի ազնվական իշխանի պալատը, Լոնդոնում ջարդուփշուր էին արել բոլոր ազնվականների տների ապակիները:

Ազնվականները վախեցան և զիջումներ արին: Պարլամենտի ընտրության որենքները փոխվեցին (1832 թ.): Բայց այդ փոփոխությունները նպաստավոր էին միայն բուրժուազիային: Բանվորները, վորոնց հուզումներն ոգտագործեցին ազնվականներին վախեցնելու համար, խաբվեցին և պարլամենտ իրենց ներկայացուցիչներ տալու իրավունք չստացան:

Այս դեպքում բանվորները հանդես յեկան բուրժուազիայի ղեկավարությամբ և կռվեցին նրա թշնամիների՝ ազնվականների դեմ:

Մի քանի տարուց հետո չարունակվող կարիքը դրդում է բանվորներին նոր պայքարի: Մենք հիշում ենք, վոր մեքենաների մուտք գործելուն համընթաց վատանում է աշխատավոր մասսաների դրությունը. բայց չպետք է և մոռանալ, վոր կապիտալիզմի գոյության առաջին տարիներում ևս կապիտալիզմի գոյության հետ կապված սարսափելի աղետները—ճգնաժամերը իրենց ավերիչ ներգործությունն են ունենում: Ճգնաժամերն անխուսափելի յեն կապիտալիստական տնտեսության մեջ: Կապիտալիստական արտադրության բնույթն այն է, վոր նա անպլան է: Ոչ վոք այն չի կարգավորում: Նրանում բացակայում է սպառման հաշվառումը: Կապիտալիստական արտադրության նպատակը շահույթի, կուտակման անհագ ծարավն է: «Արտադրություն արտադրության համար»,—ահա կապիտալիստների նշանաբանը: Յերբեմն—յերբեմն աշխատավոր ազգաբնակության ահագին մասսաների գնողունակության



նկման պատճառով՝ անկարելի յե դառնում պատրաստած բոլոր ապրանքների սպառումը: Այդ ապրանքները մնում են ֆաբրիկաների և գործարանների պահեստներում: Այդ ժամանակ գործարանատերերը դադարեցնում են ֆաբրիկաների և գործարանների աշխատանքը, արձակելով բանվորներին՝ նրանց փողոցն են գցում: Ամբողջ տնտեսական կյանքը սոսկալի ցնցումների յենթարկվելով՝ մեռնում: Յեվ սկսում է կենդանանալ՝ կարգի ընկնել միայն վորոշ ժամանակից՝ 1, մեկուկես տարուց հետո: Այդպիսի ճգնաժամեր կապիտալիստական աշխարհում տեղի յե ունենում պարբերաբար: Առաջին ճգնաժամը պայթեց 1825 թ., յերկրորդ մեծ ճգնաժամը՝ 1836 թ.:—

Բանվորների առանց այն էլ անտանելի վիճակն ավելի վատացավ ճգնաժամերի շրջանում: Նրանք՝ զրկվում էն աշխատանքից և դատապարտվում սովի: Նրանց ընդհանուր ծանր դրությունը և ճգնաժամերի հետ կապված այդ դրության վատթարացումը բանվորներին հարկադրեցին կատաղի պայքարի յելնել տիրող իրավակարգի դեմ:

## ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՆ ՊԱՐԼԱՄԵՆՏՈՒՄ

Այս պայքարն արդեն նրանք տանում են միանգամայն անկախ իրենց անմիջական թշնամիների, այսինքն բուրժուազիայի դեմ:

Բուրժուազիան լիապես բավարարվեց 1832 թ. ընտրական ռեֆորմով: Բուրժուական մինիստր և ռեֆորմի որինագծի հեղինակ՝ Ռոսսելը հայտարարեց. «Նոր ընտրական որենքը մի միջոց է, վոր դնում է ազգի բարեկեցությունն ու յերջանկությունն արդար և անխորտակելի հիմքի վրա»:

Սակայն բանվորներն այլ կերպ էին մտածում: Նրանց կարծիքով նոր որենքն «ամենասուտը», անազնիվ և դիվային միջոցն էր, վոր կարելի յեր յերբևէ առաջարկել»: Այսպես էր գրում ժամանակի մի բանվորական թերթ: Նոր պարլամենտի գործունեյությունն ապացուցեց բանվորներին այդ խոսքերի ճշմարտությունը:

Նոր պարլամենտի գործերից մեկը յեղավ չքավորներին տրվող նպաստի վերացումը: Այդ նպաստները հնարավորություն էին տալիս չքավորներին մի կերպ իրենց գոյությունը քարշ տալու: Այժմ արդեն խեղճը ոգնությունից զրկվելով, հարկադրված էր գնալ գործատիրոջ մոտ, չնայած այն սոսկալի պայմաններին և ցածր աշխատավարձին, վոր առաջարկում էր կապիտալիստը: Շնորհիվ այդ հանգամանքի գործատերերն ստացան մեծ քանակությամբ բանվորական էժան ձեռքեր:

Բանվորների պայքարն անհետևանք չէր: Դրան հաջորդեց 1837 թ. նոր արդյունաբերական ճգնաժամը: Գործարանները փակվում եյին, բանվորները փողոց շպրտվում և համակվում հեղափոխական տրամադրությամբ:

ԽԱՐՏԻԱ.

Բանվորները տեսնում եյին, վոր պարլամենտում բուրժուազիայի ներկայացուցիչները պաշտպանում են միայն նրա շահերը: Եթե գայլին վիճակվեր օրենքներ հրատարակել գառների, իսկ ձկնկուլին՝ ձկների համար, ապա, իհարկե, գառներին ու ձկներին այնպիսի պայմանների մեջ կդնեյին, վոր դրանց ուտելը դյուրին լիներ»—ասում եյին մի բանվորական միտինգում:

Երբ պրոլետարիատի ներկայացուցիչները պարլամենտ ընկնեն, յենթադրում եյին բանվորները, նրանք կկարողանան հրատարակել այնպիսի օրենքներ, վորոնք կոչնչացնեն բանվոր դասակարգին ճնշող բոլոր դժբախտություններն ու թշվառությունները: «Եթե մեկն ու մեկը հարցներ, թե ի՞նչ ե նշանակում ընդհանուր ընտրական իրավունք, յես կպատասխանեյի,—ասում եր բանվորական շրջանում ժողովրդականություն վայելող ճառախոսներից մեկը,—թե դա նշանակում ե, վոր ամեն մի բանվոր իրավունք ունի հագնելու լավ բաճկոն, ունենալու իր և իր ընտանիքի համար պատշաճ բնակարան և ճաշին լավ խորտիկներ»:

Այդ միջոցին Լոնդոնում առաջ յեկավ «Բանվորական ասոցիացիա» անունով մի ընկերություն. Լոնդոնի ասոցիացիան իր ծավալով մի փոքրիկ խմբակ եր, վոր նպատակ եր դրել տարածել բանվոր դասակարգի իրավունքի և լուսավորության համար պայքարի գաղափարները: Նա պրոպագանդ եր մղում բրոշյուրներով, գրքերով, կազմակերպում եր գրադարաններ. բայց բանվոր դասակարգի լայն խավերի զայրույթն ու անբավականությունն այնքան մեծ եր, վոր կրթական փոքրիկ խմբակի գործունեյությունն ահագին հետևանքներ ունեցավ: Սրա անդամները կազմեցին խարտիա (փաստաթուղթ, գրություն, անգլիերեն «չարտեր»), վորն իր վեց կետերում պահանջում եր ընդհանուր ընտրական իրավունք: Լոնդոնից «չարտերը» տարածվեց բանվորական ռայոնները: Սրա անունով ել ամբողջ այս շարժումը կոչվում ե «չարտիզմ»:

Խարտիայի հաջողությունը շատ մեծ եր: Զայրացած, հուզված



բանվորները հազարներով հավաքվում եյին միտինգներում, վորպեսզի պաշտպանեն «խարտիայի» պահանջները: Միտինգներին հաճախ նախորդում եյին ցույցեր: «Այս անգամ մասսան վեց շարք կանգնած արագ քայլերով առաջ եր շարժվում,—նկարագրում ե ականատեսներից մեկը:—Փողոցները բոլոր ուղղությամբ լցված եյին ամբոխով, վոր ձգտում եր իր համակրանքը ցուցադրել չարտիզմին: Բազմաթիվ նվագախմբեր իրարից վորոշ տարածության վրա ուղեկցում եյին ամբոխին. 20-ից ավելի զանազան տեսքի և մեծության դրոշակներ և դրոշներ գեղեցիկ և ուրախ ծածանվում եյին քամուց և մեծ կենդանություն եյին տալիս թափորին»:

Դրոշների գրությունները շատ արտահայտիչ եյին: Այսպես, նրանցից մեկի վրա գրված եր. «Երբ կհավաքվեն ազատության բարեկամները, թող դողդողան բռնակալները. նրանք այս ամենը համարում են դատարկ սպառնալիք և քմծիծաղ են տալիս: Շուտով նրանք լաց կլինեն կարմիր արցունքներով»:

ՉԱՐՏԻՍՏԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԱՃՈՒՄԸ

1838 թվի աշնանից միտինգները բանվորական շրջաններում սկսեցին ավելի ու ավելի հեղափոխական բնույթ ստանալ: Միտինգները տեղի եյին ունենում բաց յերկնքի տակ. անհնար եր այնպիսի շենք գտնել, վոր տեղավորեր բոլոր ցանկացողներին: Հավաքվում եյին գիշերները, վորովհետև բանվորները չեյին կարող զրկվել իրենց ցերեկվա աշխատավարձից: Միտինգի մասնակիցները կազմակերպված եյին հանդես գալիս. Նրանք խումբ-խումբ շարժվում եյին դեպի միտինգի վայրը գլխավոր փողոցներով. ձեռքներին ջահեր եյին բռնած, մերթ փողջույնի աղաղակներ եյին ուղղում իրենց առաջնորդների հասցեյին, մերթ սպառնական ճիչեր արձակում մի վորևե ատելի գործատիրոջ պաշտոնյայի դեմ կամ չարտիստներին հակառակ լրագրի խմբագրության առաջ: Մասնակիցների թիվը հասնում եր միքանի տասնյակ հազարի, և յերկինքը լուսավորվում եր բազմաքանակ ջահերից:

Ամբոխի միջից կրակում եյին՝ ցույց տալու համար, թե միտինգի մասնակիցները զինված են: Ճառերը համակված եյին խոր ատելությամբ դեպի տիրապետող դասակարգերը և վրեժ եյին պահանջում «մի խումբ մարդասպաններից», այսինքն իշխանության գլուխն անցած գերիշխող դասակարգի ներկայացուցիչներից: Լսվում եյին զինված ապստամբության կոչեր:

«Զենք վերցրեք, ամեն մեկը պետք է ձեռք բերի լավ հրացան... Յեթե աղքատ եք և չեք կարող անել այդ, ապա զինվենք տեգերով (пика) իսկ յեթե այդ էլ չկա, վերցրեք խանձողներ, այո, ասում եմ ձեզ, խանձողներ և հրդեհեք պալատները...» Ահա թե ինչեր եյին ասում բանվորական միտինգների ճառախոսները: Այսպիսի միտինգներում ստորագրություններ եյին հավաքում պետիցիաների տակ. այդ պետիցիաներով հույս ունեյին հարկադրել պարլամենտին՝ նոր ընտրական ռեֆորմ անցկացնելու: Այդ ստորագրությունները միլիոնների եյին հասնում:

Սակայն չարտիստներին չհաջողվեց ընտրական նոր ռեֆորմ անցկացնել: Պարլամենտին ներկայացրած պետիցիաները շարունակ մերժվում եյին նրա մեծամասնության կողմից: Չարտիստների մեջ յեղած անհամաձայնությունը, վոչ բավարար կազմակերպվածությունը հուզումներով բռնկված արդյունաբերական ռայոնների հեռավորությունը մայրաքաղաքից—համարձակություն եյին ներշնչում պարլամենտին:

Բանվորական յելույթների ալիքն ընդդեմ կառավարության յերեք անգամ բարձրացավ ու նորից իջավ: Յեվ ալիքների բարձրացումը շարունակ զուգորդվում եր արդյունաբերական խոշոր ճգնաժամերին: Հենց վոր ճգնաժամն անցնում եր, բարելավվում բանվորների վիճակը, կրճատվում եր անգործությունը, բանվորների հեղափոխականությունն ընկնում եր, հետաքրքրությունը դեպի խարտիան կորչում, չարտիստների շարքերը նոսրանում եյին: Յեվ, ընդհակառակը, կառավարությունը դառնում եր ավելի համարձակ, սկսում եր հարձակողական դիրք բռնել չարտիստների նկատմամբ. ձերբակալում, դատում և աքսորում եր նրանց: Չարտիզմի վերջին բռնկումը տեղի ունեցավ 1848 թվի ճգնաժամին: Դրանից հետո շարժումը վերջնականապես թուլվեց և էլ չվերականգնվեց:

## ՉԱՐՏԻՍՏԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԱՆՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Չարտիստական շարժման անհաջողության պատճառն այն եր, վոր այն ժամանակ բանվոր դասակարգը դեռ նոր եր կազմվում և բաղկացած եր մեծ մասամբ քայքայված արհեստավորներից ու գյուղացիներից: Միայն սոսկալի պայմանները, վոր տիրում եյին գործարաններում և գործարանային քաղաքներում, հասցնում եյին նրանց հուսահատության, մղում հեղափոխական յելույթների: Այդ յերևույթն առանձնապես տեղի յեր ունենում ճգնաժամերի և անգործության տարիներում: Բանվորները պարզ գաղափար չունեյին, թե ինչի համար պետք է պայքարել:



Յեվ չարտիստները, և բանվորական մասսաները շատ աղոտ հասկացողություն ունեյին այն մասին, թե ինչ կլինի, յերբ իրենց ներկայացուցիչները պարլամենտ անցնեն: Նրանք չեյին ըմբռնում, թե ինչպես պետք է փոխվի կապիտալիստական հասարակությունը: Նրանց ձգտումը վոչ թե սոցիալիստական կարգեր հաստատելն եր, այլ վերադարձ այն ժամանակներին, յերբ իրենք՝ այժմյան վարձու բանվորները սեփական արհեստանոցների կամ մի կտոր հողի տեր եյին: Այն ժամանակների բանվորների մեծ մասը յերազում եր գյուղ վերադառնալու, բոլոր աշխատավորներին հողամաս տալու և ատելի գործարանային քաղաքների վոչնչացման մասին:

Այդ պատճառով էլ Օ'Կոննորը՝ հյուսիսի բանվորների ամենասիրված առաջնորդներից մեկն ասում եր. «Յեթե ամեն մեկն ունենար իր տնակը, իր հողամասը, իր մարագը, մառանը, ապա բանվորական հարց չեր լինի»:

Միայն շատ քիչ չարտիստներ եյին հասկանում, թե ֆաբրիկաներն ու գործարանները, վորոնք այժմ հանդիսանում են բանվորների ճնշման գործիքներ, կարող են նրանց ազատագրման միջոց դառնալ, յեթե վերածվեն հասարակական սեփականության:

Մեծ վնաս պատճառեց շարժմանն այն հանգամանքը, վոր նրան մասնակցում եյին տարբեր դիրքի մարդիկ: Չարտիստական շարքերում գտնվում եյին վոչ միայն հյուսիսի արդյունաբերական ռայոնների ծանր պայմաններում ապրող բանվորները, այլև արհեստավորներ, Լոնդոնի լավ սովորած բանվորները, վորոնք լավ աշխատավարձ եյին ստանում և ապրում եյին տանելի պայմաններում:

Նրանք ավելի պակաս հեղափոխական տրամադրություն ունեյին, քան հյուսիսի զրկված և ծանր պայմաններում գտնվող բանվորները:

Այս պատճառով էլ չարտիստների շրջանում շատ մեծ տարաձայնություն կար այն մասին, թե ինչ միջոցներով պետք է ձեռք բերել նոր ընտրական իրավունքը: Չարտիստների առաջնորդները, վորոնք մոտիկ եյին հյուսիսի հեղափոխական բանվորներին, կողմնակից եյին կառավարության նկատմամբ բռնի հեղափոխական միջոցներ կիրառելուն: Նրանց անվանում են «ֆիզիկական ուժի կուսակցություն»: Նրանք ասում եյին. «Ինչ վոր մեր թշնամիները չեն տա արդարությու-

նից զրկված, չէին դիմի նաև համոզմունքների և խնդիրների ազդեցությամբ. բռնությանը պետք է հակադրել բռնություն»:

Ավելի պակաս հեղափոխական լոնդոնցիները կողմնակից եյին խաղաղ միջոցների՝ ագիտացիայի, քարոզի, կառավարության անդամներին համոզելու: Նրանց անվանում եյին «բարոյական ուժի կուսակցություն»: Նրանք ասում եյին «Մասսաները կարող են հաջողություն գտնել միայն համոզմունքների և ապացույցների միջոցով. Խռովությունների և անկարգությունների մեջ ժողովուրդը թուլանում է՝ վորպես յերեխա»:

Մի խոսքով՝ չարտիստները չունեյին վորոշ ծրագիր, և գործելակերպի նկատմամբ համաձայնություն չկար նրանց մեջ:

## ՉԱՐՏԻԶՄԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Չնայած այս ամենին, չարտիստական շարժումը մեծ նշանակություն ունեցավ. նա առաջին իսկական բանվորական շարժումն եր, վոր ինքնուրույնորեն պաշտպանում եր բանվորների շահերը: Նա քաղաքական շարժում եր, վոր ձգտում եր փոփոխել ընտրական իրավունքը, վորպեսզի հետո փոփոխի բանվորների տնտեսական դրությունը, վոչնչացնելով գոյություն ունեցող կարգերը:

Չարտիստները մեծ ծառայություն մատուցին նրանով, վոր ստեղծեցին բանվորների շահերը պաշտպանող առաջին քաղաքական կուսակցությունը: Նա առաջ յեկավ 1840 թվին, կոչվում եր «չարտիստական ասոցիացիա»: Նա ուներ իր կոմիտեն, ռոճկավոր ագիտատորներ և այլ մարդիկ, վորոնք մտնում եյին նրա մեջ, անդամավճարներ եյին տալիս: Հեղափոխական վերելքի տարիներին այդ կուսակցությունը հաշվում եր մինչև 40,000 մարդ:

## ՉԱՐՏԻԶՄԻ ԱՆԿՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Քառասնական թվերի վերջերին Անգլիայում վերջացավ մանր արտադրությունից խոշոր արդյունաբերության փոխանցումը:

Կապիտալիզմը դեռ աճելու և զարգանալու լայն հնարավորություններ ուներ: Նրա ճգնաժամերին, վորոնք ինչքան էլ ավերիչ լինեյին, ամեն անգամ փոխարինում եր տնտեսական կյանքի նոր, ավելի բուռն վերելք: Ճգնաժամերի հասցրած վերքերն արագ եյին բուժվում: Ֆաբ-



րիկաները, գործարաններն սկսում եյին նոր թափով աշխատել: Գործազուրկների թիվը պակասում եր, աշխատավարձն աճում եր: Անգլիան դարձավ աշխարհիս առաջին արդյունաբերական յերկիրը, «աշխարհի արհեստանոցը»: Նրա արդյունաբերողները մեծ կարողություն դիզեցին, օգտվելով Անգլիայի տեխնիկայի առավելություններից: Շնորհիվ այդ հանգամանքի, նրանք հնարավորություն ստացան իրենց օգուտի մի մասը հատկացնել բարձր կրթություն ստացած բանվորների վարձատրության: Մյուս կողմից, անգործությունը խիստ կրճատվեց՝ շատ բանվորներ Ավստրալիա և Կալիֆորնիա մեկնեցին վոսկի վորոնելու տենչով բռնված. հենց այդ ժամանակներում այդ տեղերում վոսկին հայտնագործվեց:

Մի խոսքով՝ 60-ական թվականների սկզբին Անգլիայի բանվորների դրությունը նկատելիորեն լավացավ: Յեթե 1850 թվին մի մանածագործ վաստակում եր շաբաթը 18 շիլլինգ, ապա 1860 թվին՝ 20 շիլլինգ: Ջուլհակը 1850 թվին վաստակում եր 13 շիլլինգ, իսկ 1860 թ.՝ 15 շիլլինգ: Հյուսնը 1850 թվին՝ 20 շիլլինգ, 1860 թ. 25 շիլլինգ: Քարտաշը՝ 1840 թվին—23 շիլլինգ, 1860 թվին՝ 30 շիլլինգ: Դրա հետ միասին բանվորական զանգվածի վերին խավերը ավելի շատ եյին համակված բուրժուական իդեոլոգիայի վոգով:

Շնորհիվ տնտեսական դրության բարվոքման բանվորների հեղափոխականությունը թուլացավ, և չարտիզմը, իբրև հեղափոխական շարժում, անկման եր դիմում:

## ՀԱՐՑԵՐ

1. Ո՞ւմ շահերն եր պաշտպանում Անգլիայի պարլամենտը XIX դարի սկզբին:
2. Ինչո՞ւ բուրժուազիան ցանկանում եր պարլամենտ ընկնել:
3. Բուրժուազիան ի՞նչպես օգտագործեց բանվորական շարժումը և ի՞նչպես վարվեց պարլամենտական ռեֆորմն իրագործելուց հետո:
4. Ինչո՞ւ բանվորներն սկսեցին կռվել խարտիայի առաջադրած ընդհանուր ընտրական իրավունքի համար:
5. Ի՞նչպես եր ընթանում խարտիայի համար մղվող կռիվը:
6. Ի՞նչ հայացք ունեյին չարտիստները հասարակության վերակազմության մասին:
7. Ի՞նչ տարաձայնություն կար չարտիստների մեջ կռվի միջոցների նկատմամբ:

8. Ինչո՞ւմն է կայանում չարտիստական շարժման նշանակությունը:

9. Ի՞նչն էր չարտիզմի վերջնական անկման պատճառը:

## ՆՅՈՒԹԵՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԱՐ

### I. «Խարտիան» պարունակող մի հատված Լոնդոնի բանվորական ասոցիացիայի պետիցիայից

*«Ձեր խնդրատուները թախանձագին միջնորդում են արժանապատիվ պալատին՝ հրատարակելու ամբողջ թագավորության համար հետևյալ օրենքը այն էական լրացումներով ու մանրամասներով, ինչպիսին արժանապատիվ պալատը անհրաժեշտ կհամարի».*

## ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ՅԵՎ ԻՐԼԱՆԴԻԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԱՎԱՍԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ՈՐԵՆՔ

### Հավասար ներկայացուցչություն

*«Ամբողջ Միացյալ Թագավորությունը պետք է բաժանվի 200 ընտրական շրջանի, վորոնցից ամեն մեկը պետք է պարունակի, ըստ հնարին ամենայն ճշտության, հավասար քանակի բնակիչներ, յուրաքանչյուր շրջան պետք է իր ներկայացուցիչն ուղարկի պարլամենտ»:*

### Ընդհանուր ձայնտվություն

*Ամեն մի մարդ ներկայացնելով ապացույցներ իր 21 տարեկան հասակի մասին այն ծխի գրագրին, ուր նա ապրել է վեց ամիս՝ իրավունք ունի իր անունը մտցնելու ընտրողների ցուցակի մեջ: Ընտրողների ցուցակը մտցնելու ժամանակը պետք է շարունակվի ամեն տարի հունվարի 1-ից մինչև մարտի 1-ը»:*

### Տարեկան պարլամենտները

*«Ընդհանուր ընտրությունները տեղի յեն ունենում ամեն տարի հունիսի 24-ից, և ամեն մի ազատ տեղ փոխարինվում է նրա բացումից յերկու շաբաթ անց: Ընտրությունները նշանակվում են առավոտ ժ. 6-ից մինչև յերեկոյան ժ. 6-ը»:*



### Գույքային ցենզի վերացումը

*«Պարլամենտի անդամների համար գույքային ցենզ չպետք է լինի, յեթե միվորևէ թեկնածուի համար կներկայացվի 200 ընտրողի ստորագրությամբ պահանջ այն ծխի գրագրին, ուր նրանք ապրում են, ապա այդ թեկնածուի անունը պետք է դրվի ընտրություններին: Այս ձևով առաջադրված շրջանի բոլոր թեկնածուների ցուցակը պետք է կախվի ամեն մի ծխական յեկեղեցու դռներին, վորպեսզի ընտրողները կարողանան գաղափար կազմել թեկնածուների հատկությունների մասին»:*

### Գաղտնի քվեարկություն

*«Ամեն ընտրող պետք է ձայն տա այն ծխում, ուր նա ապրում է: Յուրաքանչյուր ծուխ պիտի ունենա այնքան քվեատուփ, վորքան թեկնածուներ են առաջադրված շրջանում: Ամեն մի ծուխ պիտի պատրաստի մի ժամանակավոր վայր գաղտնի ձայնտվության համար: Ընտրությունների օրն ամեն մի ընտրող կարգով մոտենում է քվեարկության. ընտրական կոմիսարի անդամը պետք է տա նրան քվեարկության գնդակը, վորն ընտրողը գցում է իր թեկնածուի տուփը: Որվա վերջը ձայները պետք է հաշվեն հատուկ դրա համար ընտրված լիազորների միջոցով, և տված ձայների քանակը կախվի յեկեղեցու դռներին:*

*«Հետևյալ օրը շրջանային գրագիրն ու յերկու վերահսկիչ պետք է հավաքեն բոլոր ծխերի ձայները և հայտարարեն շրջանի ամեն մի ծխում հաղթանակող թեկնածուի անունը»:*

### Նիստերը և պարլամենտի անդամների վարձատրությունը

*«Անդամները պարլամենտում գրավում են իրենց տեղերը հոկտեմբերի առաջին յերկուշաբթին ընտրությունից հետո և շարունակում են իրենց նիստերը ամեն օր (բացի կիրակիներից), մինչև կվերջացնեն բոլոր գործերը, բայց վոչ ուշ քան սեպտեմբերի 1-ը: Նստաշրջանի ընթացքում նրանք պետք է հավաքվեն ամեն օր, առավոտյան ժ. 10-ից մինչև 4-ը: Ամեն մի անդամը յերեք ամիսը մի անգամ հասարակական միջոցներից ստանում է վարձատրություն՝ 400 ֆունտ ստերլինգ տարեկան: Ընտրական կոմիսիաների անդամները պետք է ընտրվեն ընդհանուր ձայնտվությամբ»:*

«Հրատարակելով վերոհիշյալ օրենքը յերկրի համար, դուք մեծագույն յերջանկությունն եք շնորհում անգլիական ժողովրդին, և ձեր խնդրատուներն իրենց պարտքը կհամարեն ձեզ համար աղոթելու»։

## ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ուշադրությամբ կարդացեք «Խարտիան» և պատասխանեցեք հետևյալ հարցերին. վորո՞նք են խարտիայի 6 պահանջները, և ինչ նշանակություն ունի նրանցից ամեն մեկը։

2. Զեկուցում գրեցեք՝ «Խարտիայի պահանջները» նյութի մասին։

3. Իմացեք ձեր ազգականներից ու ծանոթներից մեր ընտրությունների մասին։ Համեմատեցեք այդ տեղեկությունները խարտիայի պահանջների հետ։

## 2. «ԲԱՐՈՅԱԿԱՆ» ՅԵՎ «ՖԻԶԻԿԱԿԱՆ» ՈՒԺԻ ԿՈՂՄՆԱԿԻՑՆԵՐԸ

### ա. Լովետը բարոյական ուժի մասին

«Ինչ վերաբերում ե խարտիան իրականացնելու ամենալավագույն միջոցներին, մենք ամենից առաջ հակառակորդ ենք այն ամենին, ինչ վոր հիշեցնում ե հեղափոխական պայքարը, կոչ ֆիզիկական ուժի, բռնության. մենք կարծում ենք, վոր այդ յեղանակով ձեռք բերած հաղթանակը կլինի դեմոկրատիայի իրական սկզբունքներին հասցրած մի պարտություն։ Մենք կարծում ենք, վոր խարտիայի հաղթանակը լինելու յե յերջանկություն ամենքին, այն միակ միջոցը, վոր վոչնչացնելու յե կաշառվածությունը, մենաշնորհը, չարիքը մեր կառավարությունից, և վոր այդ կարգի բարիքը տարածվելու յե ամբողջ ազգաբնակչության վրա. մենք կարծում ենք նաև վոր անհրաժեշտ ե ձեռք բերել բարենորոգումներ, համոզել ազգաբնակության բոլոր դասակարգերին, վոր նրանց շահը մեզ հետ միանալու մեջն ե. այսպես և միայն այսպես մենք կարող ենք գրավել խաղաղ ճանապարհով խարտիան. միաբան ժողովուրդը միշտ ել շատ միջոցներ ունի իր ցանկություններն իրագործելու առանց բռնության»։

### բ. Օ'Կոննորը բռնության մասին

«Ժողովուրդը չափազանց յերկար ու չափազանց հլու հալածանքներ եր տանում. յես բնավ խորհուրդ չեմ տվել ժողովրդին ֆիզիկական ուժի դիմելու, վորովհետև գտնում եմ, թե դրան կարող են դիմել



միայն անմիտները. սակայն պետք ե ասել, վոր ովքեր շարունակ գոռում են բռնության մասին, իրանց իշխանությունը պահում են բացառապես ֆիզիկական ուժով։

«Ժողովուրդը միայն պետք ե ասի համայնքների պալատին, թե նրա վորոշումն անհողդողդ ե, և բարենորոգումը պետք ե տրվի։

«Հյուսիսում արդեն փորձել են, թե ինչ ե նշանակում ֆիզիկական ուժ։ Վերջերս քաղաքային վոստիկանության ներկայացուցիչներն ուղարկում են Դյուսբերի, բայց այդ պատվավոր քաղաքի տղերքը (բանվորները) յետ են դարձնում նրանց։ Յես կողմ եմ բարոյական ներգործությունից մինչ հնարավոր, վերջին սահմանը, բայց յես կուզենամ նույնպես ամրապնդել նրանց հիշողության մեջ այն միտքը, թե ավելի լավ ե ազատ մեռնել, քան ստրուկ ապրել։ Ամեն մի պատվավոր հաղթանակ ձեռք ե բերվել ֆիզիկական ուժով, բայց նրան այդ հարկավոր չե, վորովհետև յեթե ձեռք բերեն ընդհանուր ընտրական իրավունք, նրանք արագորեն կջախջախեն կաշառասիրության հիմքերը. յես հույս ունեմ և հավատացած եմ նույնիսկ, վոր ժողովուրդը կղեկավարվի առողջ դատողությամբ, վորպիսի հատկությամբ միշտ հարուստ ե յեղել բանվոր դասակարգը։ Թող առաջ գան միություններ. դրանով կզարգանա բարոյական ազդեցությունը, վոր միանգամայն բավական ե չքավորներին իրավունք գրավելու համար։ Բայց յեթե այդ բոլորը չհաջողվի, թող ամեն մեկը զենք վերցնի պաշտպանելու համար այն, ինչ նրա առողջ դատողությունը արդար ե համարում...»։

## ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

I. Կարդացեք այս յերկու ճառերի հատվածները և համեմատեցեք. ցույց տվեք այդ տարաձայնությունների պատճառներն ու հետևանքները չարտիստների շրջանում։

II. Վորոշեցեք, թե տեղերի մասին խոսող ճառախոսը վոր կուսակցությանն ե պատկանում. այդ ճառի հատվածը բերված ե ձեռնարկի բնագրում։

III. Մշակված նյութի հիման վրա կազմակերպեցեք կոնֆերենցիա հետևյալ թեմայի շուրջը. «Չարտիզմի համեմատությունը բանվորական շարժման ավելի նախնական ձևերի հետ»։

Պատրաստեցեք հարցեր այդ կոնֆերենցիայի համար։

# § 3· 1848 Թ· ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ

## ԼԻՈՆԻ ՅԵՐԿՐՈՐԴ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ

Յեթե Անգլիայում քաղաքական փոփոխություններ հետապնդող ինքնուրույն բանվորական շարժումը չարտիզմն եր, ապա Ֆրանսիայում այդպիսի բնույթ եր կրում Լիոնի յերկրորդ ապստամբությունը, վորը տեղի ունեցավ 1834 թվին:

Առաջին ապստամբության անհաջողությունը շատ բան սովորեցրեց Լիոնի բանվորներին: Այժմ դրանց մեջ ուժեղանում ե հեղափոխական պրոպագանդան, առաջ են գալիս միություններ և գաղտնի հեղափոխական ընկերություններ:

Ահա թե բանվորներն ինչ նշանակություն եյին տալիս իրենց կազմակերպություններին՝ «Հենց բանվորական միությունները կլինեն այն պատնեշը, վորին բախվելով կփշրվեն այն անարդար որենքները, վոր ստեղծվել են աշխատավորության ատողների կողմից, և հենց այդ ել կազատի մեզ մեր խղճուկ վիճակից», ասում եր մի բանվոր ժողովում: Բանվորական կազմակերպություններն սկսեցին հարաբերության մեջ մտնել իրար հետ:

Այդպես եր վոչ միայն Լիոնում, այլ և ամբողջ Ֆրանսիայում: Կառավարությունը վախենում եր դրանից:

1834 թվի գարնանը կառավարությունը նոր որենք հրատարակեց, վոր ուղղված եր բանվորական միությունների ու կազմակերպությունների դեմ: Այդ որենքի համաձայն Լիոնի բանվորների միությունը պետք ե դադարեցներ իր գոյությունը: Դրա համար ել այն ժամանակվա բանվորական լրագիրը նոր որենքի մասին գրում եր, վոր «այդ որենքը մի կրակ ե, վորից կբռնկվի քաղաքացիական կռիվը»:

«Ընդդիմադրությունն այժմ բանվորների սրբազան պարտականությունն ե», այսպես եր վերջացնում լրագիրն իր հոդվածը:

Բանվորներն սկսեցին կռվի պատրաստվել: Ընդհարումն անխուսափելի յեր, և Լիոնում ծագեց յերկրորդ ապստամբությունը, վոր տևեց մոտ 6 որ: Կառավարությունը դրդեց բանվորներին կռվի յելնելու այն ժամանակ, յերբ նրանք դեռ պատրաստ չեյին: Նրանք քիչ զենք ունեյին, չկար ընդհանուր կուռ կազմակերպություն, չկար պլան: Կառավարությունը նախորոք զորք հավաքեց և գրավեց քաղաքի կարևոր կետերը:

Չնայած փշտովներով ու սրերով կռվող ապստամբների անձնազոհ անվեհերության, ապստամբությունը դաժանորեն ճնշվեց: Միայն



չորրորդ որը գրավվեց քաղաքի բանվորական «Շեկլիկ խաչ» մասը: Ապստամբներից սպանվեց մոտ 1200 մարդ: Ապստամբությունն արձագանք գտավ ամբողջ Ֆրանսիայում, և հենց Պարիզում տեղի ունեցավ հեղափոխական յելույթ: Սակայն բոլոր այդ յելույթները նույնպես ճնշվեցին կառավարության կողմից:

Լիոնի յերկրորդ ապստամբությունը ցույց ե տալիս, թե ֆրանսիական պրոլետարները գիտակցության բավական բարձր մակարդակի յեն հասել: Նրանք սկսել եյին ավելի լավ հասկանալ իրենց շահերը: Այժմ նրանք կռվի եյին յելնում հանուն բանվոր դասակարգի ընդհանուր գործի, հանուն քաղաքական և պրոֆեսիոնալ կազմակերպությունների իրավունքների: Նրանք պաշտպանում եյին հանրապետությունը ընդդեմ միապետության և պայքարում եյին քաղաքական ազատություն ձեռք բերելու համար:

«Քաղաքական ազատությունը,—գրում ե այն ժամանակվա թերթերից մեկը,— պետք ե նախորդի տնտեսական ազատագրությանը, նախապատրաստի ու լրացնի այն»:

Յեվ այս ապստամբությունը նախակարապետն եր բանվոր դասակարգի մի այլ ավելի ահարկու յելույթի:

## ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՅԻ ԳԵՐԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

30 և 40-ական թվականներին Ֆրանսիայում իշխանության գլուխ եր կանգնած բուրժուական կառավարությունը թագավոր բորսայականի հետ (биржевик): Ինքը թագավոր Լյուդովիկ-Ֆիլիպպը սերտ կապ ուներ բանկիրների, վաշխառուների, բորսային չարաշահների և խոշոր ձեռնարկությունների բաժնետերերի հետ: Հենց բուրժուազիայի այդ խմբակի ձեռքն եր Ֆրանսիայի իշխանությունը: Նա փոխառություններ եր տալիս կառավարությանը, վոր կազմված եր նրա մոտիկ մարդկանցից· դրանք յերկիրն այնպես եյին կառավարում, վոր փոխառությունների մշտական կարիք եր զգացվում: Փոխառությունների խոշոր վճարումները ծածկելու համար ավելացնում եյին հարկերը, վորոնք իրենց ամբողջ ծանրությամբ ընկնում եյին աշխատավոր մասսաների վրա:

Իշխանության գլուխն անցած չարաշահներն ու ֆինանսիստները քայքայում եյին մանր բուրժուազիան ու գյուղացիությունը: Հարկերն, ինչպես գիտենք, շատ բարձր եյին, և գյուղացիությունը տնքում եր նրանց ծանրության տակ: Գյուղացիները հարկադրված գրավ եյին դնում իրենց հողերը, վորպեսզի մի կերպ ծայրը ծայրին հասցնեն:

Շնորհիվ ազգաբնակության ավելացման, գյուղացիների հողերը խիստ մանրացել էին, ներկայացնելով հողի մի վողորմելի կտոր:

Ինչ վերաբերում է պրոլետարիատի դրության, ապա մենք Լիոնի բանվորների օրինակից կարող ենք յեզրակացնել, թե ինչ սոսկալի պայմանների մեջ էին: Լիլ քաղաքում յուրաքանչյուր հինգ աշխատավորից մեկը չէր կարող իր աշխատավարձով պահել իրեն: Հյուսների աշխատավարձը տասը տարվա ընթացքում յերկու անգամից ավելի պակասել էր, տպագրական բանվորների առնվազն մեկ յերրորդը շարունակ գործազուրկ էր: «Այժմ մենք բոլորս քաղցից պիտի մեռնենք»,—մի կոչի մեջ գրում են քարտաշ բանվորները: Անգլիայի նման այստեղ էլ կապիտալիզմի աճումը պրոլետարիատին բերում է գործազրկություն, աշխատավարձի իջեցում, կարիք, թշվառություն:

## ԼՈՒԻ ԲԼԱՆ 1811—1882

Սակայն Ֆրանսիայում կապիտալիզմը զարգանում էր ավելի դանդաղ քան Անգլիայում: Ֆաբրիկաները, գործարաններն ավելի պակաս էին, արհեստը շարունակում էր ավելի մեծ դեր խաղալ: Ճիշտ է, արհեստավորները խիստ տուժում էին խոշոր ձեռնարկատերերի մրցությունից: Յեվ ահա տեվական գործազրկության և հաճախակի ճգնաժամերի շնորհիվ՝ արհեստավոր բանվորների և արհեստավորների մեջ շատ ժողովրդական դարձան «աշխատանքի իրավունք» և աշխատանքի կազմակերպումն» լոզունգները:



Լուի Բլան.

Քայքայված արհեստավորները և աշխատազուրկ բանվորներն «աշխատանքի իրավունք» ասելով՝ հասկանում էին, վոր ամեն վոք աշխատանքի իրավունք ունի: «Աշխատանքի կազմակերպումն» ասելով հասկանում էին, վոր բանվորներն ու արհեստավորները կարող են արտադրողական ընկերություններ կազմակերպել:

Խոշոր արդյունաբերության զարգացման հետ կապված հաճախակի ճգնաժամերն ու հսկայական անգործությունն այն պատճառի հասցրին, վոր բանվորների մեջ շատ ժողովրդական դարձան՝ «աշխատանքի իրավունք» և «աշխատանքի կազմակերպություն» նշանաբանները: Այդ նշանաբաններն առաջադրել էր Լուի Բլանը:



Լուի Բլանն էր մշակել և զարգացրել «աշխատանքի կազմակերպության» և «աշխատանքի իրավունքի» մասին յեղած ուսմունքը:

Կապիտալիզմի դժբախտությունները նա հետևյալ ձևով է պատկերացնում. «Ամենօրյա պայքարի այս սոսկալի կարգերում,—գրում է Լուի Բլանը,—միջին արդյունաբերությունը կլանել է մանրին, բայց իր հերթին ինքն էլ կլանվել է խոշոր արդյունաբերության կողմից»: «Պայքար է մղվում առանձին ձեռնարկությունների միջև, ձեռնարկատերերի ու բանվորների միջև և բանվորների միջև: Հենց այս մրցումն էլ,—Լուի Բլանի կարծիքով,— աղքատությունն է ծնում»:

Այս ամբողջ պայքարի պատճառն այն է, վոր կապիտալիստական հասարակության մեջ «աշխատանքը կազմակերպված չէ»: Անհրաժեշտ է աշխատանքը կազմակերպել: Դրա համար պետք է պետության օգնությամբ փոխառություն կատարել և ստացված միջոցներով արդյունաբերության ամենակարևոր ճյուղերում հասարակական արհեստանոցներ կազմակերպել»: Այդ արհեստանոցները պետք է լինեն վորոշ արհեստի բանվորների միությունների ձեռքին: «Հասարակական արհեստանոցները» աստիճանաբար կկլանեն մասնավոր ձեռնարկությունները և այդպիսով կվերացնեն մրցությունը: Կդադարի պայքարը, գործազրկությունը կվերանա, բոլոր բանվորներն աշխատանք կստանան, այսինքն՝ կիրականացնեն իրենց «աշխատանքի իրավունքը»:

## 1847 Թ. ՃԳՆԱԺԱՄԸ ՅԵՎ ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ 1848 ԹՎԻՆ

Բանվորների և մանր բուրժուազիայի դժգոհությունն առանձնապես սաստկացավ 1847 թվին, յերբ Ֆրանսիայում, յերկու անբերրի տարիներից հետո, պայթեց արդյունաբերական ճգնաժամը: Անգործությունն ուժեղացավ, աշխատավարձն ընկավ, մթերքները թանկացան, բանվորության շրջանում տարածվել էր սովը: 1848 թվին Փարիզում բռնկվեց հեղափոխական շարժումը:

Թեև հասարակության բոլոր խավերը դժգոհ էին բորսայինների և բանկիրների գերիշխանությունից, բայց համարյա բացառապես բանվորները միայն նրա դեմ դուրս յեկան: Մի գիշերվա մեջ Փարիզում 1500 բարրիկադ կանգնեցրին: Դրա համար կտրեցին հազարավոր ծառեր և ահագին քար հավաքեցին: Գիշերը հասնելուն պես սկսվեց կռիվն ապստամբների և կառավարական զորքերի միջև և տևեց մինչև 24 փե-

տրրվարի ամբողջ ցերեկը։ Առանձին համառությամբ կռվում էին փոքրիկ ամրության մոտ, որ պաշտպանում էր պալատի մուտքը։ Վերջիվերջո պալատը վերցրին։ Թագավորը փախավ։

## ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Մինչդեռ պրոլետարիատն իր արյան գնով հաղթանակ էր տանում բանկիրների միապետության դեմ, բուրժուազիան աշխատում էր իր ձեռքն առնել իշխանությունը։ Բացառապես խոշոր սեփականատերերից կազմված պատգամավորների պալատում կազմվեց նոր կառավարության ցուցակը։ Այդ ցուցակի մեջ, իհարկե, մտան միայն բուրժուազիայի ներկայացուցիչները։ Սակայն բանվորները չէյին ցանկանում զիջել իրենց արյունով ձեռք բերած հաղթանակը։ Նրանց ճնշման տակ ցուցակի մեջ մտցրին սոցիալիստ Լուի Բլանին և բանվոր հեղափոխական՝ Լիոնի ապստամբության մասնակից՝ Ալբերին։

Վերջինս աշխատում էր կոճակի արհեստանոցում և այնտեղից ուղիղ գնաց կառավարության ժողով։

Այս առաջին դեպքն էր, որ բանվորների ներկայացուցիչները մտնում էին կառավարության մեջ։ Սակայն կառավարության մեծամասնությունը բաղկացած էր բուրժուազիայի ներկայացուցիչներից, դրա համար էլ նրանց և բանվորների միջև անմիջապես սկսվեցին ընդհարումներ։

## ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Բանվորները չբավականացան միայն իրենց ներկայացուցիչներին կառավարության մեջ մտցնելով. նրանք պահանջեցին նաև հայտարարել հանրապետություն։ Բանվորները ցանկանում էին, որ այդ հանրապետությունը լինի «սոցիալական»։ Այդ ժամանակ «սոցիալիստական» բառի փոխարեն գործ էին ածում «սոցիալական» բառը։

Բանվորական ցուցարարներն իրենց առանորդներից մեկի բերանով խիստ պահանջ դրին կառավարությանը. «Հերիք են դատարկ բառերը, ժողովուրդը ձանձրացել է դրանից. նա ինքն է այժմ տերը և հրամայում է ձեզ դեկրետ հրատարակել աշխատանքի իրավունքի մասին»։

Բանվորները զինված էին, և կառավարությունն ստիպված էր զիջել և հրատարակել պահանջված դեկրետը, որով պարտավորվում էր «աշխատանք տալ բոլոր քաղաքացիներին»։



Բանվորների մյուս կարևոր պահանջն էր՝ հիմնել «աշխատանքի մինիստրություն», որ պետք է վերափոխեր հասարակությունը, կազմակերպեր հասարակական արհեստանոցներ։ Սակայն ժամանակավոր կառավարությունն իր մեծամասնությամբ այդքան հեռու չէր կարող գնալ։ Մինիստրության փոխարեն կազմեցին մի հանձնաժողով միայն, որ պետք է ուսումնասիրեր բանվորների դրությունը և հարթեր նրանց և ձեռնարկուների միջև ծագած վեճերը։ Այս հանձնաժողովի նախագահ կարգեցին Լուի Բլանին, իսկ օգնական՝ Ալբերին։ Հանձնաժողովի պարապմունքների համար հատկացրին Լուքսեմբուրգի պալատը, որի անունով էլ նա կոչվեց «Լուքսեմբուրգյան հանձնաժողով»։

Ժամանակավոր կառավարության այս քայլը՝ հանձնաժողովի ընտրությունը մի ճարպիկ խաղ էր։ Հարմար պատրվակով պրոլետարիատի ներկայացուցիչներին հեռացրին կառավարությունից, բայց բանվորների պահանջների իրագործման ամբողջ պատասխանատվությունը գցեցին նրանց վրա։ Հանձնաժողովի ոչ փող տվին, ոչ ծառայողներ, և նա շատ քիչ բան կարողացավ անել. այնուամենայնիվ նա մշակեց և անցկացրեց բանվորական տասժամյա օրվա օրենքը կազմակերպեց մի բյուրո՝ աշխատանք գտնելու համար

## ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Կառավարությունն ուզում էր ազատվել հեղափոխական պրոլետարիատի ճնշումից։ Զինված բանվորներին հակակշիռ նա ստեղծեց հատուկ զորախմբեր աղքատներից ու թափառաշրջիկներից, որոնց հրապուրեց ռոճիկով և փայլուն համազգեստով։

Նա փորձեց բաժան-բաժան անել բանվոր դասակարգը, որպեսզի գոնե նրա մի մասին իր կողմը քաշի։ Ցեթե ի պատասխան աշխատանքի մինիստրության պահանջի ստեղծեցին Լուքսեմբուրգյան կոմիսիա, ապա «աշխատանքի կազմակերպության» պահանջի դիմաց ստեղծեցին ազգային արհեստանոցներ։ Այս արհեստանոցներում աշխատանք էին գտնում անգործները, որոնց թիվը արդյունաբերական ճգնաժամի հետևանքով շատ-շատ էր։

Իհարկե, սրանք այն «հասարակական արհեստանոցները» չէյին, որ քարոզում էր Լուի Բլանը և պահանջում էին բանվորները։ Դա մի ժամանակավոր տուրք էր բանվորներին։ Արհեստանոցների աշխատանքը վատ էր կազմակերպված. հմուտ արհեստավորներին՝ Պարիզի մեծաքանակ ժամագործներին, ոսկերիչներին հողային աշխատանքնե-

րի վրա եյին բանեցնում: Բոլոր բանվորներին զինվորական ռեժիմի եյին յենթարկել:

Ժամանակավոր կառավարությունը իշխանության գլուխ անցնելով, ժառանգեց բորսայինների միապետությունից քայքայված ֆինանսներ: Փողի կարիքը շատ մեծ եր: Ժամանակավոր կառավարությունը ձեռք չտվեց խոշոր սեփականատերերի կապիտալներին և հողերին, նա վճռեց ավելացնել հարկերը: Այս միջոցն ամենից խիստ հարվածում եր առանց այն էլ հարկերով ծանրաբեռնված գյուղացուն: Այն ժամանակ աշխատում եյին գյուղացուն ներշնչել այն միտքը, թե հարկերի ավելացման մեջ հանցավոր են բանվորները. իբրև ապացույց բերում եյին ազգային արհեստանոցները, վորոնք, իբրավի, նստում յին որական ավելի քան հարյուր հազար ֆրանկ: Բացի դրանից, գյուղացուն վախեցնում եյին նրանով, թե բանվորները վո՛չ միայն չեն ուզում աշխատել և նստած են գյուղացու վզին, այլև մտածում են բոլոր ունեցվածքները բաժանել:

Գյուղացիները, վորոնց համար ամենից արժեքավորն իրենց հողային մանր սեփականությունն եր, սարսափեցին և ատելությամբ լցվեցին դեպի բանվորները:

Այսպես եյին պատկերացնում բուրժուական ագիտատորները գյուղացուն բանվորների սոցիալիստական ձգտումները: Տգետ ու մութ գյուղացին, վոր դողում եր վողորմելի չափերի հասած իր սեփականության համար, սարսափում եր այդ մտքից: Նրանք ատեցին «ձրիակեր բանվորներին», «բաժանարար սոցիալիստներին» և ամբողջ հեղափոխությունը:

Երբ հասավ Սահմանադիր ժողովի ընտրությունների օրը, գյուղացիությունը, կազմելով ժողովրդի մեծամասնությունը, ուղարկեց այնտեղ միապետականներ և ռեակցիոներներ՝ սոցիալիզմի, հանրապետության և հեղափոխության թշնամիներին:

Բուրժուազիային հարկավոր եր վերջնականապես ջախջախել պրոլետարիատին, վորպեսզի վոչնչացնի սոցիալական հանրապետության ամեն մի հույս: Գյուղացիության տրամադրությունն ու հակահեղափոխական Հիմնադիր ժողովը դյուրացնում եյին այդ խնդրի լուծումը:





Հունիսի 21-ին հրատարակվեց մի դեկրետ, վոր պարտադրում եր ազգային արհեստանոցների 18—25 տարեկան բանվորներին գրվել զինվոր կամ գնալ գավառ հողային աշխատանքների: Բանվորների պատգամավորության մինիստրը կոպիտ պատասխան տվեց, թե ով չենթարկվի, նա ուժով կհպատակվի այդ կարգադրությանը: Բանվորներին մնում եր միայն պաշտպանվել: Ահազանգը հնչեց. խաբված պրոլետարիատն իր յեղբայրներին զենքի յեր կանչում: Բանվորները դուրս յեկան «հաց կամ մահ» նշանաբաններով: Քաղաքի պրոլետարական մասը ծածկվեց բարրիկադներով. նրանց թիվը 400-ից անց եր: Գլխավոր բարրիկադը, վոր փակում եր բանվորական ռայոնի՝ մուտքը 3 փողոցից, բարձրությամբ յերեք հարկանի յեր, իսկ յերկարությամբ 700 մետր. նա ուներ զինանցքներ և ատամներ. նրա յետքից բարձրանում եյին 19 այլ բարրիկադներ: Նրանց գլխին ծածանվում եր մի մեծ կարմիր դրոշ: Մյուս բարրիկադը, վոր նույնպես փակել եր բանվորական թաղամասի մուտքը, մի ահարկու հաստ, յերկհարկանի պատ եր, փողոցի սալերից շինված: Նա ուներ անթերևույթ զինանցքներ: Թնդանոթների գնդակները ծակում անցնում եյին, բայց վոչ քանդում: Այդ ահարկու բարրիկադը, վոր պաշտպանում եյին 800 ապստամբ 10,000 զինվորների դեմ, յերեք որ դիմադրեց. չորրորդ օրը զինվորները հարևան տների պատերը քանդեցին, կտուրների վրայից բարրիկադի թիկունքն անցան և վերցրին:

Իրենց մասնագիտությամբ քիմիային ծանոթ բանվորներն աշխատում եյին վառոդ ստանալ: Նրանք դեղագործներին ստիպում եյին իրենց աչքի առաջ վառոդ պատրաստել: Գնդակ պատրաստելու համար կապար եյին հալում, հրացանները լցնում եյին ամեն տեսակ մետաղով, նույնիսկ տպարանի տառերով: Բանվորուհիներն իրենց հերոսությամբ մրցում եյին տղամարդկանց հետ: «Դուք սպանեցիք մեր ամուսիններին և յեղբայրներին, սպանեցե՛ք և մեզ», ասում եյին նրանք զինվորներին: Կանայք հետազոտում եյին թշնամու մտադրությունները: Նրանք հետևում եյին նրա շարժումներին և հազար ու մի խորամանկություն եյին բանեցնում, վոր կռվողներին ռազմամթերք և կենսամթերք հասցնեն: Մեկը վառոդը տանում եր կաթի ամանի յերկրորդ հատակում պահված, մյուսը վառոդը լցնում եր հացի մեջ և այլն: Առանց առաջնորդների, վատ զինված բանվորները քաջության հրաշքներ եյին գործում: Ամեն մի բարրիկադ զորքը վերցնում եր հարձակումով: Շատ ան-

դամ բարրիկադները ձեռքից-ձեռք եյին անցնում: Կառավարությունն ստիպված էր գործադրության մեջ դնել ծանր և ծովային հրետանին:

Հունիսի 25-ի յերեկոյան կռիվը վերջացավ. պրոլետարիատը պարտվեց: Այժմ սկսվեց հաղթվածների հաշվեհարդարը՝ դատաստանը: Հաղթողներն անողորմ եյին: Սկսվեցին ձերբակալություններ, մահապատիժներ, աքսորներ: Զոհերի թիվը հասնում էր 10,000-ի 40—50 հազար ապստամբների ընդհանուր թվից: 14 հազար գերիների գցեցին բանտերը և նկուղները: Այդ նկուղներում կալանավորները խավարի մեջ եյին, զուրկ օդից, սննդից և նույնիսկ ջրից. մահացությունը նրանց մեջ սոսկալի չափերի յեր հասել: Յեթե մեկը նրանցից անցքից «հաց» էր խնդրում, գնդակն էր լինում նրա պատասխանը՝ «այ քեզ հաց» բացականչությամբ: Հաղթողները շրջում եյին հիվանդանոցները և բռնում վիրավորներին:

Ափերից ջուրն եյին գցում գերիներին և գնդակահարում: Անխնա դաժանությամբ գործում եյին զինվորական դատարանները, վորոնք 5000 մարդու ուղարկեցին տաժանակիր աշխատանքի:

## ՀՈՒՆԻՍՅԱՆ ՑԵԼՈՒՅԹԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Բանվորների հունիսյան այս յելույթը պատմության մեջ պրոլետարիատի առաջին զուտ դասակարգային ապստամբությունն է: Թեև այն ժամանակ բանվորները չունեյին վորոշ ծրագիր, բայց և այնպես կռվում եյին հանուն այնպիսի նոր հասարակության, ուր չպիտի լիներ ճնշում և շահագործում:

Քանի վոր ապստամբ բանվորների նպատակն էր՝ քայքայել բուրժուական հասարակությունը, ապա այդ հասարակության բոլոր դասակարգերը դուրս յեկան նրանց դեմ:

Մանր բուրժուազիան, դողալով իր սեփականության՝ մանր արհեստանոցի, խանութի վրա, աջակցում էր կառավարությանը: Գյուղացիները՝ իրենց մի կտոր հողի յերկյուղից, անխնա կոտորում եյին բանվորներին. չէ՞ վոր գյուղացիությունն էր կազմում զորքի մեծամասնությունը: Վերջապես, բանվորների դեմ վորպես բուրժուազիայի վարձկաններ կռվում եյին մուրացիկները, թափառաշրջիկները՝ անորոշ զբաղմունքի այն մարդիկ, վորոնց անվանում են լյումպեն-պրոլետարներ:





Յերբ պրոլետարիատը ջախջախվեց ու արնաքամ յեղավ, վերջացավ բուրժուազիայի լիակատար տիրապետության վերջին արգելքը: Վերացրին 10-ժամյա բանվորական օրը և փոխարինեցին 12-ժամյա բանվորական օրով. փակեցին բանվորական ակումբները և վերականգնեցին ուտելեղենի վրա յեղած տուրքերը, վոր իր ծանրությամբ ընկնում էր քաղաքի չքավորության վրա:

Վերջապես, խոշոր սեփականատերերը պահանջեցին անհապաղ վճարել մուրհակների, բնակարանների և շինությունների պարտքերը: Պարզվեց, վոր մանր բուրժուազիան, խոշոր բուրժուազիային հարելով, կռվել է վոչ իր շահերի համար: Մանր խանութների և արհեստանոցների տերերը հարուստների պարտապանները լինելով, սնանկության սպառնալիքի տակ ընկան:

Շուտով Սահմանադիր ժողովը մշակեց նոր սահմանադրություն, ուր արդեն վոչ մի խոսք չէր ասվում աշխատանքի իրավունքի մասին: Բանվորների յելույթից վախենալով, Սահմանադիր ժողովը խոշոր չափով լայնացրեց նախագահի (պրեզիդենտ) իշխանությունը, վորով նախապատրաստեց միապետական հեղաշրջումը: Այս հնարավորությունն էլ ավելի մեծացավ, յերբ գյուղացիությունը, չհավատալով հանրապետության նախագահի ընտրություններին, իր բոլոր ձայները տվեց Լուի Նապոլեոնին՝ Նապոլեոն կայսեր յեղբոր վորդուն:

Այնինչ ջախջախված պրոլետարիատը չէր կարող այլևս պաշտպանել հանրապետությունը. ու յերբ Լուի Բոնապարտը մտածեց հեղաշրջում առաջ բերել, վոչվոք չելավ հանրապետությունը պաշտպանելու: 1851 թվին Լուի Բոնապարտը հեղաշրջում առաջացրեց, գրավելով իշխանությունը, իսկ մի տարուց հետո վերականգնեց կայսրությունը, վորի գլուխն անցավ Լուի Բոնապարտը Նապոլեոն III անունով:

## 1848 ԹՎԻ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԸ

1848 թ. հեղափոխությունը ցույց տվեց, թե ինչ նշանակություն կարող է ունենալ պրոլետարիատը XIX դ. ապագա հեղափոխություններում, կամ, ինչպես Մարքսն էր ասում, «նա բացեց XIX դ. հեղափոխությունների գաղտնիքը»: Մյուս կողմից նա պարզ ցույց տվեց, թե պրոլետարիատը մենակ չի կարող հեղափոխության մեջ հաղթող հանդիսանալ այնպիսի մի յերկրում, վորի մեծամասնությունը գյուղա-

ցիությունն է: Պրոլետարիատը պետք է ձգտի դաշնակցել գյուղացիությանը և միահամուռ ուժով յելնել ընդդեմ տիրող դասակարգի: Այդ հնարավոր դարձնելու համար պետք է ցույց տալ գյուղացուն, թե հեղափոխական պրոլետարիատը բարվոքելու և դյուրացնելու յե նրա վիճակը:

1848 թ. հեղափոխությունը ցույց տվեց, որ Լուի Բլանի պես մարդկանց ուսմունքն ու գործունեյությունը կործանարար եր բանվոր դասակարգի համար: Դրանք բանվորական գործի դավաճաններ եյին: Լուի Բլանի գործունեյության մասին Վ. Ի. Լենինը գրում եր, որ նա օգնություն եր սպասում բուրժուազիայից: Հույս ուներ, որ իբր թե բուրժուազիան կօգնի բանվորներին աշխատանքը կազմակերպելու գործում: Մենք հիշում ենք, որ 1848 թ. բանվորական ապստամբությունն արյունոտ կերպով ճնշեց գեներալ Կավենյակը: Ընկեր Լենինն ասում է. «Խոսքով Լուի Բլանը հեռու եր Կավենյակից, որքան յերկինքը յերկրից: Խոստում տված լինելով հեղափոխական բանվորների հետ միևնույն շարքերում կռվել բուրժուական հակահեղափոխականների դեմ՝ Լուի Բլանը տալիս անթիվ...Բայց հենց վերջինիս թուլությունը, անկայունությունը և դյուրահավատությունը դեպի բուրժուազիան ծնեցին Կավենյակին և հաջողություն տվին նրան:

## ՀԱՐՑԵՐ

1. Լիոնի բանվորներն ի՞նչ դաս առան առաջին ապստամբության պարտությունից:

2. Ցերկրորդ ապստամբության պատճառն ի՞նչ եր:

3. Ի՞նչ է Լիոնի յերկրորդ ապստամբության նշանակությունը:

4. Վո՞ր դասակարգն եր Ֆրանսիայի իշխանության գլուխ կանգնած 30–40 թ. թ.:

5. Ի՞նչ դրության մեջ եյին մնացած դասակարգերը և մանավանդ բանվորները:

6. Ի՞նչն է կազմում Լուի Բլանի ուսմունքի եյությունը:

7. Ովքե՞ր մտան ժամանակավոր կառավարության մեջ 1848 թ. փետրվարին:

9. Ի՞նչ պահանջներ ներկայացրեց բանվոր դասակարգը:

10. Որո՞նք եյին հունիսյան ապստամբության պատճառները և ինչո՞ւմն է նրա նշանակությունը:



11. Ի՞նչ հետևանքներ ունեցավ բանվորների պարտությունը:

12. Ի՞նչ դաս կարելի յե վերցնել 1848 թ. հեղափոխության պատմությունից:

## ՆՅՈՒԹԵՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԱՐ

### Ա. Ժամանակավոր կառավարության Լուքսեմբուրգյան կոմիսսիա կազմելու մասին դեկրետից (1848 թ. փետրվարի 28-ին)

«Ընդունելով,

որ ժողովրդի կատարած հեղափոխությունը նրա համար ևս մի բան պետք է անի,

որ ժամանակ է արդեն վերջ տալու բանվորների տևական ու անարդար տառապանքներին,

որ բանվորական հարցն ամենակարևորագույնն է,

որ հանրապետական կուսակցության հոգածությանն ավելի արժանի առարկա գոյություն չունի...

Հանրապետության ժամանակավոր կառավարությունը սահմանում է պետական մշտական կոմիսսիա բանվորների համար՝ հատուկ նպատակ ունենալով զբաղվելու բանվոր դասակարգի վիճակով»:

### Բ. Գյուղացիների տրամադրությունը փետրվարյան հեղաշրջումից հետո

Մի կիսագյուղացի, որին հանձնել եյի իմ կալվածքի պահպանությունը, նկարագրում է բոլոր նշանավոր դեպքերը, որ կատարվել են փետրվարի 24-ից հետո մեր գավառում (Լամանշի դեպարտամենտում) և ի միջի այլոց ասում է.

«Տեղիս բնակիչները պնդում են, թե Լուի-Ֆիլիպպի արտաքսումը լավ գործ է, և նա դրան միանգամայն արժանի յե»:

«Սակայն յերբ նրանց լուրեր հասան Պարիզում տիրող խառնաշփոթ դրության, նոր հարկեր մտցնելու մտադրության, պատերազմի վտանգի մասին, յերբ նրանք տեսան, թե ինչպես առևտուրը կանգ է առել, իսկ դրամները կարծես թե հողի մեջ են հորվում. և մանավանդ յերբ իմացան, թե սեփականության իրավունքի դեմ հարձակումներ կան, յերկյուղը տիրեց ժողովրդական մասսաներին, և սարսափը տարածվեց ամբողջ գավառում»:

«Գյուղերում...սեփականությունը դարձել էր մի տեսակ յեղբայրական զոդ բոլոր ունևորների համար...Առաջին անգամն էր Պարիզը ներշնչում ընդհանուր ատելություն և վախ»:

(Բուրժուական պատմագիր Տոկվիլի հիշողություններից)

## Գ. VIII շրջանի (1848 թ. հունիս) ապստամբների թռուցիկը

Ֆրանսիական ժողովրդի անունով.

Քաղաքացիներ,

Փետրվարյան բարրիկադներում մարդիկ, վորոնց դուք տվիք ժամանակավոր կառավարություն պատվավոր անունը, խոստացան մեզ սոցիալական և դեմոկրատական հանրապետություն: Նրանք խոստացան, և դուք, հավատալով նրանց խոսքին, թողիք մեր բարրիկադները:

Չորս ամսվա ընթացքում ի՞նչ արին նրանք. Նրանք դավաճանեցին իրենց խոսքին և չկատարեցին իրենց խոստումը:

Մենք, VIII շրջանի մերիան պաշտպանող քաղաքացիներս, պահանջում ենք՝

սոցիալական և դեմոկրատական հանրապետություն.

աշխատանքի ազատ ասոցիացիա պետության աջակցությամբ.

դատ ժողովրդական ներկայացուցիչներին և մինիստրներին ու անհապաղ ձերբակալում գործադիր կոմիսիայի.

մենք պահանջում ենք զորքերը հանել Պարիզից:

Քաղաքացիներ,

Հիշեցեք, վոր դուք ինքնիշխան եք:

Հիշեցեք մեր նշանաբանը՝

Ազատություն, հավասարություն, յեղբայրություն:

VIII շրջանի մերիան պաշտպանող քաղաքացիների հանձնարարությամբ՝

Ժ. Ժ. Ժիլլե

Փաստաթղթին թիվ չի դրած:

## Դ. Ո՞վ էր պաշտպանում սեփականությունը հունիսյան որերին

Բոլոր ճանապարհներով, վորոնք խռովարարների իշխանության տակ չեյին, Ֆրանսիայի բոլոր ծայրերից քաղաք եյին մտնում հազարավոր մարդիկ մեզ օգնելու համար: Յերկաթուղիների շնորհիվ գալիս



եյին նույնիսկ Պարիզից 50 մղոն հեռու վայրերից, չնայած կռիվն սկսվել էր նախընթաց յերեկոյին: Հետևյալ որը և հաջորդ որերին գալիս եյին ու գալիս Պարիզից հարյուր—յերկու հարյուր մղոն հեռու տեղերից: Այդ մարդիկ պատկանում եյին ժողովրդի բոլոր դասակարգերին: Նրանց մեջ կային և՛ գյուղացի, և՛ բուրժուա, և՛ խոշոր հողատեր, և արիստոկրատներ. նրանք լավ չեյին զինված, բայց զարմանալի թափով վառված՝ շտապում եյին Պարիզ: Մեր հեղափոխությունների տարեգրություններում դա նույնքան տարօրինակ և նոր յերևույթ էր, վորքան և Պարիզի բանվորների ապստամբությունը: Այդ մոմենտից ակնհայտ դարձավ, վոր հաղթությունը մերն է լինելու, վորովհետև խռովարարները վոչ մի տեղից օգնություն չեյին ստանում, իսկ մեզ համար ամբողջ Ֆրանսիան պահեստ էր:

(Բուրժուական պատմագիր Տոկվիլի հիշողություններից)

## ՀԱՐՑԵՐ ՅԵՎ ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. 1. Ժամանակավոր կառավարությունն ինչպե՞ս է բացատրում տվյալ դեկրետը հրատարակելու անհրաժեշտությունը:

2. Ո՞րն է այդ դեկրետի հիման վրա ստեղծված կոմիսիայի դերը:

Օգտվելով աշխատանքի գրքի և դեկրետի նյութերից՝ պարզեցեք, թե ինչ նշանակություն ուներ Լյուքսեմբուրգի կոմիսիայի կազմակերպումը և կարո՞ղ էր նա իրապես բարելավել բանվոր դասակարգի դրությունը:

Բ. 1. Գյուղացիությունն ինչպե՞ս վերաբերվեց միապետության անկմանը:

2. 1848 թվի հեղափոխության ի՞նչը վախեցրեց գյուղացիներին:

3. Ժամանակավոր կառավարությունն ի՞նչ քաղաքականություն ուներ գյուղացիության նկատմամբ:

4. Հեղափոխության ընթացքի համար ի՞նչ նշանակություն ունեցավ գյուղացիության տրամադրությունը:

Գ. 1. Բանվորներն ինչպե՞ս են պատկերացնում այն պատճառները, վոր դրդեցին իրենց յելույթ ունենալ:

2. Հանուն ի՞նչի նրանք զենք վերցրին:

Դ. 1. Պատմագիր Տոկվիլն ինչո՞վ է բացատրում կառավարության հաղթանակն ապստամբների նկատմամբ:

Ապստամբների թռուցիկի, Տոկվիլի հիշողություններից բերված հատվածի և «աշխատանքի գրքի» նյութերի հիման վրա զեկուցում պատրաստեցեք հետևյալ թեմայով։ «Հունիսյան ապստամբության նշանակությունը և նրա պարտվելու պատճառները»։

Ե. Լրագրերից և ժուռնալներից նյութ ժողովեցեք ալբոմների, պլակատների, այլև «Ֆրանսական սոցիալիստների դավաճան դերը և ֆրանսիական պրոլետարիատի պայքարը կապիտալի դեմ» նյութի մասին զեկուցում պատրաստելու համար։

## 9. ՈՒՏՈՊԻԱԿԱՆ ՅԵՎ ԳԻՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻԶՄԸ

### ԱՇԽԱՏԱՎՈՐԱԿԱՆ ՄԱՍՍԱՆԵՐԻ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՐՄԻԴՈՐԻ 9-ԻՑ ՀԵՏՈ

Մենք գիտենք, վոր Ֆրանսիայում Ռոբեսպյերի անկումից և մանրբուրժուազիայի կործանումից հետո՝ իշխանությունն անցավ խոշոր բուրժուազիայի ձեռքը։ Վերջինս գլխավորապես կազմված եր հողավաճառ չարաշահներից և բանակին մթերք մատակարարողներից։ Իր ժամանակին յակոբինյանների կողմից մշակված սահմանադրության փոխարեն ստեղծվեց նորը։ Վերջինս ժողովրդական լայն մասսաներին մեկուսացրեց քաղաքական կյանքին մասնակցություն ունենալուց։ Նորից սահմանվեց այնպիսի կարգ, վորով միմիայն ունևորները կարող եյին մասնակցել ընտրություններին և քաղաքական կյանքին։ Այս սահմանադրությամբ ստեղծված կառավարությունը դիրեկտորիա անունն ստացավ, վորովհետև գործադիր իշխանությունը պատկանում եր հինգ դիրեկտորներին, վորոնք իրենց պարտականությունները հերթով եյին կատարում։ Այս կառավարության օրոք, դեռ նրանից առաջ էլ, այսինքն՝ Տերմիդորի 9-ից հետո, Կոնվենտի ժամանակ, հեղափոխական բոլոր օրենքները վերացվեցին։ Հեղափոխական տրիբունալը, վոր հեղափոխության թշնամի տարրերի դատաստանն եր անում, վոչնչացվեց, յակոբինյանների ակումբը փակվեց, իսկ սննդամթերքների սակագները փոփոխության յենթարկվեցին։—

Այն հեղափոխական ժողովրդական զանգվածները, վորոնք հեղափոխություն կատարեցին, և օգոստոսի 10-ի ապստամբության ժամանակ գրավեցին Բաստիլիան և Թագավորական պալատը, այժմ ծանր դրության մեջ եյին գտնվում։

Մթերքների սակագինը, վոր դրված եր չարաշահներին (սպեկուլ-



յանտներին), այլևս գոյություն չուներ, թղթադրամների գինը շարունակում եր ընկնել, իսկ թանկությունն անհավատալի չափով աճում եր։ Ֆաբրիկանտները և չարաշահներն ահագին շահույթներ եյին դիզում և խեղդվում եյին ճոխության մեջ։ Աշխատավոր-չքավորությունը սովամահ եր լինում։ Այսպես՝ 1795 թ. (Կոնվենտի իշխանության վերջը) միջին բանվորն օրական ստանում եր 100—120 լիվր, իսկ հացի ֆունտն արժեր 50–55 լիվր։ Աշխատավոր-չքավորության համար հենց այդ ծանր օրերին զարգանում եր կոմունիստ-հեղափոխական Գրակխ Բաբեֆի գործունեյությունը և պայքարը աշխատավորական դիկտատուրայի մասին։

### ԳՐԱԿԽ ԲԱԲԵՖ

Գրակխ Բաբեֆը ծնվել է 1760 թ. մի աղքատ ընտանիքում։ Յերիտասարդ ժամանակ մտնում է մի կալվածատիրոջ հնադարան (արխիվ), ուր նա մոտիկից ծանոթանում է գյուղացիության դրության։ «Ֆեոդալ խավերի հնադարանների փոշիների մեջ,— գրում է նա հետագայում,— յես բաց արի այս դասի կատարած բռնությունների սոսկալի գաղտնիքները, վոր և մերկացրի ժողովրդի առաջ, հենց վոր սկսեց հեղափոխությունը»։

Յեվ իսկապես, հեղափոխության հենց առաջին օրերից Բաբեֆը նետվեց քաղաքական կռվի մեջ։ Նա մասնակցում է Բաստիլիայի գրավմանը։ Հեղափոխությունն սկսվելուց հետո էլ անխոնջ կռվում եր աշխատավորության շահերի համար, վորի պատճառով և վաստակեց շատ թշնամիներ։ Վերջիններին հաջողվում է նրան կեղծիքների մեջ մեղադրել և ձգել բանտ։ Սակայն Բաբեֆի գործը վերաքննվում է, և նա ազատվում է։ Բանտից դուրս գալուց հետո՝ Բաբեֆն սկսում է կռիվ ռեակցիոն կառավարության դեմ, վոր հաստատվել եր Տերմիդորի 9-ի հեղաշրջումից հետո։ Քաղցած չքավորության տանջանքները, հարուստների մի կառավարող խմբակի ճոխությունը զայրացնում են նրան։ Նա վիշտ է զգում, յերբ տեսնում է առանց շապիկի, առանց զգեստի և կոշիկի բոլոր նրանց, վորոնք պատրաստում են կտորեղեն, բուրդ կամ մետաքս, կաշի և կարում են կոշիկ։ «Անհավատալի թանկությունն ստիպում եր վշտանալ և քաղցից մեռնել խեղճ բանվորներին, վորոնք օրական 4 լիվր եյին ստանում»,— գրում եր նա այն ժուռնալում, վոր հրատարակում եր այն ժամանակ։

Բաբեֆը դիտելով հեղափոխության ընթացքը և անձամբ մասնակցելով նրան, այն յեզրակացության հանգավ, վոր հեղափոխությունը դեռ չի վերջացած, վորովհետև ունևոր դասակարգերը ձեռք են գցել ամբողջ հարստությունը և կառավարում են մեն մենակ մինչդեռ չքավորներն աշխատում են վորպես խակական ստրուկներ, հյուծվում են աղքատությունից և զրկվում պետության մեջ աննշան տեղ:—

Բաբեֆի կարծիքով հեղափոխությունն իր լրիվ վախճանին հասցնելու համար՝ անհրաժեշտ է հաստատել կատարյալ հավասարություն բոլոր մարդկանց համար, իսկ այդպիսի հավասարություն հնարավոր է միմիայն մասնավոր սեփականությունը վոչնչացնելով և հողի ու արտադրության միջոցների, գործիքների վրա ընդհանուր սեփականություն հաստատելով: Բաբեֆը ցանկանում էր ստեղծել այնպիսի հասարակություն, ուր աշխատանքը և սպառումը հավասար չափով լինի բոլորի համար ըստ իր արտահանության: Այդ հասարակության ամեն մի անդամ պարտավոր է իր աշխատանքի արդյունքները հանձնել հասարակության պատկանող խանութներին: Պարենավորման հատուկ վարչություն պետք է հաշվառման յենթարկի թե՛ իրենց բանվորներին և թե՛ նրանց կատարած աշխատանքը: Այդ նույն վարչությունն՝ ըստ հավասարության սկզբունքի՝ կատարելու յե և արտադրանքների բաշխումը:

«Այդպիսի հասարակության մեջ,—գրում էր Բաբեֆը,—վոչ վոք չի կարող բացառապես իրեն համար ունենալ փողային կամ արդյունաբերական սեփականություն՝ առանց հանցագործություն կատարելու»: «Հասարակության ամեն անդամ,—ասում էր Բաբեֆը,—պարտավորվում է մասնակցել գյուղատնտեսության և արդյունաբերության մեջ բոլոր աշխատանքներին, վորին ինքն ընդունակ է: Բոլոր աշխատանքներին այդ կերպ աշխատանքի լծելով և մեքենաներ ու մշակման յեղանակներ կիրառելով, վորոնցով մարդկային աշխատանքի խնայողություն է լինում, հնարավոր է դառնում աշխատանքի ժամերի թիվը կրճատել:

Նոր հասարակության մեջ առանձին ուշադրություն կդարձվի աճող քաղաքացիների դաստիարակության վրա: Այդ դաստիարակության նպատակն է լինելու մարդկանց սովորեցնել՝ «նույնացնել իր բախտն ուրիշների բախտին»:





Բաբեֆը մասնակցած լինելով հեղափոխությանը՝ փորձով հասկանում էր, վոր տիրող դասակարգերը իրենց գրաված դիրքերն առանց կռվի չեն զիջի:

Այս պատճառով կյանքը նոր ձևով կառուցելու հնարավորություն ստեղծելու համար՝ Բաբեֆը զինված ապստամբության անհրաժեշտությունն էր քարոզում: Նա շատ մանրամասն կերպով մշակեց գոյություն ունեցող կառավարության դեմ յելնելու պլանը, նաև այն միջոցները, վորոնցով կարելի կլիներ վոտքի հանել և իր կողմը գրավել ժողովրդական մասսաներին: Այսպես՝ նա գտնում էր, վոր ապստամբության բապեյքին անհրաժեշտ է բոլոր փռերը բաց անել և այնտեղից ձրի հաց թողնել: Նա հարկավոր էր համարում խոսել հեղափոխության թշնամիների գույքը բռնագրավելու և չքավորներին բաժանելու մասին: Նա յենթադրում էր չքավորներին փոխադրել հարուստների տները և աշ-
խատավորության վերադարձնել իր գրավ դրած իրերը:—

Հաղթություն տանելուց հետո՝ Բաբեֆի կարծիքով բոլորին միատեսակ իրավունքներ չպետք է տրվեր: Նոր հասարակության մեջ միայն աշխատավորները կարող էին հավասարաիրավունք քաղաքացիներ լինել: Մնացած բոլորը, վորոնք թշնամի էին դրանց,—հարուստները, հոգևորականությունը, ազնվականությունը զրկված էին լինելու քաղաքական իրավունքներից: Նրանք չպետք է հաճախեյին ժողովներ, չպետք է ձայնի և զենք կրելու իրավունք ունենային: Նրանք միշտ պետք է հսկողության տակ լինեյին և համարվեյին «օտարերկրացիներ»:

Բաբեֆը համոզված էր, վոր մարդիկ ինքնակամ կմտնեն կոմունիստական սկզբունքներով հիմնված այս նոր հասարակության մեջ, ինքնակամ էլ իրենց գույքը կզիջեն ընդհանուրին: Ինչ վերաբերում է նրանց, վորոնք ինքնակամ կերպով այդպես չէյին վարվի, նույնպես պիտի ընկնեյին «օտարերկրացիների» մեջ և բարձր տուրքերի յենթարկվեյին:

Առհասարակ նոր իրավակարգի բոլոր թշնամիների նկատմամբ Բաբեֆը քարոզում էր կատարելապես անխնա լինել: «Յերկաթե ձեռքով պետք է ընկճել հակառակորդին»,—գրում էր նա: «Աղքատի և մուրացկանի ինչին է պետք ազատությունը, յերբ հարուստներն էլ են վայելում այն: Հարուստների ստրկացումը,—ահա մեր ազատությունը:

Մենք պետք է ընկճենք նրանց և չքավորների դիկտատուրա հաստատենք: Այսպես խելոք արիստոկրատները դիկտատորներ կդառնան»:

Ուրիշ խոսքով Բաբեֆը քարոզում էր աշխատավոր չքավորության դիկտատուրա հաստատել:

## ԲԱԲԵՖԻ ԴԱՎԱԴՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՏԱԿՈՒՄԸ

Կառավարության հալածանքները, հեղափոխական կազմակերպությունների, հասարակությունների քայքայումը և ակումբների փակվելը Բաբեֆին հարկադրեցին մտածել ապստամբության կազմակերպելու մասին գաղտնի ընկերության միջոցներով, վորին նա «գաղտնի դիրեկտորիա» էր անվանում, վորպես հակադրություն պետական դիրեկտորիայի: Այս դիրեկտորիան պետք է գաղտնի կերպով հեղաշրջում պատրաստեր և միայն վերջին վարկյանին պիտի կոչ աներ լայն մասսաներին ապստամբելու: Գաղտնի դիրեկտորիան կազմված էր Բաբեֆի միքանի հավատարիմ բարեկամներից: Գործերը վարելու համար ուներ քարտուղար: 12 գործակալներ լիազորված էին ղեկավարելու ագիտացիան և աշխատանքը Պարիզի այն ժամանակվա 12 շրջաններում: Այդ գործակալների աշխատանքը միավորելու համար՝ գլխավոր գործակալի պաշտոն էր ստեղծված, վոր վարում էր փականագործ Դիդիեն: Զորքի մեջ հատուկ գործակալներ էին աշխատում: Վերջիններին ընտրում էին մեծ զգուշությամբ՝ Յուրաքանչյուր թեկնածու յերկար քննադատության առարկա էր դառնում: Նրանց համար հատուկ կանոնադրություն և հրահանգ էր մշակված, իսկ բարձրագույն օրգանի՝ «գաղտնի դիրեկտորիայի» կազմն անհայտ պիտի մնար դավադրության բոլոր մասնակիցներին: Նրա կարգադրությունները իմացվում էին կնիքից: Դիրեկտորիայի ժողովները տեղի էին ունենում ամեն օր: Այստեղ լսվում էին գործակալների հաղորդումները, տպագրության յենթակա թռուցիկների նախագծերը, որոնք պիտի հրատարակվեյին ապստամբությունից հետո, և պետության ապագա կառուցվածքին ու ապստամբության դանազան ձևերին վերաբերող խնդիրներ: Բայց այս գաղտնի կազմակերպության մեջ գտնվեց մի դավաճան, վոր ամբողջ պլանը մատնեց կառավարությանը: Բաբեֆը և նրա համախոհները բանտարկվեցին ապստամբության սկսվելուց քիչ առաջ: Լայն մասսաները, վորոնց համար Բաբեֆի ուսմունքն ամբողջապես անհասկանալի էր, չդուրս յեկան նրան պաշտպանելու: Բաբեֆն իր բոլոր բարեկամներով մահվան դատապարտվեց և գլխատվեց (1797):



## ԲԱԲԵՖԻ ԱՆՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Ի՞նչ էր Բաբեֆի յելույթի անհաջողության պատճառները: Բաբեֆը կոմունիստական հասարակություն ստեղծելու նպատակով հեղափոխություն էր քարոզում՝ այն ժամանակ, յերբ այդ քարոզն իրագործելու համար անհրաժեշտ պայմաններ չկային: Ամենից առաջ այդ դարաշրջանում Ֆրանսիայում պրոլետարիատ չկար, վոր կարողանար հասկանալ և իրագործել Բաբեֆի ուսմունքը: Այդ ժամանակվա բանվորների և արհեստավորների համար մասնավոր սեփականությունը վոչնչացնելու գաղափարը խորթ էր: Բացի այդ՝ Բաբեֆին շրջապատող պայմանները հնարավորություն չեյին տալիս մշակելու իսկական ուսմունք դասակարգային կռվի և կոմունիստական հեղափոխության մասին: Այն, ինչ քարոզում էր Բաբեֆը, դեռ պրոլետարիատի դիկտատուրա չէր: Ինքը Բաբեֆը դեռ ճիշտ հասկացողություն չուներ դասակարգերի մասին, ինչպես նաև պրոլետարիատի մասին, իբրև այդ դասակարգերից մեկի: Այստեղ զարմանալու վոչինչ չկա, վորովհետև այն ժամանակ խոշոր արդյունաբերություն չկար և իսկական պրոլետարիատ չէր ստեղծված: Բաբեֆը չէր հասկանում պրոլետարիատի նշանակությունը և չէր զատում նրան աշխատավոր չքավորության ամբողջ մասսայից: Մարքսը սովորեցնում էր, վոր այս կամ այն մարդու դասակարգային պատկանելությունը կախված է այն դերից, վոր խաղում է այդ մարդն արտադրության մեջ: Կախված է նաև նրանից, թե արտադրանքի վոր մասն է ստանում նա: Օրինակ՝ կալվածատերը, վոր իր ձեռնարկության մեջ վոչինչ չի անում, տեր է միայն շենքի ու մեքենաների և միայն շահույթ է ստանում, պատկանում է միայն մի դասակարգի՝ իսկ աշխատավարձ ստացող բանվորը, վոր արտադրանքի իսկական պատրաստողն է և մեքենաների վրա աշխատողը, պատկանում մի այլ դասակարգի: Ուրիշ դասակարգի յե պատկանում գյուղացին, վոր աշխատում է իր հողի վրա և աշխատավարձ չի ստանում: Բաբեֆն առանց այս հասկանալու՝ բոլոր մարդկանց յերկու դասակարգի էր բաժանում—չքավոր աշխատավորների և հարուստ անգործների: Այս պատճառով էլ նա անհրաժեշտ նշանակություն չէր տալիս բանվոր դասակարգի պայքարին, վորի, ինչպես ասում էր Մարքսը, հենց դառնալու յե բուրժուազիայի գերեզմանափորը: Բաբեֆն իր քարոզած գաղափարների իրագործումը չէր կապում տնտեսական զարգացման հետ, վոր պիտի ստեղծեր և մեծացներ պրոլետարիատի ուժը, վոր պիտի հնարավորություն ստեղծեր

անցնելու կոմունիստական իրավակարգի: Բաբեֆը միանգամայն իրավացի կերպով նոր իրավակարգ հաստատելը կապում էր հեղափոխական հեղաշրջման հետ և կարծում էր, թե ցանկացած րոպեյին այդպիսի հեղաշրջում կարելի յե կատարել՝ առանց հաշվի առնելու տնտեսական զարգացումը: Մինչդեռ կոմունիզմի բազան խոշոր արդյունաբերությունն է, վորն իր ձեռքն է առնելու աշխատավորների պետությունը: Կոմունիզմ կառուցելու համար պրոլետարական խոշոր մասսա յե հարկավոր, վոր կարողանա կռվել նոր իրավակարգ սահմանելու համար, վոր այդ կռվում իր վրա վերցնի այլ աշխատավորական խմբակների ղեկավարությունը: Հարկավոր է պրոլետարիատ, վոր մյուս դասակարգերից ավելի լավ է հասկանում կոմունիստական հեղափոխության անհրաժեշտությունը և անխուսափելիությունը:

## ՆՅՈՒԹԵՐ ՄՇԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ

### Հավասարների օրենսդրության դեկրետների նախագծերը

*Ա. դեկրետ Սանկյուլոտներին բնակարանով և կահույքով ապահովելու մասին.*

I

*Հենց վոր ապստամբությունը վերջանա, ամենաչքավոր քաղաքացիներից նրանք, վորոնց բնակարանները ներկայումս անբավարար են, վերադառնում են վոչ թե իրենց հին բնակարանները, այլ տեղավորվում են դավադիրների տներում:*

II

*Սանկյուլոտներին կահկարասիներով բավարարելու համար՝ օգտագործվում են հարուստների կահկարասիները:*

III

*Փարիզի հեղափոխական կոմիտեներին հանձնարարվում է համապատասխան միջոցներ մշակել՝ այս վորոշումներն անմիջապես և ճիշտ կիրառելու:*

## ԴԵԿՐԵՏ ՋԲԱՎՈՐՆԵՐԻ ՀԱԳՈՒՍՏԻ ՄԱՍԻՆ.

*Հանրային փրկության ապստամբական կոմիտեն վորոշում է.*

I

*Բռնակալության ժամանակ հագուստից զրկված ամենաաղքատ քաղաքացիներին հենց հաջորդ օրը հագցնել ի հաշիվ հանրապետության:*



II

*Այս նպատակով Փարիզի հեղափոխական կոմիտեները անմիջապես կնքում են կտորեղենի, հագուստեղենի, կոշկեղենի բոլոր խանութները և պահեստները:*

*Բաբեֆի ուսմունքի բովանդակությունը, այն Բաբեֆի վորին Դիրեկտորիան օրենքից դուրս էր հայտարարել՝ ճշմարտության քարոզելու համար:*

*Աշխատանքն ու սպառումը պետք է կոլեկտիվ բնույթ կրեն.*

*Ճնշումը տեղի յե ունենում այն ժամանակ, յերբ մեկը կաշուց դուրս է գալիս ուժից վեր աշխատանք կատարելով և կարիք է զգում ամեն բանի. մինչդեռ մի ուրիշը վոչինչ չանելով՝ թաղված է ճոխության մեջ:*

*Վոչ վոք չի կարող առանց հանցանք կատարելու՝ հողային կամ արդյունաբերական սեփականություն ձեռք բերել:*

*Նորմալ հասարակության մեջ հարուստներ և աղքատներ չպետք է լինեն: Այն հարուստները, վորոնք չեն ցանկանում հրաժարվել իրենց ավելցուկից չքավորների օգտին, ժողովրդի թշնամիներն են հանդիսանում:*

*Վոչ վոք չի կարող մենաշնորհի միջոցով զրկել մի ուրիշին կրթությունից, վոր անհրաժեշտ է նրա բարեկեցության համար:*

*Կրթությունն ընդհանուր պետք է լինի:*

*Հեղափոխության նպատակն է վոչնչացնել անհավասարությունը և վերականգնել ընդհանուր բախտավորությունը:*

*Հեղափոխությունը դեռ վերջացած չէ, վորովհետև հարուստներն իրենց մենաշնորհն են համարում ամբողջ ստացվածքն ու իշխանությունը, մինչդեռ չքավորներն աշխատում են ինչպես իսկական ստրուկներ, հյուծվում են չքավորությունից և վոչ մի դեր չեն խաղում պետական գործում:*

## XIX ԴԱՐԻ ՍԿԶԲԻ ՍՈՑԻԱԼԻԶՄԸ.

*Կապիտալիստները կարող էյին Բաբեֆին և նրա բարեկամներին դատապարտել, բայց նրանք չէյին կարող սպանել սոցիալիստական միտքը: Ընդհակառակն՝ կապիտալիզմի աճման հետ միաժամանակ զարգանում էր և սոցիալիստական միտքը: Կապիտալիզմի զարգացման հե-*

տնվում չի լինում և աշխատավորական մասսաների դրության վատթարացումը: Աշխատավոր մասսաների գլխին թափվող թշվառություններն ու դժբախտությունները, կապիտալիզմի զարգացման հետևանքները, վորոնք կործանարար էյին այդ մասսաների համար, ստիպում են շատերին մտածել այն մասին, թե ինչպես ազատել մարդկությունը կապիտալիստական հասարակակարգի ստեղծած բոլոր չարիքներից ու դժբախտություններից:

## ՌՈԲԵՐՏ ՈՒԷՆԸ ՅԵՎ ՆՐԱ ՈՒՍՄՈՒՆՔԸ

Սոցիալիստական ուսմունքի ամենահայտնի հեղինակն Անգլիայում Ռոբերտ Ուէնն էր: Նա արհեստավորի ընտանիքից էր. անձամբ ականատես էր յեղել արդյունաբերության հեղափոխության հետ կապված այդ՝ յերևույթներին: Նա զարմացած էր մնացել բարքերի այն վայրենացումից, վոր նկատելի յէր խոշոր արդյունաբերության մեջ աշխատող բանվորների շրջանում. հարբեցողություն, հայհոյանք, վեճ, տուրու-դմփոց—ահա թե ինչով էր անցնում ժամանակի բանվորների կյանքը:

Ռոբերտ Ուէնն ըմբռնում էր, վոր բանվորների այս վարքն ու բարքը կախված էր նրանց նյութական ապրելու պայմաններից: Վերջնական այս համոզման յեկավ, յերբ նրան՝ դեռ շատ յերիտասարդի հանձնեցին կառավարել Նյու-Լանարկի մի բամբակեղենի գործարանը: Նա բարելավեց այդ գործարանի տաժանակիր կարգերը՝ կրճատեց բանվորական օրը, ավելացրեց աշխատավարձը, վճարելով այն նաև գործարանի հարկադրական դադարի ժամանակամիջոցում և ի՛նչ—փոխվեց բանվորների բարոյական պատկերը, նրանց ժամանցը, նրանց փոխհարաբերությունը, նրանց շահագրգռությունը:

Ռոբերտ Ուէնն այդ միջոցին յեկավ այն համոզման, թե անհրաժեշտ է վերակազմել այն հասարակությունը, ուր մարդը դատապարտված է վայրենացման ու աղքատության:

Ամբողջ հասարակությունը վերակազմելու համար նա առաջարկում էր կազմել կոմունիստական համայնքներ, ուր գոյություն պետք է ունենար «բոլոր հողերի, տների և ամեն տեսակ շարժական գույքի, ինչպես նաև գործիքների և արտադրության համար հում նյութերի ընդհանուր սեփականությունը»:

Նա յենթադրում էր, թե հասարակությունն այնպես վերակազմելով՝ հարստության անհավասար բաշխումը կամ անձնական կուտակումը կգտնեն նույնքան անմիտ, վորքան ջրի կամ օդի անհավասար բաժիններով բաշխելը»:



Ժամանակի ընթացքում այս համայնքները պետք է կազմեյին ամբողջ աշխարհն ընդգրկող մի մեծ միություն: Ամեն մեկը դրանցից պետք է արտադրեր բոլոր անհրաժեշտ մթերքները իր անդամների համար, իսկ ավելորդը պետք է փոխանակվեր մյուս համայնքների արտադրած ավելորդների հետ: Ուէնը յենթադրում էր, վոր ապագա կոմունիստական հասարակության մեջ մեքենաների կիրառումը պետք է հասնի չտեսնված զարգացման:

Ինչ վերաբերում է այն միջոցներին, վորով պետք է հասնեյին նոր հասարակության, Ուէնը կարծում էր, թե աշխարհը [illegible] գոյություն ունեցող չարիքի մասին, բավական է ծանոթացնել նոր կարգերի հետ, և նա հավանություն կտա, կողջունի այդ փոփոխումը, և գործը գլուխ կգա»: Դրա համար էլ նա առաջարկում էր միայն պրոպագանդա մղել և մանավանդ համոզել ունևորների միջոցով: Այդ նպատակով նա Ամերիկայում կազմակերպեց կոմունիստական համայնք: Այդ համայնքը՝ մի փոքրիկ կղզի կապիտալիստական աշխարհում, վոչնչացավ կարճատև գոյությունից հետո:

## ՇԱՐԼ ՖՈՒՐՅԵՆ ՅԵՎ ՆՐԱ ՈՒՍՄՈՒՆՔԸ

Կապիտալիզմի անման պատկերը Ֆրանսիայում նույնքան անհրապույր էր, վորքան և Անգլիայում: Փոքրաթիվ մարդկանց հարստությունների աճումը, մասսաների աղքատությունը, աշխատանքի սոսկալի պայմանները—այդ ամենը հարկադրում էին ֆրանսիական մտածողներին ստեղծելու հասարակությունը վերակազմելու նախագծեր: Այսպիսի նախագծերից մեկի հեղինակը Շարլ Ֆուրյեն էր (1772—1837 թ.):

Նա ուշադրություն դարձրեց մարդկանց շահերի այն հակասությունների վրա, վորոնք մարդկանց ընդհանուր պայքարի մեջ էյին պահում իրար հետ: Բացի այդ, նրան զարմացնում էր և այն, վոր աշխատանքը մարդկանց մեծամասնության բաժինն է և ծանր, տաղտկության, մարդկանց համար վնասակար ու միտքը բթացնող գործ է: Նա յենթադրում էր, վոր այդ ամենը կապիտալիստական հասարակության վատ կազմակերպվածության հետևանքն է: Դրա համար էլ այդ հասարակության մեջ ապրող մարդիկ վոչ մի հնարավորություն չունեն բավարարելու

իրենց ցանկությունները, ձգտումները, հանդես բերելու իրենց ընդունակությունները: Այս պատճառով էլ մարդկանց շահերը բախվում են իրար և շարունակ կռիվ, ղալմաղալ է լինում նրանց մեջ:

«Յես հայտաբերում եմ,—ասում է Ֆուրյեն,— վոր ներկա պայմաններում աշխատանքը հակասում է բնության օրենքներին: Նա ատելի յե ազատ ժողովուրդներին և նրանք միայն այն ժամանակ հաճույքով կնվիրվեն աշխատանքին, յերբ այդ աշխատանքը համապատասխանի նրանց ձգտումներին»:

Յեթե հասարակությունն այլ կերպ կառուցված լիներ, մարդկանց ամեն տեսակ աշխատանքն ու գործունեությունը հաճույք կլիներ նրանց համար և բավականություն կպատճառեր նրանց: Այն ժամանակ մարդիկ յերևան կբերեյին իրենց ընդունակություններն ու ձգտումները, իսկ շահերի հակասությունները բոլորովին կչքանային:

Դրա համար հասարակությունը պետք է վերակառուցել: Պետք է ստեղծել մարդկանց միություններ, յուրաքանչյուրում 2000 հոգի: Այդ միություններում, կամ ֆալանգներում, ինչպես Ֆուրյեն է անվանում, նրանց աշխատանքը պիտի կազմակերպված լինի համայնական աշխատանքի սկզբունքով: Գյուղատնտեսությունը պիտի միացած լինի արդյունաբերության հետ: Բոլոր աշխատողները պիտի բաժանված լինեն մանր խմբակների և մարդիկ որվա ընթացքում մի խմբակից մյուսն անցնելով պիտի ազատվեն աշխատանքի միապաղաղության ձանձրույթից: Աշխատանքի մրցությունը կփոխարինի այժմյան կռիվներին, իրար դեմ մղվող պայքարին:

Ֆալանգի աշխատանքն ու ամբողջ կյանքը հրաշալի պայմաններում է լինելու: Ֆալանգը պիտի ունենա մի գեղեցիկ ու հոյակապ պալատ, վորի մեջ պիտի լինեն նաև դպրոցներ, ակումբներ, գրադարաններ, ժամանցի դահլիճներ:

Յերեխաները փոքր հասակից պիտի մասնակցեն ընդհանուր աշխատանքին: Նրանք պիտի կատարեն շատ կարևոր և նույնիսկ վտանգավոր աշխատանքները, վորոնք, սակայն, լիովին պիտի համապատասխանեն նրանց ձգտումներին ու տարիքին: Այս աշխատանքները կատարելով՝ յերեխաները պիտի սովորեն և դաստիարակվեն:

Ֆալանգները—ապագա հասարակության հիմքը— կազմակերպելու համար Ֆուրյեն ուզում եր դիմել հարուստ և իշխանավոր մարդկանց: Կոմանդիտական հասարակության նախագիծ կազմելով՝ Ֆուրյեն ուզում եր հարուստներին էլ մասնակից անել իր նախագծերին և վորոշ օ-



գուտ եր խոստանում այն կապիտալների համար, վոր նրանք պիտի տային ֆալանգներ կազմակերպելու համար: Նա չեր մոռանում նաև գիտնականներին: Դրա համար էլ նա ուզում եր, վոր ֆալանգում արտադրված ամբողջ մթերքը բաշխվի այսպես—5/12-ը աշխատավորներին, 4/12 հարուստներին և 3/12-ը տաղանդավոր և գյուտարար մարդկանց:

Ֆուրյեն չափազանց մանրամասնորեն նկարագրում է ապագա հասարակության կառուցվածքը, նույնիսկ նրանց պաշարի չափը, որվա նիստ ու կացը, կերակուրների ցուցակը և այլն:

## ՖՈՒՐՅԵՅԻ ՅԵՎ ՈՈՒԵՆԻ ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐԻ ԱՐԺԵՔԸ. ՈՒՏՈՊԻԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻԶՄ

Բոլոր այդ ուսմունքները, վորոնց մասին մենք խոսեցինք, ստեղծվել են աշխատավորների գլխին հասած այն թշվառությունների և դըժբախտությունների ազդեցության տակ, վորոնք առաջ եյին յեկել կապիտալիզմի զարգացման հետևանքով: Այս ուսմունքներն առաջին հերթին դեպի աշխատավորները տածած համակրանքի ու ցավակցության հետևանք եյին: Սակայն նրանք իրենց այս նախագծերի իրականացումը չեյին կապում աշխատավորների ինքնագործունեության հետ: Այս առաջ եր գալիս նրանից, վոր այն ժամանակի բանվորներն անկազմակերպ եյին, իրենց շահերի համար լավ չեյին պայքարում և ավելի շատ ներշնչում եյին կարեկցություն և համակրանք, քան հասարակական համոզմունք, թե հենց պրոլետարիատն է ստեղծելու նոր հասարակակարգ: Այն ժամանակի սոցիալիստները չեյին կարող ապացուցել կոմունիզմի անխուսափելիությունը և հույսերը դրել եյին տիրող դասակարգերի առանձին ներկայացուցիչների մեծահոգության և բարերարության վրա: Դրա համար էլ Ոուենն իր նախագծերով դիմում եր կառավարությանը, իսկ Ֆուրյեն յերկար տարիներ մի կամրջի մոտ ամեն օր սպասում եր, թե ահա մի հարուստ կմոտենա նրան և իր կապիտալները կառաջարկի ֆալանգներ կազմելու համար:

Հավատ չունենալով աշխատավորների ակտիվությանը, այն ժամանակի սոցիալիստներն իրենց նախագծերի իրագործումը չեյին կապում հեղափոխական շարժման և բանվորների պայքարի զարգացման հետ: Նրանք չեն ուզում հեղափոխական ճանապարհով վերակառուցել հասարակությունը, այլ մտածում են գոյություն ունեցող հասարակության մեջ կամաց-կամաց ստեղծել իրենց կազմակերպությունները—

Օուենի համայնքները կամ Ֆուրյեի ֆալանգները: Այսպիսով նրանք մտածում էին օրինակով ցույց տալ նոր հասարակակարգի առավելությունները և բոլորին իրենց կողմը քաշել: Վերջապես, ինչպես տեսանք, նրանք վոչ մի նշանակություն չէին տալիս հասարակության դասակարգերի պայքարին և վոչ էլ պրոլետարիատի ու բուրժուազիայի միջև մղվող պայքարին: Նրանք ուզում էին նոր հասարակություն ստեղծել՝ հաշվի չառնելով դասակարգային պայքարը: Նրանք իրենց յերևակայության ուժով ստեղծում էին ապագա կոմունիստական հասարակության թեպետ շատ գրավիչ, բայց միանգամայն ֆանտաստիկ, յերևակայական պատկերները:



ՖՈՒՐՅԵ

Այս ձևի սոցիալիստական ուսմունքը կոչվում է ուտոպիական:

Նրանց գլխավոր արժանիքը նրանումն է, վոր պատկերացրին կապիտալիստական հասարակության բոլոր հոռի կողմերը և ցույց տվին, թե այդ հոռի կողմերը վոչնչացնելու համար անհրաժեշտ է վերափոխել հասարակությունը կոմունիստական հիմունքներով:

## ՀԱՐՑԵՐ ՅԵՎ ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ի՞նչ պայմաններում ծնունդ առավ Բաբեֆի ուսմունքը:
2. Ինչպես էր պատկերացնում Բաբեֆը ապագա հասարակակարգը:
3. Ի՞նչ միջոցներով էր Բաբեֆը ձգտում հասնել դրած նպատակներին:
4. Վորո՞նք էին Բաբեֆիզմի անհաջողության պատճառները:
5. Ի՞նչ էր Շարլ Ֆուրյեի ուսմունքի բովանդակությունը և վորո՞նք են այն միջոցները, վորոնց օգնությամբ նա հույս ուներ կենսագործել այդ ուսմունքը:

Զեկուցում պատրաստեցեք «19-րդ դարի սկզբում հեղափոխական ուսմունքների ծագման պատճառների մասին և նրանց բնորոշ գծերը» նյութի մասին:



## ՀԱՐՑԵՐ ՅԵՎ ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ինչո՞ւմն է Ռոբերտ Օուենի ուսմունքի էությունը և ինչ միջոցներով էր ուզում նա իրագործել իր հայացքները:
2. Ի՞նչ էր Շարլ Ֆուրյեի ուսմունքի բովանդակությունը և ինչ միջոցներով նա հույս ուներ իրագործել կյանքի մեջ:

Կազմեցեք զեկուցում հետևյալ թեմայով. «Սոցիալիստական ուսմունքների առաջացման պատճառները 19-րդ դ. սկզբում և նրանց առանձնահատուկ գծերը»:

### ԳԻՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻԶՄ: ՄԱՐՔՍ ՅԵՎ ԷՆԳԵԼՍ

Ուտոպիստ-սոցիալիստների ուսմունքն ուներ նաև այն նշանակությունը, վոր հեշտացրեց Մարքսի (1818—1883 թ. թ.)՝ գիտական սոցիալիզմի հիմնադրի աշխատանքը: Մարքսը Գերմանիայի Ռեյնի շրջանից էր, այսինքն՝ տնտեսական տեսակետից ամենազարգացած վայրից: Այստեղ նա մատաղ հասակից կարողացավ դիտել արդյունաբերական գործունեյությունն ու խոշոր արդյունաբերական քաղաքների կյանքը, բանվորների շահագործումն ու նրանց կարիքները:

Գիմնազիան ավարտելուց հետո Մարքսը մտավ Բեռլինի համալսարանը: Այստեղ նա գործնական մասնակցություն էր ունենում ուսանողական խմբակների աշխատանքներին: Հենց այդ ժամանակից նա իր ընկերների մեջ աչքի յեր ընկնում իր ընդունակություններով, գաղափարների վճռականությամբ, փոթորկոտ ու անսասան բնավորությամբ: «Յես վոչ մի կերպ չեմ կարող հանգիստ կերպով անել այն, ինչ համակել է ինձ,—գրում է նա իր մասին,— չեմ կարող խաղաղ ու հանգիստ նստել, յես անընդհատ փոթորկում եմ, յես կուզենայի ամեն ինչի հասնել»:

Նրա բացառիկ գիտությունն ու ընդունակությունները նրան կարող էին դարձնել բուրժուական գիտնական: Սակայն Մարքսն իր համար ընտրեց ուրիշ ճանապարհ—բանվոր դասակարգի գործի համար պայքարելու, հեղափոխականի ճանապարհը:

Համալսարանն ավարտելուց հետո Մարքսը, դեռևս շատ յերիտասարդ հասակում, դարձավ առաջադեմ բուրժուազիայի թերթի խմբագիր: Այդ թերթը համարձակորեն կռիվ էր մղում Պրուսիայի ազնվական, միապետական կառավարության դեմ: Այդ պատճառով էլ թերթը շուտով փակվեց և Մարքսն ստիպված յեղավ գնալ արտասահման:

Այստեղ Մարքսը ծանոթացավ ավելի զարգացած յերկրների տնտեսական կյանքին, ուսումնասիրեց Ֆրանսիական սոցիալիստական աշխատանքները, քաղաքատնտեսությունը և դիտում եր Ֆրանսիայի հեղափոխական շարժման զարգացումը: Այս ամենը բերեց նրան վորոշ տեսակետի, թե ինչ ճանապարհով է ընթանում մարդկային հասարակության զարգացումը, և այն համոզման, թե այդ զարգացումը պետք է հանգի կոմունիզմին: Այստեղ նա հանդիպեց Ենգելսին (1820—1895), վոր նույնպես Ռեյնի շրջանից եր, բայց իր յերիտասարդությունն անց եր կացրել Անգլիայում: Կյանքի ազդեցության տակ տնտեսապես խիստ զարգացած յերկրում, վոր ունեցել եր հեղափոխական բանվորական շարժումներ (չարտիզմը), Ենգելսն ինքնուրույնորեն հանգեց այն հայացքներին, ինչ վոր Մարքսը:



Ֆրիդրիխ Ենգելս.



Կարլ Մարքս.

Յերբ 1844 թվին նրանք հանդիպեցին իրար Պարիզում, պարզվեց, վոր այդ հայացքները շատ նման են, և այդ մոմենտից սկսվում է նրանց բարեկամությունն ու միասին գործունեությունը: Գիտական սոցիալիզմի հիմնադիրների այդ կապը շարունակվում է մինչև նրանց կյանքի վերջը:



Մարքսն ու Ենգելսը ջերմ մասնակցություն են ցույց տալիս բանվորական կազմակերպությունների մեջ և դառնում են կենտրոն այն աշխատանքների, վոր կատարվում եյին Գերմանիայի կառավարության հալածանքներից փախած հեղափոխական արհեստավորների և բանվորների շրջանում: Մարքսն ու Ենգելսը մեծ ջանք են թափում, վորպեսզի վերացնեն կապ հաստատել եմիգրանտական ցաքուցրիվ խմբակների միջև:

Շուտով այդ ցաքուցրիվ խմբերը միանում են և կազմում են 1847 թվին «Կոմմունիստների միությունը»: Այդ միության կանոնադրությունը վորոշում եր նրա նպատակը՝ «բուրժուազիայի տապալումը, պրոլետարիատի գերիշխանությունը և մասնավոր սեփականությունից զերծ նոր հասարակության հիմնավորումը»: Այդ միությունը կարողացավ լույս ընծայել կոմմունիստական ամսագրի մի համար, վորի գլխին գրված եր՝ «Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք»:

Այդ նոր միության համար վորպես ծրագիր Մարքսը Ենգելսի ընկերակցությամբ գրեց «Կոմունիստական մանիֆեստը», վոր լույս տեսավ 1848 թվի հեղափոխության նախօրեյին:

Յերբ Գերմանիայում, Ֆրանսիայի 1848 թ. դեպքերի ազդեցության տակ, բռնկվեց հեղափոխությունը, Մարքսը և միության մնացած անդամները վերադարձան Գերմանիա: Նրանք ցրվեցին յերկրի բոլոր կողմերը և սկսեցին հեղափոխական աշխատանք: Իսկ Մարքսն սկսեց խմբագրել իր հայրենի Ռեյնի շրջանում մի լրագիր, վոր խոշոր հեղափոխական նշանակություն ունեցավ:

«Նոր Ռեյնի լրագիրը»—այսպես եր նրա անունը— միակ թերթն եր, վոր ճշտորեն ցույց եր տալիս հեղափոխական դեպքերի ընթացքը և անշեղ պաշտպանում հեղափոխական գործը: Յերբ հեղափոխությունը ջախջախվեց, Մարքսը փախավ Լոնդոն և այնտեղ ապրեց մինչև իր մահը: Այստեղ նա հսկայական աշխատանք կատարեց. ուսումնասիրեց զանազան նյութեր արդյունաբերության դրության, բանվոր դասակարգի մասին և այդ բոլորի հիման վրա գրեց իր հռչակավոր «Կապիտալ» աշխատությունը, վոր միանգամայն անգնահատելի և աննախընթաց նշանակություն ունեցավ: Տասնյակ տարիներ աշխատելով նրա վրա, նա կարողացավ ցույց տալ, թե կապիտալիստական հասարակության գոյությունը հիմնված է միայն բանվորների շահագործության վրա:

Նա ցույց տվեց նաև, վոր կապիտալիստական կարգերը պիտի կոր-

ծանի պրոլետարիատը, որը պիտի ստեղծի նոր հասարակակարգ, որի մեջ ոչ մի շահագործում չի լինելու:

Լոնդոնում Մարքսը խիստ կարիք մեջ էր: Իր յերեխաներից մեկի մահվան առթիվ նա Ենգելսին գրում է, որ յերեխան «կարիքի զոհ դարձավ»: Յերբեմն Մարքսը հագուստ չեր ունենում, որ փողոց դուրս գա, հաճախ նույնիսկ չեր կարողանում փոստի մարկա գնել, որ նամակ ուղարկի: Չնայած անընդհատ աշխատում էր իր հիմնական գործի—«Կապիտալ»-ի վրա, սակայն հաճախ ստիպված էր լինում ահագին աշխատանք թափել, թերթերի համար հոդվածներ գրել, որպեսզի ապրուստի միջոցներ վաստակի: Մարքսի ցանկությունը միայն այն էր, որ կարողանա ամբողջապես նվիրվել իր հիմնական աշխատանքին: «Ինչպես յերևում է, այդ ինձ չի հաջողվելու. թերթերի համար շարունակ թուղթ մրոտելը ձանձրացրել է ինձ, ահագին ժամանակ է խլում ինձանից և ցրում է ուշադրությունս...»—գրում է նա Ենգելսին:

«Մարքսը,—գրում է նրա մասին ժամանակակիցներից մեկը— յեռանդից, կամքից ու հաստատուն համոզմունքներից կազմված մարդ է»: Դրա համար էլ ոչ տանջող կարիքը, ոչ աշխատավարձի համար կատարվող ուժերի վատնումը չեյին արգելում Մարքսին իր հիմնական գործով զբաղվելու: Իր նամակներից մեկում նա ասում է. «Յես համառորեն պիտի հասնեմ իմ նպատակին և չեմ թույլ տա, որ բուրժուական հասարակությունն ինձ փող վաստակող մեքենա դարձնի»:

Մարքսի ընկերն ու աշակերտը Վիլհելմ Լիբկնեխտն ասում է, որ «Կապիտալ»-ը Մարքսից քառասուն տարվա աշխատանք խլեց, այնպիսի աշխատանք, որին միայն Մարքսն էր ընդունակ: Մարքսի մյուս աշակերտները՝ Լաֆարգը գրում է. «Աշխատանքը Մարքսի մոլությունն էր, գործով նա այնպես էր տարվում, որ հաճախ ուտելն էլ էր մոռանում: Հաճախ ստիպված էյինք լինում մի քանի անգամ նրան ճաշի կանչել և յերբ՝ վերջապես, գալիս էր, հազիվ մի քանի պատառ ուտելուց հետո նորից շտապում էր իր սենյակը»:

Մարքսն իր ժամանակի ամենազարգացած ու ամենագիտնական մարդն էր: Չնայած դրան, իր ամբողջ կյանքում նա շարունակում էր լրացնել ու ավելացնել իր գիտությունը: Հիսուն տարեկանից ավելի հասակում, Ռուսաստանին վերաբերող նյութերին ծանոթանալու համար, նա սկսեց սովորել ռուսաց լեզուն և վեց ամսում արդեն տիրապետում էր այդ լեզվին:





Մարքսին շատ է օգնել նրա բարեկամ Ենգելսը: Նա նրան օգնել է դրամով, բացի այդ, քանի դեռ Մարքսը բավարար չափով չեր տիրապետում անգլերենին, թարգմանում էր նրա հոդվածները: Ենգելսը սիրով ամեն մի զոհաբերություն անում էր, որպեսզի իր բարեկամին հնարավորություն տա աշխատելու իր հիմնական աշխատության վրա: «Կապիտալ»-ի I հատորը վերջանալուց հետո Մարքսը գրում է Ենգելսին. «Առանց քեզ յես յերբեք չեյի կարող վերջացնել իմ աշխատությունը»: Մարքսի մահվանից հետո Ենգելսն իր վրա ահագին աշխատանք վերցրեց և կարգի բերեց Մարքսի թերի մնացած աշխատանքները: Ենգելսի անսովոր ջանադրուն աշխատանքի շնորհիվ էր միայն, որ լույս տեսան «Կապիտալ»-ի II և III հատորները:

Այս հսկայական գիտական աշխատանքի հետ միասին Մարքսը շարունակում էր մասնակցել հեղափոխական շարժմանը և 60-ական թվերին նա հանդես յեկավ որպես բանվորների միջազգային ընկերության ղեկավար:

Հետագայում էլ նա շարունակում էր ղեկավարել աճող բանվորական շարժումը: Այսպես, յերբ 1879 թվին Ֆրանսիայում ստեղծվեց բանվորական կուսակցություն, Մարքսն էր, որ խմբագրեց այդ կուսակցության ծրագիրը:

Որպես բանվոր դասակարգի անհաղթ մարտիկ, Մարքսն իր ամբողջ կյանքում իր հակառակորդների դաժան հարձակումներին էր ենթարկվում: «Նրան հալածում էյին,—գրում է նրա բարեկամներից մեկը,— արտաքսեցին Գերմանիայից, վարկաբեկում ու բամբասում էյին նրան, իսկ հետո դավադրություն կազմեցին լռության մատնել իրեն ու իր աշխատությունները»: Բուրժուական թերթերն ու գիտնականները քար լռություն էյին պահում Մարքսի հանճարեղ աշխատությունների նկատմամբ:

Կարիքը, որ յերբեք ձեռք չեր քաշում պրոլետարիատի մեծ ուսուցչից, այն հսկայական աշխատանքը, որ կատարում էր, նաև կյանքի ծանր պայմանները գերեզման իջեցրին նրան: 1883 թ. մարտի 14-ին վախճանվեց Մարքսը:

Ահա թե ինչ ասաց Ենգելսը իր բարեկամի շիրիմի վրա. «Մարտի 14-ին, կեսօրվա ժամը յերեք քառորդին դադարեց մտածել ժամանակակից ամենամեծ մտածողը: Մենք չենք կարող չափել, թե ինչքան նրա

ինչ են կորցրել ամերիկյան ու եվրոպական մարտնչող պրոլետարիատը և պատմական գիտությունը: Շատ շուտով կզգացվի այն պակասը, որ ստեղծվել է այդ հսկայի մահով: Սակայն ամենից առաջ Մարքսը հեղափոխական էր: Նրա կյանքի իսկական կոչումն էր՝ աջակցել կապիտալիստական հասարակության տապալմանը և ժամանակակից պրոլետարիատի ազատագրությանը: Նա մեռավ վայելելով ամբողջ Եվրոպայում ու Ամերիկայում ցրված միլիոնավոր հեղափոխական կողմնակիցների սերը, հարգանքն ու վստահությունը: Նրա անունը կապրի դարերով, որի հետ կապրի և նրա աշխատանքը»:

Էնգելսն իր բարեկամից հետո ապրեց 12 տարի: Մինչև իր մահը նա շարունակում էր Մարքսի գործը՝ ղեկավարելով շարունակ աճող ու ծավալվող բանվորական շարժումը: Նա ահագին գրագրություն է ունեցել բանվորական շարժման բոլոր ղեկավարների և բոլոր երկրների բանվորական կուսակցությունների առաջնորդների հետ: Իր ցուցմունքներով ու խորհուրդներով Էնգելսն աշխատում էր այդ կուսակցությունների գործունեությունը հեղափոխական հունի մեջ դնել:

## «ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՄԱՆԻՖԵՍՏԸ»

Մարքսի և Էնգելսի հայացքներն առաջին անգամ արտահայտվեցին «Կոմունիստական մանիֆեստում»:

Այնտեղ ամենից առաջ ասված է, որ մարդկության ամբողջ պատմությունը դասակարգային կռիվ է եղել: «Ճնշողներն ու ճնշվածները կռիվ են մղել, որ ամեն անգամ վերջացել է հասարակության հեղափոխական վերակազմությամբ»: Նույն բանն է նաև այժմյան դասակարգային պայքարը՝ պրոլետարիատի և բուրժուազիայի պայքարը:

Բուրժուազիան ներկայումս հետադիմական է: Իր իշխանությունը կորցնելու վախից՝ նա քաղաքականապես և տնտեսապես բանվոր դասակարգի դատաստանն անում է, սակայն անցյալում նա խոշոր հեղափոխական դեր է կատարել: Նա մտցրել է մեքենաներ, շինել է գործարաններ, ստեղծել է բազմամարդ քաղաքներ, բանեցրել է շոգենավեր, անցկացրել է երկաթուղիներ: Շնորհիվ այս ամենի՝ հնարավոր է դարձել արտադրել մեծաքանակ մթերքներ և ցրել աշխարհի բոլոր կողմերը:

Ամենահետամնաց ժողովուրդներն անգամ առևտրական հարաբերությունների մեջ են այժմ գտնվում:

Բուրժուազիան ներկայումս կամ հետադիմական է, կամ թե պրո-



լետարիատի սարսափից ձգտում է համաձայնության գալ ռեակցիայի հետ, սակայն անցյալում նա խոշոր հեղափոխական դեր է կատարել: Նա մտցրել է մեքենաներ, շինել է գործարաններ, ստեղծել է բազմամարդ քաղաքներ, շոգենավեր է բանեցրել, երկաթուղիներ անցկացրել: Շնորհիվ այդ բանի հնարավոր է դարձել արտադրել մեծաքանակ մթերքներ և ցրել աշխարհի բոլոր կողմերը: Ամենահետամնաց՝ ժողովուրդներն անգամ առևտրական հարաբերությունների մեջ են այժմ:

Սակայն արդյունաբերական և առևտրական զարգացումն այնպիսի ափերի յե հասել, որ բուրժուազիան այժմ չի կարող դրության տերը լինել: Արդյունաբերական միքանի տարվա վերելքին սովորաբար հետևում են ճգնաժամեր, երբ փակվում են գործարանները, դուրս են շպրտվում բանվորները, ապրանքները մնում են պահեստներում չվաճառված: Այս բոլորն առաջ են գալիս կապիտալիստական տնտեսության անկազմակերպությունից և անկարգավորությունից, մի բան, որ ցույց է տալիս, թե անհրաժեշտ է փոխարինել նրան կազմակերպված սոցիալիստական տնտեսությամբ:

## ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԸ

Ինչպես բուրժուազիան երևան եկավ այն ժամանակ, երբ իշխանությունը պատկանում էր ազնվական-կալվածատերերին, և հետո ինքը տապալեց նրանց, ճիշտ այդպես էլ բուրժուազիայի տիրապետության օրով աճում ու զարգանում է մի դասակարգ, որ հանդիսանալու յե նրա գերեզմանափորը և նոր հասարակության ստեղծողը: Այդ դասակարգը պրոլետարիատն է:

Պրոլետարիատն անընդհատ շատանում է, նրա շարքերը լցվում են քայքայված գյուղացիներ ու արհեստավորներ, որոնք զոհ են դառնում խոշոր արդյունաբերության մրցակցությանը...

Պրոլետարիատի կռիվը բուրժուազիայի դեմ անցնում է միքանի աստիճաններով. «նախ բանվորները պայքարում են մեկ-մեկ, ապա համախմբվում են միևնույն գործարանի, ապա արդյունաբերության միևնույն ճյուղի և վորոշ վայրի բանվորները»: Սակայն արդյունաբերության զարգացման հետ աճում է պրոլետարիատը և ավելի ու ավելի համախմբվում իրեն շահերի գիտակցությամբ. այս դեպքում ընդհարումները բանվորների և բուրժուազիայի միջև «ավելի ու ավելի ստանում են երկու դասակարգերի կռվի բնույթ»:

Բանվորներն այժմ գործադուլներ են անում և ստեղծում են իրենց կազմակերպությունները: Թեև հազվադյուտ, բայց հաղթանակը մնում է նրանց կողմը, և պայքարն ավելի ու ավելի համախմբում է բանվորներին: Վերջապես, բանվոր դասակարգը համախմբվում է քաղաքական կուսակցության շուրջը, վորն ավելի ու ավելի ուժեղանում է: Պրոլետարիատի կռիվը վաղ թե ուշ վերածվում է բացարձակ հեղափոխության, և պրոլետարիատը բուրժուազիայի բռնի տապալմամբ իր գերիշխանության հիմքն է դնում:

### ԿՈՄՈՒՆԻՍՏՆԵՐԸ

Այնուհետև մանիֆեստն անցնում է կոմունիստների և նրանց գործունեության բնութագրին, այսինքն պրոլետարիատի կուսակցության բնութագրին: Կոմունիստները բանվոր դասակարգի առաջավոր մասն են: Նրանք պարզ գիտակցում են այն, ինչ վոր բանվորական մասսաները մութ կերպով հասկանում են, զգում են: Նրանց մոտավոր նպատակն է՝ կազմակերպել պրոլետարիատը, տապալել բուրժուազիայի տիրապետությունը և գրավել քաղաքական իշխանությունը: Նրանք ուտոպիստների նման չեն հնարում հասարակությունը վերակազմելու միջոցներ: Նրանց հայացքներն արտահայտություն են այն իրական պայմանների, վորոնց մեջ ընթանում է այժմ դասակարգերի պայքարը: Գրավելով քաղաքական իշխանությունը, պրոլետարիատը հետզհետե խլելու յե բուրժուազիայից նրա կապիտալները և պրոլետարական պետության ձեռքն է համախմբելու աշխատանքի բոլոր գործիքները:

## ՀԱՐՑԵՐ ՅԵՎ ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ի՞նչ գործունեություն է ունեցել Կ. Մարքսը 1848 թ. հեղափոխությունից առաջ:

2. Ի՞նչ գործունեություն է ունեցել նա հեղափոխությունից հետո:

3. Կ. Մարքսի ուսմունքի մեջ ի՞նչ տեղ է բռնում դասակարգերի պայքարը:

4. Վո՞ր դասակարգերի մեջ է տեղի ունենում պայքարը կապիտալիստական հասարակության մեջ:

5. Ինչո՞ւ Մարքսը պրոլետարիատին համարում է բուրժուազիայի գերեզմանափորը:



6. Ի՞նչպես է պրոլետարիատը հասնում բուրժուազիայի տապալման և ի՞նչպես է նա իրագործում այդ տապալումը:

7. Ինչո՞ւ կոմունիստները պրոլետարիատի առաջավոր մասն են:

I. Այս ձեռնարկի նյութերի հիման վրա կազմեցեք զեկուցում. «Մարքսի և ուտոպիստների հայացքը կոմունիստական հասարակության անցնելու խնդրի մասին»։

II. Խմբերի բաժանվեցեք և ձեզ մատչելի թերթեր վերցնելով, հավաքեցեք նյութեր այն մասին, թե ինչպես է ընթանում դասակարգային պայքարը ժամանակակից կապիտալիստական պետություններում:

III. Կազմակերպեցեք կոնֆերենցիա այս թեմայով. «Դասակարգային կռվի ձևերը ժամանակակից կապիտալիստական հասարակության մեջ»:

Պատրաստեցեք ինքնուրույնորեն հարցեր այդ կոնֆերենցիայի համար:

Ինքնուրույն կերպով հարցեր պատրաստեցեք այդ կոնֆերենցիայի համար։ Առաջադրությունները մշակելիս Ռուգերի «Սորկատերական հասարակությունից դեպի պրոլետարական հեղափոխություն» գրքից կարդացեք Մարքսի մասին յեղած լրացուցիչ նյութը (267–272 յեր.), վոր բացատրում է Կոմունիստական մանիֆեստի բովանդակությունը (276—279 յեր.)։

IV. Ոգտագործելով լրագրական նյութերը զեկուցում պատրաստեցեք «Կոմունիստական կուսակցությունները ինչպես են ղեկավարում բանվորների պայքարը կապիտալի յերկրներում» նյութի մասին: Բրիգադները զեկուցումներ են պատրաստում ըստ առանձին յերկրների:

## § 5. I ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԸ

### ՅԵՎՐՈՊԱՅԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 60-ԱԿԱՆ Թ.

Մենք հիշում ենք, վոր չարտիստական շարժման անկումը հետևանք եր արդյունաբերական այն վերելքի, վոր տեղի ունեցավ 1848 թ. ճըգնաժամից հետո: Իսկապես, հետագա յերկու տասնամյակներում կապիտալիզմն իր զարգացմամբ շատ առաջ գնաց: Վո՛չ միայն Անգլիայում, ուր խոշոր արդյունաբերությունը վերջնականապես հաղթեց մանրին, այլ և ուրիշ յերկրներում կապիտալիզմը նկատելի հաջողություններ եր ունենում: Նույնիսկ այնպիսի յերկրներ, վորոնք առաջ անծանոթ եյին խոշոր արդյունաբերական զարգացմանը, այժմ սկսեցին գնալ այն ու- գծով, ինչ վոր վաղուց Անգլիան սկսել եր: Այդպիսի յերկրներից եյին՝ Բելգիան և Շվեյցարիան:

Ահա մի քանի թվեր, որոնք բնութագրում են Եվրոպայի տնտեսական զարգացումը: Եվրոպայի ապրանքաշրջանառությունը 1800 թվից մինչև 1850 թ. ավելանում է 2 և կես անգամ: Անգլիայում քարածխի արդյունաբերությունը 1800 թվին 10 միլիոն տոնն էր, իսկ 1864 թ. հասել էր 92 միլիոն տոննի: Չուգունի հալքը 1.390.000 տոննից (1854 թ.) հասավ 4.767.000 տոննի 1864 թ.: Երկաթուղիների յերկարությունը 1853 թ. 854 մղոն էր, իսկ 1860 թվին հասավ 12.700 մղոնի:

Տեխնիկայի բնագավառում կատարվող նորանոր հաջողությունները նպաստում են կապիտալիստական արդյունաբերության զարգացմանը: Հանքամշակման բնագավառի փայլուն գյուտերը (Բեսեմերի և Սիմենս-Մարտենի գյուտը) մետաղագործության հսկայական զարգացման հնարավորություններ են ստեղծում: Զարգանում է քիմիական արդյունաբերությունը նորանոր բնագավառներով. օրինակ՝ կալիի, անիլինի և նավթի արդյունաբերությունը: Քիմիան պատվավոր տեղ է նվաճում գյուղատնտեսության մեջ: Երկրագործության մեջ աճում է մեքենաների կիրառումը: Հնարում են հնձող մեքենան (1858 թ.): Արտասովոր կերպով զարգանում են հաղորդակցության միջոցները: Ընդարձակվում է յերկաթուղային ցանցը: Առագաստանավերը հետզհետե տեղի յեն տալիս արագընթաց շոգենավերին: Հետզհետե ավելի ու ավելի յե ծավալվում հեռագրի գործածությունը: 1866 թ. օվկիանոսի միջից կաբել անցկացնելով՝ հեռագրով միացնում են Ամերիկան Եվրոպայի հետ: 60-ական թվականների սկզբին հնարվում է հեռախոսը:

## ՀԱՄՆ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Միայն Եվրոպայում չէ, որ կապիտալիզմը աճեց ու զարգացավ: Օվկիանոսից դեն էլ Հյուսիսային Ամերիկայում մի ահագին կապիտալիստական պետություն ստեղծվեց: Այդ պետությունը Միացյալ Նահանգներն են: Նա այդպես է կոչվում, որովհետև առաջացել է նախորոք գոյություն ունեցող առանձին գավառներից, պետություններից— շտատներից, որոնք անգլիական գաղութներ էին, թվով 13:

Ֆրանսիական հեղափոխությունից ոչ այնքան առաջ այս գաղութները ապստամբեցին Անգլիայի դեմ և սկսեցին կռվել: Անկախություն ձեռք բերելով՝ մի պետություն կազմեցին: Բայց և այնպես յուրաքանչյուր շտատ իր առանձին վարչաձևը պահպանեց: Դրանից անկախ կար և ընդհանուր կառավարություն: Շտատները կազմում էին հասարա-



կապետություն իրենց նախագահով և յերկու պալատով: Պալատը, որ սենատ էր կոչվում, բաղկացած էր առանձին շտատների յերկուական ներկայացուցիչներից: Առանձին շտատները պատգամավորական պալատն են ուղարկում իրենց պատգամավորներին՝ ըստ ազգաբնակության թվի: Ներկայում շտատների թիվը ոչ թե 13 է, այլ 48: Այն ժամանակ, յերբ կազմվեց Միացյալ Նահանգների անկախ հանրապետությունը, նրա տերիտորիան սակավաբնակ էր և տնտեսապես հետամնաց:

Ազգաբնակությունը կուտակված էր ծովի մոտ և հողային ահագին տարածությունների վրա ապրում էին թափառաշրջիկ վորսորդական հնդկի ցեղերը: Բայց կամաց-կամաց ազգաբնակությունը շատացավ: Հյուսիսային Ամերիկան մի այնպիսի յերկիր դարձավ, ուր Եվրոպայից հարյուր հազարավոր մարդիկ էին գաղթում: Ով վատ էր ապրում Եվրոպայում, Ամերիկա յեր գնում՝ ավելի բախտավոր ու ազատ կյանք փնտռելու: Այստեղ քաղաքները աճեցին: Արդյունաբերությունն սկսեց զարգանալ: Սկսվեցին յերկաթուղիներ շինել և ամերիկական գետերի վրա մեծ շոգենավեր յերևացին:

## ՀԱՄՆ-Ի ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

1840—1860 թվականները միայն Գերմանիայից Ամերիկա յե գաղթել 2 միլիոն մարդ, իսկ 10 տարվա ընթացքում (1850-1860) փոքրիկ Իռլանդիայից Ամերիկա յե գաղթել 740.000 մարդ: Յերբ Միացյալ Նահանգների անկախությունից անմիջապես հետ՝ այստեղ 3900 հազար մարդ կար: Նրանց թիվը 1820 թ. արդեն 9600 հազար. իսկ 1860 թ. 31400 հազար: Քաղաքները աճում են անսովոր արագությամբ: Բավական է ասել, որ 1790 թ. Միացյալ Նահանգներում քաղաք չկար, որ 50.000-ից ավելի բնակիչ ունենար. իսկ 1860 թ. պետության մայրաքաղաք Նյու-Յորքը մեկ միլիոնից ավելի բնակիչ ուներ: Ավելի յե աչքի ընկնում արդյունաբերական կենտրոն Չիկագոյի աճումը: 1840 թ. սա 4000 բնակիչ ունեցող մի գյուղ էր: Քսան տարուց հետո՝ 1860 թ. արդեն 109.000 բնակիչ ունեցող քաղաք էր:

Արդյունաբերության զարգացումը ցույց տալու համար՝ կարելի յե մատնանշել բամբակագործական արտադրության աճման վերաբերող թվերը: 1840 թ. բամբակագործական ֆաբրիկները բանեցնում էին 237,000 հակ բամբակ և օգտագործում էին 72.000 բանվորի աշխատանք: 10 տարուց հետո գործածված է յեղել 541,000 հակ, գործարաններում

նը աշխատել են 94,000 բանվոր: Կրկին 10 տարուց հետո՝ 1860 թվին գործածված հակերի թիվը հավասար ե յեղել 1,036 հազարի, իսկ բանվորների թիվը՝ 122,000-ի: Քաղաքներում, ինչպես ցույց են տալիս վերոհիշյալ թվերը, աճում ե պրոլետարիատը. սակայն միաժամանակ աճում ե և գյուղական ազգաբնակությունը: Շարժում ե սկսվում դեպի արևմուտքի սակավաբնակ գավառները: Բնակիչները, վոր առաջ սեղմված էյին ափերին, այժմ անցնում են Ալլեգանյան լեռները: Նրանք ուղևորվում դեպի սակավաբնակ վայրերը: Ձեռք են գցում ազատ հողերը և անընդհատ կռվելով հնդիկների հետ՝ ինքնուրույն մանր տնտեսություններ են կազմակերպում:

Ստեղծվում են ազգաբնակության խոշոր մասսաներ—ֆերմերներ. Վերջինները մանր գյուղական տնտեսություններ ստեղծելով՝ վաճառքի յեն հանում իրենց արտադրանքները—հացահատիկները, միս և զանազան կենսամթերքներ:

## ՀԱՐԱՎԻ ՊԼԱՆՏԱՏՈՐԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Այն, ինչ վոր վերև ասացինք, վերաբերում ե գլխավորապես այն հողամասին, ուր Միացյալ Նահանգներ են գտնվում: Նրա հարավային մասում՝ հակա Միսիսիպի գետի ներքին հոսանքի ուղղությամբ, ուր կլիման խոնավ ե և հողը պարարտ, բոլորովին այլ տնտեսական կյանք զարգացավ: Այստեղ քիչ էյին զարգացած արդյունաբերությունը և ինքնուրույն մանր գյուղական տնտեսությունները: Ֆերմերները սակավաթիվ էյին: Դրա փոխարեն այստեղ զարգացավ խոշոր կալվածատիրական տնտեսությունը, վորի գլխավոր արտադրանքը դարձավ բամբակը: Հարավային կալվածատերերի խոշոր կալվածքները՝ պլանտացիաները մշակում էյին սև ստրուկները—նեգրերը:—

Յերբ Անգլիայում զարգացավ մեքենայական ինդուստրիան, առաջին հերթին բամբակագործականը, բամբակի պահանջը սաստիկ զգալի դարձավ և բամբակագործությամբ զբաղվելն էլ խիստ ձեռնտու: Բանվորական ձեռքերի կարիք զգալով՝ հարավի կալվածատերերն սկսեցին նեգրեր բանեցնել, վոր մեծ քանակությամբ բերում էյին Աֆրիկայից. Նրանց գրավում էյին խաբելով, գնում էյին տեղական իշխաններից մանրմունր բաներով կամ արաղով. իսկ հետո Ամերիկայի շուկաներում ծախվում էյին խմբերով իբրև հոտ:

Սև ստրուկների ձեռքով աճեցրած բամբակի առևտուրը հարավային



կալվածատեր—ստրկավաճառների հարստության հիմքը և քաղաքական ուժը դարձավ: Այսպես՝ 1830 թվից սրանք սկսում են պետության մեջ գլխավոր դերը խաղալ: Այս հանգամանքը ձեռնտու չէր ինչպես հյուսիսում աճող ու զարգացող բուրժուազիային, այնպես էլ ֆերմերներին: Այս յերկուսի շահերը միանգամայն տարբեր էյին կալվածատեր- ստրկավաճառների շահերից: Կալվածատերերը՝ իբրև ստրկատերեր վախենում էյին ամեն տեսակ ազատությունից: Նրանք շարունակ վախենում էյին, թե իրանց ճնշած սևամորթ ստրուկները կարող էյին ապստամբել, ուստի այն շտատներում, ուր տարածված եր ստրկությունը, տիրում եր ճնշումների և հալածանքների դաժան ռեժիմ: Բանն այնտեղ եր հասած, վոր ստրուկներին արգելված եր անգամ գրագիտությունը: Նրանց չեր թույլատրվում մտնել այն յեկեղեցիները, ուր աղոթում էյին սպիտակները: Մի խոսքով ստրուկներին վոչ թե մարդ, այլ իր էյին համարում: Ստրուկներին ազատելու ամեն քարոզ հետապնդվում եր դաժան կերպով: Այն շտատների սահմաններում, ուր ստրկատիրություն կար, խիստ հըսկողություն եր սահմանված հարավից բոլոր յեկողների ու բերված բոլոր ապրանքների վրա: Հարավի պլանտատոր ստրկատերերը ցանկանում էյին նույնպիսի ռեժիմ հաստատել նաև շտատների հյուսիսային արդյունաբերական և ֆերմերական մասի վրա: Դրա համար ամեն կերպ աշխատում էյին իրենց ձեռքը գցել իշխանությունը:

## ՊԼԱՆՏԱՏՈՐՆԵՐԻ ՅԵՎ ԿԱՊԻՏԱԼԻՍՏՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Վորովհետև պլանտատորները բամբակը վաճառում էյին Անգլիային, ուստի հարավային շտատների կալվածատերերը պահանջում էյին, վոր անգլիական ապրանքները, առաջին հերթին գործվածքները, Ամերիկա ներմուծվեն առանց մաքսի: Դրան հակառակ հյուսիսային արդյունաբերողները, վորոնք տուժում էյին անգլիացիների մրցակցությունից, անգլիական ապրանքների ու գործվածքների վրա ուզում էյին բարձր մաքս նշանակել: Հյուսիսի արդյունաբերողները կարիք ունեյին գրագետ ու սովորած բանվորների. իսկ հարավի ստրկատերերն աշխատում էյին մասսաներին կատարյալ խավարի մեջ պահել, վորպեսզի վերջիններս չգիտակցեն իրենց դրության ծանրությունը: Այսպիսով կալվածատեր պլանտատորների ստրկային տնտեսությունը խանգարում եր կապիտալիզմի զարգացմանը և ստրկությունը վոչնչացնելու խնդիր եր դնում:

Բայց ստրկատիրությունը խանգարում էր նաև ֆերմերական տնտեսության զարգացմանը։ Կալվածատերերի մեջ կատաղի կռիվներ էին տեղի ունենում հողի համար։ Երբ ազգաբնակչությունն աճեց և շարժումը դեպի արևմուտք մեծացավ, ֆերմերների ալիքները շարժվեցին դեպի հարավ-արևմուտք և այստեղ ընդհարվեցին այս շրջանների հողերին, իրենց տեր համարող պլանտատորների հետ։ Պայքարի սրությունը բացատրվում էր նրանով, որ բամբակ կարելի էր մշակել միայն որոշ կլիմայում և որոշ հողի վրա։ Ստրկատերերն օգտագործելով ստրուկների աշխատանքը՝ չէին կարողանում ստիպել նրանց, որ բարդ մեքենաներ բանեցնեն, կամ հողն ավելի ռացիոնալ կերպով մշակեն։ Այս պատճառով պլանտացիաների հողերն արագ կերպով ուժասպառ էին լինում։ Կալվածատերերն ստիպված էին լինում լքել այդ հողերը և ավելի պտղաբեր հողեր որոնել։ Հենց այստեղ էլ նրանք ընդհարվում էին հյուսիս-արևելքից գաղթած ֆերմերների հետ։

Ֆերմերներից բացի՝ ստրկատերերի դեմ էր ելնում նաև հյուսիսում աճող ու զարգացող պրոլետարիատը, որ պայքարում է ամեն տեսակ ճնշման ու շահագործման դեմ։ Ստրկության վճռական հակառակորդները պահանջում էին նրա կատարյալ ոչնչացումը։ Այդպես էին նայում գործի վրա բանվորները, ֆերմերները, ինտելիգենցիայի մի մասը, գլխավորապես հեղափոխականները, որոնք Ամերիկա էին փախել Եվրոպայից։

Ստրկության ավելի չափավոր հակառակորդները ցանկանում էին սահմանափակել ստրկատիրությունը միայն հարավային շտատներում և մաքսերի խնդիրը հարդարել։ Գործի վրա այդպես էին նայում խոշոր բուրժուազիայի ներկայացուցիչները։ Սակայն ստրկատերերը ոչ մի զիջում չէին ուզում անել։ Հողերի ուժասպառումը, նոր ստրուկներ ձեռք բերելու դժվարությունը նրանց ավելի էին անհաշտ դարձնում և հարկադրում պետական իշխանությունը ձեռք գցել։

## ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿՌԻՎ

1860 թ. ստրկության կողմնակիցների և հակառակորդների մեջ պայքարն այնքան սրվեց, որ պատգամավորների պալատում հակառակորդ կուսակցությունների պատգամավորների մեջ իսկական տուրուդմփոց



էր տեղի ունենում։ Իսկ երբ 1861 թ. նախագահի հերթական ընտրությունների ժամանակ անցավ ստրկության հակառակորդ Լինկոլնը, հարավային շտատները բաժանվեցին, ընտրեցին սեփական նախագահ և կազմեցին ինքնուրույն պետություն։ Պատերազմ սկսվեց հարավային և հյուսիսային շտատների մեջ։ Այս հեղափոխական պատերազմ էր, քաղաքացիական պատերազմ—դասակարգային պայքար։ Այս պայքարում խնդիրը վերաբերում էր կապիտալիզմի և ֆերմերական կարգերի առաջինն զարգացմանն՝ արդյունաբերության, երկրորդը երկրագործության մեջ։

Հարավային ստրկատերերին կողմնակիցներ շատ կային նաև հյուսիսում։ Բուրժուազիայի մեծ խմբակներ, առևտրականներ, բամբակ փոխադրող նավերի տերեր, պլանտատորներին փող հայթայթող ֆինանսիստներ կողմնակից էին հարավայիններին։ Արդյունաբերական բուրժուազիան, թեպետ և թշնամի պլանտատորներին, վախենում էր հեղափոխական շարժման թափից, և խիստ վճռական փոփոխություններից՝ անցյալից ընդմիշտ կտրվելուց։ Նա դեմ չէր ստրկատերերի հետ որևէ համաձայնություն կայացնելուն։

## ԲԵԿՈՒՄ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԸՆԹԱՑՔԻ ՄԵՋ

Ինքը նախագահ Լինկոլն վճռական թշնամի էր ստրկատիրության, բայց ոչ մինչև վերջը։ Այս պատճառով առաջին տարիներում պայքարը հյուսիսայինների կողմից թույլ էր մղվում։ Հարավայինները, որոնք ավելի վարժ էին զինվորական գործին, հաղթանակներ էին տանում։ Դրությունը միայն այն ժամանակ փոխվեց, երբ շարժվեցին լայն հեղափոխական մասսաները, բանվորները և ֆերմերները։ Սրանց ճնշման տակ նախագահը և կառավարությունն ստիպված յեղան ավելի վճռականություն հայտաբերել։ Այսպես՝ պատերազմի երկրորդ տարում օրենք հրատարակեցին նեգրերի ստրկությունը վերջացնելու մասին։

Հետո սկսեցին նեգրերից ջոկատներ կազմակերպել, որոնք կռվում էին ստրկատերերի դեմ։ Այս սարսափի մեջ գցեց պլանտատորներին։ Նրանց առաջ ծառացավ սեփական ստրուկների ապստամբության ուրվականը, ուստի դրանց սկսեցին ռազմաճակատից հեռացնել։ Կառավարությունը ֆերմերներին հնարավորություն ընձեռեց՝ աժան վարձով հողեր ձեռք բերել։ Պատերազմն ավելի կատաղի դարձավ։ Պատերազմական գործողությունների մեջ ավելի վճռականություն մտցրին և յեվրոպացի

էմիգրանտ—հեղափոխականները, որոնց մեծամասնությունը մասնակցել էր 1848 թ. հեղափոխությանը: Հյուսիսայինների համար նրանցից սքանչելի հրամանատարներ դուրս եկան, որոնք կատաղաբար կռվում էին հարավային ստրկատերերի դեմ: Նրանք հարավային ստրուկներին ու ֆերմերներին վոտի հանեցին պլանտատորների դեմ, և հարավայինների թիկունքում ապստամբություններ կազմակերպեցին: Լավ էին կռվում բանվորական գնդերը: Նրանք կռվում էին ոչ միայն ճակատում, այլև հանդես էին գալիս թիկունքում, երբ հարավայինների կողմնակիցներին հաջողվում էր մեծ քաղաքներում հակահեղափոխական ելույթներ կազմակերպել: Հարավայինների դրությունն ավելի նպաստավոր էր: Հյուսիսային նահանգներն ավելի խիտ էին բնակեցված, և զարգացած արդյունաբերություն ունեին: Հարավայիններն ստիպված էին արդյունաբերական բոլոր մթերքները ներմուծել: Հյուսիսայինները մեծացնելով իրենց նավատորմիղը՝ վերջ տվին հարավայինների ծովային առևտրին: Վերջիվերջո հարավայինների հաջողությունները պարտության փոխվեցին, և հյուսիսայինները կատարյալ հաղթանակ տարան: Հետևանքն եղավ ստրկության վերացումը Միացյալ Նահանգներում:

## ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿՌՎԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Այսպիսով կապիտալիզմի զարգացման խոչընդոտները վերացան: Արդյունաբերողները հնարավորություն ստացան ազատվելու Անգլիայի մրցակցությունից: Կալվածատեր—ստրկատերերի կողմից իշխանությունը ձեռք գցելու սպառնալիքը վերացավ: Ֆերմերները հնարավորություն ստացան զարգացնելու իրենց տնտեսությունը: Խոշոր կալվածատիրական երկրագործությանը զգալի հարված հասավ: Գյուղատնտեսությունն ազատվեց ստրկական աշխատանքի շղթաներից և սկսեց ազատ զարգանալ գլխավորապես ֆերմերական տնտեսություններ զարգացնելու ճանապարհով: Չնայելով հնդամյա կատաղի պատերազմի հասցրած հսկայական ավերումներին, Ամերիկան այնուամենայնիվ շահեց այս պատերազմից, որովհետև նրա կապիտալիստական զարգացումը հենց այս պատերազմից հետո՝ առանձնապես արագացավ և ուժեղացավ: Այս որվանից էլ նա համաշխարհային կապիտալիստական պետություն դարձավ:

Իհարկե, լայն ժողովրդական մասսաները, ֆերմերները և բանվորները վերջիվերջո անմիջապես իրենց համար քիչ բան ստացան: Բանվորները մնացին և մնում են կապիտալիստներից շահագործված: Ֆերմերները չնայելով իրենց տնտեսության ինքնուրույնությանը՝ կախյալ վիճակի մեջ են ընկնում բանկիրներից: Սակայն Ամերիկայի կապիտալիստական զարգացումն այդ որից ազատվեց ամեն տեսակ ճնշումներից: Մարքսը գրում է, թե այս պատերազմի ժամանակից կապիտալիստական արդյու-րությունը Միացյալ Նահանգներում զարգանում է հսկայական քայլերով: Ստրկությունը վերացնելու համար մղված պատերազմին Լենինը ևս մեծ նշանակություն էր տալիս: Նա գրում էր. «Նեգրական ստրկության տապալումը, ստրկավաճառների իշխանության թոթափումն այն արժեքն ունեցան, որ ամբողջ երկիրն ապրեց քաղաքացիական կռվի և վերջինիս հետ կապված անհատակ քայքայման, ավերումների, տեռորի երկար տարիներ:



## ՀԱՐՑԵՐ

1. Որո՞նք են Հյուսիս—Ամերիկյան Միացյալ Նահանգների գոյացման պայմանները:
2. Որո՞նք են հյուսիսի և հարավի տնտեսական զարգացման առանձնահատկությունները:
3. Ինչո՞ւ պլանտատորների և արդյունաբերողների շահերը հակադիր էին իրար:
4. Ինչո՞ւ ֆերմերների շահերն ընդհարվում էին պլանտատորների շահերի հետ:
5. Ինչո՞ւ հյուսիսայինների կռիվ հարավայինների դեմ հեղափոխական կռիվ էր:
6. Ի՞նչ դեր էին խաղում պատերազմում ֆերմերները և բանվորները:
7. Որո՞նք էին հյուսիսի և հարավի պայքարի արդյունքները:

### Առաջադրություն 1.

Ծանոթացեք ՀԱՄՆ-ի քարտեզի հետ և սովորեցեք ոգտվել նրանից՝ «Հյուսիսի և Հարավի տնտեսական զարգացումը և քաղաքացիական կռվի պատճառները» նյութի մասին զեկուցում տալիս:

### Առաջադրություն 2.

Թերթերից և ժուրնալներից նյութ ընտրեցեք Միացյալ Նահանգների տնտեսական դրության, դասակարգային պայքարի և քաղաքական կյանքի մասին ներկայումս:

Բաժանեցեք բրիգադների մեջ այդ նյութի ընթերցումը և ձևակերպումը՝ ալբոմների, պլակատների և դիագրամների ձևով:

Ժողոված նյութերը օգտագործեցեք հետևյալ թեմաների մասին զեկուցումներ պատրաստելու համար:

1. ՀԱՄՆ-ի բանվորների դրությունը և նրանց պայքարը կապիտալիստների դեմ:

2. Գյուղատնտեսության ճգնաժամը և ֆերմերների դրությունը:

3. Նեգրերին հետապնդելը ՀԱՄՆ-ում և դրա պատճառները:

Առաջադրված թեմաների մասին զեկուցում կազմելիս՝ օգտագործեցեք «Արտասահմանի կոմյերիտականները գրում են» գրքույկը (էջ 11-31) և Մարիա Ժուրակովսկու «Աստվածը դոլլարի երկրում» գրվածքը, հրատարակության «Безбожник»-ի (էջ 64-78):

4. ՀԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի հարաբերությունը:

Զանազան երկրների տնտեսական զարգացումն ավելի ու ավելի դյուրացնում է փոխադարձ կապը, շփումը: Սակայն կապիտալիստների փոխադարձ կապի աճման հետ միաժամանակ զարգանում է նաև այդ երկրների բանվոր դասակարգի փոխադարձ կապը: Բանվորները կամաց-կամաց գալիս են այն համոզման, որ ապրելով տարբեր երկրներում, ունեն համանման շահեր:

## ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅԱՆ ԱՃՈՒՄԸ, ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 1864 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 28-Ի ՄԻՏԻՆԳԸ

1863 թվին անգլիական բանվորները կազմեցին մի դիմում՝ ֆրանսիացիներին ուղղված: Այս դիմումում նրանք առաջարկում էին «կազմել ժողովուրդների եղբայրություն»: «Հրավիրենք մեր բանվորական կոնգրեսները,—ասված էր այս դիմումի մեջ,—և քննության առնենք այն հարցերը, որոնց լուծումից է կախված ժողովուրդների խաղաղությունը»:

Այնուհետև անգլիական բանվորները չմոռացան հիշել նաև իրենց սեփական շահերի մասին: Երբ անգլիական բանվորներն սկսում էին պայքարել ձեռնարկուների դեմ, սրանք բերում էին այլերկրացի բանվորներ՝ ֆրանսիացի, բելգիացի կամ գերմանացի, որոնք և համաձայնվում էին աշխատել ավելի վատ պայմաններով: Այս առթիվ անգլիացիները գրում էին իրենց դիմումի մեջ. «Բանվորական գործի համար չափազանց կարևոր է ժողովուրդների եղբայրությունը. մի-



կրների բանվորների միջից, կապիտալիստներն այլևս չեն կարողանա օգտագործել մեկին ու մեկիս ընդդեմ ուրիշների և այդպիսով ցածրացնել աշխատավարձը»:

Ֆրանսիացիները հատուկ պատգամավորության միջոցով ուղարկեցին պատասխան-դիմում, ուր նրանք գրում էին. «Մենք բոլոր երկրների բանվորներս պետք է համախմբվենք և անխորտակելի արգելք դնենք այն կարգերին, որոնք սպառնում են մարդկությունը բաժանել՝ ստեղծելով մի կողմից—քաղցած և զազրած մասսաներ, մյուս կողմից՝ մի խումբ փողավոր տուզեր և հղփացած չինական մանդարիններ»:

Պատգամավորությունն ընդունելու և պատասխան-դիմումը լսելու համար հրավիրվեց միտինգ սուրբ Մարտինի դահլիճում 1864 թվի սեպտեմբերի 28-ին: Այդ միտինգում վճռվեց ընտրել մի կոմիտե միջազգային բանվորական համախմբում ստեղծելու ցանկությունն իրագործելու համար:

Այդ կոմիտեյում բանվորական շարժման այլ գործիչների հետ ընտրվեց նաև Կարլ Մարքսը: Նա այդ ժամանակ շատ լավ հայտնի էր հեղափոխական բանվորների շրջանում, և դրա համար էլ հրավիրեցին նրան և ընտրեցին միտինգի նախագահության անդամ:

## ՆՈՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՆԻՖԵՍՏՆ ՈՒ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Նոր կազմակերպությունը կոչվեց. «Բանվորների միջազգային ընկերություն» (նա հայտնի էր I Ինտերնացիոնալ անունով):

Հարկավոր էր մշակել այդ ընկերության մանիֆեստը և կանոնադրությունը: Այդ աշխատանքը շատ դժվար էր, որովհետև կոմիտեի մեջ ընտրվել էին տարբեր հայացքների և համոզմունքների տեր մարդիկ: Այդ աշխատանքները միայն Մարքսը կարող էր կատարել: Եվ նրան էլ հանձնեցին, և նա փայլուն կերպով կատարեց այդ աշխատանքը: Նա առաջադրեց ամենահիմնական հրահանգներ, որոնց հետ պետք է նրանք համաձայնեին:

Մարքսը աշխարհի բոլոր բանվորներին ուղղված մանիֆեստում ցույց էր տալիս, որ թեև 1848 թվից արդյունաբերությունն ու առևտուրը խիստ աճել է, բայց բանվոր դասակարգի մեծամասնության դրությունը չի բարվոքվել: Ընդհակառակը, կարելի յէ նկատել, որ

ավելացել է հասարակության մի մասի հարստությունը, մյուսի՝ աղքատությունը: Սակայն այս ժամանակամիջոցում բանվորներին հաջողվել էր վորոշ բան ձեռք բերել: Այսպես, նրանք սկսեցին կազմել կոոպերատիվ ձեռնարկություններ*). դրանով ապացուցեցին, վոր արտադրությունը կարելի յե կազմակերպել վոչ միայն վարձու աշխատանքի և մասնավոր սեփականության հիմունքով: Բայց յեթե կոոպերատիվները սահմանափակվեն փոքրաթիվ բանվորների մասնակի ջանքերով, նրանք չեն կարող ազատագրել բանվորներին: Բանվորներին ազատագրելու համար պետք է այդպիսի արտադրությունը՝ առանց վարձու աշխատանքի և մասնավոր սեփականության տարածել ամբողջ պետության վրա: Հետևաբար, բանվորների առաջին գործը պետք է լինի ձեռք բերել քաղաքական իշխանություն, վորի համար անհրաժեշտ է ստեղծել քաղաքական կազմակերպություն:

Բանվորները մի շատ կարևոր առավելություն ունեն՝ նրանք բազմամարդ են: Բայց այդ բազմամարդությունն օգտակար կլինի այն դեպքում միայն, յերբ նրանք համախմբված և կազմակերպված լինեն: Այս պատճառով էլ Ինտերնացիոնալի մանիֆեստը նույն կոչն է անում, ինչ վոր «Կոմմունիստական մանիֆեստը»՝ «Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք»:

Կանոնադրության մեջ, վոր նույնպես Մարքսն է գրել, ասված է. «Բանվոր դասակարգի ազատագրումը հենց իրենց բանվորների գործը պետք է լինի: Բանվորների մեծագույն նպատակը պետք է լինի իրենց տնտեսական ազատագրումը, իսկ այդ նպատակին կարելի յե հասնել միայն քաղաքական կռվով: Բանվորների ազատագրումը հավասարապես պետք է լինի բոլոր յերկրների բանվորների նպատակը»:

Ինտերնացիոնալի գլուխ կանգնած էր Գերագույն խորհուրդը, վոր գտնվում էր Լոնդոնում: Ինտերնացիոնալի մեջ մտնողները կազմում եյին նրա սեկցիաները: Մի քանի սեկցիան միասին կազմում եյին ֆեդերացիա, ֆեդերացիաներն էլ իրենց հերթին միանում եյին ըստ յերկրների: Յուրաքանչյուր յերկիր իր ներկայացուցիչն էր տալիս Գերագույն խորհրդին, վոր լինում էր «այսինչ յերկրի քարտուղարը»:

«Ահա թե ինչ պայմաններում յես Ինտերնացիոնալ մտա,—ասում մի ֆրանսիացի բանվոր:—Յերկաթաձուլ բանվորների գործադուլի ժամանակ մեր բարեկամներից մեկն ասաց.—մենք «ընդդիմադիր ընկերության մեջ ենք գտնվում, բայց հարկավոր է ելի մի բան անել. պետք է մտնել «Ինտերնացիոնալ»-ի մեջ: Այդ բարեկամը կանոնադրությունները տվեց մեզ կարդալու: Մենք գտանք, վոր դա շատ լավ բան է, վոչ մի արգելք չկա, վոր մենք մտնենք և 1200 հոգով մտանք Ինտերնացիոնալի մեջ»:

*) Կոոպերատիվներ սկսեցին կազմակերպվել 40-ական թվերին, գլխավորապես անգլիական բանվորների շրջանում:



Բելգիայում բազմաթիվ քաղաքներում բռնկած ածխահատների գործադուլի ժամանակ, յերբ շատերին գնդակահարեցին, ստեղծվեցին Ինտերնացիոնալի նոր ճյուղեր (սեկցիաներ) և ամբողջ բանվորական միություններ մտան նրա մեջ: Այսպես էր աշխատավորության մասսայական, տարերային ձգտումը դեպի միություն:

Ահա թե Ինտերնացիոնալի նշանակության մասին ինչ է ասում ռուս հեղափոխական Վերա Զասուլիչը. «Միայնակ բանվորը, վոր մանկությունից վոչ մի օգնություն չի տեսել, հանկարծ զգաց և տեսավ իր համերաշխությունն ամբողջ աշխարհի միլիոնավոր պրոլետարների հետ: Ինտերնացիոնալն զգալ տվեց նրան այն կոլեկտիվ ուժը, վոր տալիս է նրան միությունը...»:

## ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻ ՔՆՆԱԾ ՀԱՐՑԵՐԸ

I Ինտերնացիոնալի համագումարներում քննվում եյին բանվորական շարժման բոլոր կարևոր խնդիրները: Ինտերնացիոնալը հաստատապես այն միտքն արտահայտեց, թե անհրաժեշտ է բանվորների մասնակցությունը քաղաքական կռվին. սահմանափակվել միայն տնտեսական դրությունը բարելավելու պայքարով՝ անհնար է:

I Ինտերնացիոնալն ընդունեց բանվորական գործադուլը վորպես բանվոր դասակարգի պայքարի անհրաժեշտ միջոց ընդդեմ ձեռնարկուների: Նա վորոշեց ձեռք բերել ամենուրեք ութժամյա բանվորական օր:

Ինտերնացիոնալն արտահայտվեց նաև այն մասին, թե պրոլետարիատն ի՛նչ վերաբերմունք է ունենալու պատերազմի նկատմամբ: Այդ ժամանակ Յեվրոպան շատ անհանգիստ էր. նոր զարգացող ու ամրապնդվող բուրժուական պետությունների միջև պատերազմներ եյին տեղի ունենում: Ինտերնացիոնալը բանվորների անունից կտրուկ բողոք արտահայտեց պատերազմների դեմ, հորդորելով աշխատավորներին նոր զինված ընդհարումներ ծագելու դեպքում կազմակերպել գործադուլներ «վորպես պատերազմ պատերազմին», և բացի այդ, ցույց տվեց, թե բոլոր պատերազմների վախճանը կարող է լինել «միայն սոցիալական վերակազմության», այսինքն կապիտալիզմի վոչնչացման գնով:

Վերջապես, Ինտերնացիոնալը հանդես յեկավ վորպես կոմունիստական կազմակերպություն, պարզ ու վորոշ առաջադրելով արտադրական միջոցների, տրանսպորտի և հողային հարստությունների հասարակաց սեփականության վերածման անհրաժեշտությունը:

## ՀՈՍԱՆՔՆԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻ ՆԵՐՍՈՒՄ

Այն ժամանակի յեվրոպական շատ յերկրներ թեև շատ առաջ եյին գնացել իրենց տնտեսական զարգացմամբ, բայց բոլորն էլ գտնվում եյին նրա տարբեր աստիճաններում: Այսպես, օրինակ, Ֆրանսիայում արդյունաբերությունն ավելի թույլ եր զարգացած, քան Անգլիայում, Ֆրանսիայում դեռ ուժեղ եր և մեծ թիվ եր կազմում մանր արհեստավորությունը: Այսպես, Պարիզում ձեռնարկատերերից միայն 7 % ուներ 10-ական բանվոր իսկ 31 %-ն ունեյին 10-ից 2 բանվոր: Միջին հաշվով, Պարիզում նույնիսկ 1860 թվին ամեն մի ձեռնարկության ընկնում եր 4-ական բանվոր:

Իհարկե, այս բանվոր-արհեստավորների հայացքներն ու գաղափարները միանգամայն տարբեր եյին խոշոր արդյունաբերության մեջ աշխատող անգլիական բանվորների հայացքներից ու գաղափարներից. նրանք պրոլետարիատի իսկական հայացքներն արտահայտող Մարքսի քարոզներից շատ բան եյին հասկանում: Այնինչ Ֆրանսիացիներն ապրում եյին Պրուդոնի (1809—1865 թ. թ.) գաղափարներով, վոր շատ լավ արտացոլում եր մանր արհեստավորների հայացքները: Նա քարոզում եր ստեղծել ձրի վարկ և վերացնել տոկոսը. անհրաժեշտ եր համարում կազմակերպել փոխանակող բանկ, ուր արհեստավորն արհեստավորի հետ փոխանակեր իր արտադրանքները: Պրուդոնի այս պահանջները հենց համապատասխանում եյին արհեստավորների ցանկություններին, վորոնք փողի անվերջ կարիք ունեին և կախում ունեին իրենց արտադրանքները գնող վաճառականներից:

Պրուդոնը բարձրաձայն հայտնում եր, թե սեփականությունը գողություն ե, սակայն հակառակ եր, վոր արտադրական միջոցները հանրային սեփականություն դառնան, այսինքն թշնամի յեր կոմունիզմին:

Պրուդոնը դեմ եր դուրս գալիս խոշոր սեփականությանը, իսկ մանր սեփականատիրությանը պաշտպան եր կանգնում:

Պրուդոնն ու իր հետևողները հակառակ եյին այն բանին, վոր բանվորները մասնակցեն քաղաքական կռվի: Այդ դեռ քիչ ե. Նրանք



կտրուկ հակառակորդ եյին գործադուլներին, բարձր աշխատավարձի և ութժամյա բանվորական օրին:

Ահա այս հետադեմ հայացքների դեմ սկսում են պայքարել առաջավոր բանվորները, գլխավորապես անգլիական բանվորները, Ինտերնացիոնալի առաջին համագումարներում: Պրուդոնիստների դեմ մղվող պայքարի ղեկավարը Մարքսն եր, վոր I Ինտերնացիոնալի մանիֆեստն ու կանոնադրությունը կազմելուց հետո մնում եր նրա գաղափարական առաջնորդը: Նա զեկուցումներ եր կազմում գլխավոր հարցերի շուրջը, պատրաստում եր բանաձևեր և այլն: Ինտերնացիոնալն ընդունեց իր առաջին յերեք համագումարում գործադուլների, ութժամյա բանվորական օրի, քաղաքական կռվի և հասարակական սեփականության անհրաժեշտությունը: Այդ վորոշումների ընդունումը պրոլետարական մարքսիստական տեսակետի հաղթանակն եր Պրուդոնին հետևող կիսա-արհեստավորական հետամնաց բանվորների հայացքների հանդեպ:

## ԲԱԿՈՒՆԻԶՄ

Սակայն հազիվ եր Ինտերնացիոնալն իր հաշիվները մաքրել Պրուդոնին հետևողների հետ, յերբ նա ստիպված եր կռվի դուրս գալ մի նոր թշնամու դեմ: Դա Բակունինն եր (1814–1876 թ.թ.), ռուս հեղափոխականը, վոր մասնակցել եր 1848 թվին գերմանական հեղափոխությանը: Գերմանական իշխանությունը բռնում ե նրան և, մահվան դատապարտելով, հանձնում ե Նիկոլայ I կայսրին, վոր գցում ե նրան Պետրոպավլովսկի բերդը: Այնտեղից նրան աքսորում են Սիբիր, վորտեղից նա փախչում ե արտասահման:

60-ական թվականներին նա նորից հայտնվում ե Յեվրոպայում և վերսկսում հեղափոխական գործունեյությունը:

Նրա հայացքները խիստ տարբերվում եյին Մարքսի հայացքներից: Ամենից առաջ նա չեր ըմբռնում պրոլետարիատի նշանակությունը և իր բոլոր հույսերը կապում եր լքված, դատապարտված չքավորության և քայքայված գյուղացիության հետ: Նրա կարծիքով, այդ դասակարգի մեջ ե ամփոփված «ապագա սոցիալական հեղափոխության վողջ խելքն ու ուժը»: Նա կարծում եր, թե ժողովրդին վոչ ագիտացիա յե հարկավոր, վոչ պրոպագանդա, «ժողովրդին սովորեցնել չի հարկավոր, այլ ընդվզումներ (բունտ) անել. այնպես պետք ե անել, վոր նրա ընդվզումները հաջող յելք ունենան»:

Ահա այդ կույր և տարերային, ամեն ինչ իր ճանապարհին վոչընչացնող ժողովրդական ընդվզումը համարում էր նա իսկական հեղափոխություն: «Ամեն մի ընդվզում, վորքան էլ նա անհաջող լինի, միշտ էլ օգտակար է...ցաքուցրիվ ընդվզումները կձուլվեն մի ընդհանուր ընդվզումի, համաժողովրդական ապստամբության, վոր կենթարկի ամեն ինչ վոչնչացման»:

Բակունինը թշնամի յեր թե բուրժուական և թե այնպիսի պետության, վոր կարող է ստեղծել պրոլետարիատը հեղափոխությունից հետո իր հեղափոխական նվաճումները պաշտպանելու համար: Այսպիսով նա թշնամի յեր պրոլետարիատի դիկտատուրային, վորն անհրաժեշտ է բանվոր դասակարգին՝ իր հեղափոխական նվաճումները պաշտպանելու և սոցիալիզմ կառուցելու համար: Նա հակառակ էր ամեն տեսակ պետական իշխանության, այսինքն՝ անարխիստ (անիշխանական) էր: Սակայն նա իր հեղափոխական գործունեյության ընթացքում կողմնակից էր գաժան յերկաթե դիսցիպլինով ձուլված գաղտնի ընկերություններին, անսահման իրավունքով օժտված կոմիտեյի գլխավորությամբ:

Իր համախոհներից մեկին ուղղած մի նամակում Բակունինը գրում է, թե հարկավոր է «գաղտնի կազմակերպության կոլեկտիվ գործունեյություն»: «Յեթե մենք այդպիսի կազմակերպություն չստեղծենք, մենք ուժասպառության կդատապարտվենք»:

Այդպիսի կազմակերպությունների առանձին անդամները պետք է առանց հակաճառության, առանց դատողություններ անելու յենթարկվեյին իրենց կոմիտեների բոլոր կարգադրություններին: Չեր թույլատրվում վոչ դատողություններ, վոչ քննադատություն: Բակունինի կարծիքով միայն այդպիսի կազմակերպությունները կարող եյին լավ «քոնկեցնել ժողովուրդը»:

Մտնելով Ինտերնացիոնալ՝ Բակունինը նրա ներսում ստեղծեց իր գաղտնի կազմակերպությունը և ուզում էր օգտագործել Ինտերնացիոնալն իր ապստամբական—բունտարական նպատակների համար:

Բակունինի և Մարքսի հետևողների միջև պայքար սկսվեց: Պարզվեց, վոր Բակունինը շատ կողմնակիցներ ունի: Դրանք, գլխավորապես, այն յերկրներից եյին, վորոնք նոր եյին մտել կապիտալիստական զարգացման հունը—այդ յերկրների քայքայված պրոլետարացած գյուղացիությունը այնպիսի անտանելի դրության մեջ էր, վոր պատրաստ էր ապստամբել, խռովություններ առաջացնել, քարուքանդ անել ամեն ինչ: Ահա Սպանիայի, Բելգիայի, Իտալիայի և Շվեյցարիայի այդ թշվառ—



կան մարդկանց մեջ Բակունինն ու նրա ուսմունքը մեծ ժողովրդականություն եյին վայելում: Այսպիսի հանգամանքներում Ինտերնացիոնալի պառակտումը դառնում էր միանգամայն անխուսափելի:

## ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻ ՊԱՌԱԿՏՈՒՄՆ ՈՒ ՔԱՅՔԱՅՈՒՄԸ

Յեվ իսկապես, Հաագայի համագումարում (1872 թ.) Բակունինն ու նրա կողմնակիցներն արտաքսվեցին Ինտերնացիոնալից: Այն ժամանակ այն յերկրների կազմակերպությունները, վորոնք պաշտպանում եյին Բակունինին, դուրս յեկան Ինտերնացիոնալից և հիմնեցին իրենց միջազգային կազմակերպությունը:

Բացի դրանից, այդ միջոցին, շատ թուլացել էր Մարքսի հիմնած Ինտերնացիոնալը 1870 թվի Ֆրանս—պրուսական պատերազմի պատճառով: Թեև Ինտերնացիոնալը հակառակ էր պատերազմին, բայց առաջավոր և գիտակից բանվորները թե Ֆրանսիայում և թե Գերմանիայում սակավաթիվ և թույլ եյին, վոր չեյին կարող խանգարել պատերազմը: Պատերազմը վերջացավ Ֆրանսիայի պարտությամբ, ապա տեղի ունեցավ Պարիզի բանվորների ապստամբությունը՝ Կոմունայի հռչակումը: Ապստամբությունը ճնշվեց, բուրժուազիան արյան մեջ խեղդեց այս ապստամբությունը, յերկար ժամանակով թաղեց Ֆրանսիայի բանվորական շարժումը: Այսպես Ինտերնացիոնալի նեցուկներից մեկը ջախջախվեց:

Ինչ վերաբերում է Անգլիային, նա Ֆրանս—պրուսական պատերազմից մեծապես շահեց և տնտեսական փայլուն դրության հասավ: Այդ ժամանակ մեծապես բարվոքվեց բանվորների, մանավանդ հմուտ կազմակերպվածների վիճակը: Նրանք ձեռք բերին մի շարք իրենց պրոֆեսիոնալ կազմակերպությունները պաշտպանող օրենքներ, պարլամենտի ընտրություններին մասնակցելու իրավունք ստացան (1867 թ.) և այս բոլորի շնորհիվ այլևս չհետաքրքրվեցին Ինտերնացիոնալով: Այժմ այդ ապահովված և վորոշ քաղաքական իրավունքներ ունեցող բանվորներին Ինտերնացիոնալը թվում էր հեղափոխական, մանավանդ, յերբ Ինտերնացիոնալի խորհուրդը պաշտպանեց պարիզյան բանվորների ապստամբությունը:

Այսպես վերացավ նաև Ինտերնացիոնալի յերկրորդ նեցուկը: Հաագայի համագումարից (1872 թ.) հետո Ինտերնացիոնալը, փաստորեն, իր գոյությունը դադարեցրեց, թեև պաշտոնապես նա ցրվեց միքանի տարի ուշ:

## ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻ ԱՆԿՄԱՆ ՅԵՎ ՎԵՐԱՑՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ· ՆՐԱ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Առաջին Ինտերնացիոնալի անկումը բացատրվում է նախ նրանով, վոր այն ժամանակ կապիտալիստական զարգացումը յեվրոպական յերկրներում չափազանց տարբեր աստիճանների վրա յեր: Այդ պատճառով էլ բանվորների գիտակցությունը տարբեր էր զանազան յերկրներում. բոլորն էլ տարբեր ակնոցներով էյին նայում Ինտերնացիոնալին և շատ քչերն էյին ըմբռնում Մարքսի խակական միտքը՝ բանվորական միջազգային քաղաքական կուսակցություն կազմելու գաղափարը: Մինչդեռ հենց դրանում էր Ինտերնացիոնալի նշանակությունը:

Մինչ այդ Յեվրոպայում գոյություն ունեյին զանազան բանվորական կազմակերպություններ, գաղտնի ընկերություններ, պրոֆեսիոնալ միություններ: Ինտերնացիոնալը պետք է բռներ նրանց տեղը, վորպես մի մեծ քաղաքական կուսակցություն: Յեվ, իսկապես, նա մի խումբ հեղափոխականների կազմակերպություն չէր, այլ լայն բանվորական մասսաներ ընդգրկող կազմակերպություն: Նա ցույց տվեց բանվորներին, թե ինչո՞ւ համար են պայքարելու և ինչ միջոցներով են տանելու այդ պայքարը: Բանվորների նպատակը պետք է լինի կոմունիզմը, իսկ միջոցները՝ քաղաքական պայքարը և պետական իշխանության գրավումը: Սակայն, այս բոլորի հետ միասին, չպետք է մոռացության տրվեր բանվորների մշտական պայքարը, աշխատանքի կարճ օր, ավելի բարձր աշխատավարձ և այլն ձեռք բերելու խնդիրները:

Թեև Ինտերնացիոնալը տաս տարի յել գոյություն չունեցավ, բայց այն նշանակությունն ունեցավ, վոր հող պատրաստեց բանվորական քաղաքական կուսակցություններ և միջազգային համախմբումն ստեղծելու. նա ցույց տվեց այն ճանապարհը, վորով 50 տարի անց ընթացան կոմունիստական կուսակցությունները և III Ինտերնացիոնալը:

Այդ առթիվ Լենինն այսպես էր գրում.

«Առաջին Ինտերնացիոնալը հիմք դրեց բանվորների միջազգային կազմակերպության՝ պատրաստելու նրանց հեղափոխական գրոհը կապիտալի դեմ: Յերկրորդ Ինտերնացիոնալը պրոլետարական շարժման միջազգային կազմակերպություն էր, վոր աճեց իր լայնությամբ... Առաջին Ինտերնացիոնալը հիմքը դրեց պրոլետարական միջազգային պայքարի՝ սոցիալիզմի համար:



Յերկրորդ Ինտերնացիոնալը մի շարք յերկրներում մասսայական լայն շարժման համար հող պատրաստելու դարաշրջան էր:

Յերրորդ Ինտերնացիոնալը յուրացրեց Յերկրորդի աշխատանքի պտուղները և սկսեց իրագործել պրոլետարիատի դիկտատուրան»:

## ՀԱՐՑԵՐ ՅԵՎ ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ի՞նչ տնտեսական վիճակ էր ապրում Յեվրոպան 60-ական թվերի սկզբին:

2. Ի՞նչ դեպքեր կենդանություն մտցրին բանվորական շարժման մեջ և պատճառ դարձան Բանվորական Միջազգային Ընկերության (Ինտերնացիոնալի) հիմնադրման:

3. Ի՞նչ էր Մարքսի գրած Բ. Մ. Ը.-ի մանիֆեստի և կանոնադրության բովանդակությունը:

4. Ի՞նչ գործունեություն և ազդեցություն ունեցավ I Ինտերնացիոնալը 60-ական թվերի յերկրորդ կեսում:

5. Ի՞նչ հիմնական հարցեր լուծվեցին I Ինտերնացիոնալի կոնգրեսներում:

6. Ի՞նչ հոսանքներ էյին պայքարում I Ինտերնացիոնալի ներսում:

7. Ի՞նչ է ներկայացնում Բակունինի ուսմունքը:

8. Վորո՞նք են Ինտերնացիոնալի անկման պատճառները:

I. Այս ձեռնարկի հիման վրա լուսաբանեցեք Մարքսի դերը I Ինտերնացիոնալում:

II. Նույն նյութերի հիման վրա պարզաբանեցեք, թե ինչո՞ւ Մարքսը անհրաժեշտ է համարում պայքարել պրուդոնիստների և բակունիստների դեմ:

III. Կազմեցեք զեկուցում «I Ինտերնացիոնալի դերը» թեմայով:

IV. Զեկուցում պատրաստեցեք «ինչու Յերրորդ Ինտերնացիոնալը առաջինի հաջորդն է հանդիսանում» նյութի մասին:

Զեկուցման համար օգտագործեցեք Կերժենցևի և Լեոնտևի «Լենինիզմի այբուբենը» գիրքը:

Նույն նյութերի շուրջը կոնֆերանցիաներ կազմեցեք: Գտեք I Ինտերնացիոնալի վերաբերյալ նկարներ 1924 թվի պարբերական հանդեսներում:

## 11. ՓԱՐԻԶԻ ԿՈՄՈՒՆԱՆ ԻԲՐԵՎ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՅԻ ՆԱԽԱՏԻՊ

### ՆԱՊՈԼԵՈՆ III-Ի ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ

*Ֆրանսիական 1848 թ. հեղափոխության պատմությունից գիտենք, վոր այն ժամանակ ստեղծված հանրապետությունը վոչնչացվեց 1851 թ. դեկտեմբերին: Այդ վոչնչացումը տեղի ունեցավ շնորհիվ այն պետական հեղաշրջման, վոր կատարեց 1848 թ. սեպտեմբերին նախագահ ընտրված Լուի Բոնապարտը՝ Նապոլեոն I-ի յեղբորորդին:*

*Լուի Բոնապարտը նախագահ ընտրվեց գյուղացիության ձայներով, վոր ատում եր բուրժուական հանրապետությունը, վորովհետև վերջինս տուրքերը բարձրացնում եր և չեր բարելավում նրա դրությունը:—*

*Բացի գյուղացիությունից՝ Նապոլեոնի օգտին ձայն տվին նաև բուրժուազիայի ներկայացուցիչները՝ վախենալով բանվորներից և մտածելով ամրացնել իշխանությունը՝ վորևե խոշոր անձնավորություն նախագահ ընտրելով:—*

*Միքանի բանվորներ ևս ձայն տվին Բոնապարտի օգտին, վորովհետև ցանկանում եյին վրեժ առնել բուրժուական հանրապետականներից, վորոնք առաջ եյին քաշում իրենց թեկնածու գեներալ Կավենյակին—հունիսյան ապստամբության արյունարբու ճնշողին:—*

*Նոր օրենքով նախագահն իր իշխանությունը կարող եր վարել յերեք տարի, վորից հետո իր տեղը պիտի զիջեր նոր նախագահին՝ առանց վերընտրվելու իրավունք ունենալու: Այսպիսով նրա լիազորությունները վերջանում եյին 1851 թ. վերջին: Դրա հետ էլ ընդմիշտ վերջանում եր նրա իշխանությունը: Մինչդեռ Լուի Բոնապարտի վաղեմի յերազն եր ձեռք գցել իշխանությունը: Այժմ հանգամանքները նրա համար նպաստավոր եյին:*

*Պրոլետարիատը հունիսյան պարտությունից հետո՝ սկսել եր կամաց-կամաց կազդուրվել: Բանվորական շարժումն սկսեց մի փոքր աշխուժանալ: Բուրժուազիան նորից վախեցավ, մինչդեռ 1848 թ. հեղափոխությունն առաջացնող ճգնաժամն անցավ և սկսվեց արդյունաբերության ու առևտրի անսովոր վերելքի շրջանը: Այս պայմաններում յուրաքանչյուր շարժում, արտադրության մեջ յուրաքանչյուր հապաղում ձեռնտու չեր բուրժուազիային: Նա ուզում եր անարգել օգտվել իր շահույթներից: Այդ պատճառով էլ ուզում եր կայուն և ամուր իշ-*



*խանություն ունենալ, վոր ապահովեր իր հանգիստը: 1848 թ. հեղափոխության մասին յեղած պատմվածքից մենք գիտենք, վոր Լուի Բոնապարտը կատարելով 1851 թ. դեկտեմբերի 2-ի պետական հեղաշրջումը՝ փայլուն կերպով օգտագործեց ստեղծված դրությունը: Ժողովի պատգամավորները բանտարկվեցին, իսկ նախագահի լիազորությունների ժամանակամիջոցը յերկարացվեց 10 տարով:—*

*Հանրապետության կողմնակիցներից վոմանք բանվորական թաղամասերն ընկան և փորձեցին պրոլետարիատին վոտի հանել Լուի Բոնապարտի դեմ, բայց նա հունիսյան ապստամբությունից հետո՝ ջլաթափված եր:—*

*Մի տարուց հետո՝ Նապոլեոնը իրեն կայսր հռչակեց: Այսպես սկսվեց այսպես կոչված յերկրորդ կայսրության գոյությունը, վոր տևեց մինչև 1870 թ.:*

### ՆԱՊՈԼԵՈՆ III-Ի ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԲՆՈՒՅԹԸ

*Նապոլեոն III-ի (Լուի Բոնապարտը կայսր դառնալով այդ անունն ընդունեց) իշխանությունը համարյա անսահման եր և հանգում եր կատարյալ կամայականության և վոստիկանական ռեժիմի: Թեպետ և գոյություն ուներ ներկայացուցչություն և նույնիսկ ընդհանուր ընտրական իրավունք, բայց ժողովրդական ներկայացուցիչների դերը շատ եր աննշան: Նոր կայսրության հակառակորդների հետ խիստ հաշիվ տեսնում: Նոր իրավակարգի բոլոր թշնամիներին հետապնդում, բանտարկում, աքսորում եյին: Ընտրությունները կատարվում եյին ճնշման տակ: Կառավարությունը ինքն եր ցույց տալիս այն թեկնածուներին, վորոնց պետք եր ընտրել, և պաշտոնյաների ու զինվորների օգնությամբ ապահովում եր հենց այդ թեկնածուների ընտրությունը:*

*Սակայն խոշոր բուրժուազիան գոհ եր այս ռեժիմից, վոր կատարելապես ապահովում եր նրա շահույթները և անվտանգությունը բանվորական ելույթներից:—*

*Նապոլեոն III-ի իշխանության ժամանակ Ֆրանսիան կապիտալիստական զարգացման ճանապարհով շատ առաջ գնաց: Նրա հարստությունը 1851—1869 թ. կրկնապատկվեց: Առևտրական շրջանառությունը 1848—1866 թ. աճեց հինգ անգամ: Շոգեշարժիչներ ունեցող ձեռնարկությունների թիվը մեծացավ: 1852-ին նրանց թիվը 6500 եր. 1862-ին՝ 1500, իսկ 1870-ին՝ 23,000:—*

*Բայց Նապոլեոնի ռեժիմից ամենամեծ օգուտն ստանում եյին ֆի-*

բաշտե (տղենտլլիանտ) ֆինանսական բուրժուազիան, վաշխառուները և բիրժեվիկները: Դրանք մոտ լինելով կառավարությանը՝ մեծ օգուտներ էին ստանում, վորի շնորհիվ անհավին հարստություն էին դիզում՝ ավերելով մանր և միջին բուրժուազիային: Կառավարությունը խոշոր բանկիրների օգտին նույնիսկ պատերազմներ էր ունենում, ինչպես՝ Նապոլեոն III-ը պատերազմ հայտարարեց Մեքսիկային, վորի կառավարությունը պարտք ուներ մի ֆրանսիական բանկիրի: Բորսայում խելագար խաղեր էին կատարվում: «Չարաշահության անհանգիստ վոգին՝ երբեմն փոթորկի՝ տարածվում էր ամենուրեք»:

## ՄԱՆՐ-ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՅԻ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Վողբալի յեր մանր-բուրժուազիայի դրությունը: Խոշոր հարստությունների աճումը, տեխնիկայի զարգացումը նրան ծանր դրության մեջ էին դնում:

Մանր-բուրժուազիան տառապում էր բարձր հարկերից և ավելի ու ավելի յեր խճճվում վաշխառուների վոստայնում: Բայց և այնպես մանր արհեստը շատ էր տարածված Ֆրանսիայում և Պարիզում:

Խոշոր ֆաբրիկաներ ու գործարաններ յերևում էին գլխավորապես Ֆրանսիայի հյուսիս-արևելքում, իսկ Պարիզում խոշոր արդյունաբերության և յերկաթուղի արհեստանոցների բանվորները ամբողջ աշխատավոր ազգաբնակչության մեկ իններորդ մասն էր կազմում: Մնացած ութ իններորդ մասն արհեստավորներ էին: Սակայն այս արհեստավորները բնավ ինքնուրույն չէին: Նրանք շատ հաստատուն կերպով խճճված էին խոշոր կապիտալի վոստայնում, վորովհետև կախում ունեյին կամ մեծ խանութից, կամ տիրոջից, կամ հումույթ տվողից:

## ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

Ավելի վատ էր բանվոր դասակարգի դրությունը: Արդյունաբերության զարգացումը կապակցված էր քաղաքի ազգաբնակչության հետ. իսկ այս առաջ էր բերում բնակարանների ու սննդամթերքների թանկացում: Պարիզի բանվորները գանգատվում էին, վոր սննդամթերքները և բնակարանները 12 տարվա ընթացքում թանկացել էին 50 %-ով, մինչդեռ նույնիսկ ամենաբարձր վարձատրություն ստացող բանվորների աշխատավարձը 10 %-ից ավել չէր բարձրացել:—

Բանվորական օրը 12 ժամից պակաս չէր: Տղամարդու աշխատանքի



հետ մրցում էր յերեխայի և կնոջ աշխատանքը: «Մայրահեղ շահագործումը և ցած աշխատավարձն այլասերում էին բանվոր դասակարգին: Պրոլետարիատի ընտանիքը քայքայվում էր»: «Խոստովանվում եմ,— գրում էր մի բուրժուական գիտուն բանվորների դրության մասին,— վոր իրականությունը գերազանցեց իմ բոլոր մռայլ սպասելիքները: Յուրաքանչյուր բողոք ստեղծված դրության հանդեպ, համախմբվելու յուրաքանչյուր փորձ պատժվում էր ամենադաժան կերպով: Արհեստանոցներում,—գրում էր ժամանակակիցներից մեկը,— վոստիկանությունը կազմակերպված էր նույնպես, ինչպես և քաղաքներում: Ամեն վստահություն և չվում բանվորների մեջ չքացել էր, վորովհետև պատերն անգամ ականջներ ունեյին»: Բայց վերջիվերջո բանվորների դժգոհությունն այնքան մեծացավ, վոր կառավարությունը զիջումներ արավ և նույնիսկ սկսեց սիրաշահել բանվորներին՝ փորձելով այնպիսի կազմակերպություններ ստեղծել, ուր բանվորները գտնվեյին վոստիկանների, տերտերների, կայսերական զինվորների և գեներալների հսկողության տակ: Կառավարությունը դրանից վոչինչ չշահեց: Բանվորներին միավորելու փորձն օգուտ բերեց հենց իրենց բանվորներին: Բանվորական շարժումն զգալի կերպով աշխուժացավ: Յեվ վերջապես 1864 թ. կառավարությունն ստիպված յեղավ փոխել առաջին հեղափոխության ժամանակաշրջանում տված օրենքը, վորով արգելվում էին բանվորական կազմակերպությունները:—

Բանվորական շարժման աճման ապացույց հանդիսանում է ֆրանսիական բանվորների մասնակցությունը առաջին Ինտերնացիոնալի կազմակերպություններին: Վոստիկանական հետապնդումները, վորոնց յենթարկվեցին Ինտերնացիոնալի անդամները, դեպի Ինտերնացիոնալը դարձրին բանվոր դասակարգի լայն մասսաների ուշադրությունը: Այն դատավարությունները, վոր կազմակերպում էր կառավարությունն ինտերնացիոնալիստների նկատմամբ, այս տեսակետից ավելի մեծ դեր խաղացին:

Դատի տրվածները ճառեր էին արտասանում, վորոնք հայտնի էին դառնում: Ինտերնացիոնալի ազդեցությունն զգալի կերպով աճեց 1868—1871 թ. շրջանում: Սրան էլ վրա հասավ արդյունաբերական ճգնաժամը, վոր վատացրեց բանվոր դասակարգի դրությունը և գործադուլների մի ամբողջ ալիք բարձրացրեց: Գործադուլներն այլևս զուտ տնտեսական բնույթ չէին կրում: Նրանք սկսեցին քաղաքական նշանակություն ստանալ: Կառավարությունն առանց տատանվելու ճնշ-

նարկատերերի կողմն անցավ և զորք ուղարկեց գործադուլավորների դեմ: Զորքը կրակում էր բանվորների վրա:

## ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՏԱՊԱԼՈՒՄԸ

Բանվորական շարժման աճումը միայն մի կողմն էր այն ընդհանուր անբավականության, վոր ուղղված էր Նապոլեոն III-ի ռեժիմի դեմ: 60-ական թվականների վերջերին կայսրի դրությունն անկայունացավ: Հասարակության համարյա բոլոր խավերի անբավականությունը ծառացավ նրա դեմ: Ինչպես տեսանք, բանվորները չէին կարող գոհ լինել Նապոլեոն III-ի ժամանակ ունեցած իրենց վիճակից: Մանր բուրժուազիան, վոր տառապում էր խոշոր կապիտալների աճումից, նույնպես չէր կարող կառավարության կողմնակիցների թվում լինել: Բուրժուազիան մասսայորեն սպասում էր կառավարությունից, վոր վերջինս իր համար հանգիստ վիճակ ապահովի, սակայն բանվորական աճող հուզումները համոզում էին, վոր այդ Նապոլեոնի կայսրության բանը չէր:

Նա փորձեց դրությունը փրկել մի շարք քաղաքական զիջումներով: Ընդարձակվեց օրենսդիր հիմնարկների իրավունքները: Սակայն այս բոլորը վատ ծառայություն մատուցին: Նապոլեոն III-ը փորձեց վերականգնել Նապոլեոն I-ի կայսրության տրադիցիաները: Գյուղացիական մասսաների, մանավանդ զինվորների և սպաների մարտական տրամադրությունները շահելու համար՝ նա փորձեց շատ աղմկահույզ և ռազմատենչ քաղաքականություն վարել: Այս քաղաքականությունը 60-ական թվականների վերջերին կառավարության հասցրեց մի շարք անհաջողություններ ու փլուզումներ: Այս հանգամանքն ավելի ևս դցեց կառավարության վարկը և ուժեղացրեց հասարակության բոլոր խավերի անբավականությունը: Միայն կառավարության շատ մոտ կանգնած մարդիկ—մի բուռ բանկիրներ, բիրժևիկներ, գեներալներ, խոշոր չինովնիկներ—նրան կողմնակից մնացին:

Նպատակ ունենալով մի կերպ փրկել դրությունը՝ Նապոլեոնը կռվի բռնվեց Պրուսիայի հետ, վոր ստեղծվել էր իր կողքին իբրև մի հզոր թշնամի և աշխատում էր իր իշխանության տակ միավորել ամբողջ Գերմանիան: Պատերազմը հայտարարվեց, բայց այն Նապոլեոնյան կայսրությանը վոչ թե փրկություն, այլ կորուստ բերեց:

Պարզվեց, վոր Ֆրանսիական կայսրությունը բնավ պատրաստված չէր պատերազմի համար: Զինվորական նախարարի հավաստիացումներին ու պարծենկոտությանը, թե՝ «մենք պատրաստ ենք ավելի, քան յերբևիցե», Ֆրանսիական զորքերը հենց առաջին քայլերից պարտություն պարտության յետևից էին կրում: Վերջապես ինքը կայսրը 1870 թ. սեպտեմբերի 3-ին 80.000 զորքով անձնատուր յեղավ հակառակորդին: Երբ այդ լուրը Պարիզ հասավ, այնտեղ հեղաշրջում տեղի ունեցավ: Ժողովուրդը տապալեց Նապոլեոն III-ի կառավարությունը և հանրապետություն հայտարարեց:

## «ԱԶԳԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ» ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Կառավարությունը կազմվեց պարլամենտի պատգամավորներից և «ազգային պաշտպանության» կառավարության անուն ստացավ: Նա բաղկացած էր բուրժուազիայի ներկայացուցիչներից, կային նաև տապալված կայսրության կողմնակիցներ: Նրանց վիճակված էր պաշտպանել Ֆրանսիան հաղթական թշնամուց, վոր Ֆրանսիացիներին մի շարք ծանր պարտություններ հասցնելուց հետո յել շարունակում էր շարժվել յերկրի ներսը և մոտենալ Պարիզին: Կանոնավոր զորքի պակասության պատճառով՝ ազգային գվարդիայի անվան տակ զորահավաքի յենթարկվեցին ազգաբնակության լայն մասսաները, վորի շնորհիվ էլ Պարիզում հազարավոր արհեստավորներ ու բանվորներ զենքի տակ հայտնվեցին: Նրանք վառվում էին թշնամու հետ կռվելու ցանկությամբ և առաջ խաղացող պրուսականներից մայրաքաղաքը պաշտպանելու ծարավով: Նրանք պատրաստ էին ամեն տեսակ զրկանք տանելու և իրենց կյանքը զոհելու հակառակորդի հետ մղված կռվում: Բայց բանվորներից ու արհեստավորներից կազմված ազգային գվարդիայի տարած հաղթությունը վախեցնում էր բուրժուազիայի այն ներկայացուցիչներին, վորոնք նստած էին կառավարության մեջ: Նրանք ավելի իրենց զորքից էին վախենում, քան պրուսականներից: Նրանք հասկանում էին, վոր բանվորների ու արհեստավորների տարած հաղթությունից հետո՝ հերթը կհասնի այդ բանվորների ու արհեստավորների կռվին ընդդեմ բուրժուազիայի ու կապիտալիզմի:

Այս պատճառով ազգային պաշտպանության կառավարություն կոչվածը դարձավ «ազգային դավաճանության» կառավարություն: Այս ավելի ցայտուն կերպով յերևաց, յերբ Պարիզը պաշարված էր պրուսացիներից, վորոնք անցան ամբողջ Ֆրանսիան և հասան նրա մայրաքաղաքին:

Պաշարումը զուգադիպեց սարսափ դաժան ձմեռվան: Աղքատությունը տառապում էր ոչ միայն թշնամու ռմբակոծությունից, այլև ցրտից ու սովից: Սնվում էին ոչ միայն ձիու և շան մսով, այլև մկներով: Նույնիսկ կենդանաբանական այգու կենդանիները կերան. սակայն քաջարի ազգային գվարդիականները—արհեստավորներն ու բանվորները—չընկճվեցին և պատրաստ էին մինչև վերջին մարդը կռվել: Մինչդեռ կառավարությունն, ընդհակառակն, ամեն միջոց գործ էր դնում, որ ազգային գվարդիան պարտվի: Նա ռազմական գործողությունները դիտմամբ այնպես էր կազմակերպում, որ ազգային գվարդիան որքան կարելի է շատ կորուստ ունենա: Կառավարության անդամներից մեկը՝ գեներալ Տրոշյուն հայտարարեց. «Եթե մեծ ճակատամարտում 20·000 հոգի տեղը մնա, Պարիզն անձնատուր կլինի: Ազգային գվարդիան միայն այն ժամանակ կհամաձայնվի հաշտություն կնքել, երբ առնվազն 10·000 հոգի կկորցնի»:

## ՀԱՇՏՈՒԹՅՈՒՆ ՊՐՈՒՍԻԱՅԻ ՀԵՏ ՅԵՎ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ ՊԱՐԻԶԻՆ

Յեվ այսպես, երբ խոշոր տեղի ունեցավ անհաջող, դիտումնավոր կերպով կազմակերպված արտելքը, (вылазка) կառավարությունը հանկարծ հաշտություն կնքեց պրուսակների հետ:

Կառավարությունն այնքան էր վախենում ժողովրդական մասսաներից, այնքան էր ուզում իր ձեռքում պահել կանոնավոր զորքի մնացորդները՝ հետագայում ժողովրդական հուզումները ճնշելու նպատակով, որ Ֆրանսիայի համար ամենածանր պայմաններով հաշտություն կնքեց: Հաշտության պայմանն էր՝ զիջել Գերմանիային հանքերով հարուստ Էլզաս-Լոտարինգիայի շրջանը և վճարել այն ժամանակվա համար հսկայական գումար—5 միլիարդ ֆրանկ:

Այս ծանր պայմաններով զինադադար կնքելուց հետո՝ կառավարության առաջ ծառացավ այն հարցը, թե ո՞ւմ հաշվին պիտի իրականանան հաշտության պայմանները: Բուրժուազիային անհրաժեշտ էր ամբողջ ծանրությունը բարդել լայն մասսաների ուսին: Դրա համար պետք էր վերացնել այն խոչընդոտները, որ հանդիսանում էին Պարիզի զինված բանվորները և արհեստավորները: Վերջիններս, որ պաշարման ժամանակ արիությամբ տարան բոլոր զրկանքները և վառվում էին թշնամու հետ կռվելու ցանկությամբ, վրդովվեցին կնքած զինադադարից: Կառավարության համար սարսափելին այն էր, որ Պարիզի



պրոլետարիատը—ազգային գվարդիան— զինված էր: Հարկավոր էր նրան ընդհարման մեջ քաշել, արյունաքամ անել և զենքից զրկել,— Հաշտության նախնական պայմանները հաստատելու համար. հարկավոր էր հրավիրել երկրի ներկայացուցիչներին՝ Ազգային ժողովը: Այդ հրավերքի համար պայմանները շատ էին աննպաստ: Ֆրանսիայի մեծ մասը գրավել էր հակառակորդը: Պատերազմն ավերել էր հաղորդակցության ճանապարհներն ու միջոցները:

Այս պայմաններում նախընտրական ագիտացիա տանել անհնարին էր: Գյուղացիական մասսան, որ ֆրանսիական ազգաբնակչության մեծամասնությունն էր, ծարավի էր շուտափույթ հաշտության: Նա ատում էր պարիզցիներին՝ հեղափոխականներին ու բանվորներին: Նրան այնպես էին հասկացրել, թե վերջինները խռովարարներ են, որոնք ցանկանում են հողը կիսել և պատերազմը շարունակել: Դրա համար էլ գյուղացիները Նոր ժողով ուղարկեցին բացառապես ռեակցիոներներին, որոնք թշնամի էին հեղափոխության և բանվոր դասակարգին: Այս ժողովը հաստատեց հաշտության պայմանները և սկսեց սիստեմատիկ կերպով գրգռել Պարիզի բանվորներին՝ նրանց հարձակման հանելու համար: Այս աշխատանքը դրվեց բանվոր դասակարգի վաղեմի թշնամի Տյերի վրա, որին ժողովը «Գործադիր իշխանության» գլուխ ընտրեց:

## ՄԱՐՏԻ 18-Ի ՀԵՂԱՇՐՋՈՒՄԸ

Փարիզի բանվորների և արհեստավորների դեմ ուղղած միջոցներից կարելի չէ մոռանալ ազգային գվարդիականների ռոճկավարձի վերացումը: Այդ ռոճավարձը նրանց գոյության միակ միջոցն էր Պարիզում գոյություն ունեցող գործազրկության պայմաններում: Այնուհետև վոչնչացվեց բնակարանային վարձի և մուրհակային վճարումների տարկետումը, որի շնորհիվ արհեստավորները և բանվորները ամենածանր պայմանների մեջ դրվեցին: Վերջապես մարտի 18-ին Տյերի կարգադրությամբ փորձ արվեց Պարիզի ազգային գվարդիայից խլել նրա թնդանոթները, որոնք նույնիսկ պրուսակների հետ կապված հաշտությամբ նրան էին թողնվում:—

Մարտի 17–18-ի գիշերը կառավարությունը զորք ուղարկեց այդ թնդանոթները դուրս բերելու: Ձի չունենալու պատճառով չկարողացան այդ աշխատանքը արագ կատարել: Զինվորներն այդ ուշացրին մինչև առավոտ, երբ նկատվեցին կանանց, բանվորուհիների և բանվորների ու արհեստավորների ամուսինների կողմից, որոնք խանութներ և շուկա էին շտապում մթերքի:

Նրանք շրջապատում են զինվորներին բացականչելով. «Ամոթ ձեզ, այդ ի՞նչ եք անում»: Նրանք աղմուկ բարձրացրին: Ամեն կողմից ազգային գվարդիականների զինված ջոկատներ շտապեցին: Զինվորները յետ մղվեցին, անկազմակերպության մատնվեցին ու փախան: Նրանց հրամանատար գեներալները գերի ընկան: Հեղափոխական պարիզեցիները հաղթում են, թնդանոթները փրկված են: Ազգային գվարդիականները,



զինված բանվորներն ու արհեստավորները Պարիզի տերերն են դառնում: Այստեղից սարսափահար փախչում են բոլոր կառավարական հիմնարկները, զորքերի մնացորդները և վոստիկանությունը: Այս բոլորը տեղավորվում են Պարիզից 17 վերստ հեռավորության վրա գտնվող Վերսալ քաղաքում: Պարիզում գոյություն ունեցող կառավարության փոխարեն այդ ժամանակ հայտարարվեց Կոմունա, այսինքն՝ Պարիզ քաղաքի համար առանձին վարչություն: Հնում Ֆրանսիայում կոմունաներ կոչվում եյին քաղաքների ինքնավար կառավարությունները:—

Ո՞վ էր կոմունայի ստեղծողն ու կազմակերպողը և ի՞նչ էր այդ կոմունան: Դեռ փետրվարին Պարիզի ազգային գվարդիան ստեղծեց իր ղեկավար կազմակերպությունը—ազգային գվարդիայի Կենտրոնական կոմիտե: Կենտրոնական կոմիտեն, ինչպես և ինքը ազգային գվարդիան բաղկացած էր արհեստավորներից և բանվորներից: Վորովհետև Պարիզի բանվորական մեծամասնությունը սոցիալիստորեն էր տրամադրված, այդ պատճառով կոմիտեյի մեջ էլ ըստ մեծի մասին սոցիալիստներ մտան:

Դեռ մարտի 18-ի հեղաշրջումից առաջ կոմիտեն մեծ հեղինակու-



թյուն էր վայելում, թեպետ մարտի 18-ի դեպքերը նա չէր ղեկավարում: Նրանք կատարվում եյին տարերային կերպով: Կառավարության փախուստից հետո՝ հսկա քաղաքում միակ իշխանությունը հենց այդ կոմիտեն էր: Այս առթիվ արհեստավորներից մեկն այսպես էր գրում. «Քաղաքային դահլիճում նիստ ուներ անանուն կառավարությունը, վոր բաղկացած էր համարյա բացառապես հասարակ բանվորներից և մանր ծառայողներից, վորոնց անունները իրենց փողոցներից ու արհեստանոցներից դուրս վոչ վոքի հայտնի չեյին:

## ԿՈՄՈՒՆԱ ՅԵՎ ՆՐԱ ԿԱԶՄԸ

Պարիզի բանվորական մասսաների համար՝ կոմունան մի կառավարություն էր, վոր խիստ կերպով պիտի տարբերվեր բուրժուազիայի կառավարությունից, մի կառավարություն էր, վոր նրանց պիտի ազատեր իրենց դրության ծանր պայմաններից, վոչնչացներ շահագործումը և այլն: Ժողովրդական գվարդիայի Կենտրոնական կոմիտեն աշխատեց վորքան կարելի յե շուտ նշանակել Փարիզի կոմունայի Խորհրդի ընտրությունները: Այդ ընտրությունները տեղի ունեցան մարտի 26-ին և այս արդյունքը տվին: Բանվորներ՝ 27 հոգի, ծառայողներ և մանր չինովնիկներ՝ 13, ազատ պրոֆեսիայի մարդիկ՝ դերասաններ, բժիշկներ, նկարիչներ՝ 32, մանր-առևտրականներ և ձեռնարկատերեր՝ 4, սպաներ՝ 2, անհայտ զբաղմունքի մարդիկ՝ 6:

Ինչպես տեսնում ենք, Կոմունայի կազմը բավական խայտաբղետ էր: Այս տեսակետից Կենտրոնական կոմիտեն, վորին իշխանությունը զիջեց նրան, անհամեմատ ավելի միատարր էր: Բայց Կենտրոնական կոմիտեն համոզված էր, վոր անհրաժեշտ է պահպանել բոլոր օրինական և դեմոկրատական ձևերը, չէր ուզում իրեն կառավարության տեղ դնել: Մոռանում էր պայքարը բուրժուազիայի հետ և այս պայմաններում միայն դասակարգայնորեն միատարր կառավարությունը կարող էր վճռական ղեկավարը լինել Պարիզի աշխատավորության: Այս չհասկացան վոչ Կենտրոնական կոմիտեն և վոչ նոր ստեղծված Կոմունայի անդամները: Ահա թե լրագրերից մեկն ինչ էր գրում նոր ստեղծված կառավարությանը վորպես հրահանգ: «Մի՛ մոռանաք, վոր Պարիզի նման քաղաքի ազգաբնակությունը զանազան տարրերից է կազմված: Արդարամիտ յեղեք բոլոր դասակարգերի նկատմամբ: Պաշտպանեցեք բոլորի շահերը»: Մի ուրիշ լրագիր, վոր խմբագրում էր Կոմունայի անդամներից մեկը, հայտարարում էր. «Կապիտալիստի և բանվորի մեջ անհրաժեշտ է դաշինք»:

Կոմունայի անդամների մեջ կարծիքների և հայացքների մեծ խայտաբղետություն էր նկատվում: Նրանցում Ինտերնացիոնալի 10 անդամներ կային, վորոնք ըստ մեծի մասին Պրուդոնի հետևողներ էին: Նրանք ժխտում էին քաղաքական պայքարը և գլխավոր ուշադրությունը դարձնում էին հասարակության նոր տնտեսական կազմակերպություններ ստեղծելու վրա: Այդ կազմակերպությունները նրանք տեսնում էին կոոպերատիվներում: Կոմունային մասնակցող Ինտերնացիոնալի անդամներից հայտնի էին՝ կազմարար Վարլենը, մեխանիկներ—Ասսին և Ավրիալը, ձուլիչ Դյուվալը, ներկարար Կլեմանը, և Ֆալոնը, վոր ջահել ժամանակ հովիվ էր յեղել: Նրանցից շատերը չէին բավականանում Պրուդոնի խաղաղ ուսմունքով, ավելի վճռական, հեղափոխական հայացքներ ունեին և այստեղ աննկատելի կերպով խառնվեցին Կոմունայի մեջ յեղած այդ խմբավորումներին: Յակոբինյաններն էլ կային, վորոնք յերազում էին վաղուց անցած կարգերի և 18-րդ դարի Ֆրանսիական հեղափոխության դարաշրջանի անցքերի վերադարձի մասին: Նրանք մոռանում էին, վոր այլ դարաշրջան, այլ ժամանակներ են հասել: Հպարտությամբ իրենց յակոբինյաններ էին անվանում և հայտարարում էին Ֆրանսական հեղափոխության լոզունգները—«ազատություն, հավասարություն և յեղբայրություն»: Յեվ ուզում էին մարտի 18-ի Կոմունայի մեջ տեսնել 1793 թ. Պարիզի կոմունան:

Մինչդեռ այն դարաշրջանում խոսքը բուրժուական հեղափոխության հաղթանակին էր վերաբերում: Նրանում մանր-բուրժուազիան, վոր ղեկավարում էր յակոբիններին, հեղափոխական դեր էր խաղում: Այժմ խոսքը վերաբերում է պրոլետարիատի կռվին: Այստեղ մանր-բուրժուազիան բանվորներին միայն յետ քաշել կարող էր: Պետք էր այլ կերպ և այլ նպատակների համար կռվել: 1871 թ. Պարիզի կոմունայի յակոբիններն այս չէին հասկանում:—Պարիզի կոմունայի մեջ, առաջ յեկած խմբավորումների, վեճերի, ընդհարումների ժամանակ, յակոբինյանների հետ միասին շատ հաճախ հանդես էին գալիս բլանկիստները—հեղափոխական և կոմունիստ Օգյուստ Բլանկի հետևորդները, այն Բլանկի, վոր իր ամբողջ կյանքը նվիրաբերեց հեղափոխական պայքարին և 30 տարուց ավելի անցկացրեց բանտերում: Մարտի 18-ի հեղաշրջման մոմենտին կառավարությունը նրան ձերբակալեց և բանտ նետեց. սակայն նրա բազմաթիվ աշակերտներն արդեն բավական հայտնի էին



Պարիզի բանվորական շրջաններում և նրանցից մի քանիսը նույնիսկ Կոմունայի Խորհրդի մեջ էին: Բլանկին հետևելով՝ նրանք քարոզում էին իշխանությունը ձեռք գցելու համար ապստամբել, կազմակերպել հեղափոխական դիկտատուրա, վորի նպատակը պիտի լիներ կոմունիզմը հաստատել: Չնայելով Բլանկիստների սակավաթիվ լինելուն՝ նրանց ազդեցությունը շատ էր մեծ ինչպես Ինտերնացիոնալի անդամների, այնպես էլ յակոբինյանների վրա:—

Իհարկե, տարբեր խմբավորումների առատությունը վատ էր անդրադառնում Կոմունայի գործունեության և աշխատանքի վրա, վորովհետև չկար ղեկավարող միասնական քաղաքականություն, վոր գործունեության ծրագիր սահմաներ և ցույց տար այն միջոցներն ու ձևերը, վորոնցով այդ ծրագիրը կարող էր իրականանալ: Ընդհակառակն՝ կոմունարներն անհաշիվ ժամանակ և յեռանդ էին կորցնում փոխադարձ պայքարի վրա:

Յուրաքանչյուր հարց նրանց մեջ առաջացնում էր վեճեր, վորոնք հաճախ հասնում էին յերկպառակության և կառավարությունից դուրս գալուն: Յեվ այս բոլորը կատարվում էր թշնամու դեմ մղած կատաղի պայքարի բոպեին:

## ԿՈՄՈՒՆԱՅԻ ԳՈՐԾՈՒՆԵՅՈՒԹՅՈՒՆԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Չնայելով այս բոլորին, չնայելով Կոմունան՝ իբրև կառավարություն՝ կարճ գոյություն ունենալով (ընդամենը 72 որ), կոմունարները շատ բան կարողացան անել: Չնայելով Կոմունան իր կազմով բանվորների կառավարություն չէր, բայց ընտրված էր բանվորների ու արհեստավորների կողմից, գտնվում էր նրանց անմիջական ճնշման տակ և այնուամենայնիվ մի կառավարություն էր, վոր պաշտպանում էր բանվոր դասակարգի շահերը: Իր գլխավոր ուշադրությունը նա դարձրել էր բանվորների շահերի վրա: Այստեղ նա գործում էր Ինտերնացիոնալի Պարիզի սեկցիայի հետ ներդաշնակորեն, ինչպես նաև այն ժամանակ գոյություն ունեցող պրոֆկազմակերպությունների հետ: Պետք է ասել, վոր այդ կազմակերպությունները Կոմունայի հովանավորության տակ աճում, ամրանում և բազմանում էին: Կոմունան ստեղծեց աշխատանքի ու փոխանակության հանձնաժողով, վորի մեջ մտան համարյա բացառապես Ինտերնացիոնալի անդամները և բանվորները: Այդ հանձնաժողովը հսկայական կարևորություն ունեցող միջոցառումներ իրականացրեց: Պարիզում մեծ քանակությամբ ֆաբրիկաներ և

արհեստանոցներ կային, որոնց տերերը լքել և Տյերի կառավարության հետ Վերսալ էին փախել: Անհրաժեշտ համարելով կարգի բերել արտադրությունը և բանվորներին, արհեստավորներին գործ տալը՝ աշխատանքի ու փոխանակման հանձնաժողովը Կոմունայի միջոցով մի դեկրետ հրատարակեց, որն ասում էր. «Նկատի ունենալով՝ որ շատ արհեստանոցներ լքված են իրենց տերերի կողմից, որոնք չցանկացան իրենց քաղաքացիական պարտքը կատարել և իրենց բանվորների շահերը հաշվի առնել, նկատի ունենալով, որ տերերի այս վախկոտ փախուստի հետևանքով՝ քաղաքի կյանքի համար խիստ կարևոր շատ ձեռնարկություններ կանգ առան, որի հետևանքով տուժել է նաև բանվորների բարեկեցությունը, Կոմունան որոշում է, որ բանվորական կազմակերպություններից մի հանձնաժողով զեկուցում ներկայացնի՝ մատնանշելով այն գործնական միջոցառումները, որոնցով հնարավոր լիներ անմիջապես գործի դնել այդ արհեստանոցները, բայց այս անգամ ոչ թե դասալիք տերերի, այլ նրանց մեջ աշխատող բանվորների կոոպերատիվ ասոցիացիաների միջոցներով»:

Աշխատանքի ու փոխանակման հանձնաժողովի նախագահ Ֆրանկելն ասաց. «Ես միայն մի մանդատ եմ ստացել, այսինքն՝ պաշտպանել պրոլետարիատի շահերը: Եվ քանի որ որոշ միջոցառում արդարացի չի համարվում, ես ընդունում և իրագործում եմ՝ առանց տերերի հետ կոնֆերանսներով զբաղվելու»: Սրանով ղեկավարվելով՝ աշխատանքի ու փոխանակման հանձնաժողովը մի չափազանց կարևոր միջոցի դիմեց, այն է՝ արգելեց հրուշակարաններում բանվորների գիշերային աշխատանքները, չնայելով տերերը սաստիկ դիմադրում էին դրան:

Կոմունան արգելեց ամեն տեսակ տուգանք բանվորների աշխատավարձից: Նա աշխատանքի բորսա ստեղծելով՝ ազատեց բանվորներին ու արհեստավորներին աշխատանք փնտրող միջոցների շահագործումից: Լուվրի զինագործարաններում բանվորների վերահսկողության սկիզբը դրեց: Քաղաքին անհրաժեշտ մեծ պատվերները փոխանակ մասնավոր կապալառուների տալու՝ հանձնեց բանվորական-արտադրական կոոպերատիվներին:

## ԿՈՄՈՒՆԱՅԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Գուցե այն, ինչ որ արավ Կոմունան այս բնագավառում, անբավարար թվա, բայց պետք է հիշել, որ նա գոյություն ունեցավ ընդամենը 72 օր: Եվ այդ ժամանակի մեծագույն մասը անցավ անողոք թշնամու



հետ կատաղի պայքար մղելով, թշնամու, որ ապրիլի 2-ին սկսեց ռմբակոծել Պարիզը: Կոմունան ամեն ջանք գործ դրեց, որ թեթևացնի աշխատավոր չքավորության լայն մասսաների դրությունը: Նա տարկետեց պարտադրային և բնակարանային վճարները: Նա վճռեց և սկսեց վերադարձնել չքավորության դրավ դրված իրերը, որոնք կամ նրա գործիքներն էին, կամ ամենաանհրաժեշտ կարասիները: Կոմունան չնայելով իր կարճատև գոյության, չնայելով իր ժամանակի մեծ մասը գործադրեց թշնամու հետ պայքարելով, այնուամենայնիվ կարողացավ նոր պետական կարգի սկիզբը դնել: Նա ոչնչացրեց կայսրության պետական կարգերի բոլոր մնացորդները բազմաթիվ չինովնիկներով, ոստիկաններով, հին բանակով հանդերձ:

Կոմունային կառավարության մեջ բոլոր պաշտոններն ընտրովի դարձան: Եվ այդ պաշտոնները գրավողները պետք է հաշիվ տային իրենց ուղարկողներին: Չինովնիկների բարձր ռոճիկները վերցրին և բարձրորակ բանվորի աշխատավարձին հավասարեցրին: Մշտական զորքն իր սպաներով ու գեներալներով արձակվեց և փոխարենը սահմանվեց ազգային գվարդիա, որի մեծ մասը բանվորներ էին: Նապոլեոն III-ի ժամանակ հոգևորականությունը—կուսակրոններն ու քահանաները—մեծ իշխանություն և ահագին ազդեցություն ուներ: Նապոլեոն կայսրը զգում էր նրանց կարիքը, որպեսզի կարողանար ժողովրդական մասսաները խավարի մեջ պահել և նրանց ավելի հեշտ հարստահարել: Կոմունան խզեց ամեն տեսակ կապ պետության և յեկեղեցու մեջ: Դադարեցրեց հոգևորականության պահպանության ծախսերը: Վերացրեց կրոնի դասավանդությունը դպրոցներում: Բոլոր իկոններն ու խաչերը հեռացրեց դպրոցներից: Շատ դպրոցներ գտնվում էին տերտերների ու կուսակրոնների ձեռքում: Այս դպրոցները փակվեցին: Այսպիսով միանգամայն վերջ տրվեց հոգևորականության վնասակար ազդեցությանը: Քիչ է այս: Ժողովրդին հարկավոր էին մեծ շենքեր ու բնակարաններ, որտեղ կարելի լիներ հավաքվել, քննության առնել անցի ունեցող դեպքերը, վճռել զանազան խնդիրներ և այլն: Պարիզի շատ մասերում բանվորների ու արհեստավորների խմբերն իրենք սկսեցին յեկեղեցու շենքերը ակումբների վերածել: Կոմունան յեկեղեցիները բաց էր անում այդ ակումբների, քաղաքական ընկերությունների նիստերի համար: Եկեղեցիներին և հոգևորականությանը պատկանող հսկայական ունեցվածքը կոմունարները անմիջապես բռնագրավեցին և հասարակական սեփականություն դարձրին:

## ԿՈՄՈՒՆԱՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲՆՈՒՅԹԸ

Կոմունան միայն ֆրանսիական բանվորների գործը չեր: Նա միավորում եր բոլոր ազգերի բանվորներին: Վենգրացի Ֆրանկելը աշխատանքի և փոխանակման հանձնաժողովի նախագահն եր:

Լեհ Դոմբրովսկին, ղեկավարում եր նրա զինվորական ուժերը և ընկավ կոմունայի համար մղված կռվում: Իտալացի հեղափոխական Գարիբալդին ընտրվեց ազգային գվարդիայի հրամանատար: Ռուսուհի Դմիտրիևան բարիկադների վրա կռվող կոմունարների շարքերումն եր: Կոմունան իրեն թշնամի հայտարարեց յերկրներ նվաճելուն և ազգային ճնշումներին: Այս մասին նա բարձրաձայն հայտարարեց և հանդիսավոր կերպով խորտակեց Վանդոմի սյունը, վոր կանգնեցրած եր Նապոլեոն I-ի հաղթանակների պատվին:

Այս սյունը խորտակվեց նրա համար, վոր, ինչպես ասված եր Կոմունայի այս առթիվ տված դեկրետում, «Բարբարոս հիշատակարան եր, խորհրդանշան կոպիտ ուժի և սին փառքի, միլիտարիզմի ջատագովանք... հաղթողների մշտական ծաղր հաղթվածների հանդեպ»:

Կոմունարներն աշխատելով անասելի ծանր պայմաններում, թշնամուց շրջապատված լինելու պայմաններում, բանվոր դասակարգին թշնամի բոլոր մարդկանց ներքին դավանի թշնամանքի պայմաններում, հանդես եյին բերում ինքնազոհության, տոկունության, անշահախնդրության հրաշքներ: Բարձրագույն չինովնիկական դասը, դիտունները, բժիշկները բանվոր դասակարգի գործի հետ ընդհանուր վոչինչ չեյին ուզում ունենալ: Նրանք լքեցին իրենց աշխատանքը՝ ամեն բան բախտին թողնելով: Կոմունարները հաճախ այս կամ այն հիմնարկության գնալիս՝ ստիպված եյին լինում կազմակերպությունների և գործերի հետ ծանոթանալ միայն դռնապանների և պահապանների ցուցմունքով: Միայն սրանք եյին մնացել իրենց տեղերում այն ժամանակ, յերբ մնացած բոլոր ծառայողները լքել եյին իրենց պաշտոնները: Այս պայմաններում եյին հասարակ բանվորներն ու արհեստավորները կատարում հսկայական հիմնարկություններ ու ձեռնարկություններ ղեկավարելու դժվարագույն պարտականությունները: Բոլոր վարչություններում կոմունան ներկայացուցիչներ եր նշանակել, վորոնք կարողացան գործի դնել պետական հիմնարկությունների բարդ մեքենան, վոր կանգ եր առել հին կառավարության զինվորների կողմից: Փոստադիրեկտոր Տեյսը վերականգնեց փոստի գործունեությունը: Ատաղձագործ Պինդին կարգի բերեց ազգային տպարանի աշխատանքը: Բանվոր-ակնավաճառ Ֆրանկելը ղեկավարում եր աշխատանքի և փոխանակման հանձնաժողովի գործունեությունը: Կոմունայի օրերին Պարիզում ապրող մի ակնավաճառ գրում եր. «Իբրև վարչապետներ և կազմակերպիչներ Պարիզի պրոլետարիատի ներկայացուցիչները վոչ միայն վատ չեյին, այլև համարյա թե լավ եյին ռավարական չինովնիկական ռուտինայի ներկայացուցիչներից: Գործնական բանիմացությունը, ջանքը և հասարակության օգուտ բերելու իսկական ցանկությունը հեշտությամբ հաղթում եյին ամեն արգելք»: Յեվ ահա չնայելով կոմունարների արիությանը և ինքնազոհությանը, ամբողջ հերոսությանը՝ նրանց կազմակերպած կառավարությունը միայն 72 օր տևեց: Վո՞րոնք եյին աշխարհում աշխատավորական առաջին կառավարության անկման պատճառները:

## ԿՈՄՈՒՆԱՐՆԵՐԻ ՍԽԱԼՆԵՐԸ

Այս պատճառները հասկանալու համար՝ պետք է հիշել, վոր Պարիզի Կոմունայի դեպքերը տեղի յեն ունեցել ավելի քան հիսուն տարի առաջ: Պետք է հիշել, վոր այդ դեպքերը ծավալվել են Պարիզում, վոր այդ ժամանակ թե Պարիզում և թե ամբողջ Ֆրանսիայում բավականաչափ զարգացած չեր խոշոր արդյունաբերությունը ֆաբրիկաները և գործարանները: Իսկական պրոլետարիատը Պարիզում ինչպես արդեն ասվեց, ամբողջ աշխատավորության 1/9 մասից ավելի չեր: Պրոլետարները շատ եյին սակավաթիվ և դեռ հարկավոր չափով գիտակից ու կազմակերպված չեյին: Նրանց հայացքների մեջ դեռ շատ բան կար վոչ-պրոլետարական, վոր փոխ եր առնված մանր-բուրժուական, ինտելիգենցիայի, արհեստավորների հայացքից: Վորոշ չափով ել Կոմունայի միջոցառումների անվճռականությունը բացատրվում եր բացի նրա գոյության կարճատևությունից, նաև հենց այդ պայմաններով: «Այստեղ,— գրում ե կոմունարների մասին մի պատմագիր,— իր գործը տեսավ վոչ միայն ժամանակի կարճատևությունը, այլև Կոմունայի մանր-բուրժուական կազմը և այն ցած մակարդակը, վորի վրա կանգնած եյին սոցիալիզմը և բանվորական շարժումը, վորոնք դեռ չեյին կարողացել առաջադրել հեղաշրջման լայն և կայուն ծրագիր»: Կոմունարները դեռ չեյին հասել այն մտքին, թե աշխատավորությունը իշխանությունը ձեռք գցելուց հետո՝ պետք է անխնա հաշիվ տեսնի հեղափոխության թշնամիների հետ, նրանց իրավազուրկ անի, պետք է վճռական միջոցառումներով նրանց անվնաս

դարձնել։ Նրանք չկարողացան տեռոր կազմակերպել հեղափոխության թշնամիների դեմ։ Նրանք նույնիսկ սիրտ չարին փակել Կոմունային թշնամի լրագրերը, հետապնդել Կոմունային թշնամի լրագրողներին։ Ահա թե դեպքերին մասնակիցներից մեկն ինչ է գրում այս առթիվ. «Պայմանները սոսկալի էյին։ Անընդհատ ճակատամարտ էր։ Ամեն կողմից սպառնում էյին։ Լրագրերը, վորոնք համարյա ամբողջապես գտնվում էյին բուրժուազիայի ձեռքում, վերսալցիների օրգաններն էյին և անդադրում կոչ էյին անում վոչնչացնել Կոմունան։ Ծաղրահարում էյին մեր անհաջողությունները, հայհոյում էյին ազգային գվարդիային, նկարագրում էյին մեր զինվորական տեղաշարժերը, բաց կերպով դավադրություններ էյին կազմում մեր թշնամիների հետ միասին...»։

## ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԳՈՐԾԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ ԴԵՊԻ ԴԵՄՈԿՐԱՏԻԱՆ

Զինվորական գործը կազմակերպել չիմանալու համար՝ կոմունարներն ամենածանր պատիժը կրեցին։ Ճիշտ է, նրանց տրամադրության տակ քիչ ժամանակ կար՝ բանվոր կադրատակարգից և հեղափոխականներից անհրաժեշտ մարտիկ պատրաստելու, վորոնք կարողանային ղեկավարել ռազմական գործողությունները. բայց մյուս կողմից հազարավոր բանվորներ և արհեստավորներ կային, ինքնապաշտպանության ընդունակ, քաջ և նոր վարչաձևի ոգուն ենթուսիազմով վառված։ Սակայն կոմունարները չկարողացան լավ կազմակերպել և մարզել այս մարդկանց, վորոնք կարող էյին նոր բանակի փայլուն զինվորներ դառնալ։ Կոմունարները չկարողացան լավ կազմակերպել այս բանակը։ Նրանք չկարողացան իսկական դիսցիպլինա ստեղծել, չհասկանալով, վոր կայսերական զորքի՝ մտրակով հնազանդվելու հին դիսցիպլինան պետք է փոխարինել վոչ պակաս խիստ, բայց գիտակցական հեղափոխական դիսցիպլինայի։ Կոմունարների զորքերում անօրինակ քաջության և հերոսության յերևույթների հետ միասին կարելի էր տեսնել ամբողջ խմբերով ֆրոնտից ինքնակամ հեռանալու և պոստերը լքելու դեպքեր, անտարբեր վերաբերմունք դեպի պահակային ծառայությունը և այլն։

Կոմունարները չէյին հասկանում, վոր իրենց իշխանությունը ծնվեց և կազմակերպվեց ապստամբության և զինված ընդհարման շնորհիվ, վոր այն հեղափոխական իշխանություն էր, վոր չպիտի հաշվեր հին օրենքների և դեմոկրատական տրադիցիաների հետ։ Կոմունարները չափազանց շատ էյին հենվում օրինականության վրա։ Ազգային գվարդիայի կենտրոնական կոմիտեն, վոր կազմված էր բառ մեծի մասին բանվորներից և հեղինակություն էր վայելում բանվորների և արհեստավորների շրջանում, ինքը կամավոր կերպով զիջեց իր իշխանությունը և ավեց Կոմունայի խորհրդին։ Այս կոմիտեն ավելի մեծ սխալ գործեց։ Այն ժամանակ, յերբ Տիեյրի կառավարությունը մարտի 18-ի ապստամբությունից հետո փախավ Պարիզից, Կենտրոնական Կոմիտեն չհետապնդեց նրան և չհարձակվեց Վերսալի վրա, ուր թաքնվել էր այդ կառավարությունը։ Այնինչ այդ կառավարությունը դիմադրելու վոչ մի ուժ չուներ և հեղափոխական Պարիզի հաղթանակը կատարելապես ապահովված էր։ Այս առթիվ Մարքսը, վոր կենդանի կերպով մասնակցում և շատ աչալուրջ հետևում էր կոմունարների բոլոր գործողություններին, գրում էր. «Հարմար վայրկյանը բաց թողնվեց։ Չէյին ուզում քաղաքացիական կռիվ սկսել, կարծես Տյերն այդ կռիվ չէր սկսել Պարիզը զինաթափելու փորձով»։—

Իշխանությունը Կոմունայի խորհրդին տալու առթիվ՝ Մարքսն ասում էր. «Յերկրորդ սխալն այն էր, վոր կենտրոնական կոմիտեն շատ շուտ հրաժարվեց իր լիազորություններից՝ տեղը Կոմունային զիջելով...»։

## ԿՈՄՈՒՆԱ ՅԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՆԿ

Ասացինք, վոր այն ժամանակվա բանվորությունը վոչ-պրոլետարական պատկերացումներ շատ ուներ։ Պրոլետարիատը վճռական թշնամի էր մասնավոր սեփականության և կողմնակից սոցիալիզմին։ Բուրժուան իր եյությամբ շատ է չհասկացված մասնավոր սեփականության։ Բուրժուական հայացքների ազդեցությունը պրոլետարիատի վրա արտահայտվում է նրանով, վոր բանվորները հաճախ անվճռականություն են հանդես բերում մասնավոր սեփականության դեմ կռվելիս։ Այսպիսի անվճռականություն կար կոմունարների գործունեության մեջ։ Այդ հանդես յեկավ ամենից առաջ դեպի Պարիզում գտնվող Ֆրանսական պետական բանկն ունեցած վերաբերմունքում։ Այս բանկում կենտրոնացած էյին Ֆրանսական բուրժուազիայի հսկայական հարստությունները։ Այնտեղ կար վոչ պակաս քան 700 միլիոն ռուբլի՝ վոսկով և արժեթղթերով։ Այդ հարստությունները յեթե գրավվեյին, կոմունարների ձեռքում զորավոր միջոց կդառնային՝ դուրս բերելու հեղափոխությունը և բուրժուազիային յենթարկվել ստիպելու. բայց կոմունարները

ալը չարքին։ Նրանցից մեկը, որ ղեկավարում էր բանկի և կոմունայի մեջ տեղի ունեցող բանակցությունները, ուղղակի հայտարարում էր. «Անհրաժեշտ է հարգել բանկը իր բոլոր արտոնություններով և առաջվածքով»։ Թեպետ Կոմունայի կողմնակիցներից մի քանիսը հիացած էին նրանով, որ «հաղթական բանվորը բոլորն անցնում էր վառների առաջ փռված փողերի վրայով և չէր կռանում այն վերցնելու», բայց այդ վերաբերմունքը դեպի բուրժուազիային պատկանող փողին խիստ ծանր հետևանքներ ունեցավ։ Կոմունարներն անփող նստած՝ բանկից մուրում էին յուրաքանչյուր կոպեկ, իսկ բուրժուազիան միանգամայն հանգիստ, որ իր հարստությունն ապահով է, անպատիժ կերպով վճռական պայքար էր պատրաստում հեղափոխական Պարիզի դեմ։

## ԿՈՄՈՒՆԱՆ ԵՎ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ

Պարիզի հեղափոխությունը մի քաղաքի հեղափոխություն էր։ Հաղթանակ տանելու համար Պարիզի բանվորները և արհեստավորները պետք է դաշնակցեին Ֆրանսիայի աշխատավոր գյուղացիական մասսաների հետ, միավորեին նրանց իրենց շուրջը և միասին շարժվեին կապիտալիզմի դեմ պայքարելու։ Մենք գիտենք, որ գյուղացիներին այնպես էին պատրաստել, որ նրանք թշնամաբար վերաբերվեին Պարիզին։ Մենք գիտենք, որ այդ թշնամանքը պատրաստելու համար՝ օգտագործված էր բաժանողների (разделыцик) մասին գոյություն ունեցող հին լեգենդը։

Օգտագործված էր նաև այն հանգամանքը, որ գյուղացիները չէին ուզում պատերազմը շարունակել, սակայն Մարքսը համոզված էր, որ կանցնի յերեք ամիս և ամբողջ գյուղացիությունը Պարիզի կողմը կլինի։ Անշուշտ, այդպես էլ կլիներ, յերբ Ֆրանսիայի գյուղացիությունը ճիշտ իրազեկ լիներ ապստամբության բնույթին և նրա նպատակներին։ Բայց վերսալցիք աշխատեցին Պարիզի Կոմունան պատել զրպարտության ու ստի պատերով և մեկուսացնել նրան գյուղացիական մասսայից։

Անկախ սրանից՝ իրենք Պարիզի կոմունարները շատ քիչ բան արին իրենց ազդեցությունը տարածելու գավառների վրա՝ գյուղացիությանն իրենց կողմը դարձնելու նպատակով։ Նրանք դեռ շատ քիչ նշանակություն էին տալիս պրոլետարիատի և գյուղացիների դաշինքին։ Թեպետ այդ դաշինքի կարևորության մասին վորոշ գաղափար ունեին։ Այսպես՝ Կոմունայի առաջին կոչերից մեկում ասվում էր. «Ֆրանսիայի վրա դըրված պատերազմական տուգանքի մեծ մասը պետք է վճարեն այդ անիծված պատերազմի հանցավորները»։ Սրանով գյուղացիներին խոսք էր տրվում, որ նրանք չպիտի կրեն բուրժուազիայի կնքած հաշտության ծանրությունը։

Այն ժամանակվա ժամանակակիցներից վոմանք ավելի հեռու էին գնում։ Այսպես՝ կին գրող սոցիալիստ Անդրե Լեոն գրում էր գյուղացիությունը հեղափոխության հետ գործնական և նրա համար կարևոր միջոցառումներով կապելու մասին։ «Խոստացեք,—գրում էր նա,—գյուղացու հետ հարկեր պակասեցնելու մասին, վարկեր կազմակերպելու մասին, նրան անչափ տոկոսներից ազատելու մասին, որ նա վճարում է կապիտալին, և նրա հայացքը կկենտրոնանա, նա սրտանց կերպով կասի մեզ, յերբ այդ այդպես է, յես ձեզ հետ եմ։ Գործելով նույն ձևով, ինչպես 1789 թ. հեղափոխության ժամանակ, այսինքն՝ հողը ազատելով ժամանակակից ճորտատիրական դրությունից, մենք կկապենք գյուղացուն նոր հեղափոխության հետ, վորը կլինի առաջին հեղափոխության լրացումը»։ Բայց վոչ բոլոր կոմունարները, հատկապես կառավարության վոչ բոլոր անդամներն էին, այդպես գնահատում պրոլետարիատի դաշինքը գյուղացիության հետ։ Կոմունան շատ քիչ բան էր արել՝ գյուղացիությանը իրեն հետ միացնելու և գավառները ոտքի հանելու տեսակետից։ Նա բավականացել էր միայն մեկ, յերկու ագենտ ուղարկելով, տպարանից թռուցիկներ ցրելով և այլն։ Ճիշտ է, գավառական այն մեծ քաղաքներում, ուր պրոլետարիատը բազմաթիվ էր, հեղափոխական բռնկումներ տեղի ունեցան, կոմունաներ ստեղծեցին՝ նման Պարիզի Կոմունային, բայց այս բռնկումները կառավարությունը խեղդեց առանձին-առանձին։

Այս բոլորից հետո՝ վոչ մի բան չէր խանգարում Տյերին Պարիզի դեմ զինված պայքար սկսել և գլուխ բերել։

## ԿՈՄՈՒՆԱՅԻ ՍԽԱԼՆԵՐԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Կոմունարների սխալների մեծ մասը, վոր մենք մատնանշեցինք, առաջանում էր նրանից, վոր այն ժամանակվա ֆրանսիական բանվորությունը չուներ քաղաքական մի այնպիսի կուսակցություն, վոր կարողանար առաջուց ծրագրել հեղաշրջման պլանը, նրա նպատակները և գլուխ բերեր նրա իրագործումը։ Այս հանգամանքը պարզ էր նույնիսկ Կոմունայի միջանի ավելի հեռատես ժամանակակիցների համար։ «Անհրաժեշտ էր,—գրում էր նրանցից մեկը, վոր այս հեղաշրջման գլխա-

վոր սկզբունքները նախորոք մշակվեյին։ Անհրաժեշտ եր, վոր պրոլետարիատը նախորոք կազմակերպեր մի կուսակցություն՝ ընդունակ այդ պլանով աշխատելու։ Անհրաժեշտ եր, վոր պայթյունի վայրկյանին շարժման գլուխը կանգնեցներ իր մտքերի ներկայացուցիչներին, վորոնք պատրաստ լինեյին իրենց վրա պատասխանատվություն վերցնելու...»։

Մենք տեսանք, վոր կոմունարները բաժանված եյին խմբակների, վորոնք իրար հետ պայքարում եյին այն ժամանակ, յերբ պետք եր բոլոր ուժերը կենտրոնացնել թշնամու դեմ պայքարելու։ Մինչդեռ Լենինը գրում եր, թե բանվորական կուսակցությունը «կարող եր իր պարտքը կատարել այն դեպքում, յեթե նա կազմակերպված լիներ կենտրոնացման ձևով, յեթե նրա մեջ յերկաթե կարգապահություն լիներ, նման զինվորական կարգապահության, յեթե նրա կուսակցական կենտրոնը իշխանություն ունեցող հեղինակավոր մարմին լիներ՝ լայն լիազորություններով և վայելեր կուսակցության ընդհանուր վստահությունը»։ Հենց այդպիսի կուսակցություն եր, վոր չունեյին կոմունարները։ Այդ եվ նրանց կորստյան պատճառը դարձավ։

## ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՈՄՈՒՆԱՅԻ ԴԵՄ

Տյերը և Վերսալի ամբողջ կառավարությունը առանց քաշվելու՝ համաձայնություն կայացրին Ֆրանսիայի թշնամի պրուսակների հետ։ Շտապեցին հինգ միլիարդ ռազմական տուգանքից առաջին նվազը մուծել, նրանք 130,000 զինվոր յետ ստացան, վորոնք գերի եյին ընկել պատերազմի ժամանակ։ Այդ զինվորներին նրանք պատրաստեցին, հասկացրին, վոր իրենց տները վերադառնալու միակ արգելքը հանդիսանում են Պարիզում նստած խառնակիչները և խռովարարները։

Զինվորները ատեցին պարիզեցիներին և պատրաստ եյին վոչնչացնել նրանց մինչև վերջին մարդը։ Նրանց մեջ վորևե հեղափոխական գաղափար չթափանցելու համար՝ փակեցին նրանց զորանոցներում և այսպիսով կտրեցին աշխարհից։ Յերբ այս ձևով ուժերը պատրաստ եյին, ապրիլի 2-ին գրոհ տվին Պարիզի վրա։ Հենց առաջին քայլերից վերսալցիք հանդես բերեցին իրենց ամբողջ գազանությունը և դաժանությունը։ Նրանք ծաղր ու ծանակի առարկա եյին դարձնում գերի կոմունարներին և անխնա հրացանազարկ եյին անում։ Այս համաչափ դաժանությունը և մտածված գազանությանը կոմունարները հակադրում եյին անկազմակերպ ենտուզիազմ, անօգուտ հերոսություն և այս պայմանների համար անմիտ մարդասիրություն։ Այս բոլորի հետևանքը յեղավ կոմունարների արագ խորտակումը և վերսալցիների Պարիզ մտնելը։



Մայիսի 21-ին, Փարիզի ամրություններից մեկի՝ Սեն-Կլուի դռները բացեց մի ինչ վոր շպիոն և Տյերի զորքը խուժեց հեղափոխական քաղաքը։ Կոմունարները հուսահատ դիմադրություն եյին ցույց տալիս։ Յուրաքանչյուր փողոց, յուրաքանչյուր նրբանցք զինվորները կռվով վերցրին։ Փողոցները փակված եյին հարյուրավոր բարիկադներով, վորոնցից յուրաքանչյուրը մի անմատչելի բերդ եր, պաշտպանված հերոս կայազորի կողմից։ Տղամարդիկ ու կանայք մրցում եյին իրենց համարձակությամբ, սակայն նրանց պակասում եր կազմակերպվածությունը։ Պաշտպանվելու վոչ մի պլան չկար։ Յուրաքանչյուր փողոց կռվում եր իր համար։ Ազգային գվարդիան քաշվեց իր ռայոնները։ Այս պայմաններում դիմադրությունը հոգևարք եր, վերսալցիների հաղթանակը ապահովված։ Ճիշտ ե, կռիվը շատ որեր տևեց։ Ռամպոնո փողոցում գտնվող վերջին բարիկադն ընկավ միայն մայիսի 28-ին։

Կոմունարներն առանձնապես համառ դիմադրություն ցույց տվին միայն այն ժամանակ, յերբ կռիվը տեղափոխվեց բանվորական թաղամասերը, յերբ Կոմունայի կարմիր դրոշակի շուրջը խմբվեցին բոլոր նրանք, վորոնք կամենում եյին մինչև վերջ պաշտպանել պրոլետարական հեղափոխությունը։ Պաշտպանելով Կոմունայի վերջին հենակետը, իրենց բնակարանները, ֆաբրիկաները և գործարանները, միքանի հազար քաջեր կռվում եյին արտակարգ համառությամբ։ Ստիպված լինելով նահանջել մի բարիկադից՝ նրանք անցնում եյին հաջորդը, վոր նոր յեռանդով հանդիպեն թշնամուն։ Հարձակվող զինվորներն ամբողջապես վոչնչացրին մի բուռ կոմունարների, վորոնք հերոսաբար պաշտպանում եյին Սուֆլո և Գեյլյուսակ փողոցների բարիկադները։ Կանանց ջոկատը Լուիզա Միշելի հրամանատարությամբ՝ քաջության հրաշքներ հայտնաբերեց՝ մի ամբողջ շաբաթ բարիկադ բարիկադի յետևից պաշտպանելով։

Պեր-Լաշեզ գերեզմանատունը գրավելիս՝ քաջերի մի խումբ մահը գերադասեց անձնատուր լինելուց։ Կատաղի կռիվ տեղի ունեցավ գերեզմանատան արձանների մեջ և գերեզմանների վրա։ Վերջին բարիկադը Ռամպոնո փողոցում 1/4 ժամ պաշտպանում եր միայն մի կոմունար։

Վերսալցիների տարած հաղթանակից հետո՝ սկսվեց նրանց դաժան դատաստանը: Նույնիսկ 1848 թ. հունիսյան ջարդերի սարսափը վոչինչ եր համեմատած այն դաժանության հետ, վոր կատարեցին վերսալցիք Պարիզի հեղափոխականներին հաղթելուց հետո: «Երբեք հայտնի չի լինի, թե մայիսի 23-ից սկսած, մի շաբաթվա ընթացքում քանի հազար կոմունարներ հրացանազարկ յեղան... Պարիզի դերեզմանատներում թաղելու համար՝ 17.000 թույլտվություն տրվեց: Բայց դատարաններից շատերը ցուցակներ չեյին պահում և հրացանազարկվածներին առանց արձանագրությունների և ձևականությունների՝ թաղում եյին խմբերով՝ հսկայական փոսերում, քաղաքային սկվերներում, բանտային հորերում: Մի շաբաթվա ընթացքում ընկածների ընդհանուր թիվը 30.200 եր»:

Դիակները տեղափոխելու համար՝ փոխադրական միջոցները պակասում եյին: Չեյին հասցնում դիակները հավաքել: «Նրանց (դիակներին) կարելի յեր հանդիպել ամեն տեղ,—ինչպես գրում է այն ժամանակվա լրագրերից մեկը,— և կուտակված եյին ինչպես աղբ»: Վերջիվերջո քայքայվող դիակների գարշահոտությունը վարակեց ոդը և սպառնում եր դառնալ համաճարակ: Այդ ժամանակ բուրժուական լրագրերը պահանջեցին դադարեցնել սպանությունները բացատրելով, վոր նրանք վոչ թե «վոճրագործների ներումն» են ցանկանում, այլ միայն հետաձգում:

Տյերն ազգային ժողովին զեկուցեց. «Արդարադատության, կարգի, մարդկության և քաղաքակրթության գործը հաղթանակեց»:

Դատաստանով սպանությունները շարունակվեցին մինչև 1873 թ.: Բանտարկվածները մոտ 40.000 եյին: Նրանցից 10.000-ից ավելին մեղադրվեց: Մեղադրվածներին արիությամբ եյին լսում նույնիսկ մահավճիռները: «Ես չեմ ցանկանում պաշտպանվել,— ասաց Լուիզա Միշելը,—յես իմ կյանքը սոցիալական հեղափոխության նվիրաբերեցի: Ես պատրաստ եմ պատասխան տալու իմ բոլոր արարքների համար: Ես հրաժարվում եմ ամեն տեսակ զիջումներից: Կոշկակար Տրենկան՝ Կոմունայի անվեհեր հերոսներից մեկը՝ դատարանում հայտարարեց. «Իմ համաքաղաքացիները ինձ Կոմունա ուղարկեցին, յես չխնայեցի իմ կյանքը. յեղա բարիկադների վրա և ցավում եմ, վոր չսպանվեցի: Ես խռովարար եմ և այդ չեմ ժխտում»:—



Կոմունարների վճռականությունն անհանգստացրեց իրենց դահիճներին: Բուրժուաները զգում եյին, վոր Կոմունայից հետո մի ինչ վոր բան է մնում, վորը կապրի և վորն իրենք անկարող են վոչնչացնել աքսորներով և գնդակահարություններով:

## ԿՈՄՈՒՆԱՅԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ճշմարիտ վոր, Կոմունայից մնացին նրա գաղափարը և այն նշանակությունը, վոր ունի Կոմունան բանվոր դասակարգի իր ազատագրության համար մղած պայքարի պատմության մեջ: Մարքսի համար մարտի 18-ի հեղափոխությունը «բանվորական փառահեղ հեղափոխություն» եր: Կոմունայի գլխավոր արժանիքն այն եր, վոր նա ըստ եյության բանվոր դասակարգի կառավարություն եր, այնպիսի կառավարություն, վորի ժամանակ կարող եր կատարվել աշխատանքի տնտեսական ազատագրում»:

Լենինը համարելով Կոմունան իբրև Խորհրդային իշխանության նախորդ՝ գրում եր. «Կոմունայի եական իմաստն առանձին տիպի պետություն ստեղծելն եր. իսկ այդպիսի պետություն արդեն ստեղծվեց: Այդ բանվորների և գյուղացիների ներկայացուցիչների խորհուրդներն են»... Ի՞նչն եր այդ նորը Կոմունայի մեջ, ինչ եր այդ առանձին տիպի պետությունը: Այդ նորն այն եր, վոր Կոմունան իսպառ վոչնչացրեց հին կառավարությունը. նրա չինովնիկները, նրա հիմնարկները և դրասենյակները: Այս առթիվ Մարքսը գրում եր, վոր պրոլետարական հեղափոխությունը պետք է «մի ձեռքից մյուսին չհանձնի չինովնիկական և զինվորական մեքենան, ինչպես մինչև այժմ է յեղել, այլ պետք է կոտրել այդ մեքենան... Հենց այդ ել պարիզցիների հերոսական փորձն եր»:

Հենց նրա համար, վոր կոմունարները պրոլետարական հեղափոխության և պրոլետարական պետության նախորդներն յեղան՝ չնայելով նրանց բոլոր սխալներին ու վրիպումներին, հիշատակն ընդմիշտ կապրի բանվոր դասակարգի սրտերում: «Բանվորների Պարիզն իր Կոմունայով,—ասում է Մարքսը,— միշտ կտոնվի իբրև նոր հասարակության նախակարապետ: Նրա նահատակներն արձան կանգնեցրին իրենց համար բանվոր դասակարգի մեծ սրտում: Նրա դահիճներին պատմությունը հենց այժմ գամել է այն անարգանքի սյունին, վորից վոչ վոք չի կարող նրանց պոկել»:

## ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ՆՅՈՒԹ ԳՅՈՒՂԻ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻՆ

«Յեղբայր, քեզ խաբում են: Մեր շահերը նույնն են: Ինչ որ յես եմ պահանջում, դու յել ես կամենում: Այն ազատությունը, վորին ձգտում ես, և քո ազատությունն է: Քաղաքում նա, վոր արտադրում է աշխարհի բոլոր հարստությունները, կարիք է զգում հացի, հագուստի․ նա ապաստան չունի: Իզուր է, վորևէ մեկի վրա հույս դնել. բայց մի՞թե նույնը չի գյուղում: Միթե՞ միևնույն չէ, թե ինչպես կկոչվի շահագործողը—հարուստ կալվածատեր, թե՛ արդյունաբերող: Դու յել ինձ նման յերկար ու ծանր աշխատանքի որվա ընթացքում չես ստանում այն, ինչ անհրաժեշտ է քո ֆիզիկական պահանջները բավարարելու համար: Դու ևս, ինչպես և յես: զուրկ ես ազատությունից, հանգստից, սրտի և մտքի համար անհրաժեշտ կյանքից: Յերկուսս էլ դեռ աղքատության ստրուկներ ենք: Մոտ մի դար է, ինչ քեզ գյուղացուդ, խեղճ մշակիդ անվերջ պնդում են, թե սեփականությունն աշխատանքի սրբազան պտուղն է: Յեվ դու դրան հավատում ես: Սակայն բաց արա աչքդ և նայիր շուրջդ և դու կհամոզվես, վոր այդ բոլորը սուտ է: Ա՛յ, որինակ դու ծեր ես, քո ամբողջ կյանքում աշխատել ես, ամբողջ որդ լուսաբացից մինչև գիշեր անցկացրել ես բահն ու մանգաղը ձեռքիդ և այնուամենայնիվ հարուստ չես: Ծերությանդ որերին մնացել ես առանց մի կտոր հացի: Ամբողջ վաստակածդ ծախսել ես դաստիարակելու յերեխաներիդ, վորոնց խլում է քեզանից զինվորագրությունը, կամ վորոնք ամուսնանալով՝ իրենց հերթին նույն գրաստային կյանքն են վարելու, վերջապես վերջացնեն այն այնպես, ինչպես վերջացրիր և դու, այսինքն՝ մուրացկանությամբ... Այս անարդար է: Ահա թե ինչու յե ալեկոծվում Պարիզը: Նա պահանջում, ապստամբում է և ուզում է փոխել այն որենքները, վորոնք հարուստների ձեռքն են տալիս իշխանությունն աշխատավորների վրա: Պարիզն ուզում է, վոր գյուղացու տղան նույնպիսի ուսում ստանա, ինչպես ստանում է հարուստի տղան և այն էլ ձրի: Պարիզն ուզում է, վոր այլևս չլինեն այնպիսի պաշտոններ, վորոնց համար 20, 30, 100 հազար ֆրանկներ են վճարվում, վորոնք հնարավորություն են տալիս մեկին ամբողջ տարվա ընթացքում այնպիսի հարստություն վատնել, վորպիսին կբավարարեր շատ ընտանիքների:

Պարիզը պահանջում է, վոր սեփականություն չունեցող մարդիկ վոչ մի կոպեկ հարկ չտան, վոր փոքրիկ հարստությունները թեթև հարկ տան, վոր հարկերի ամբողջ ծանրությունն ընկնի հարուստների վրա:



Պարիզը պահանջում է, վոր 5 միլիարդը Պրուսիային վճարեն պատգամավորները, սենատորները և բոնապարտիստները—պատերազմի հանցավորները: Սրա համար թող վաճառվեն նրանց դույքերը, ինչպես և ստացվածքը թագի, վորն այժմ պետք չեն Ֆրանսիային: Պարիզը պահանջում է, վոր արդարադատությունը ծախս չնստի նրանց համար, ովքեր դրա կարիքն ունեն, վոր ժողովուրդն ինքն ընտրի իր դատավորներին համայնքի ազնիվ մարդկանցից:

Փարիզը ցանկանում է հող գյուղացիների համար, աշխատանքի գործիքներ բանվորների համար, աշխատանք բոլորի համար»:

## ՓԱՐԻԶԻ ԿՈՄՈՒՆԱՆ ՅԵՎ ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

*Խորհրդային իշխանությունը պրոլետարիատի դիկտատուրայի յերկրորդ համաշխարհային պատմական քայլ, կամ զարգացման էտապ է. Առաջին քայլը Պարիզի Կոմունան էր:*

Վ. Ի. ԼԵՆԻՆ

1924 թ. հուլիսի 6-ին, ԽՍՀՄ-ի տոնի որը, Մոսկվայի Հոկտեմբերյան դաշտում, Կոմինտերնի V կոնգրեսի ներկայությամբ ֆրանսական բանվորների պատգամավորությունը Մոսկվայի պրոլետարիատին հանձնեց ֆրանսական կոմունարների նշանները—յերկու սև և կարմիր կտորներ, միասին կարված և կարմիր փայտին ամրացրած: Այս դրոշակը Կոմունայի վերջին բարիկադի դրոշակն էր և 53 տարի անցնելուց հետո՝ բուռն ովացիաներով հանձնվեց ռուս բանվորներին՝ Կրեմլում պահելու համար: ՀամԿԿ(բ) Մոսկվայի Կոմիտեն ֆրանսական Կոմունիստական կուսակցության մի նամակ ուղղեց, վորի մեջ ասված էր. «Պարիզի Կոմունայի դրոշի տակ կռվեցին ու մեռան վոչ միայն Պարիզի, այլև միջազգային պրոլետարիատի լավագույն ներկայացուցիչները: Զանազան յերկրների հեղափոխականները—ֆրանսիացիք, ռուսներ, անգլիացիք, գերմանացիք, լեհերը, իտալացիք և Կոմունայի այլ բազմաթիվ հերոսներ իրենց կյանքը զոհեցին և իրենց արյունով անմահացրին Կոմունան: Տապալել կապիտալիստական հասարակակարգը, հաստատել պրոլետարիատի դիկտատուրան,—ահա թե ինչու իբրև առյուծներ 1871 թ. կռվեցին Պարիզի բանվորական մասսաները «գրոհելով յերկնքի վերա»: Մեզ՝ ԽՍՀՄ-ի պրոլետարներիս համար Կոմունայի գաղափարները և հիշատակն առանձնապես թանկ ու մոտիկ են, վորպես պրոլետարական պետության առաջին փորձ, վորպես Խորհրդային իշխանության

նախատիպ, վորպես հեղափոխական կռվի պատմական դաս, վոր ամուր հիմք դրեց մարդկության ազատագրության ամեն տեսակ լծից ու շահագործումից: Մեր 1905—1917 թ. հեղափոխությունների ուղղակի շարունակություն են Պարիզի Կոմունայի: Նրա ավարտումը, անշուշտ, կլինեն գալիք պրոլետարական հեղափոխությունները մնացած յերկրներում: Մեր Միության միլիոնավոր բանվորներ ու գյուղացիներ, վորոնք զբաղված են կոմունիստական շինարարությամբ և բարձրացնում են մեր խորհրդային տնտեսությունն ու աշխատավոր մասսաների կուլտուրական մակարդակը, հարազատ հետևողներ են համարվում Պարիզի Կոմունայի և նրա մարտիկների համար լավագույն հուշարձան են կանգնեցնում: Ընկե՛ր ֆրանսիացիներ՝ բանվորներ, բանվորուհիներ ու գյուղացիներ, հետևեցեք մեր օրինակին: Հավատարիմ մնացեք Կոմունայի ավանդներին, տապալեցեք բուրժուազիային, հաստատեցեք խորհուրդների իշխանություն, աշխատավորների իշխանություն, մոտեցրեք համաշխարհային հոկտեմբերը»:

## ՀԱՐՑԵՐ ՅԵՎ ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ի՞նչ եր Կոմունան իր կազմով:

2. Ի՞նչ խմբավորումներ եյին պայքարում Կոմունայի ներսում:

3. Ի՞նչ արավ Կոմունան բանվորական քաղաքականության բնագավառում: Համեմատեցեք բանվորների 1848 և 1871 թ. պահանջները:

4. Վորո՞նք եյին Կոմունայի կարևորագույն միջոցառումները տնտեսական քաղաքականության բնագավառում:

5. Ի՞նչ վերաբերմունք ուներ Կոմունան դեպի բանկը:

6. Ի՞նչն եր պատճառը Կոմունայի անկման:

I. Ուշադրությամբ կարդացեք 1848 թ. գյուղացիության դրության, յերկրորդ կայսրության ու Կոմունայի մասին յեղած գրքերի բնագրերը և բացատրեցեք. 1) Ինչո՞ւ գյուղացիք չպաշտպանեցին Կոմունան պահպանողական Ազգային ժողովի դեմ ունեցած պայքարում. 2) Ի՞նչպես պիտի գործեր Կոմունան, վոր [illegible] հաստատեր գյուղացիության հետ. 3) Ի՞նչ նշանակություն ունեցավ Կոմունայի համար իր պառակտումը գյուղացիական մասսաներից:

II. Զեկուցում կազմեցեք, «Կոմունա և գյուղացիություն» նյութի մասին, և ցույց տվեք Կոմունայի շրջանի և մեր ժամանակի բանվորների



և գյուղացիների փոխհարաբերությունների մեջ յեղած նման և տարբեր գծերը:

III. Օգտագործելով բանվորական գրքի նյութը և «[illegible]կյան Կոմունա և Հոկտեմբերյան հեղափոխություն» հավելվածը [illegible]կուցում պատրաստեցեք «Կոմունան վորպես բանվորական առաջին կ[illegible]թյուն» նյութի մասին:

IV. Վերցրեք այսպիսի նախագիծ՝ «Պարիզի Կոմունայի ա[illegible] յերեկույթ կազմելը ֆաբրիկա-գործարանային ձեռնարկությունում» (կամ խրճիթ-ընթերցարանում, կամ անապաստան յերեխաների ակումբում):

Այդ աշխատանքների համար ողակների բաժանվեցեք: Մի ողակը թող զեկուցում կազմի այդ յերեկույթի համար: Բացի դասագրքից նախօրոք պետք է կարդալ նաև մի շարք գրքեր Պարիզի Կոմունայի մասին, վոր կարելի յե գտնել շրջանային կամ քաղաքային գրադարաններում, օրինակ Լիսագարե «1871 թ. Պարիզի Կոմունայի պատմությունը», Արնու—«Կոմունայի մեռածները», Լուիզա Միշել—«Կոմունա»-ին:

Յերկրորդ խումբը թող յերեկույթի համար ցուցահանդես պատրաստի՝ ընտրելով զանազան նկարներ ու պլակատներ, պատկերներ ու տեսարաններ: Ցանկալի յե ընտրել այդ ժամանակի ծաղրանկարները և մոգական լապտերների համար դիապոզիտիվներ:

Յերրորդ ողակը թող պատրաստի այդ ժամանակվա շրջանից վերցրած տեսարաններ, կամ արդեն պատրաստիներն օգտագործի: Չորրորդ ողակը թող պատրաստվի պատմելու զանազան հեղինակներից նու- նյութի մասին գեղարվեստական կտորներ, կամ համապատասխան վոտանավորներ արտասանելու: Հինգերորդ ողակը լրագրերից Փարիզի Կոմունային ու ՄՕՊՐ-ին վերաբերող նյութերը կտրի ու հանի:

Այս աշխատանքը հասարակական նշանակություն կունենա, վորովհետև շրջապատող հասարակությանը կպարզաբանի 1871 թ. դեպքերի իմաստն ու նշանակությունը: Կընդարձակի և կհարստացնի ձեր գիտելիքները, ձեզ հասարակական աշխատանքներ կազմակերպելու կվարժեցնի:

Օգնեցեք առաջին աստիճանին իրագործելու «Օգնենք ՄՕՊՐ-ին և բարեկամանանք ուրիշ ազգի յերեխաների հետ» նախագիծը:

ւ Յ
ւկում
ըլինեն զայ
ում ։ Մ
դրաով

ԳԻՆԸ 1 Ռ. 2 0 ԿՈՊ. (11 1/4 մ.)

С. М. МОНОСОВ

**ОБЩЕСТВОВЕДЕНИЕ**

История классовой борьбы

Для VI год обуч.

Госиздат ССР рмении

Эривань—1932

ՀՀ Ազգային գրադարան
NL0185176

11.747

3(075)
U-88